

**ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՀՀ ԿԳՄՍՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ԺԱՄԱՆՑԻ ԿԵՆՏՐՈՆ
(ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ)**

ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

**«ԼՈՌԵ ԲԵՐԴԻՑ ՄԻՆՉԵՎ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ.
ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ»
ԵՎ «ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ
ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ XLIII ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ՝
ՆՎԻՐՎԱԾ ՍԻՄՈՆ ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ»**

**STEPANAVAN MUNICIPALITY
INSTITUTE OF HISTORY OF THE NAS RA
STEPANAVAN CENTER OF CULTURE
AND ENTERTAINMENT OF THE MESCS
(STEPAN SHAHUMYAN HOUSE-MUSEUM)**

PROCEEDINGS OF THE CONFERENCE

**“FROM LORE FORTRESS TO STEPANAVAN:
IN THE FOOTSTEPS OF HISTORICAL AND CULTURAL HERITAGE”
AND: “XLIII SCIENTIFIC SESSION OF THE COUNCIL OF YOUNG
SCIENTISTS OF THE INSTITUTE OF HISTORY OF THE NAS RA,
DEDICATED TO THE 100TH BIRTH ANNIVERSARY OF SIMON
KRKYASHARYAN”**

ԵՐԵՎԱՆ - YEREVAN 2024

ՀՏԴ 94(479.25)(082)

ԳՄԴ 63.3(5Հ)g43

Գ 600

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝ Աշոտ Մելքոնյան, Արման Եղիազարյան, Էդիկ Մինասյան, Մարգարիտ Սաքոյան, Համո Սուքիասյան, Վահե Սարգսյան

Գիտաժողովների նյութերի ժողովածու. «Լոռե բերդից մինչև Ստեփան Գ 600 նավան. պատմամշակութային ժառանգության հետքերով» և «ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների խորհրդի XLIII գիտական նստաշրջան՝ նվիրված Սիմոն Կրկյաշարյանի ծննդյան 100-ամյակին».– Եր.: Պատմության ինստիտուտ, 2024. –281 էջ:

Ժողովածուում ընդգրկված են 2023 թ. հուլիսին Ստեփանավան քաղաքում անցկացված երկու գիտաժողովների զեկուցումները: Գիտաժողովներից մեկը (14.07.2023 թ.) նվիրված էր Ստեփանավան քաղաքի անվանակոչության 100-ամյակին, մյուսը՝ Պատմության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների խորհրդի հերթական գիտական նստաշրջանն էր (15–16.07.2023 թ.):

Զեկուցումներում քննարկվում են Հայաստանի հին և միջնադարյան, նոր և նորագույն ժամանակաշրջանների պատմությանն առնչվող մի շարք հիմնահարցեր:

Գիտաժողովները կազմակերպվել են Հայագիտությունը ֆինանսավորող համահայկական հիմնադրամի ֆինանսական օժանդակությամբ:

ՀՏԴ 94(479.25)(082)

ԳՄԴ 63.3(5Հ)g43

ISBN 978-9939-892-42-9

© Պատմության ինստիտուտ, 2024

DOI:10.54503/978-9939-892-42-9

ԼՈՌԵ ԲԵՐԴԻՑ ՄԻՆՉԵՎ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ.
ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ
ՀԵՏՔԵՐՈՎ

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ պարամոնության ինստիտուտ,
պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս*

ՏԱՇԻՐ– ԼՈՌԻՆ ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱՓՈԻԼԵՐՈՒՄ

Պատմական Մեծ Հայքի և Փոքր Հայքի թագավորությունների բազմաթիվ վարչական միավորների շարքում Հայոց պետականության պատմության կերտման ու պատմամշակութային ժառանգության ստեղծման տեսանկյունից յուրաքանչյուր նահանգ ու գավառ ունեցել է ուրույն դերակատարություն: Այդ իմաստով բացառություն չեն նաև Հայաստանի սահմանային նահանգներն ու ծայրագավառները, որոնք կարևոր նշանակություն են ունեցել երկրի սահմանների պաշտպանության ու տարածքային ամբողջականության պահպանման խնդրում: Պատահական չէ, որ ռազմավարական կարևորության այդպիսի վարչամիավորներին հաճախ տրվել է հատուկ՝ սահմանակալ նահանգի, այն է՝ բդեշխության (փոխարքայության) կարգավիճակ: Որպես կանոն, բդեշխներին թույլատրված էր Հայոց արքունիքում նստել պատվավոր տեղում՝ արքայի կողքին: Իրենց ենթակայության տակ ունենալով հազարավոր հեծյալ զինվորներ՝ նրանք հայտնի էին «հազարավորք» և անգամ «բյուրավորք» (տասնհազարավոր) անուններով: Բդեշխություններն օժտված էին պետականության բազմաթիվ հատկանիշներով. ունեին սեփական զորք, ընդարձակ կալվածքներ, ենթակա և հարկատու գյուղացիական տնտեսություններ, իրավական հարցեր լուծելու

իրավասություններ և այլն:

Հայոց աշխարհի չորս բղեշխություններից հյուսիսայինը Մեծ Հայքի տասներեքերորդ նահանգ Գուգարքն էր, որը հունահռոմեական աղբյուրներում հայտնի էր Գոգարենե անունով¹: Այն հյուսիսից սահմանակից էր Վիրքին (Իբերիա, Վրաստան), արևելքից՝ Ուտիք, հարավից՝ Այրարատ և արևմուտքից՝ Տայք աշխարհներին:

Գուգարքը մ.թ.ա. IX-VI դարերում եղել է Արարատյան թագավորության (Ուրարտու, Բիայնիլի), ապա՝ Երվանդունյաց Հայաստանի կազմում: Մովսես Խորենացու վկայությամբ՝ Վաղարշակ թագավորը Գուգարքի բղեշխի մեծ և հզոր տոհմին վերապահել է Հայոց աշխարհի հյուսիսային սահմանների պաշտպանության գործը: Այդ մասին պատմահայրը գրում է. «Իսկ ընդդեմ լերինն Կալկասայ կողմնակալ հիւսիսոյ կարգէ զմեծ եւ զհզաւոր ազգն, եւ նահապետութեանն անուն կարդայ բղեաշխ Գուգարացոց»²:

Ք. ա. III դարում Գուգարքի տարածքն անցել է Վրաց թագավորությանը: Արտաշես Ա-ի օրոք (Ք. ա. 189-160) Սմբատ Բագրատունի զորավարը Գուգարքը վերադարձրել է Մեծ Հայքին³: Տրդատ Գ Մեծի օրոք (287-330) Մեծ Հայքի 16 ազդեցիկ նախարարների ցանկում «իշխանն Գուգարացոց աշխարհին»⁴ հիշատակում է ութերորդը:

Շուրջ 17 հազ. քառ. կմ տարածք զբաղեցնող Գուգարքը IV դարում ընդգրկում էր մեկ տասնյակից ավելի գավառներ՝ Ձորո-

¹ Տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, Երևան, 2007, էջ 280:

² Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, «Մատենագիրք Հայոց», հատոր Բ, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 1859-1860, հմմտ.՝ Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 328:

³ Տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, էջ 302-309:

⁴ Ազաթանգեղայ Պատմություն Հայոց, Երևան, 1983, էջ 446:

փոր, Կողբփոր, Ծորփոր, Տաշիր, Թռեղք, Կանգարք, Արտահան, Վերին Զավախք, Կղարջք, Բողնփոր, Քվիշափոր, Շավշեթ և այլն⁵: 370-ական թվականների սկզբին, օգտվելով տարածաշրջանում պարսկահռոմեական մրցակցության հետևանքով ստեղծված ծանր իրավիճակից, առանձին հայ նախարարներ, այդ թվում՝ Գուգարքի բղեշխը, փորձեցին ավելի ամրապնդել իրենց ինքնիշխանությունը և անջատվել Մեծ Հայքի թագավորությունից: Պապ թագավորը (370-374) նրանց դեմ ուղարկեց Մուշեղ սպարապետին: Վերջինս «...զբղեաշխն Գուգարաց, որ յառաջն ծառայէր թագաւորին Հայոց և ապստամբեաց, կալեալ գլխատէր. և զազգն որձակոտոր առնէր, և զկանայսն և զդստերսն ի գերութիւն վարէին»⁶:

Հայաստանի 387 թ. պարսկահռոմեական բաժանումով երկրի մեծ մասն անցավ Հռոմեական (395 թվականից՝ Բյուզանդիա) կայսրության ազդեցության տակ: Գուգարքի գավառներից Տաշիրը⁷ նախապես հայտնվեց Սասանյան Պարսկաստանին ենթակա Վրաց մարզպանության կազմում: Սակայն սահմանային բղեշխության կարգավիճակը Գուգարաց նախարարներին հնարավորություն տվեց մարզպանության սահմաններից դուրս պահպանել իրենց հարաբերական ինքնիշխանությունը: Ավելին՝ Գուգարաց բղեշխությունը վերածվեց հայ-վրացական յուրահատուկ իշխանության, որի կուսակալ-բղեշխը կարևոր դեր ստանձնեց տարածաշրջանային խնդիրներում և սկսեց կրել անգամ

⁵ Տե՛ս Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 118:

⁶ Փաւստոսի Բիւզանդացւ պատմութիւն հայոց, Երևան, 1987, էջ 322:

⁷ Տաշիրի տարածքը հիմնականում ընդգրկում էր Ձորագետ, Փամբակ և Դեբեդ գետերի ավազանը: Հյուսիսում Վիրահայոց, հարավում՝ Հալաբի, արևելքում՝ Գուգարաց լեռներն են: Արևմուտքում գավառը Շիրակից բաժանվում է Բազումի լեռնաշղթայով:

«Բդեշխ Վրաց» տիտղոսը⁸:

V դարի կեսերին Գուգարքի բդեշխի պաշտոնը զբաղեցնում էր Աշուշա իշխանը: Պատահական չէ, որ 450-451 թթ. Վարդանանց պատերազմի օրերին Պարսից Հազկերտ II արքան իր տերության միասնականությունը պահպանելու մտահոգությամբ մայրաքաղաք Տիգրանում պատանդ էր պահել Այսրկովկասի ամենաազդեցիկ պաշտոնյաներից Հայոց մարզպան Վասակ Սյունու երկու որդիներին՝ Բաբիկին ու Ատրներսեհին և Գուգարաց իշխան Աշուշային⁹: Վերջինիս Կորյուն պատմիչը ներկայացնում է որպես պատվարժան անձնավորություն. «Յայնժամ իշխանին Տաշրացոց, առն պատուականի և աստվածասիրի, որ անուանեալ կոչէր Աշուշայ»¹⁰:

Գուգարաց բդեշխությունում նախարարական տան անդամները հիմնականում նստում էին կենտրոնական գավառում՝ Տաշիրում: Գուգարքին և ամբողջ Հյուսիսային Հայաստանին քաջատեղյակ պատմիչ Ղազար Փարպեցին Վարդանանց պատերազմի օրերին հիշատակում է Վարդանանց հերոսներից «Տաշրայ Վրէն» իշխանին, որին 450-451 թթ. ապստամբությունից հետո Պարսից Հազկերտ II արքան ըմբոստ 30 նախարարների հետ ձերբակալեց և արգելափակեց Վրկանից աշխարհում¹¹:

Կիսանկախ կազմավորման կարգավիճակը Գուգարքը պահպանեց նաև հաջորդ դարերում՝ մինչև VII դարի վերջը՝

⁸ Ղազար Փարպեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982, էջ 108-109:

⁹ Աշուշայից հետո Գուգարաց բդեշխի պաշտոնն անցավ նրա որդուն՝ Վարսկենին (Վազգեն), որը հետագայում ամուսնացավ նշանավոր զորավար Վարդան Մամիկոնյանի դստեր՝ Շուշանիկի հետ: Վերջինս՝ հակառակ զրադաշտականություն ընդունած ամուսնու, հրաժարվեց դավանափոխ լինել և նահատակվեց: Շուշանիկը դասվեց վրաց եկեղեցու սրբերի շարքը (տե՛ս ԵՊՐԹՅՎԵԼԻ ՌԱՅՈԺ, ՄԱՐԵՇՎԵԼԻ ՄԶԵՄՆԻՅՈՅԻՆ, ԺԺՈՒԼԻՆԻ, ՄԵՃԵՈՂԵՄԶ, 1978, 1-2):

¹⁰ Կորյուն, Վարք Ս. Մեսրոպ Մաշտոցի, Երևան, 1994, էջ 52:

¹¹ Տե՛ս Ղազար Փարպեցի, էջ 176, 202:

արաբների կողմից Հայաստանի վերջնական նվաճումը: Կարծում ենք, որ **Գուգարքի բղեշխության մի ժամանակաշրջանը՝ IV – V դարերը, կարելի է համարել Հայոց միջնադարյան պետականության շրջափի Գուգարք-Տաշիրի առաջին պարամափուլը:**

652 թ. Թեոդորոս Ռշտունին Գուգարքը վերամիացրեց Մեծ Հայքի թագավորությանը: VIII դարում Գուգարաց աշխարհի արևմտյան գավառների մի մասը հայտնվեց Տփղիսի արաբական ամիրայության, ապա՝ Վրաց Բագրատունիների պետության կազմում: Արևելյան շրջաններն անցան հայ Բագրատունիներին: Վերջիններիս օրոք սկսվեց Լոռի-Տաշիրի ռազմաքաղաքական, տնտեսական ու մշակութային վերելքի ժամանակաշրջանը: 969-972 թթ. Անիի թագավորության հյուսիսային սահմանները լեռնականներից պաշտպանելու նպատակով Աշոտ Գ Ողորմածը (953-977) հիմնադրեց Սամշուլե (Շամշուլե), ապա՝ Լոռե կենտրոնով Բագրատունյաց մեկ այլ պետություն, որը հայտնի է Լոռու թագավորություն անունով: Նրա առաջին թագավորի՝ Գուրգենի (Կյուրկեն, Կյուրիկե) անունով այն հաճախ կոչել են նաև Կյուրիկյանների թագավորություն: Իր կենտրոնական գավառի անունից պետական այս կազմավորումը կրել է նաև Տաշիր-Ձորագետի թագավորություն անվանումը¹²: Պատմաբանների մի մասի կարծիքով՝ ինչպես Կյուրիկյան, այնպես էլ X դ. երկրորդ կեսին ստեղծված Կարսի (963 թ.), Սյունիքի (987 թ.) թագավորությունները չէին օժտված լիակատար ինքնիշխանությամբ և Անիի Բագրատունյաց կենտրոնական թագավորության ենթակայությամբ:

¹² Վրաց պատմագրության մեջ տարածված է այն տեսակետը, որ Տաշիր-Ձորագետի թագավորները ծագել են վրաց Բագրատունիներից, իսկ թագավորությունը եղել է վրացական պետական կազմավորումներից մեկը (մանրամասն տե՛ս Ժլեթադեղաձե Ժ., լեթեմ լարտլո. Ֆոլոլոգլզորո Իստորոոս Տաքոտեթո (ժամոր- ժորագեթո Տամեղո. օրթեղտա գարոս Իստորոա), տթոլոսո, ժտաճոմոնդեղո, 2001, 7-122):

յամբ՝ համադաշնություն էին, ինչի շնորհիվ Անիի Բագրատունիները կարողանում էին սիրաշահել ազդեցիկ իշխաններին և նրանց զերծ պահել անջատողական ու պառակտիչ քայլերից¹³:

Հայ Բագրատունիների օրոք Տաշիր-Ձորագետը քաղաքական, տնտեսական ու մշակութային աննախադեպ վերելք ապրեց: Աշոտ Գ Բագրատունու կինը՝ Խոսրովանույշ թագուհին, Ձորագետի հովտում կառուցել տվեց հայ միջնադարյան ճարտարապետության գլուխգործոցներից Հաղբատի և Սանահնի վանքերը:

Անիի կենտրոնական թագավորության անկումից (1045 թ.) հետո էլ սելջուկ-թուրքերի դեմ պայքարում Տաշիր-Ձորագետը կարողացավ պահպանել իր ինքնիշխանությունը: Կյուրիկե Բ-ն (1048-1089) վերակառուցեց, ամրապնդեց և 1065 թ. պետության կենտրոնավայր դարձրեց Լոռի (Լոռե) բերդաքաղաքը, Բյուզանդիայից ստացավ սեփական դրամ հատելու իրավունք, մեկնելով Խորասան, բարիդրացիական հարաբերություններ հաստատեց Մելիքշահի հետ: Թագավորության վերելքը սկսվել էր Դավիթ Անհողինի օրոք (989-1048):

Վրաց Դավիթ Շինարար արքան (1089-1125) հայ իշխանական տների աջակցությամբ պայքար սկսեց սելջուկների դեմ: 1118 թ. նրա կողմից Տաշիր-Ձորագետի տարածքի գրավումով այդ թագավորությունը դադարեց գոյություն ունենալուց: ***Տաշիր-Ձորագետի թագավորության ժամանակաշրջանը (973-1118) դարձավ Լոռիում Հայոց պետականության միջնադարյան պայմանության երկրորդ (վերելքի) պայմանափուլը:***

Բայց դրանով Հայոց պետականության միջնադարյան պատմության Լոռի-Տաշիրի էջը չփակվեց: Վրաց Թամար թա-

¹³ Տե՛ս Մաթևոսյան Ռ., Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Երևան, 1990, էջ 215-222, 277:

գուհու օրոք (1184-1207) հայ-վրացական զինակցության շնորհիվ ազատագրված այդ երկրամասը Զաքարյանների ստեղծած հայկական իշխանապետության մաս կազմեց: Զաքարյանները վրացական պետության հովանու ներքո՝ Հյուսիսային և կենտրոնական Հայաստանի տարածքների վրա, ինքնիշխան պետական միավոր ստեղծեցին, որի կարևոր հատվածներից դարձավ Տաշիր-Ձորագետը: Լոռիում շինարարական աշխատանքները նոր թափ ստացան: Կրկին աշխուժացավ մշակութային կյանքը: Նոր բարձրության հասավ եկեղեցաշինությունը: Այդ վերելքն ընդհատվեց միայն 1236 թվականին մոնղոլական ցեղերի կողմից Հյուսիսային Հայաստանի նվաճումից հետո: ***Զաքարյան իշխանապետության շրջանը (1185-1236) կարելի է համարել Տաշիր-Լոռիում Հայոց պետականության երրորդ պայմանավոր:***

Հատկապես Զաքարե ամիրսպասալարի (սպարապետ) մահից (1213 թ.) հետո Վրաց արքունիքի ու ուղղափառ եկեղեցու ձեռնարկած քայլերի հետևանքով հայկական մի շարք վանքեր ու եկեղեցիներ քաղկեդոնականացվեցին (Ախթալա, Քոբայր, Խուճապ և այլն): Քաղկեդոնականություն ընդունած հայության մի մասն էլ ժամանակի ընթացքում վրացացավ¹⁴:

Ցավոք, ուշ միջնադարում Լոռին, հայտնվելով տարբեր երկրների կազմում, Հայոց պետականության պատմության մեջ այլևս չունեցավ նախկին դերակատարությունը: Այն XIII դարի 30-ական թվականներից ներառվեց մոնղոլական էլլանության կազմի մեջ, մեկ դար անց՝ ընկավ թուրքմենական կոյունլու ցեղերի տիրապետության տակ: XVI-XVII դարերում Տաշիր-Ձորա-

¹⁴ Քաղկեդոնություն ընդունած հայության մասին XVII դ. հեղինակ Հակոբ Կարնեցին գրում էր «ազգաւ և կրօնին Վրացի, բայց Հայի լեզուաւ խօսէին» (Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ., կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 554):

գետն անմասն չմնաց պարսկա-թուրքական դաժան հակամարտության ընթացքում հայ բնակչության կոտորածներից ու բռնագաղթերից: Ժամանակ առ ժամանակ Քարթլի-Կախեթի թագավորության կազմում հայտնվելը երկրամասի հայ բնակչության անվտանգության երաշխիքներ չապահովեց: Ամբողջ XVIII դարի ընթացքում ինչպես Վրաստանը, այնպես էլ Լոռին ենթարկվեցին հյուսիսկովկասյան լեռնականների, հատկապես՝ լեզգիների ասպատակություններին¹⁵: Պատահական չէ, որ արդեն XVIII դարի երկրորդ կեսին այն վերածվել էր ավերված ու նոսր բնակեցված մի երկրամասի:

Լոռու ժողովրդագրական ու տնտեսական իրավիճակը բարելավելու նպատակով Հերակլ II-ը քայլեր ձեռնարկեց: Նա, ընդառաջ գնալով հայ ազատագրական պայքարի ղեկավարներից Հովսեփ Էմինի խնդրանքին, վերջինիս 1763 թ. թույլատրեց 24 անձով տեղափոխվելու Լոռի և հաստատվելու Հաղպատի վանքում՝ շրջակայքը լեզգիների ասպատակություններից պաշտպանելու հանձնարարականով¹⁶:

XVIII դարի երկրորդ կեսին Լոռի-Տաշիրում Քարթլի-Կախեթի թագավորները փորձեցին զարկ տալ հանքարդյունաբերության զարգացմանը: Ըստ վրացի հեղինակ Օման Խերխետուի՝ 1772 թ. Հերակլ II-ը «...շատ հետազոտություններ կատարեց ու աշխատանք թափեց, որպեսզի իր երկրում գտնի ոսկու և արծաթի հանքեր, և գտավ Սոմխիթի երկրում՝ Ախտալայում, որ է հայրենական [Ժառանգականություն] Սոմխիթի մելիք իշխանների: Եվ բերել տվեց Հունաստանից հույների մի փոքրաթիվ խումբ, որոնք տեղյակ էին հանքային ոսկի և արծաթ հալելու գործին:

¹⁵ Տե՛ս Ամիրջանյան Հ., Լոռին XVIII դարի վերջին և XIX դարի առաջին տասնամյակներին, Երևան, 2010, էջ 23-27:

¹⁶ Տե՛ս Иоаннисян А., Иосиф Эмин, Ереван, 1989, էջ 118-119:

Ապա սկսեցին հանքագործությունը, որից [Իրակլի թագավորը] շատ օգուտ քաղեց»¹⁷:

Միաժամանակ Վրաց արքունիքը որոշեց Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող Երևանի խանության տարածքից հայ բնակիչների բռնագաղթեցնել Լոռի ու Վրաստան: 1779 թ. Երևանի Հուսեյն խանից տարեկան 3000 թուման հարկը ժամանակին չստանալու պատճառաբանությամբ՝ Հերակլը 12000 զորքով, որի մեջ զգալի թիվ էին կազմում հյուսիսկովկասյան ռազմատենչ լեռնականները, որոշեց արշավել Երևանի խանության վրա:

Սիմեոն Երևանցի կաթողիկոսը՝ Արարատյան դաշտի ու հարակից շրջանների հայության անվտանգության մտահոգությամբ, փորձեց համոզել Վրաց արքային՝ հրաժարվելու խանության տարածք ներխուժելու մտադրությունից: Սակայն Հերակլ արքան «...ամենևին ոչ էր անսացեալ, այլ՝ զպատասխանիս թղթոցն առ Սրբազանն և առ խանն (խստասիրութեամբ) գրեալ, եւ յետ երկուց ատուրց ինքն արքայն հանդերձ Բ (2) որդովքն և անթիւ զօրօք եկն ի սահմանս Երևանու և սկսաւ զԼազախու տաճիկսն և զլեզկիս և զայլ բարբարոսս, որք ծարաւք էին արեան քրիստոնէից՝ յառաջագոյն ասպատակ սփռել առ ի քակել և ատերել, թալանել և կողոպտել և վերջապես հրդեհել զգիւղորայսն, ...կողոպտեցին զգիւղորայս և զեկեղեցիս նոցին նախ զՍուրբ Կարապետ, զՍուրբ Գէորգ, զԿարբի, զՄօղնի և զԱշտարակ»¹⁸:

Վրացական զորքը, բանակելով Երևանի մերձակայքում, երեք ամիս կերակրվեց շրջակա գյուղերի ու Մայր աթոռի հաշվին: Չկարողանալով գրավել Երևանի բերդը՝ Հերակլը հրամա-

¹⁷ Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, կազմեց Լ. Մելիքսեթ-բեկ, հ. Գ, Երևան, 1955, էջ 177:

¹⁸ «Արարատ», Վաղարշապատ, 1901, թիւ Գ, մարտ, էջ 185:

յեց. «...ամենայն տաճիկ զօրաց իւրոց ...զբոլոր խղճալի, աղքատ և տառապեառ մերկ և բոկ ժողովուրդսն երկրիս չունցուցանել ի յերկիրն իւր ընդ բարբարոս և խառնիճաղանճ զօրացն իւրոց»¹⁹:

Վրաց արքան հնդկահայ մեծահարուստ, նշանավոր հայ ազգային գործիչ Շահամիր Շահամիրյանին շնորհեց Վրաց իշխանի տիտղոս, Լոռին՝ որպես Հայաստանի հյուսիսային գավառներից մեկը, նվիրեց նրան և առաջարկեց տեղափոխվել ու այնտեղ բնակություն հաստատել²⁰:

Վրաց արքունիքի աջակցությամբ 1790-ականներին Պարսից Աղա Մամադ խանի արշավանքներից խուսափած հազարավոր արցախցիներ, այդ թվում՝ մելիքական մի քանի նշանավոր տների ներկայացուցիչներ, հաստատվեցին Լոռիում: Վերջիններիս մեջ առանձնանում էր Գյուլիստանի մելիք Աբով Բեգլարյանը²¹: 1799 թ. տեղափոխվելով Լոռի՝ նա զգալի աշխատանք կատարեց Արցախից և այլ շրջաններից հարկադրաբար հեռացած հայությանը Լոռիում՝ իրեն հանձնված կալվածքներում վերաբնակեցնելու համար:

Արցախից բռնագաղթված բազմաթիվ հայ երևելի դեմքեր՝ մելիքներ, հարյուրապետներ, գյուղապետներ 1800 թ. օգոստոսի 12-ին Վրաց Գեորգի XII արքային գրած նամակում մասնավորապես հայտնում էին, որ «Մեք ի ստորև գրեալք Ղարաբաղու և Խամսայու հայքս, ի պատճառէ գալստեան Աղա Մամատ խանին, տարամերժեալք ի հայրենեաց մերոց եկաք ի յերևան, ուր

¹⁹ Նույն տեղում, էջ 187:

²⁰ Տե՛ս Չոբանյան Պ., Հայ-ռուս-վրացական փոխհարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին, Ս. Էջմիածին, 2006, էջ 138:

²¹ 1892 թ. Շ. Շահամիրյանը Ղուկաս Կարնեցի կաթողիկոսին գրած նամակում հայտնում էր, որ ինքը մեծ հույսեր է կապում «սիրեցեալ» Մելիք Աբովի հետ և գտնում է, որ նրան արցախցի հպատակներով Լոռիում բնակվեցնելը խիստ օգտակար կլինի հայ ժողովրդի համար (Ամիրջանյան Հ., նշվ. աշխ., էջ 35):

կալով նմալով մինչ ցայսվայր, յոր հաւատացաք հաստատութեամբ ի հաստատումն բնակիլն մէլիք Ապօլին ի սահմանս և տէրութիւնս բարձրութեան ձերոյ»²²: Արցախից Լոռի տեղափոխված մելիքական տներից երկրամասի տնտեսական կյանքի աշխուժացման գործում նշանակալի դեր ունեցավ նաև մելիք Զումշուդ Շահնազարյանը, որին ևս Վրաց արքունիքի կողմից տարբեր բնակավայրերում տրված էին ընդարձակ կալվածքներ²³: Ինչպես Արցախից, այնպես էլ Հայաստանի այլ շրջաններից նորանոր հայ գաղթալների հոսքը դեպի Լոռի խթանելու քաղաքականությունը նոր թափով շարունակվեց 1801 թ. Արևելյան Վրաստանի հետ Լոռու գավառը Ռուսական կայսրությանը բռնակցելուց հետո: Արդյունքում Տաշիր-Լոռին զգալիորեն վերականգնեց իր նախկին հայեցի ժողովրդագրական պատկերը²⁴: Արցախից տեղափոխված հայ մելիքները, ստանալով բազմահազար գյուղացիներով բնակեցված ընդարձակ հողատարածքներ, բավական արագ շենացին երկրամասը և շուտով հարաբերականորեն ինքնիշխան մելիքական համակարգը հաստատեցին նաև Լոռիում:

Յավոք, ռուսական ցարիզմը, չհանդուրժելով նման իրավիճակը, 1810-1820-ական թվականներին վերացրեց ինչպես Արցախի ու Սյունիքի հինավուրց մելիքությունները, Գանձասարի կաթողիկոսությունը, այնպես էլ Լոռու նորաստեղծ «ինքնիշխանությունը»²⁵: **Ինչևէ, XVIII դ. վերջը և XIX դարի սկիզբը, այսինքն՝**

²² Присоединение Восточной Армении к России. Сборник документов, т. I (1801-1813), редактор Ц. П. Агаян, Ереван, 1972, с. 37-38: Աբովի տիրույթներ արցախցների տեղախվելու մասին տե՛ս նույն տեղում, էջ 39-40:

²³ Տե՛ս նույն տեղում, էջ 161-162:

²⁴ Տե՛ս Ամիրջանյան Հ., նշվ. աշխ., էջ 71-91:

²⁵ Տե՛ս Բալայան Վ., Ազատագրության և պետականության համար պայքարի պատմական ու գաղափարական դրսևորումներն Արցախում (XVII դարի երկրորդ

Վրաստանի իշխանության վերջնաշրջանն ու Ռուսաստանի տիրապետության սկզբնաշրջանը կազմեցին Լոռի-Տաշիրի մելիքական իշխանապետության կարճավուն, բայց հերթական պատմափուլը:

Ամբողջ XIX դարի ընթացքում ցարական արքունիքը նոր ու արմատական քայլեր կատարեց Ալավերդիում և Ախթալայում պղնձի արտադրությունն ընդարձակելու նպատակով²⁶: Դարավերջին գավառը դարձավ Այսրկովկասի և ամբողջ Ռուսական կայսրության հանքարդյունաբերության խոշորագույն կենտրոններից մեկը, որին մեծապես նպաստեց 1895-1899 թթ. Թիֆլիս-Ալեքսանդրապոլ երկաթգծի կառուցումը:

XIX դ. երկրորդ կեսին Լոռի-Տաշիրի տարածքն ընդգրկվեց Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի մեջ: Այլևս ինչպես ռուսական տիրապետության տակ անցած արևելահայ բոլոր գավառները, այնպես էլ Լոռին վերածվեցին կայսրության սովորական վարչական միավորների՝ ներքին չնչին ինքնիշխանության լիակատար բացակայությամբ:

Ռուսական կայսրության փլուզումից հետո 1918 թ. գարնանը Լոռին բռնազավթվեց օսմանյան զորքերի, իսկ աշնանը նրանց հեռանալուց հետո՝ ընկավ Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության տիրապետության տակ: Անդրկովկասից թուրքական զորքերի դուրսբերումից հետո Լոռու և Ախալքալաքի գավառների պատկանելության համար դեկտեմբերի երկրորդ կեսին ծայր առավ հայ-վրացական երկշաբաթյա պատերազմը: Այն ավարտվեց անգլիացիների ու ֆրանսիացիների միջնորդությամբ դեկտեմբերի 31-ի հայ-վրացական զինադադարով և 1919

կես – 2021 թ.), Երևան, 2022, էջ 68-70:

²⁶ См'у Присоединение, т. 1, էջ 165-166, 187-188, 190-192, 196-200 և այլն:

թ. հունվարի 17-ի հաշտությամբ: Ստեղծվեց Լոռու Չեզոք գոտին՝ անգլիական զինվորական նահանգապետի գլխավորությամբ, որի երկու տեղակալներից մեկը պետք է լիներ հայ, մյուսը՝ վրացի²⁷: Նման վիճակը պահպանվեց մինչև 1920 թ. նոյեմբերի 13-ը, երբ թուրք-հայկական պատերազմի հետևանքով ստեղծված ռազմաքաղաքական բարդ իրավիճակի պատճառով Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը ստիպված եղավ համաձայնվել՝ երեք ամիս ժամանակով Չեզոք գոտի վրացական զորքեր մտցնելու Վրաստանի առաջարկությանը:

1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումից հետո Լոռին մնաց Վրաստանի Հանրապետության զորքերի հսկողության տակ: 1921 թ. փետրվարի 13-ին Լոռվա հայ բնակչությունը հայ բոլշևիկների գլխավորությամբ ապստամբեց վրացական զորքերի դեմ և երկրամասը հայտարարեց Խորհրդային Հայաստանի մաս: Ռուսաստանի կոմկուսի Կովկասյան բյուրոյի 1921 թ. հուլիսի 7-ի նիստում որոշվեց գերազանցապես հայերով բնակեցված Լոռին, բացառությամբ նրա հյուսիսային մի քանի գյուղերի, միացնել Խորհրդային Հայաստանին²⁸: Գունավոր մետաղներով հարուստ Լոռու միացումը մայր հայրենիքին մեծ նշանակություն ունեցավ ինչպես Խորհրդային Հայաստանի, այնպես էլ անկախ՝ Երրորդ Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման և առհասարակ Հայոց պետականության ամրապնդման գործում:

Այսպիսով, Հայոց պետականության բազմադարյա պատ-

²⁷ Հայ-վրացական պատերազմի, բանակցությունների և Լոռու Չեզոք գոտու մասին մանրամասն տե՛ս Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, հ. I, Երևան, 2005, էջ 99-134, Մելքոնյան Ա., Ջավախքը XIX դարում և XX դարի առաջին քառորդին, Երևան, 2003, էջ 295-309:

²⁸ Տե՛ս Մելքոնյան Ա., նշվ. աշխ., էջ 465-466:

մության մեջ՝ ի թիվս հայկական տարբեր երկրամասերի, Գուգարք-Լոռին ևս ունեցավ ծանրակշիռ դեր ոչ միայն հայ ժողովրդի հարուստ պատմամշակութային ժառանգության ստեղծման, այլ նաև Հայոց պետականության պահպանման ու զարգացման տեսանկյունից:

Ashot Melkonyan, *Institute of History of the NAS RA, Dr. Hist. Sci., professor, academician of the NAS RA, Tashir-Lori in the historical stages of the Armenian statehood*

In the history of Armenian statehood and in the creation of the cultural heritage of the Armenian people, each historical region of Armenia is assigned a unique role. In this regard, Gugark, the thirteenth province (nahang) of the kingdom of Great Armenia, is no exception. Having the special status of a powerful border province – Pitiakhshate, the Gugark nakharars were princes in the 4th-7th centuries AD who achieved relative sovereignty from the central government and created a unique state entity. This period can be considered the first historical stage of statehood in the history of the Gugark-Tashir region.

In order to protect the northern borders of the Ani kingdom from the invasions of the mountaineers, King Ashot III Bagratuni (953-977) recognized the relative sovereignty of the Lori kingdom, also known as Tashir-Dzoraget and Kyurikyan. This state entity experienced great socio-economic and political growth. The period of existence of the Tashir-Dzoraget kingdom (973-1118) constituted the second historical period of the medieval history of Armenian statehood in Lori.

Lori and other regions of Northern Armenia were liberated from the Seljuk Turks and the Armenian principality of the Zakarids (Zakaryans) was founded in the result of the Armenian-Georgian military alliance at the end of the 12th century and at the beginning of the 13th century. The years of existence of the Zakarid principality (1185-1236) can be considered the third historical period of Armenian statehood in Tashir-Lori.

In the Late Middle Ages, being part of different countries, Lori lost its previous role in the history of Armenian statehood. After this, the next period of struggle for the restoration of Armenian statehood begins. It becomes especially noticeable in the second half of the 18th - early 19th centuries, when Armenian meliks moved from Artsakh to Lori and tried to introduce the melik's system there – one of the manifestations of the state formations of Eastern Armenia. This fourth period marks the end of the history of statehood in the Tashir-Lori region.

ՍԵՂԱ ԴԵՎԵՋՅԱՆ

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, պ.գ.թ.

ՌՈՒԲԵՆ ԴԱՎԹՅԱՆ

*Հալլե-Վիպրտենբերգի Մարտին Լութերի անվան համալսարան,
պ.գ.թ.*

ԼՈՒԻ ԲԵՐԴԸ ՈՐՊԵՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՀՈՒՇԱՐՁԱՆ

Լոռի Բերդի դամբարանադաշտը գտնվում է համանուն գյուղի և Ստեփանավան քաղաքի միջև, մայրաքաղաք Երևանից ավտոմայրուղիով մոտ 140 կմ հեռավորության վրա: Տարածքին հատուկ է Լոռու անտառապատ սարերի, ձորերի ու բլուրների բնությունը: Կլիման խոնավ է: Հողի մեջ հումուսի պարունակությունն ամենաբարձրն է Հայաստանի Հանրապետության տարածքում:

Սույն հոդվածի խնդրո առարկա Լոռի Բերդի դամբարանադաշտը զբաղեցնում է մոտ 100 հա տարածք: Լոռի Բերդը գտնվում է Ձորագետ և Ուռուտ գետերի միջև՝ բարձրադիր հրվանդանի վրա: Գետերի միախառնման վայրում են ընկած միջնադարյան Լոռե բերդաքաղաքի ավերակները: Լոռի Բերդի մի քանի դամբարաններ, ընդ որում ամենամեծերը, կարելի է տեսնել Ստեփանավանից Լոռի Բերդ տանող ճանապահի երկու կողմերում:

1969 թվականից ի վեր ընթացող հնագիտական պեղումները կատարվում են ՀՀ ԳԱԱ Հնագիտության ու ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող Սեղա Դեմջյանի կողմից:

Մինչև 2022 ներառյալ պեղվել է 117 դամբարան: Թվով ամենաշատ դամբարանները պեղվել են 1989-1991 թթ.¹ Սալիտակի երկրաշարժից հետո, քանի որ դամբարանադաշտի մի հատվածում պետք է կամավորների տնակներ կառուցվեին: Հենց այդ փրկարարական պեղումների ժամանակ էլ հայտնաբերվել են ամենամեծ և հարուստ դամբարաններից մի քանիսը:

Լոռի Բերդի մասին հրատարակվել է երեք մենագրություն և մոտ 80 գիտական հոդված՝ հայերեն ու օտար լեզուներով: «Լոռի Բերդ I»-ը, տպված 1981 թ., ներկայացնում է պեղումների առաջին տարիների արդյունքները և կենտրոնանում է հիմնականում Ուշ բրոնզի և Վաղ երկաթի դարաշրջանի վրա¹: 2006 թ. երկլեզու «Լոռի Բերդ II»-ում ներկայացված են Միջին բրոնզի դամբարանները²: Ուշ բրոնզի դարաշրջանին է նվիրված «Լոռի Բերդ III»-ը հրատարակվել է 2022 թ.³:

Միջինբրոնզեդարյան դամբարանները 22-ն, որոնք հրատարակված են «Լոռի Բերդ II» գրքում: Դրան հաջորդող Ուշ Բրոնզի և Վաղ երկաթին են պատկանում դամբարանների կեսից մի փոքր պակասը: Թվով հաջորդ մեծ տվյալն ունենք Երկաթի լայն տարածման շրջանում, որը պատմականորեն համընկնում է Վանի թագավորության ուժեղացման և անկման հետ: Ամենաուշն Աքեմենյան կամ Վաղհայկական շրջանն է, որը, չնայած իր փոքր թվաքանակին, բավականին հարուստ և հետաքրքիր տվյալներ է մատուցել: Ժամանակագրությունից արդեն իսկ երևում է, որ Լոռի Բերդի բնակեցման տևողությունը անցնում է 1500 տարին: Այս առումով այն իրապես բացառիկ է:

Ինչպես նշվեց վերևում, ամենավաղ դամբարանները

¹ Տե՛ս Деведжян С., Лори Берд I. Результаты раскопок 1969-1973 гг., 1981:

² Տե՛ս Դևեճյան Ս., Լոռի Բերդ II, Միջին Բրոնզ, Երևան, 2006:

³ Տե՛ս Դևեճյան Ս., Լոռի Բերդ III, Ուշբրոնզեդարյան դամբարաններ, Երևան, 2022:

վերաբերում են Միջին բրոնզի շրջափուլին, թվագրվում են մ.թ.ա. 22-17-րդ դարերով: Միջին բրոնզեդարյան դամբարաններն իրենց վերգետնյա տեսքով ներկայացնում են ոչ բարձր քարահողային թմբեր կամ 3-33 մ տրամագիծ ունեցով շրջանաձև քարաշարեր կամ կրոմլեխներ (Նկար 1): Մեծ քարակղային դամբարաններին հատուկ են խոշոր եղջերավոր անասունների զոհաբերություններն ու ծիսական թաղումները: Այս դամբարաններն իրենց ճարտարապետական հորինվածքով, թաղման առարկաներով և ծեսով մոտենում են Թռեղքի, Զավախքի, Վանաձորի հուշարձաններին: Որպես ննջեցյալների անձնական իրեր՝ պարունակում են իրենց ժամանակի բրոնզե զենքերի ողջ տեսականին և շքեղ խեցեղենը: Ընդհանրապես, Լոռի Բերդի դամբարաններին բնորոշ են բրոնզե և թանկարժեք իրերի առատությունը՝ պայմանավորված բնաշխարհի պղնձի, ոսկու, բազմամետաղային հանքերի առկայությամբ և հասարակության սոցիալ-տնտեսական բարձր մակարդակով: Ոսկե իրերով հարուստ միջինբրոնզեդարյան իրերը ցույց են տալիս տեղական էլիտայի օգտագործած իրերը, նրանց ճաշակը:

Լոռի Բերդի ուշբրոնզեդարյան դամբարանները թվագրվում են մ.թ.ա. 16-րդ դարի երկրորդ կեսից մինչև մ.թ.ա. 12-րդ դարի առաջին կեսը: Մեծ դամբարանները վերգետնյա ոչ բարձր թմբեր ունեն, հիմնականում արևելք-արևմուտք ուղղվածությամբ: Թաղումը կատարվել է դիակիզման կամ դիաթաղման ծեսով: Ըստ ամենայնի, անմիջականորեն կապվում են Լճաշենի նշանավոր դամբարանային բլուրների հետ, նաև Շիրակավանի, Գեղարոտի, Արթիկի, Մեծամորի: Այս շրջափուլում նկատվում է պաշտամունքի վերելք, ծիսական իրերի առատություն և բազմազանություն: Ուշբրոնզեդարյան դամբարանները նշանավորվում են բրոնզե մանրաքանդակներով, արձանադրոշներով (Նկար 2),

կաթսաներով, եռաժանիների, կացիների առկայությամբ:

Վաղ երկաթի դամբարաններում, թեև սակավաթիվ, հայտնվում են առաջին երկաթե առարկաները: Դամբարաններն արտաքինից ոչ բարձր թմբեր են՝ հիմնահողային խցերով՝ ամուր զննսված սալածածկով՝ ուղղված արևելք-արևմուտք: Հատկանշական է դիաթաղման, ավելի հաճախ՝ դիամասնատման ծեսը, երբ մարմնի միայն մի մասն էին դնում դամբարանի մեջ: Այս փուլում դամբարաններում զետեղվում են մի քանի ձիասարքեր՝ սանձերով, սակայն առանց ձիերի թաղումների, այսինքն՝ ձին փոխարինվել է դրան պատկանող պարագաներով:

Լոռի Բերդի՝ երկաթի լայն տարածման շրջանի դամբարաններն ամենաբացառիկն են տարածաշրջանում: Ուրարտական և ասորեստանյան արձանագրություններում այսօրվա Հայաստանի հյուսիսային մասը կոչվել է Էթիունի կամ Էթիուփի երկիր կամ երկրներ անվամբ: Մ.թ.ա. 9-8-րդ դդ. գոյություն ունեցող դամբարանները ներկայացնում էին սալարկղային փոքր խուցեր՝ այդ շրջանին բնորոշ նյութերով: Իսկ Ուրարտուի մայրամուտի շրջանի՝ 7-6-րդ դարերին պատկանող դամբարանները բոլորովին այլ պատկեր են մատուցում: Լոռի Բերդի պեղումները երևան հանեցին նախադեպը չունեցող հսկայական քարարկղային դամբարաններ՝ 2-3 խցերով, որոնք իրենց զուգահեռները չունեն Հայաստանի համաժամանակյա այլ հուշարձաններում⁴: Դրանցից ամենախոշորն ու ամենահարուստը, թերևս, դամբարան 56-ն է եղել, որի միայն մեկ խցի երկարությունը 8,7 մ է, լայնությունը 2.7, իսկ խորությունը հասել է 3 մ-ի (Նկար 3): Այս մեծ խցում է թաղվել հանգուցյալը, իսկ մյուս խուցը նախատեսված է եղել նրա կենդանիների համար: Բազմաթիվ այլ նյութերի հետ

⁴ St'ru Devejyan S., Some Urartian objects from the tombs of Lori Berd, "Aramazd", V/2, 2010, էջ 76-89:

այստեղ գտնվել են առյուծի երկու առանձնյակի ոսկորներ, ինչն էլ հուշում է, որ թաղված անձը թագավորական կարգավիճակ է ունեցել:

Ընդհանուր առմամբ, պետք նշել է, որ Լոռի Բերդի պեղումները վկայում են, որ այն առանձնացած և հետամնաց կղզյակ չէր, այլ տնտեսական, քաղաքական և մշակութային հզոր կենտրոն, որ գտնվում էր ժամանակի քաղաքական և էթնիկ տեղաշարժերի կիզակետում՝ ունենալով պետականությանը մոտ գտնվող հասարակություն՝ գոնե մ.թ.ա. 8-րդ դարից հաստատապես: Մ.թ.ա. 7-6-րդ դարերերի դամբարանները ցույց են տալիս մեծ տարբերություն սոցիալապես բարձր և ցածր խավին պատկանող հանգուցյալների թաղումներում: Սա երևում է թե՛ դամբարանների չափերից և ճարտարապետական հորինվածքներից, թե՛ ուղեկցող նյութի շնորհիվ: Չնայած նշենք, որ Լոռի Բերդի նույնիսկ աղքատ դամբարանները տարածաշրջանային համատեքստում, միևնույնն է, բավականին բարձր խավի կարելի է դասել:

Լոռի Բերդի վերնախավի ներկայացուցիչները իշխում էին մերձակա գավառների վրա՝ պահելով սերտ հարաբերություններ Միջագետքի, Լևանտի, Իրանի, Կովկասի, փոքրասիական և Էգեյան երկրների հետ:

Լոռի Բերդն այն հուշարձանն է, որտեղ երևում է ողջ Հայկական լեռնաշխարհի մշակույթը իր զարգացման դարակազմիկ փուլերով և առնչություններով՝ սկսած մ.թ.ա. 3-րդ հազարամյակից մինչև հայ Երվանդունիների ասպարեզ գալը, մինչև Աքեմենյան սատրապությունների հաստատումը Հայաստանում:



Նկար 1: Դամբարան 79-ի արտաքին տեսքը



Նկար 2: Եղջերուների բրոնզե արձանախումբ դամբարան 15-ից



Նկար 3: Դամբարան 56-ի արտաքին տեսքը

Seda Devedjyan, *Institute of Archaeology and Ethnography of the NAS RA, Cand. Hist. Sci.*, **Ruben Davtyan**, *Martin Luther University Halle-Wittenberg, Cand. Hist. Sci.*, **Lori Berd as a leading historical and cultural monument of Armenia**

More than half a century of excavation and research at Lori Berd necropolis has uncovered 117 tombs of local chiefs, military leaders, priests and community members. Throughout its nearly two-thousand-year history (end of the 3rd millennium BC to the 5th centuries BC), the main occupation of the people of Lori Berd has been agriculture and animal husbandry. Since the 2nd millennium BC, Lori Berd has been a powerful economic, cultural and military-political centre.

ԱՐՄԱՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

*ՀՀ ԿԳՄՄՆ պատրամաճակությային ժառանգության
գիտահետազոտական կենտրոն,
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ*

ԼՈՌԵ ԲԵՐԴԱՔԱՂԱՔԻ 2022–2023 ԹԹ. ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՀՀ Լոռու մարզի Լոռի բերդ համայնքում գտնվող Լոռե բերդաքաղաքը Հայաստանի լավագույն պահպանված ամրոցներից մեկն է: Գուգարաց աշխարհի նշանավոր այս ամրոցը ձևավորվել է Ձորագետ (Տաշրաջուր) և Ուռուտ (Միսխանա) գետերի միախառնման վայրում գոյացած հրվանդանի վրա, որը երիզվում է ուղղաձիգ ապառաժներով: Այն գտնվում է ծովի մակերևույթից 1490 մ բարձրության վրա, և արվարձանների հետ միասին զբաղեցնում է 50-60 հա տարածք (միայն միջնաբերդը՝ 9 հա):

Հիմնադրվելով 11-րդ դ. և Կյուրկե Բ-ի կողմից հռչակվելով Տաշիր-Ձորագետյան թագավորության մայրաքաղաք՝ Լոռեբերդը շարունակ կառուցապատվում է և ամրանում վիթխարի պարիսպներով: Քաղաքի կառուցապատումը հատկապես բուռն վերելք է ապրում Լոռեի հաջորդ տերերի՝ Չաքարյանների օրոք: Երկու տոհմերի օրոք Լոռեում կառուցվում են աշխարհիկ և հոգևոր կառույցներ, այդ թվում՝ պալատներ, եկեղեցիներ, մատուռներ, բաղնիքներ, շուկաներ, հրապարակներ, կենցաղային կառույցներ, շարունակ ամրացվող պարիսպ, ջրամատակարարման համակարգ, իսկ գետերի վրա՝ կամուրջներ: 11-12-րդ դդ.

Լոռեն ուներ 10000-ի հասնող բնակչություն: Լոռե բերդաքաղաքի դերն ու նշանակությունը ժամանակի ընթացքում այնքան մեծացավ, որ այստեղ 1208 թ. հրավիրվեց համահայկական ժողով: Ցավոք, արհեստագործական և առևտրական այս խոշոր կենտրոնը շարունակ իր կողմն էր գրավում օտար ասպատակիչների ուշադրությունը և մեկը մյուսի ետևից հարվածներ ընդունելով այն կորցնում է ժամանակի իր փառքն ու զորությունը: Ամենից հուժկու հարվածը, իհարկե, մոնղոլների 1236 թ. արշավաքն էր, որով կասեցվում է Լոռեբերդի ծաղկումը, և որի նկարագրությունը մանրամասնորեն տալիս է միջնադարյան պատմիչ Կիրակոս Գանձակեցին¹:

Հետագայում ձեռքից ձեռք անցնելով՝ Լոռեն աստիճանաբար վերածվում է գյուղաքաղաքի: Լոռեբերդը՝ իր աշխարհագրական դիրքի և նպաստավոր պայմանների շնորհիվ, շարունակ բնակեցված է եղել, թեև թույլ, սակայն կյանքն այստեղ շարունակվել է և դրանում եղած կառույցները պարբերաբար վերաօգտագործվել են՝ հարմարեցվելով նոր տերերի կարիքներին ու աշխարհայացքներին: Հենց դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ միջնաբերդի մշակութային շերտերը չափազանց հարուստ են հոգևոր և աշխարհիկ մշակույթին, քաղաքային կյանքին ու արհեստներին, առևտրին ու ռազմարվեստին, կենցաղին, պերճանքին ու ժամանցին առնչվող բազմապիսի հնագիտական իրերով: Միջնադարյան խեցեղենին զուգահեռ ուշբրոնզ-վաղերկաթեդարյան խեցատների գտնվելը հաստատում է այն հայտնի փաստը, որ ամրոցը պետք է բնակեցված լիներ մ.թ.ա. I հազարամյակի առաջին կեսից²: Սակայն նորություն

¹ Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, (աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի), Երևան, 1961, էջ 253-254:

² Տե՛ս Ղարիբյան Ի., Լոռե բերդաքաղաքը և նրա պեղումները, Երևան, 2009, էջ

էր վաղմիջնադարյան կոթողների ի հայտ գալը, որը հակասում է այն ենթադրությանը, որ մինչև 10-րդ դ. ամրոցը միջնադարում բնակեցված չի եղել: 7-րդ դ. կոթողների և ճարտարապետական մանրամասների առկայությունը ստիպում է առաջ քաշել այն վարկածը, որ մինչև Կյուրիկյանների կողմից հիմնադրվելը տարածքում եղել է ավելի վաղ շրջանի բնակավայր: Չնայած առկա շատ հարցերին, հնագիտական պեղումներն ու շինարարական հորիզոնների մանրագնին հետազոտումը, թույլ են տալիս առանձնացնել մշակութային առանձին շերտեր՝ տվյալ ժամանակաշրջաններին բնորոշ առանձնահատկություններով: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ Լոռեբերդի տարածքում պեղումներն իրականացվել և իրականացվում են հիմնականում մեզ հայտնի կառույցների տարածքում, որոնք ունեն վերականգնման կարիք: Սակայն ընդարձակ՝ մոտ 9 հա տարածք ընդգրկող տափարակի վրա դեռևս շատ կան չպեղված գոտիներ, որոնք, իհարկե, կհանգեցնեն այլ՝ մինչ այժմ անհայտ կառույցների հայտնաբերմանն ու նոր լույս կսփռեն Լոռեբերդի ուսումնասիրության վրա:

Իր աշխարհագրական դիրքի, վեհ տեսքի, պարիսպների հզորության, կանգուն կառույցների ու բազմաթիվ պահպանված կոթողների շնորհիվ Լոռեբերդն իրեն է ձգել բազմաթիվ ճանապարհորդների և ուսումնասիրողների: Անվանի շատ պատմաբաններ ու ճարտարապետներ են անդրադարձել Լոռեբերդ ամրոցի կառույցների պատմությանը, ճարտարապետությանը, առանձին մասնրամասներին, որոնք, սակայն, կրում էին տեսական և նկարագրական բնույթ՝ հիմնվելով այն ամենի վրա, ինչ տեսանելի էր և գտնվում էր երկրի մակերևույթին: Իրավիճակը

49: Սիմոնյան Հ., Ղարիբյան Ի., Բադալյան Հ., Ալեքսանյան Տ., Լոռե բերդաքաղաքը (2009-2013 թթ. պեղումների նախնական արդյունքները), «Հուշարձան» տարեգիրք, 2015, պրակ Ժ, էջ 45-46:

փոխվեց, երբ Երևանի պետական համալսարանի արշավախումբը՝ Ի. Ղարիբյանի ղեկավարությամբ 1966 թ. սկսեց Լոռեքերդի պեղումները, որոնք տևեցին մինչև 1974 թվականը: Այս աշխատանքների ընթացքում առաջին անգամ պեղվեցին բաղնիքները, մատուռը, արևելքում գտնվող եկեղեցին, «պալատ» համարվող կառույցը, բացօթյա ջրավազանները և այլն: Պեղումների արդյունքում զանազան խնդիրներին ու կառույցներին վերաբերող մի շարք հոդվածները ի վերջո ամփոփվեցին պրոֆ. Ղարիբյանի 2009 թ. հրատարակված «Լոռե բերդաքաղաքը» մենագրությունում: Նույն թվականին վերսկսվեցին և մինչև 2014 թ. ընթացան «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ-ի արշավախմբի կողմից ձեռնարկած պեղումները, որոնց ընթացքում պեղվեցին պարսպի երկայնքով ներքուստ և արտաքուստ հարող տարածքը՝ կցակառույց բազմաթիվ շինություններով, Առաջին բաղնիքը, «Քաղաքացիական շենք» կոչվող կառույցը (եկեղեցի, մզկիթ), որոնց արդյունքները նույնպես հրատարակվել են: Այդ տարիներին հատկապես կարևոր բացահայտում էր քաղաքացիական շենքի շուրջ հայտնաբերված քրիստոնեական գերեզմանոցը՝ բազմաթիվ տապանաքարերով ու խաչքարերի բեկորներով, ինչը ծանրակշիռ փաստարկ է այս կառույցի նախնական նշանակությունը պարզաբանելու համար, քանի որ հայտնի է, որ միջնադարում գերեզմանոցները ձևավորվում էին սրբատեղիների՝ եկեղեցիների կամ մատուռների շուրջ: Կարևոր էր նաև այն, որ հայտնաբերվեց ջրավազանի վերածված խաչքարի զանգվածեղ պատվանդան, որի նիստերից մեկին ընդարձակ արձանագրություն է՝ խաչքարի կանգնեցման թվականով: Գտնվեց ահռելի քանակությամբ հնագիտական նյութ, որոնց թվում գործիքներ, զարդեր, ծխամորճեր և այլն: Տարիներ շարունակ իրականացվող պեղումները լրացնում էին մեկը մյու-

սին, որոշ դեպքերում շտկումներ մտցնում ընդունված տեսակետների մեջ և հանգեցնում նորանոր բացահայտումների, երբեմն էլ եզակի հայտնագործությունների, ինչն էլ առավել հարստացվեց 2022-2023 թթ. պեղումներով:

Լոռեբերդի պարիսպները կառուցվել են 11-րդ դարում՝ Դավիթ Անհողին թագավորի կողմից, հրվանդանի հյուսիսային կողմում, քանի որ մյուս կողմերից տարածքը անմատչելի է թշնամիների համար: Պարիսպը իրար է միացնում երկու գետերի առաջացրած կիրճերը և ունի 214 մ երկարություն ու մինչև 20 մ լայնություն: Մուտքը եղել է արևելյան եզրին մոտ, որից բացվում է մի նեղ հրապարակ՝ միանալով երկրորդ մուտքին: Նման կառուցվածքը ուներ պաշտպանական նշանակություն, քանի որ թշնամին հաղթահարելով առաջին մուտքը, հայտնվում էր ծովակում:

Պարիսպների հիմքերի մոտ, թե՛ արտաքուստ, թե՛ ներքուստ պեղումներ են իրականացվել 2009-2014 թթ., որոնց ընթացքում բացվել են արտաքուստ պարսպապատի հսկայական ժայռաբեկորների վրա հենված հիմքերը, խանդակը՝ իր ողջ լայնքով, իսկ ներքուստ՝ կցակառուցված բազմաթիվ շինությունների պատերի մնացորդներ, թոնիրներ, օջախ-վառարաններ, տնտեսական հորեր, քարե գործիքներ և այլն: Աշխատանքների ընթացքում հայտնաբերվել են մեծ քանակությամբ կավե, քարե, ոսկրե և այլ հնագիտական իրեր:

Պարսպապատին հարող տարածքում առաջին կարևոր հայտնագործություններից էին բազալտից ութանիստ սյան երկու բեկորները (40×43 սմ), որոնցից յուրաքանչյուրի նիստերից մեկին կա մեդալիոնի մեջ առնված հավասարաթև խաչի պատկեր: 7-րդ դարին բնորոշ բարձրաքանդակներով ճարտարապետական այս մանրամասներն ակնհայտորեն պատկանում են վաղմիջնադարյան կառույցի, որոնք ավելի ուշ օգտագործվել են

որպես սովորական շինաքար: Գտնվեցին նաև կամարաձև տաշվածքով մոխրագույն տուֆից սալաքարեր, որոնք վկայում են ժամանակին եղած սրբատաշ, ողորկ ծածկասալերով կառույցի գոյության մասին: Եզակի է հրաբխային թեթև ապարից սրբատաշ քարը, որի նիստերից մեկին պահպանվել է վարդյակի պատկեր: Քարը պատված է կրասվաղի հետքերով, ինչը ցույց է տալիս, որ այն նույնպես վերաօգտագործվել է որպես շինաքար:

Պարսպին կից տարածքի տարբեր հատվածներում, 1.20-1.40 մ խորությունում բացվեցին անմշակ քարերով շարված գանգան պատաշարեր կամ դրանց հիմքերը: Այս ամենը ցույց է տալիս, որ 14-15-րդ դարից սկսած մինչև 19-րդ դարը, երբ հիմնվել է հին Լոռի բերդ գյուղը, պարիսպներին հարակից տարածքը կառուցապատվել է բազմաթիվ տնտեսական, արհեստագործական և կենցաղային այլ նշանակության կառույցներով: Դրանք հիմնականում անմշակ բազալտե որձաքարերով շարված պատեր են, որոնց մեջ օգտագործվել են ավելի վաղ շրջանի բազմաթիվ սրբատաշ քարեր՝ ճարտարապետական մանրամասներ, կոթողների բեկորներ, քարե գործիքներ: Դրանցում պեղումներով բացվում են վառարաններ, հորեր, թոնիրներ և տնտեսական նշանակության այլ մանրամասներ:

Պարսպապատին կից, թափված լիցքի մեջ, 2.80 մ խորությունում, գտնվեց մանկական կմախք³, որն ուներ հյուսիս-հարավ դիրք: Այստեղ նույնպես շատ են պարսպից թափված քարերը, ինչը ենթադրել է տալիս, որ գործ ունենք դժբախտ պատահարի հետ:

Պետք է արձանագրել, որ պարսպի առջև ընկած ողջ տարածքի I շերտը լիցք էր՝ պարսպից թափված հարյուրավոր քարե-

³ Մարդաբանական նյութը ուսումնասիրվում է Հասմիկ Սիմոնյանի կողմից:

րի հսկայական կուտակումներով: 11 շերտում սկսեցին բացվել ուշմիջնադարյան մի շարք կառույցների հիմքեր, որոնք թեև շարված են անմշակ կամ թերմշակ բազալտով, սակայն դրանց մեջ օգտագործված են բազմաթիվ վաղ և զարգացած միջնադարյան հարթաքանդակ մանրամասներ, սրբատաշ որմնաքարեր, կոթողների բեկորներ, քարե գործիքներ, որոնցից շատերի վրայի կրաշերտը հուշում է, որ դրանք պարսպի շինարարության ժամանակ օգտագործվել են որպես շինաքար: Այս կառույցներում առկա տնտեսական նշանակության զանազան մանրամասները՝ թոնիներ, վառարաններ, քարե բազմաթիվ գործիքներ, առտնին խեցեղեն և այլն, ցույց են տալիս, որ դրանք ունեցել են տնտեսական կամ կենցաղային նշանակություն և կարող են թվագրվել 14-15-րդ դդ.-ից մինչև 20-րդ դ.:

Պարսպի «գագաթը» աշխատանքներից առաջ հիշեցնում էր բրգաձև թումբ, որտեղ դժվար էր կռահել, որ կարող են լինել որևէ կառույց կամ շարվածք: Միայն ճարտարապետական հետազոտություններ կատարելիս պարզվեց, որ հաստահեղյուս պարսպապատի վրա կան հետագայում ավելացված բարակ պատեր (տարբեր երկարությամբ և հաստությամբ պահպանված), որոնք բոլորն էլ ունեն ուղղաձիգ և հարթ ճակատներ:

Այդ շարվածքներից արևմուտք բացվեց ուղղանկյուն հատակագծով մոտ 4.00×3.00 մ չափերով կառույց: Այն ունի անմշակ քարերով ու կրաշաղախով շարված, 80 սմ լայնքով և առավելագույնը 1.40 մ բարձրությամբ պահպանված, կրաշաղախով ծեփված պատեր: Հյուսիսային պատը չի պահպանվել: Սենյակի մուտքը եղել է հարավային կողմում: Կարելի է ենթադրել, որ այստեղ գործ ունենք պաշտպանական հենակետի հետ: Հատկապես ուշագրավ է այս կառույցի արևմտյան պատը, որը պահպանվել է 90 սմ բարձրությամբ: Պատն ունի 6՝ գրեթե հա-

վասարաչափ սալաքարերով շարված պահարաններ: Չորսական սալաքարերով հավաքված այս պահարանների մասին ենթադրությունները կարող են տարբեր լինել՝ գինամթերքի կամ այլ իրերի պահոց և այլն, սակայն մի հետաքրքիր ու թերևս հավանական տարբերակ է, որ դրանք նախատեսված լինեն աղավնիներ պահելու համար: Աղավնատների լավագույն օրինակները պահպանվել են Անիում, որտեղ եղել են 11 անձավ-աղավնատներ⁴: Նման քարե շարվածքով աղավնատներ հայտնի են դեռևս անտիկ ժամանակաշրջանից, ինչպիսին է, օրինակ, վերջերս Եգիպտոսում պեղված կառույցը, որ թվագրվում է 2-3-րդ դդ.⁵: Աղավնեաշտարակները հատկապես ընդունված են եղել իրանական մշակույթում, ինչպիսիք շատ կան պահպանված Իրանում և ընդունված է, որ աղավնիներ միջնադարում բուծում էին արտաթորանքի համար, որը կարևոր էր գյուղատնտեսության համար՝ որպես պարարտանյութ: Մեր օրինակին իր ձևով և շարվածքով մոտ է Ուշիի Սբ Սարգիս վանքի աշտարակներից մեկում պահպանված աղավնատունը:

Պարսպի վրա իրականացված աշխատանքների գլխավոր արդյունքն այն էր, որ, ի հակադրություն ընդունված տեսակետի, Լոռեբերդի պարիսպները, գոնե վերին հատվածներում քարերով ու շաղախով լցված չեն եղել, այլ ունեցել են սնամեջ տարածություններ, օգտագործվել են որպես գինանոցներ, պահակակետեր, հրակնակետեր և այլն: Կարևոր էր նաև այն, որ պեղումների արդյունքում հաստատվեց, որ պարիսպները ներսից նույն-

⁴ Տե՛ս Անի. հազարամյա մայրաքաղաք հայոց, հրատ. պատասխանատու՝ Գր. Գրիգորյան, Երևան, 2015, էջ 116-117:

⁵ https://www.livescience.com/ancient-roman-residences-with-pigeon-towers-discovered-in-luxor-egypt?fbclid=IwAR1qVJ0kPYFqwgWx5uOKBu54vslpm_CzepMyeSqYdbB-L6na88g7Fn0NqQQ

պես ունեցել են կյոր և ուղղանկյունաձև աշտարակներ: Նման մի աշտարակի հիմքեր հայտնաբերվել էին 2009-2013 թթ. պեղումների ժամանակ, որը ենթադրաբար պահակակետ է⁶:

Ամրոցի ներսում հայտնաբերվեց տնտեսական հոր: Այստեղ պարսպապատը դեպի ներս կորանում է և վերածվում խորշի: Պեղումները տվեցին բացառիկ արդյունքներ: Կիսաշրջանաձև այս խոռոչը դիմացից ու երկու կողմերից փակված էր կրաշաղախված պատերով, ինչի արդյունքում ստացվում էր 2.00x1.75 մ չափերով հորանման տարածք: 60 սմ հզորությամբ մշակութային շերտի տակ բացվեց մանր քարերով շարված հատակը: Այստեղից գտնվեցին կենդանիների մեծ թվով ոսկորներ: Սակայն ամենից ուշագրավը այստեղից հայտնաբերված 12-13-րդ դդ. ջնարակված թասերի առկայությունն է: Սրանք բացվեցին իրենց նախնական տեղում, որտեղ ակնհայտորեն դասավորված են եղել իրար վրա կամ կողք-կողքի: Սրանց՝ իրենց տեղում, փլատակների տակ մնալու հանգամանքը կարող է բացատրվել միանգամից վրա հասած աղետով (նկատվում են հրդեհի հետքեր՝ մոխրի և մրաշերտի մնացորդներ), որից հետո դարեր ի վեր, չնայած ամրոցի բազմապիսի փորձություններին ու վերաբնակեցումներին, դրանք մնացել են հողի հաստ շերտի տակ աննկատ, թեև պարսպապատի փլուզման հետևանքով բեկոտվել են: Հսկայական քանակությամբ բեկորներից թերի կամ ամբողջական հավաքվեցին շուրջ 45 թասեր:

Միջնաբերդի արևմտյան եզրին, ձորի անմիջապես պոնկին գտնվում է Երկրորդ կամ «Փոքր» բաղնիքը: Այն բավականին բարդ և բազմասենյականոց կառույց է, որը 1960-70-ական թթ. պեղել է պրոֆ. Ի. Ղարիբյանի ղեկավարած արշավա-

⁶ Տե՛ս Սիմոնյան Հ., Ղարիբյան Ի., Բադալյան Հ., Ալեքսանյան Տ., նշվ. աշխ., էջ 40:

խումբը, ինչից հետո արշավախմբի ղեկավարը եկել է հանգամանալից եզրակացությունների, կապված՝ ջրամատակարարման համակարգի, ջրամբարի, տաքացվող հատակի և այլնի վերաբերյալ⁷: Ի. Ղարիբյանը գրում է, որ միայն անհայտ է մնում բաղնիքի ջեռոցի տեղը:

Այս բաղնիքը բազմաֆունկցիոնալ համակարգ է՝ տարբեր չափերի ու նշանակության սենյակներով, եթե հաշվի առնենք նաև շենքի հիմնական հատվածից դուրս գտնվող բացօթյա ջրավազանները, բավականին ընդարձակ տարածք է զբաղեցրել: Այժմ այն կիսավեր վիճակում է: Պահպանվել է միայն բաժիններից մեկի թաղը՝ երկու երդիկով, որից տարիների ընթացքում քարեր են թափվել: Ողջ կառույցը շարված է անմշակ բազալտ քարերով, իսկ վերևի հատվածները՝ ֆելզիտի բարակ կտորներով: Տեղ-տեղ պատերը լրացված են թրծած աղյուսի բեկորներով: Երևում են իրար կից բաժինների մուտքեր, որոնք թեև քանդված են, սակայն նկատելի է, որ ունեցել են կամարաձև վերնամասեր: Շատ հատվածներում պահպանվել են ջրամատակարարման համակարգի կավե փողրակները, որոնք պատերի քանդման պատճառով դարձել են տեսանելի: Դրանք կա՛մ ուղղահայաց, կա՛մ հորիզոնական դիրքերով զետեղված են եղել միդիս շարվածքով պատերի լիցքերի մեջ՝ ապահովելով նաև պատերի ջերմությունը և ունեն տարբեր՝ 7-16 սմ տրամաչափեր:

Մեր իրականացրած պեղումները, որոնք հազեցած էին բազմաթիվ հայտնագործություններով, լրացրեցին նախորդ պեղումների տված տեղեկությունները և հանգեցրին նոր եզրակացությունների:

Հատկապես ուշագրավ արդյունքներ տվեցին բաղնիքի

⁷ Տե՛ս Ղարիբյան Ի., Լոռե բերդաքաղաքը և նրա պեղումները, էջ 92:

ամենաընդարձակ բաժանմունքի պեղումները, որի նշանակության հարցում մասնագետների կարծիքները կիսվում են: Խալփախյանն⁸ ու Հարությունյանը⁹ գտնում են, որ այն լողասրահ է, իսկ Ղարիբյանը այն համարում է հանդերձասրահ¹⁰: Այն անմիջապես կիրճի պոնկին է և արևմտյան պատը քանդվել ու թափվել է ձորն ի վար: Արևմտյան ճակատից կանգուն են մնացել միայն հվ-ամ և հս-ամ անկյունները:

Սրահի հարավային հատվածում բացվեցին բազալտե խոշոր, թերմշակ սալեր, որոնց տակ քարերի մեծ կուտակումներ կան: Բազալտե սալերը պատված են կրաշաղախով, իսկ տեղ-տեղ պահպանվել են թրծած աղյուսի մնացորդներ: Նույն մակարդակում բացվեցին նաև կավե խողովակաշարի մնացորդներ: Այս սալերը բացվեցին 17-20 սմ խորությունից՝ դրված լինելով 37 սմ խորությամբ: Այսպիսով այստեղ գործ ունենք սրահի հատակի հետ, որը փաստորեն շարված է բազալտե զանգվածեղ սալերով, պատված կրաշաղախով և աղյուսներով:

65 սմ խորությամբ բացվեցին հատակի բազալտե սալերը պահող սյուները, որոնք ի տարբերություն մեծ բաղնիքի սյուների ոչ թե միակտոր տուֆ էին, այլև տարբեր քարերով ու կրաշաղախով շարված մոյթեր:

Հատակասալերը հանելուց հետո պարզվեց, որ նորահայտ այս ջրավազանն ունի կրածեփ պատեր և 120×140 սմ մոտավոր չափեր: Ուշագրավ է, որ այն հավասար մակարդակում է, ինչ սալահատակը պահող հենասյուները, այսինքն՝ այն փորված է եղել

⁸ Ст'у Халпахчян О., Гражданское зодчество Армении (жилые и общественные здания), Москва, 1971, էջ 222:

⁹ Ст'у Հարությունյան Վ. Մ., Լոռի բերդ-քաղաքը: Միջնադարյան քաղաքաշինության պատմությունից, «Պատմաբանասիրական հանդես», 1962, N 3, էջ 57-76:

¹⁰ Ст'у Ղարիբյան Ի., Լոռե բերդաքաղաքը և նրա պեղումները, էջ 118:

հատակի մեջ: Սրա մեջ գտնվեց ջնարակապատ և կաղապարի հպմամբ պատրաստված վերադիր զարդաքանդակներով ընտիր շքադուռների 48 բեկոր:

Այսպիսով՝ երկրորդ բաղնիքի ամենախոշոր սրահի II շերտի պեղումների կարևորագույն արդյունքն այն էր, որ հաստատվեցին այն ենթադրությունները, ըստ որոնց այս սրահն ունեցել է տաքացվող կրկնակի հատակ՝ տարբեր աստիճանի պահպանվածությամբ 18 հենամույթերով, որոնց վրա հենվել են հատակի բազալտե խոշորածավալ սալերը: Այս հաստատեղյուս և քարաշեն հենամույթերը հազվագյուտ երևույթ են հայկական բաղնիքների շարքում, քանի որ հիպոկաուստ հատակով բաղնիքների երկրորդ հատակները հենված են եղել հիմնականում աղյուսներով շարված սյուների վրա: Թեև Ի. Ղարիբյանը ենթադրում է, որ սրահը կրկնահատակ է ունեցել և տաքացվել, սակայն վերին հատակի տակ նա չի պեղել և վերջնական հիմնավորումներ չի ունեցել¹¹, իսկ Ջաղացպանյանը առհասարակ, վստահ է, որ Փոքր բաղնիքը տաքացվող հատակ ունեցող բաղնիքների շարքից չէ¹²: Այս և հարավային կառույցի արանքում բացվեց սալով ծածկված նեղ միջանցք, որով և տարածվել է գոլորշին: Այս ամենի արդյունքում հանգում ենք այն եզրակացության, որ ընդարձակ սրահը ոչ թե հանդերձարան է, այլ լողասենյակ, որն ունեցվել է տաքացվող պատեր և հատակ, գոլորշին դուրս գալու համար նախատեսված օդանցքներ, ջրավազան: Այդ հատկանիշներով այն նման է Մեծ բաղնիքի լողասենյակին:

Ամրոցի կենտրոնական հատվածում գտնվող Առաջին կամ

¹¹ Տե՛ս Ղարիբյան Ի., Լոռե քաղաք ամրոցի միջնադարյան բաղնիքները, «Բանբեր Երևանի համալսարանի», 2000, № 3 (102), էջ 107:

¹² Տե՛ս Джагацпаян А. А., Бани средневековой Армении и их теплотехнические особенности, «Պատմաքանասիրական հանդես», 1968, № 3, էջ 246:

«Մեծ» բաղնիքում պեղումներ կատարվել են 1960-70-ական թթ. և 2009-2010 թթ., որոնց ընթացքում բացվել են բաղնիքին կից օժանդակ շինությունների՝ հանդերձարանի, ջեռոցի և այլ կցակառույցների հիմքերը: Սա Հայաստանում լավագույն պահպանված բաղնիքներից մեկն է. պահպանվել են ընդարձակ և մի քանի ենթաբաժիններով լողասենյակի պատերն ու թմբուկավոր առաստաղը: Բաղնիքի մասին խոսվել է բազմիցս, շատ ճարտարապետներ ու հնագետներ են անդրադարձել այս յուրահատուկ կառույցին, երկարատև պեղումները տվել են լուրջ արդյունքներ և վեր հանել միջնադարյան բաղնիքի ընդհանուր նկարագիրը: Սակայն բոլոր այդ հետազոտությունների ընթացքում բաղնիքին հարակից շատ հատվածներ, մասնավորապես դրանից հյուսիս ընկած ընդարձակ սրահը, մնացել են ոչ լիովին պեղված: Չափազանց կարևոր էր նաև այն հանգամանքը, որ դեռևս չպեղված էր մնում բաղնիքի լողասենյակի ստորին շերտը, այսինքն գոյություն ունեցող հատակի տակ եղած շերտը, որը կարող էր շատ կարելիոր հարցերի պատասխան տալ՝ կապված բաղնիքի տիպային առանձնահատկությունների, ինժեներական համակարգի և հնագիտական շերտագրությունների հետ: Ելնելով այդ ամենից, ինչպես նաև ճարտարապետական վերակազմություններին նպաստելու նպատակով, որոշվեց պեղումներ իրականացնել բաղնիքի ներսում և հարակից տարածքում՝ նախ խուզահորերի տեսքով, ապա լայնամասշտաբ, համակարգված պեղումների տեսքով:

Լողասրահի հյուսիս-արևելյան հատվածում բացվեց հիանալի պահպանված սալահատակով ուղղանկյուն ջրավազան: Բացառիկ էր 16.5 սմ խորությունից գտնված, ամբողջական պահպանված քարե ծորակը: Շրթնամասը ուղղանկյուն է, կենտրոնում միջանցիկ անցքով: Այս ծորակը ոչ այլ ինչ է, եթե ոչ բաղնիքի ցնցուղներից մեկը: Ղարիբյանը թեև անդրադառնում է

ջրածորակներին¹³ սակայն ամենայն հավանականությամբ, նա ձեռքի տակ չի ունեցել սրանցից որևէ նմուշ: Ավագանի արևմտյան եզրին բացվեց 8 սմ տրամագծով կավե փողրակով ջրահեռացման անցքը: Սրա շուրջը ցածրիկ հիմքեր կան, որոնք կարող էին ծառայել որպես նստարան ջրավազանից օգտվողների համար:

Բաղնիքի արևելյան պատի մոտ բացվեցին 40 սմ տրամագծով, կավե պատերով և քարաշեն օջախներ: Վերջինս, մեր կարծիքով, նախատեսված է դրանում լցված ջուրը տաք պահելու նպատակով: Հորի մոտից գտնվեցին մի քանի պղնձե անոթների բեկորներ: Հարկ է նշել, որ քարե տաշտերից ջուրը վերցվել է կավե կամ պղնձե ամաններով¹⁴

Հրվարման անկյունում բացվեց մանր քարերով շարված հատակ: Այս հատվածում բացվեցին նաև պատերի հիմքեր և շարվածքներ, որոնք հետագայի հավելումներ են: Հորի մեջ գտնվեց ոսկրե խոշոր մախաթասեղ՝ մի եզրում սուր, իսկ մյուս եզրում՝ անցքով, որի մեջ պահպանվել է կաշվե լար: Հորի դիմաց՝ 45 սմ խորությամբ, գտնվեց նաև կաշի և երկաթե իրեր: Այս ամենը ցույց է տալիս, որ ինչ-որ ժամանակ բաղնիքի այս հատվածը օգտագործվել է, որպես կաշեգործական արհեստանոց:

Այս լողասրահի՝ տաքացվող հատակ ունենալու մասին ենթադրություններ է արել դեռևս Վ. Հարությունյանը¹⁵: Ի. Ղարիբյանը նույնպես համակարծիք է՝ որպես հիմնավորում բերելով պատերի մեջ թողնված ծխնելույզները¹⁶: Այս ենթադրությունները

¹³Տե՛ս Ղարիբյան Ի., Լոռե քաղաք ամրոցի միջնադարյան բաղնիքները, էջ 105:

¹⁴Տե՛ս նույն տեղում:

¹⁵Տե՛ս Հարությունյան Վ. Մ., Լոռի բերդ-քաղաքը: Միջնադարյան քաղաքաշինության պատմությունից, էջ 70:

¹⁶Տե՛ս Ղարիբյան Ի., Լոռե քաղաք ամրոցի միջնադարյան բաղնիքները, էջ 103:

հաստատելու նպատակով որոշեցինք հեռացնել բաղնիքի լողասրահի ուշմիջնադարյան տոփանված հատակը և պեղումներ կատարել դրա ստորին շերտերում:

Արդյունքում պեղումները տվեցին բացառիկ արդյունքներ: Բաղնիքի հրվ-արմ անկյունում բացվեցին թվով 20 կարճ, միակտոր սյուներ, որոնց մեծ մասը տուփից են, մի քանիսը՝ բազալտից: Ունեն տարբեր չափեր, որոնք հարմարեցված են եղել ժայռային գրունտին: Դրանց վրա դրված տուփե սալաքարերը գրեթե ամբողջությամբ քայքայվել են (պահպանվել են մի քանի փոքր բեկորներ): Սյուները նույնպես ունեն տարբեր աստիճանի մաշվածություն: Ամենաբարձրն ունի 62 սմ բարձրություն: Լողասրահի արևելյան պատի մեջ բացվեցին հատակի մակարդակին գտնվող, ուղղանկյուն, 40 սմ լայնքով անցքեր: Այս անցքերը բացվում են դեպի բաղնիքից արևելք գտնվող ջեռոցը, որտեղից եռացած գոլորշին մտել է բաղնիքի հատակի տակ՝ ապահովելով դրա ջերմությունը:

Բացառիկ հայտնագործություն էր 53 սմ խորությամբ հայտնաբերված կենդանու կավե արձանիկը, որի չորս ոտքերից պահպանվել են երեքը (մեկը՝ կոտրված): Գլուխը հիշեցնում է փղի, ենթադրվում է նաև, որ կնճիթ է ունեցել, որը կոտրված է: Մեջքին կա շրջանաձև թմբիկ, որի երկու կողմերում ելուստներ: Ետևի մասում կա ևս մեկ կոտրված հատված, որտեղ հավանաբար արձանիկի բռնակն է եղել: Ունի 3.5 սմ բարձրություն և 6 սմ երկարություն: Միջնադարյան իրերով հարուստ շերտում գտնված կավե այս արձանիկը, մեր համոզմամբ, ունեցել է ժամանցային նշանակություն, իսկ ավելի հստակ՝ ճատրակի խաղաքար է:

Այսպիսով՝ բաղնիքի լողասրահի ներսույթի ստորին շերտի պեղումներով կարելի է գալ մի քանի եզրահանգումների.

1/ Բաղնիքն ունեցել է տաքացվող՝ հիպոկաուստ հատակ:

Հատակը սալարկված է եղել տուֆե սալերով, որոնք հենվել են հիմնականում տուֆե ամբողջական սյուների վրա: Բաղնիքի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ հատակի սալերը պահող հենասյուները ոչ թե աղյուսներով կամ քարերով շարված սյուներ են, այլ ամբողջական տուֆի զանգվածներ, ինչպիսիք կան անտիկ ժամանակաշրջանի հռոմեական բաղնիքներում:

2/ Սրահը միջնորմներով բաժանվել է չորս անհավասարաչափ լողասրահների: Միջնորմների առկայությունը հաստատվեց ոչ միայն պեղումներով բացված հիմքերով, այլև պատերի մեջ մնացած կավե խողովակաշարերով, որոնք անցել են այդ միջնապատերով և տաքացրել դրանք:

3/ Արհեստական և մարդածին լիցքերի հետևանքով բաղնիքի ստորին շերտերը որոշ հատվածներում մնացել են անխաթար, ինչի շնորհիվ պահպանվել են սյուների մի մասը, ջրավազանը, և բաղնիքի գործունեության ժամանակաշրջանին՝ 11-13-րդ դդ. բնորոշ հնագիտական արտեֆակտներ:

4/ Ավելի ուշ (14-15-ր դդ. և հետագայում) բաղնիքը հարմարեցվել է տնտեսական և արհեստագործական նպատակների համար:

Բաղնիքի հիմնական՝ կանգուն հատվածից անմիջապես հյուսիս ընկած տարածքը մասնակի պեղվել է 2009-2010 թթ., սակայն պեղումները մնացել են անավարտ: Նախկինում բացված բազմաթիվ, խառը քարաշարերը թույլ են տվել ենթադրելու, որ այստեղ գտնվում են ջրամատակարարման համակարգի կարևոր բաղադրիչներ, ինչպիսիք են ջուրը բաղնիք հասցնող առվակուսը:

Այս տարածքում բավականին ընդարձակ կառույց է եղել (4.94×13.3 սմ), որտեղ բացվեցին զանազան միջնապատեր, վա-

ռարաններ և, որ ամենակարևորն է, ջրի ուղղությունը ապահովող քարաշեն առվակոսներ:

Վառարաններով ուղղանկյուն, փոքր սրահի պատերը կրասվաղված և անջրաթափանց են եղել: Ինչպես հայտնի է մետաղյա կաթսաները սովորաբար դրվում էին խցերի հատակի տակ, խարույկի վրա (Անի, Անբերդ)¹⁷ և չի բացառվում, որ այստեղ մենք գործ ունենք նման խցի հետ: Ակնհայտ է, որ այս տարածքը օգտագործվել է ջրի եռացման համար, որտեղից գանազան առվակոսներով ու խողովակաշարերով ջուրը տարածվել է դեպի լողասենյակներ:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության առանձին դրամաշնորհով, վերականգնման և բարեկարգման ծրագրի շրջանակներում, Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի (տնօրեն՝ Խ. Հարությունյան) արշավախումբը 2022 թ. մայիս ամսին վերսկսեց Լոռեբերդ ամրոցի պեղումները (արշավախմբի ղեկ՝ Ա. Նալբանդյան): Պեղումներն իրականացվեցին հետևյալ տեղամասերում. ա) Պարսպին ներքուստ հարող՝ նախկինում չպեղված տարածք, բ) Պարսպի վրա երևացող շարվածքներ, գ) Փոքր (Երկրորդ) բաղնիք, դ) Մեծ (Առաջին) բաղնիքի ներսում և շուրջը:

Պարսպապատին ներսից հարող տեղամասը (240 մ/ք մակերես) նախ մաքրվեց փլատակների հսկայական կուտակումներից, ապա պեղված երկու լիցքային շերտերի տակ սկսեցին բացվել բազմաթիվ օժանդակ շինությունների հիմքեր՝ հիմնականում անմշակ քարերով շարված պատեր, որոնց ներսում վառարաններ, տնտեսական հորեր և այլն: Շատ դեպքերում պատերի մեջ

¹⁷ Տե՛ս Ալեքսանյան Ա., Միջնադարյան Հայաստանի բաղնիքները, «Էջմիածին», 2010, Ը, էջ 118-125:

օգտագործվել են վաղ կամ զարգացած միջնադարյան կառույցների սրբատաշ քարեր կամ տապանաքարեր:

Պարսպի վրա հետազոտություններ կատարելիս պարզվեց, որ հաստահեղույուս պարսպապատի վրա կան հետազայում ավելացրած բարակ պատեր: Պեղումները պարսպապատի գագաթին շատ հետաքրքիր արդյունքներ տվեցին, քանի որ բացվեցին ուղղանկյուն և կիսակլոր հատակազծերով առանձին սենյակներ, որոնցից մեկում քարե արկղերով պահարանաձև զինապահոց կամ աղավնատուն:

Պարսպապատի տարածքի պեղումները տվեց նաև ահռելի հնագիտական նյութ՝ առաջին հերթին խեցեղենի բազմաթիվ բեկորների և կենդանիների ոսկորների տեսքով: Բացի այդ մեծաքանակ նյութից գտնվեցին նաև արժեքավոր առանձին իրեր, որոնց թվում են նետասլաքները, ձուլանոթը, ուլունքները, մետաղադրամները, բրոնզե զանգը և այլն: Բացառիկ էր պարսպապատի մի հատվածում տնտեսական նշանակության կիսակլոր խորշի մեջ հայտնաբերված տասնյակ ջնարակված թասերի գյուտը: Այս անոթներն աչքի են ընկնում պատրաստման բարձր վարպետությամբ ու ջնարակի գունապնակի հարստությամբ: Թասերի մի մասի աստառին զանազան երկրաչափական և բուսական զարդանախշեր են, իսկ մյուս մասի վրա թռչունների, հավանաբար՝ կաքավների խոշոր պատկերներ: Այս հայտնագործությունը կարևոր նորահայտում է Լոռեբերդյան մշակույթի ուսումնասիրման համար:

Պարսպին հարող տարածքում, եթե չհաշվենք ուշբրոնզ-վաղերկաթեդարյան ժամանակաշրջանի հատուկենտ խեցաբեկորներն ու պատերի մեջ կիրառված վաղմիջնադարյան (6-7-րդ դդ.) ճարտարապետական մանրամասները, ապա կարելի է տալ շերտագրական հետևյալ պատկերը, որը բավական խաթարված

է. ա) 12-13-րդ դդ. (տնտեսական նորահայտ կառույց, խեցեղեն, ջնարակված թասեր, նետապաքներ, մետաղադրամներ և այլն), բ) 14-16-րդ դդ. և ավելի ուշ (կառույցների հիմքեր, վառարաններ, հորեր, ծխամորճեր, արկղեր, քարե գործիքներ և այլն):

Ամրոցի արևմտյան եզրին, ձորի անմիջապես պոնկին գտնվող Երկրորդ կամ Փոքր բաղնիքի պեղումները հանգեցրին լուրջ եզրակացությունների: Հատկապես արդյունավետ էին ամենախոշոր սրահի պեղումները, որի II շերտում բացվեցին հատակի սալերը պահող սյուները՝ հաստատելով, որ բաղնիքի լողասրահը եղել է տաքացվող: Այն տաքացվել է ջեռոցից հատակի տակ անցնող եռացած գոլորշու միջոցով, որն էլ դուրս է եկել պատերի մեջ թողնված անցքերից:

Փոքր բաղնիքը օժտված է եղել ջրամատակարարման և ջրահեռացման և տաքացման բարդ ու բավականին զարգացած համակարգով և եթե դրան հավելենք բացօթյա երկու ջրավազանները, ապա կարելի է պատկերացնել, թե ինչպիսի շքեղ և բազմաֆունկցիոնալ բաղնիքի հետ գործ ունենք: Բազմաթիվ գտածոները հավաստում են, որ բաղնիքը գործել է բավականին երկար ժամանակահատված, իսկ գտնված շքաղյուսները ցույց են տալիս, թե այն ի սկզբանե ինչպիսի ճոխ հարդարանք է ունեցել: Այդ առումով պետք է առանձնացնել մեծ լողասենյակի տարածքում հայտնաբերված կապույտ ջնարակով պատված և քանդակազարդ շքաղյուսները, որոնք ամենայն հավանականությամբ զարդարել են ջրավազանները:

Ստորին՝ անխաթար շերտի պեղումներով հայտնաբերվեցին 11-13-րդ դդ. բազմաթիվ առարկաներ՝ ապակե ապարանջանների բեկորներ, ուլունքներ, մետաղադրամ (Կոստանդիանոս X Դուկաս), կանթեղներ, մատանիներ, դաջազարդ և ջնարակված խեցեղեն և այլն: Բաղնիքի հաջորդ բանուկ ժամանակա-

հատվածը 14-15-րդ դարերն են, որոնք արտահայտված են ջնարակված բազմապիսի շքադուսներով, ծխամորճերով, կնքադրոշմով մատանիով և այլն:

Ամրոցի կենտրոնական հատվածում գտնվող Առաջին կամ Մեծ բաղնիքում բացառիկ արդյունքներ տվեցին ներսում կատարված պեղումները: Այստեղ բացվեցին ոչ միայն բաղնիքի տարբեր հատվածներն իրարից սահմանազատող պատերի հիմքերն ու հիանալի պահպանված ջրավազանը, այլև տուֆե կարճ սյուների մի ամբողջ շարք, որոնք իրենց վրա կրել են հատակի տուֆե սալերը: Այս հայտնագործությունը, ինչպես նաև եռացած գոլորշու համար նախատեսված անցքերն ու օդամուղ բացվածքները հաստատեցին այն վարկածը, որ բաղնիքն ունեցել է հիպոկաուստ հատակ:


Բաղնիքի ներսում աշխատանքներն արդյունավետ էին նաև գտածոների առումով. ոսկրե գործիքներ, ապակե սրվակների բեկորներ, ուլունքներ, պղնձե զանազան առարկաներ, կավե սափոր և առաջին անգամ նաև բաղնիքի լողարանների կարևոր ատրիբուտներից մեկը՝ քարե ցնցուղ: Եզակի էր տուֆե սյուների հիմքերի մակարդակից, այսինքն վաղագույն շերտից հայտնաբերված փղի կավե արձանիկը, որը, մեր նախնական ենթադրությամբ, ոչ այլ ինչ է, եթե ոչ շախմատի խաղաքար:

Բաղնիքի հիմնական՝ կանգուն հատվածից հյուսիս ընկած տարածքը ընդարձակ կառույց է եղել (4.94×13.3 մ), որտեղ բավականին բարդ իրավիճակ է և բազմաթիվ խառը միջնապատեր ու ջրագծերով, իսկ 4 վառարաններով ուղղանկյուն, փոքր սրահի պատերը կրասվաղված և անջրաթափանց են եղել: Ակնհայտ է, որ այս տարածքն օգտագործվել է ջուրը եռացնելու համար, որտեղից զանազան առվակոսներով ու խողովակաշարերով ջուրը տարածվել է դեպի լողասենյակներ:

Այս կառույցի տարածքի շերտերը տվեցին հարուստ հնագիտական նյութ: Գտնվեցին մեծ թվով ուլունքներ, ապարանջանների բեկորներ, խեցեղեն և կենդանական ոսկորներ: Լոռեբերդի պեղումներից հայտնաբերված մետաղադրամների մեծագույն մասը գտնվեցին այս կառույցի տարածքում: Ուշագրավ է կրաքարե, քանդակազարդ սալիկի բեկորը, որը կարող է լինել մասունքատուփի կափարիչի մաս, կոնաձև քարե կաղապարը և այլ իրեր:

Այս բաղնիքի ստորին շերտը, շնորհիվ բազմաթիվ գտածոների, թվագրվում է 12–13-րդ դդ., իսկ վերին տոփանված հատակը, որի ժամանակ շենքը ծառայել է զանազան արհեստների համար՝ 14–15-րդ դդ.:





Arman Nalbandyan, “Scientific Research Center for Historical and Cultural Heritage” of the RA MESCS, Institute of Archaeology and Ethnography of the NAS RA, The main results of the 2022-2023 excavations of Lore fortress

The Lore fortified town, located in the Lori fortress community in Lori region, is one of the best preserved fortresses in Armenia. This remarkable fortress of Gugark land, was created on the promontory formed at the confluence of the Dzoraget and Urut rivers, which is surrounded by steep cliffs. It is located at an altitude of 1490 m above the sea level, and together with the suburbs, occupied an area of 50-60 ha (the citadel alone – 9 ha). With a separate grant from the Ministry of Education, Science, Culture and Sport of the Republic of Armenia, within the framework of the restoration and improvement program, the expedition of the “Scientific Research Center for Historical and Cultural Heritage” (director – Kh. Harutyunyan) resumed the excavations of Loreberd fortified town in May, 2022 (expedition leader: A. Nalbandyan). Excavations were carried out in the following areas; a) The previously unexcavated area adjacent to the inside of the fortress wall, b) layers visible on the fortress wall, c) small (second) bathroom, d) inside and around the large (the first) bathroom.

The area adjacent to the inner fortress wall (240 sq. m) was first cleared of huge accumulations of rubble, then under the two excavated layers, foundations of numerous auxiliary buildings began to be uncovered, mainly walls made with raw stones, furnaces, pits for storing food and other stuff inside. In many cases, this walls included hewn stones or tombstones of earlier constructions. We carried out cleaning works also outside the fortress wall, in all those areas where there were piles of stones and earth mounds formed from the collapsed walls. During the research work on the fortress wall, it was discovered, that there were thin walls on top of the thick fortress walls, lined up in later period. In particular, on the western side, there is a 75 cm thick wall, stretching along the fortress wall. To the east from it there are 150 cm wide wall foundations, to which wide stone rows are attached with stair-shaped order, with 150 cm and then 90

cm width. Excavations at the top of the wall gave quite interesting results, as separate rooms with rectangular and semi-circular floor plans were discovered, one of which contained a cupboard-shaped armory with stone boxes. This is not surprising, as a large number of iron projectiles, balls, bullet molds of various sizes were found from different parts of the fortress wall. Excavations of the fortress wall area also gave enormous archaeological material – primarily in the form of numerous pottery fragments and animal bones. In addition to this bulk material, valuable individual items were also found, including arrows, a crucible, beads, coins, bronze bell, etc. Phenomenal was the discovery of dozens of glazed bowls found in a semi-circular niche of kitchen-production kiln found near one part of the fortress wall. These vessels are remarkable for their high craftsmanship and richness of the glaze palette. There are various geometrical and vegetal decorations depicted on some of the vessels, and on the other part large images of birds, probably partridges are depicted. This discovery is of great significance for the study of Lore fortress culture.

On the west edge of the fortress, right next to the gorge, the Second or Small Bath is located. On the eastern side, the construction adjoins the natural rock, and on the western side, the preserved corners of the western wall of the cloakroom are on the edge of the ravine, almost hanging in mid-air. To the south from the bath open-air swimming pools with rectangular layout are found.

The excavations of the largest hall were particularly effective, as a result of the excavation of its II layer, the columns supporting the floor slabs were discovered, which, unlike the columns of the large bath, were not monolithic tufa masses, but were gables lined with stones and lime mortar. All of this confirmed, that the bathhouse pool used to be heated. It was heated by boiling steam, flowing under the floor from the oven, which came out through the wall holes.

The small bathroom was equipped with a sophisticated and quite well-developed heating system of water supply and drainage, and if we add to it the two outdoor pools, which we also completely cleaned during our work, you can imagine what kind of luxurious and multifunctional

bathroom we were dealing with. Numerous finds confirm, that the bathhouse operated for quite a long time, and the discovered decorative tiles show the lavish decoration it originally had. In that sense, we should highlight the blue-glazed and sculpted tiles found in the cloakroom area, which most likely decorated the pools.

Excavations of the bath uncovered numerous objects of the 11th-13th centuries: fragments of glass bracelets, beads, pipes, coin (Constantine X Doukas), lugs, rings, etc.

Excavations inside the First or Great bath in the central part of the fortress yielded exceptional results. Here, not only were uncovered the foundations of the walls demarcating the different parts of the bath and the well-preserved pool, but also whole series of short tufa columns were discovered, which supported on them the tufa floor slabs. The slabs were hardly preserved and turned to dust over time. This discovery confirmed the hypothesis, that the bath had a hypocaust floor.

The excavation works inside the bath were also effective in terms of finds: bone tools, fragments of glass vials, beads, various copper objects, clay jar and, for the first time, also one of the important attributes of bathhouses – a clay shower. Unique was the clay statuette of an elephant unearthed at the level of the foundations of the tufa pillars, which we initially assumed to be nothing but a chess figure.

The area north of the main, vertical part of the bath used to be a large construction (4.94×13.3 cm), it is a rather complicated situation there, with many mixed midwalls and water lines, and the walls of the rectangular, small hall with 4 stoves were plastered and waterproofed. It is obvious that this area was used for boiling water, from where the water was spread to the bathing rooms through various streams and pipelines.

The layers of the area of this construction gave rich archaeological materials: large number of beads, fragments of bracelets, pottery and animal bones were found. Most of the coins found in the excavations of Loreberd /Lore fortress/ were found in the territory of this construction. Noteworthy is the fragment of a carved limestone slab, that may be part of a reliquary lid, a conical stone mold, and other items.

ԿԱՐԵՆ ԹՈՒՆԱԹՅԱՆ

ՀՀ ԳԱԱ պարամոնության ինստիտուտ, պ.գ.թ.

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԺԱՅՌԱՊԱՏԿԵՐՆԵՐԸ

Ժայռապատկերը նախագրային շրջանի՝ մ.թ.ա. VII-II հազարամյակների բարձրարժեք ու հավաստի պատմամշակութային սկզբնաղբյուր է, վաղնջական անցյալի յուրօրինակ մի արտացոլում, որն ակնառու կերպով պահպանել է նախնյաց մտավոր գործունեության տարաբնույթ արգասիքներ:

Հայաստանում հնուց ի վեր ծագած ժայռագրությունն իրականացրել է գիտելիքի, պատկերացումների և զգացումների գրանցման, արտահայտման, կուտակման և փոխանցման գործառույթներ, որպես մարդկային հաղորդակցության միջոց ապահովել սերունդների կապը, կենսափորձի, մտածելակերպի և մշակույթի անխզելիությունը: Ժայռապատկերման երևույթն անբաժան մասն էր ժամանակի աշխարհընկալումային, ծիսապաշտամունքային և ուսուցողական ոլորտների:

Հայկական լեռնաշխարհի ժայռապատկերային արվեստն առանձնակի է հնությամբ ու բազմաժանրությամբ, ճշգրտությամբ ու կիրառական նշանակությամբ, ուստի և ունակ է լուսաբանել պատմամշակութային իրականության բազմաթիվ ու տարազան խնդիրներ: Հսկայական քանակությամբ (մոտ քսան հազար), ոճական բազմազանությամբ և հարուստ բովանդակությամբ հայոց ժայռարվեստը առանձնահատուկ տեղ ունի Հին Աշխարհի մշակութային ժառանգության մեջ:

Աֆրիկա-եվրասիական տարածաշրջանում ժայռապատկե-

րային հնավայրերն անհամեմատ շատ են Հայկական լեռնաշխարհում, որի մերձակայքում հնագույն ժայռապատկերները քիչ են, մինչդեռ ներսում դիտվում է դրանց գերկենտրոնացում, թեմային ու տեսակային բազմազանություն: Այստեղից դեպի Փոքր Ասիա, Միջերկրածովք, Արևմտյան Եվրոպա, Սկանդինավիա, Սիբիր և Կենտրոնական Ասիա, Իրանական բարձրավանդակ, Միջագետք, Արաբական թերակղզի, Հյուսիսային Աֆրիկա ուղղություններով զգալիորեն պակասում է թե՛ տարածական բաշխման խտությունը, թե՛ հնավայրերի թիվը և թե՛ դրանցից յուրաքանչյուրում պատկերների քանակը, նվազում է հատկապես՝ բովանդակային և ոճատեխնիկական բազմազանությունը (քարտեզ 1):



Քարտեզ 1. Հին Աշխարհի հիմնական ժայռապատկերային հնավայրերը


Մեծ Հայքի ժայռապատկերներն առավել կենտրոնացած ու մեծաթիվ են Այրարատ աշխարհում՝ Գոմշուտ (Կաղզվան), Քար-

ծոր, Կարս, Բորլուկի հովիտ, Հոռոմ, Գոգարան, Գոշ, Լճաշեն, Գեղամա լեռների արևելյան լանջեր, Զովունի, Քուչակ, Ապարանի ջրամբար, Գեղամավան, Աշտարակ, Օշական, Ոսկեհատ, Լեռնամերձ, Ագարակ-1, Ագարակ-2, Արագածի հարավարևելյան լանջեր, Մեծամոր, Շամիրամ, Կաքավաձոր, Մաստարա, Զարին-ջա, Արմավիր, Դաշտադեն, Արտին լեռ, Բագարան վայրերում¹:

Այրարատից հյուսիս՝ Գուգարք աշխարհում են Յուրտագետի, Պաղաղբյուրի, Լոռի-բերդի, Կողեսի, Եղիտանքի և Նեղոցի, դեպի հյուսիս-արևմուտք՝ Տայք աշխարհում են Արիլի և Թորթումի ժայռանկարները: Դեպի արևելք՝ Սյունիք և Արցախ աշխարհներում են Թեքսարի, Վարդենիսի, Քարվաճառի, Սյունիքի լեռների և Նավասարի, դեպի հարավ՝ Վասպուրական աշխարհում են Տիրիշինի, Կորճայք աշխարհում՝ Գավառակ և Սաթ լեռների, Աղձնիք աշխարհում՝ Բնջրիի և Քաղիրթի պատկերախմբերը² (քարտեզ 2):

¹ *Շեղագիր* նշված վայրում սալաքարային պատկեր է և ժայռագրության ավանդույթի հին ու միջնադարյան վերապրուկ, վերադրված պատկեր (Լոռի-բերդում), թավ նշվածում՝ ակոսանշան, ընդգծված վայրում՝ քարաշարք:

² Հայաստանի, շրջակայքի և աշխարհի ժայռապատկերային հնավայրերի տեղադրությունը տե՛ս Թոխաթեան Կ., Մաշտոցեան տառաձեւերի եւ դրանց ժայռապատկեր նմանակների աղբյուրների շուրջ, «Բազմավեպ», 2003, №1-4, էջ 81-90, Թոխաթեան Կ., Հայկական լեռնաշխարհի ժայռապատկերների քարտեզագրումը, «Հայկական լեռնաշխարհ» հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Խ. Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարան, Երևան, 2015, էջ 332-336, Թոխաթեան Կ., Արագած լեռան և շրջակայքի ժայռապատկերները, «Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, նվիրված Պողոս Խաչատրյանի ծննդյան 90-ամյակին (Վանաձորի պետական համալսարան)», Երևան, 2020, էջ 344-361, Tokhatyan K.S., Rock carvings of Armenia, «Fundamental Armenology», № 2, 2015, p. 185-187, Tokhatyan K.S., Petroglyphs of Armenia along the Great Silk Road, «Studies on cultures along the Silk Roads», Vol. 2, Budapest, 2020, p. 132.



Քարտեզ 2. Մեծ Հայքի ժայռապատկերային հնավայրերի բաշխումն ըստ աշխարհների

1. **Բարձր Հայքի** Դերջան գավառում՝ **Բագայառիճ**:
2. **Ծովքի** Անձիտ գավառում՝ **Քարբերդ**, Բալահովիտ գավառում՝ **Պարտիզակ, Մեծկերտ**:
3. **Աղձնիքի** Անգեղտուն կամ Սանասունք գավառներում՝ **Քեղ** (Բնջրի և Քաղիրթ գետերի մոտ):
4. **Տուրուբերանի** Բզնունիք գավառում՝ **Դատվանի** քարաշարք, Աղիովիտ գավառում՝ **Օրորան, Գայթիս**, Վարաժնունիք գավառում՝ **Հերթ**:
5. **Մոկքում** ժայռապատկեր հայտնաբերված չէ:
6. **Կորճայքի** Կարթունիք գավառում՝ Գավառակ, Սաթ, Սև լեռ, Ճահուկ գավառում՝ *Կոճանց*, Կորդուք գավառում՝ Ալկեքար, Արարտու, Բեյթիշեբաթ, Կորդրիք Վերին գավառում՝ *Մեզրա*:
7. **Պարսկահայքի** Թրաբի գավառում՝ Զամբիլ լեռ:
8. **Վասպուրականում**՝ Վանա լճից հարավ՝ Անձնացիք գավառում՝ Տիրիշին, *Մարվանա*, *Չըլկրի*, Տրպատունիք գավառում՝ Նառ, Փրերեշան, Վանա լճի արևելյան ափերին՝ Արտաշիսյան

գավառում՝ **Արտամետ**, Երվանդունիք գավառում՝ **Հայկաբերդ**, Տոսպ գավառում՝ **Վանի միջնաբերդ**, **Վերին Անձավ**, **Լեզք**, Առբերանի գավառում՝ **Փանգ**, Բուն Մարդաստան գավառում՝ Բուք («Կույսերի» անձավ, գունանկար), Կրճունիք գավառում՝ Փական (փորագիր, գունավոր անձավանկար), Ճվարշ-Ռոտ գավառում՝ **Բաստամ**, Նախճավան գավառում՝ *Ս. Մարիամ*, *Աստրապատ*, Փառակա, Գողթն գավառում՝ Նավասար, Արաքսի աջափնյակի Արտավանյան գավառում՝ Արասբարան, Վանստան, Սոնգուն:

9. Սյունիք՝ տե՛ս ՀՀ տարածք:

10. Արցախ՝ տե՛ս Արցախի Հանրապետության տարածք:

11. Փայտակարանում՝ Աղվանքի Բազկան գավառում՝ *Ափշերուն*, Կաբրիստան³:

12. Ուտիքում ժայռապատկեր հայտնաբերված չէ:

13. Գուգարքի Զավախք Վերին գավառում՝ Մուրջախետք, Դամալա, Թռեղք գավառում՝ Յուրտագետ և *Ծալկայի* ջրամբար: Տե՛ս նաև ՀՀ տարածք:

14. Տայքի Արսեաց Փոր գավառում՝ Արիլի, Ոքաղե գավառում՝ Թորթում:

15. Այրարատի Շիրակ գավառում՝ Ալամ, Գետիկ, Վանանդ գավառում՝ *Չամիկ*, **Զարիշատ**, Բորլուկ գետի հովտում՝ Ազատ, Կատրան, Կերվան, Իկիսու, Սևքար, Արշարունիք գավառում՝ Գոմշուտ, Չալի, Քարծոր, Բագրևանդ գավառում՝ **Մուշանի** դամբարան, Մասյացոտն գավառում՝ *Յուլակերտ* և **Մաղարաբլուր**, Ճակատք գավառում՝ **Վարդամարգ**, Կոզովիտ գավառում՝ **Առուն**, Բասյան գավառում՝ Տանձուտ («Շարվան քարեր»): Տե՛ս նաև ՀՀ տարածք:

³ Տարածքը որոշ փուլերում Մեծ Հայքի կազմում կամ ազդեցության ոլորտում էր:

Փոքր Հայքում՝ Մալաթիայի մոտ՝ Առյուծաբլուր (որմնանկար), **Արդիճ** (Խաղտյաց լեռների հյուսիսարևմտյան լանջ):

Միջագետք Հայոց աշխարհում՝ Պորտաբլուր (հարթաքանդակ), Տիգրիսի աջափնյակում՝ Դիրջին և Դերասեր, Արվաստան (Միգդոնիա) գավառում՝ Դեմիրկապ:

Մեծ Հայքից արևմուտք՝ Կոմմագենների Փիրին վայրի «Համետ» և «Այծերի» անձավներ:

Հայաստանի Հանրապետությունում ժայռապատկերներ հայտնաբերված են բոլոր մարզերում (քարտեզ 3).

Երևանում՝ Ավան:

Արագածոտնում՝ Արագած լեռ, Մաստարա, Զարինջա, Հին Շենիկ, Արտին լեռ, Ներքին Սասնաշեն, Կաքավաձոր, Արուճ, Շամիրամ, Ոսկեհատ, Օշականի «Ջրախառնուրդ», Ագարակ-1, Ագարակ-2, **Դաշտադեմ**, Ապարանի ջրամբար, *Քուչակ, Տղմուր*, Երնջատափ: Գունանկարներ՝ Կաքավաձոր, Գեղամավան, Փոկաբերդ:

Արարատում՝ Գեղամա լեռների միջնամաս, *Խոսրովի արգելոց*:

Արմավիրում՝ Արմավիր, Մեծամոր, *Ս. Հռիփսիմե և Ս. Գայանե*, Բագարան:

Գեղարքունիքում՝ Լճաշեն, Բերդկունք, Մեծ Սպիտակասար, Վարդենիկ, Սևսար, Նշխարք, Վարդենյաց լեռնանցք, Վարդենիսի լեռներ, Այրք (Բրտի Այրք⁴, Բրտենիք, Բրտենյաց) և

⁴ Տե՛ս Մարտիրոսյան Հ.Ա., Հայաստանի նախնադարյան մշակույթի նոր հուշարձաններ, «Պատմաբանասիրական հանդես», 1969, №3, էջ 194: Գյուղի մասին տե՛ս Պատմության նահանգին Սիսական, արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբք Կարապետ վրդ. Շահնագարեանց՝ միաբան Ս. Էջմիածնի, հ. Բ, Փարիզ, 1859, էջ 373, Ստեփանոս Օրբելյան, Այունիքի պատմություն, թարգմ., ներած. և ծանոթագր. Ա.Ա. Աբրահամյանի, Երևան, 1986, էջ 264-265, նաև՝ Հակոբյան

Ներքին Շորժա (Քերթի)⁵:

Լոռիում՝ Պաղաղբյուր, Նեղոց, Կողես⁶, Եղիտանք⁷, *Լոռի-
բերդ*, Գոգարան, Լեռնավաճ:

Կոտայքում՝ Գեղամա լեռների արևելյան լանջեր, *Բջնի,
Պարղնավանք*, Ջովունի ամրոց, *Բալահովիտ*, Գեղարդի «*Ջորա-
նոց*» անձավ:

Շիրակում՝ Հայկաձոր, **Հոռում**, Ձիթհանքով, *Երերույք, Մու-
սայելյան, Տիրաշեն*:

Այոնիքում՝ Ծղուկ (Ուխտասար) Ջերմաջուր, Կարկառ,
Նազելի, Սեպասար, Ջորացքար, Գողենձոր, Շաղատ, *Բաղաբերդ*,
Քարաշեն, Կապաճ:

Վայոց Ձորում՝ *Օրբելյանների իջևանարուն*, Հուսո սար
(Թեքսարի լեռներ), Ջերմուկ, Սաոցալի, Արփի, Արփայի և Եղե-
գիսի ակունքներ:

Տավուշում՝ Գոշ:

Արցախի Հանրապետությունում ժայռապատկերներ հայտ-
նաբերված են հետևյալ շրջաններում.

Ասկերանում՝ *Տանձարափ (Իվանյան)*, Շուշիի «Հունոտի
ձոր»:


Թ.Խ., Մելիք-Բախչյան Ստ. Տ., Բարսեղյան Հ.Խ., Հայաստանի և հարակից
շրջանների տեղանունների բառարան, Երևան, հ. 1, էջ 244, 668, 743, հ. 2, էջ 34, հ.
5, էջ 553:

⁵ Մարտիրոսյան Հ.Ա., նշվ. աշխ., էջ 194: Գյուղի մասին տե՛ս Հակոբյան Թ.Խ.,
Մելիք-Բախչյան Ստ. Տ., Բարսեղյան Հ.Խ., նշվ. աշխ., հ. 4, էջ 151, հ. 5, էջ 338-
339, 345, նաև՝ Թոխաթեան Կ., նշվ. աշխ., էջ 83-84:

⁶ Ըստ Ս. Զալալյանցի՝ նաև Տոթկաջուր. գյուղը Տուտ իշխանի կալվածքն էր (Զա-
լալյանց Ս. Արքեպ., Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, Երևան, 2016,
մաս Ա, Բ, էջ 117), տե՛ս նաև Հակոբյան Թ.Խ., Մելիք-Բախչյան Ստ. Տ.,
Բարսեղյան Հ.Խ., նշվ. աշխ., հ. 3, 198:

⁷ Այժմ՝ Յաղդան: Ս. Զալալյանցը նշել է Եղիտակ անվամբ (Զալալյանց Ս., նշվ.
աշխ., էջ 116), տե՛ս նաև Հակոբյան Թ.Խ., Մելիք-Բախչյան Ստ. Տ., Բարսեղյան
Հ.Խ., նշվ. աշխ., հ. 2, էջ 189, հ. 3, էջ 916-917:

Քաշաթաղում՝ Իշխանասարի հյուսիսային լանջի Սև լճի ափեր, Միրիկ⁸:



59

ռը, **Այրարատ** աշխարհի հյուսիսային հատվածը՝ Տաշիր Վերին գավառը և Նիգ գավառի հյուսիսային մասերը: Մարզում հայտնաբերված ժայռապատկերները Պաղաղբյուր, Նեղոց, Կողես, Եղիտանք, Լոռի-բերդ, Գոգարան գյուղերի մոտ են, հավանաբար նաև՝ Լեռնավանի մոտ:

Պաղաղբյուր, Գուգարք աշխարհի Տաշիր գավառ: 1989 թ. հնագետ Հակոբ Սիմոնյանը վտանգված մշակութային հուշարձանների շարքում այս վայրից երկու ժայռապատկեր հրատարակեց (աղ. 1)⁹: 2015 թ. նոյեմբերի 5-ին հետազոտել ենք այդ ժայռապատկերները: Գյուղից 2 կմ արևմուտք, ձորակի ձախ ափի կրոմլեխից 15 մ վերև (հյուսիս), ուղղաձիգ ժայռի խորշի արևմտյան պատի հարթ մակերեսին պահպանված է Հ. Սիմոնյանի հրատարակած բազմատարր ժայռապատկերը, որի մոտակայքում գտանք ևս չորսը (աղ. 1₂₄): Ամերիկաբնակ բժիշկ Վահե Մարտիրոսյանը 2010 թ. ժայռապատկերներ է տեսել հայ-վրացական սահմանի այն կողմում ևս:

Նեղոց, Գուգարք աշխարհի Ձորոփոր գավառ: 1987 թ. հնագետ Վահան Գայսերյանի արշավախումբը Դեբեդի աջափնյա նեղ ձորակում գտնվող այս գյուղի գերեզմանոցում ու մոտակա անձավի մուտքի առջև հայտնաբերել է 10 ժայռապատկեր, դրանք համարելով մ.թ.ա. III-II հազարամյակների արգասիք¹⁰: Հնագետ Վ. Ավետյանը 2002 թ. մարտի 4-ին մեզ տրամադրեց

⁹ Սիմոնյան Հ., Վտանգված ժառանգություն, «Մշակույթ», 1989, №1, էջ 21, տե՛ս նաև՝ Հերլես Մ., Դավթյան Ռ., Հնագիտական նոր հետազոտություններ Լոռու մարզում, «Արագածի թիկունքում. հնագիտական հետազոտություններ» նիված Տեխնակ Խաչատրյանի հիշատակին», Երևան, 2018, էջ 98-113:

¹⁰ Գայսերյան Վ., Ժայռապատկերներ՝ Գուգարքում, «Սովետական Հայաստան» օրաթերթ, 24 հուլիսի 1987, էջ 4, Հակոբյան Թ.Խ., Մելիք-Բախշյան Ստ. Տ., Բարսեղյան Հ.Խ., նշվ. աշխ., հ. 3, էջ 975, տե՛ս նաև՝ Թոխաթեան Կ., նշվ. աշխ., էջ 82:

դրանցից ութի լուսանկարը: 2006 թ. նա հրատարակեց ևս 13 ժայռապատկեր (աղ. 2): Թիվն ավելին պետք է լինի, քանի որ պատկերներ են նշմարվում նաև խոշոր, շրջված քարերի ստորին, անհասանելի մասում, ուստի, հարկ է հետազոտել գյուղի տարածքով մեկ անկանոն սփռված՝ 1988 թ. երկրաշարժի պատճառով գլորված, տեղաշարժված քարերը ևս: Տեղում գտնվել են մ.թ.ա. II հազարամյակի կեսերին բնորոշ խեցեղենի բեկորներ¹¹:

Կողես, Գուգարք աշխարհի Տաշիր գավառ: 1990 թ. հոկտեմբերի 31-ին Ձորագետի ճախափնյակի այս գյուղից 2 կմ հյուսիս, երկրաբան Հակոբ Տոնականյանի հետ հետազոտել ենք իր նկատած քարե կիսաշրջանները և նշանագրերով երկանկյուն կողմնացույց քարաշարը¹² (աղ. 3): 5-15 մ տրամագծերով կիսաշրջանների քարերի քանակներն օրացուցային են՝ 7, 12 և 30, որոնք կարող էին նշել շաբաթվա և ամսվա տևողությունը և ամիսների թիվը: Օղակներից մեկի ներսում կա ևս երեքը, ուստի, քարերի ընդհանուր թիվը 52 է՝ տարվա շաբաթների թիվը: Այդ կերպ կարող էր արտահայտվել, օրինակ, տարվա տևողությունը՝ $7 \times 52 = 364$ օր: Հավանական է նաև, որ կառուցվածքն ունենար կիրառական գործառույթ՝ որպես օրացուցային գոր-

¹¹ Ավետյան Վ., Նորահայտ ժայռապատկերներ Նեղուց գյուղի տարածքում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2006, №2, էջ 249-255:

¹² Տոնականյան Հ., Թոխատյան Կ., Կիսուե՞ն արդյոք քարերը, «Չվարթնոց», 1991, №4, էջ 31-34, Թոխատյան Կ., Ժայռապատկերաբանության ակունքները Հայաստանում, «Հայոց պատմության հարցեր», 2003, № 4, էջ 82, Թոխատյան Կ., Ժայռապատկերաբանության և օրացույցի ակունքները Հայաստանում և Անանիա Շիրակացի, «Աստղագիտական ժառանգությունն ազգային մշակույթում», Անանիա Շիրակացու 1400-ամյակին նվիրված պատմա-աստղագիտական գիտաժողովի նյութերի ժողովածու (Բյուրականի աստղադիտարան), Երևան, 2014, էջ 122, նկ. 25, Թոխատյան Կ., Հայկյան օրացույցի ակունքներում, «Հայկազունիներ» ժողովածու, Երևան, 2013, էջ 228, նկ. 22: Tokhatyan K., Rock carvings of Armenia, «Fundamental Armenology», № 2, 2015, p. 185, 195, 199:

ծիք՝ համապատասխան քարի մոտ որևէ իր դնելով կարելի է նշել ամսվա օրը, շաբաթվա և ամսվա համարը: Հարևան **Եղիտանք** գյուղի անձավի մուտքին կից քարին անձավագետ Արմեն Գևորգյանը 1995 թ. նկատել է փոսիկների չորս խումբ, որոնցից երկուսը կազմված են 12 անցքից (աղ. 4): Հավանական է դրա օրացուցային նշանակությունը:

Լոռի-բերդ, Գուգարք աշխարհի Տաշիր գավառ: Հնավայրի ամենամեծ՝ № 79 դամբարանի ներքին խուցը յուրատեսակ «պատկերասրահ» էր, որի չորս պատերի մուգ հիմնագույնի վրա 1992 թ. հայնաբերվել էին կենդանիների դեղին, նարնջագույն ու կանաչ գծանկարներ և ալիքաձև նախշեր (աղ. 5): Ամենայն հավանականությամբ, հնում պատին կախված է եղել հանքային ու խեժահիմք ներկերով նկարազարդված մի գործվածք, որի պատկերները պահպանվել են որպես դաջվածք: Պատերի փլուզման ու լվացման հետևանքով նկարներն աղճատված էին, այժմ արդեն գոյություն չունեն: Ոճով ու բովանդակությամբ դրանք աղերսվում են լեռնային ժայռապատկերների¹³:

Գոգարան, Այրարատ աշխարհի Տաշիր Վերին գավառ: 1987 թ. սեպտեմբերի 12-ին և 2013 թ. հոկտեմբերի 21-ին, Բազումի լեռնաշղթայի հարավային ստորոտում, գյուղից 3 կմ հարավ, մայրուղուց 600 մ հյուսիս գտնվող մ.թ.ա. II-I հազարամյակներով թվագրվող սալաքարային դամբարանների, գուռերի և «գահավորակների» միջավայրում նկատեցինք տասնյակ խորակոս, գծանշանակիր քարեր (աղ. 6): Ոճով ու նշանների

¹³ Դևեջյան Ս., Լոռի բերդի №79 դամբարանը, «Հին Հայաստանի մշակույթը, Հ. Մարտիրոսյանի հիշատակին նվիրված գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ», Երևան, 2001, էջ 39, Դևեջյան Ս., Լոռի բերդ II (միջին բրոնզ), Երևան, 2006, էջ 63-65, նկ. 43, աղ. XIV-XVI, տե՛ս նաև՝ Թոխաթեան Կ., նշվ. աշխ., էջ 82:

ծնով նման են Արցախի Տանձատափ, Վրաստանի Մղվիմն, Կորդոքի Արարտու, Թռեղքի Ցուրտագետ հնավայրերի, Ապարանի ջրամբարի ափերի, Երնջատափի, Գնդեվազի և այլ փորագրերին:

Լոռու մարզի ժայռապատկերները և պաշտամունքային կառույցների նշանագրերը, գտնվելով հիմնականում ցածրալեռնային անտառատափաստանային գոտում, դրսևորում են թեմային ու ոճական, տեխնիկական ու տեղագրական ընդհանրականություն ամբողջ Հայաստանի բարձրալեռնային պատկերների հետ՝ վկայելով Հայոց մեջ ժայռապատկերման ավանդույթի հարատևումը, անընդհատությունն ու անցումայնությունը:

Ժայռապատկերային մշակույթով ևս Հայկական լեռնաշխարհը ներկայանում է որպես մեկ ամբողջություն, որի մարդաբանական ու մշակութաբանական պատկերն անընդհատ է ըստ տարածքի՝ մոտ 400 հազար կմ² և ժամանակի՝ հարյուր հազարավոր տարիներ:

Karen Tokhatyan, *Institute of History of the NAS RA, Cand. Hist. Sci., The petroglyphs of Lori region*

Rock art in Armenia originated in the 7th-5th millennia BC. Certain ancient compositions and styles naturally continued in other areas of Armenian culture. The traditions of petroglyphs are observed in bas-reliefs and frescoes of the Early Iron Age and cuneiform periods, as well as in ancient and medieval structures and caves. The skills of carving have been preserved in constructions, sculpture, cuneiform and lapidary inscriptions.

Petroglyphs of Lori region and signs on religious buildings located mainly in low mountain areas demonstrate thematic and

stylistic, technical and topographical similarities with high-mountain images throughout Armenia, testifying to the continuity of carving traditions among Armenians. The petroglyphs are direct evidence that the Armenian Highland represents a single whole by rock art monuments as well. Thus, the continuity of anthropological and cultural picture is clearly traced in space (400.000 km²) and in time (hundreds of millennia).

ԱՐՄԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

*Երևանի պետական համալսարան,
պ.գ.դ., պրոֆեսոր*

ՏԱՇԻՐՔԻ (ԼՈՌԻԻ) ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆ ՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ*

Հայոց Սմբատ Բ թագավորի գահակալության (978–990 թթ.) շրջանում Բագրատունյաց թագավորությունում խորացավ մասնատվածության գործընթացը, և մեկը մյուսի հետևից առաջացան Տաշիրքի, Փառիսոսի և Սյունիքի թագավորությունները: Դրա հետևանքով Բագրատունյաց թագավորությունն էապես թուլացավ և աստիճանաբար կորցրեց արտաքին մարտահրավերներին արդյունավետ պատասխանելու կարողությունը:

Նշվածի համատեքստում կարևոր է Տաշիրքի (Տաշրաց) թագավորության¹ ստեղծման ժամանակի և հանգամանքների ուսումնասիրությունը, քանի որ այդ թագավորության ստեղծումը ինքնին տարբերվում էր Փառիսոսի և Սյունիքի թագավորությունների պարագայից: Խնդիրն այն է, որ, մասնավորապես, Սյունի-

* Տաշիրքի թագավորության ստեղծման վերաբերյալ սույն նյութը՝ ավելի համառոտ շարադրանքով, տեղ է գտել Ա. Եղիազարյանի «Սմբատ Բ Տիեզերակալ. թագավոր հայոց (Երևան, 2021)» աշխատության մեջ (էջ 38-51): Այստեղ կատարվել են զգալի հավելումներ:

¹ Պատմագիտության մեջ երբեմն կոչվել է «Տաշիր-Ձորագետի թագավորություն», որով փորձ է կատարվել անվանման մեջ ներկայացնել թագավորության աշխարհագրական ընդգրկումը, երբեմն էլ՝ «Լոռիի թագավորություն» (տե՛ս հղված թեմատիկ գրականությունը), իսկ պատմիչների երկերում՝ նաև «Աղվանից թագավորություն» (տե՛ս, օրինակ, Մատթեոս Ուռայեցի, Ժամանակագրություն, գրաբար բնագիրը՝ Մ. Մելիք-Աղամյանի և Ն. Տեր-Միքայելյանի, աշխարհաբար թարգմ. և ծանոթագր. Հ. Բարթիկյանի, Երևան, 1991, էջ 22):

քի դեպքում Բագրատունյաց պետությունից բաժանվում էր նախկինում՝ 880-ական թթ. սկզբին այդ թագավորության հիմնադրման համար Բագրատունիների և Արծրունիների հետ դաշինք կազմած տոհմը², որի հետևանքով Բագրատունյաց թագավորությունն ամփոփվում էր միայն Բագրատունյաց տիրույթներում, քանի որ Արծրունիներն էլ իրենց հերթին դաշինքը խզել էին 908 թ.³ ստեղծելով իրենց թագավորությունը: Իսկ Տաշիրքի թագավորությունը Բագրատունյաց տիրույթներում Սմբատ Բ-ի հավանությամբ և նրա եղբոր գլխավորությամբ ձևավորված պետություն էր, որը պարտավորված էր մնալու Անիի տիրակալի գերակայության ներքո:

Տաշիրքի թագավորության ստեղծման մասին արժեքավոր տեղեկություններ է պարունակում Սանահինի վանքին Սմբատ Բ-ի (978-990 թթ.) անունից տրված՝ հայոց 428 թ. (մարտ, 979 թ. մարտ, 980 թ.) հրովարտակը: Վերջինով արքան սահմանում էր «վիճակ եւ երկիրս զայս Սանահինիս զամենայն երկիրն Տաշրաց՝ զՎերին եւ զՆերքին, մինչ ի լեառն Բագում, յայսկոյս եւ յալլյնկոյս, մինչեւ ի սահմանս Գուգարաց աշխարհին եւ մինչ ի սահմանս Տփիս[ե]աց եւ Վրաց, եւ ի սահմանս Նիգ գաւառի եւ մինչեւ ի սահմանս Կայենոյ, եւ զսահմանս Ծաղկոցաց, մինչ ի սահմանս Տան Շիրակայ»³: Հոգևոր վիճակի ընդգրկված «Տաշրաց երկրի» սահմանները, որոնք, ինչպես կտեսնենք, նույնական էին Սմբատ

² «Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սինեաց», Թիֆլիս, 1910, էջ 175: Պատմիչը հաղորդում է, որ «յայնմ ժամանակի (881 կամ 882 թ.-Ա.Ե.) խորհուրդ ի մէջ առեալ աստուածային իմն տեսչութեամբ Գրիգորի Սուփանայ և Վասակայ իշխանիկ կոչեցելոյ՝ տէրանցն Սինեաց, ընդ Գրիգորի Դերենիկ կոչեցելոյ, որ էր իշխան տանն Արծրունեաց, և ընդ այլ իշխանաց Հայոց, խնդրեն յամիրապետէն Ամիր-Ահմատայ և կացուցանեն զԱշոտ Բագրատունի թագաւոր Հայոց»:

³ «Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահինի քեթօւկը)», աշխատասիրութեամբ՝ Պ. Մուրադեանի, Ս. Էջմիածին, 2007, էջ 67-68:

Բ-ի կրտսեր եղբայր Գուրգենի գլխավորությամբ հիմնադրված Տաշիրքի թագավորության սահմաններին, ներկայացված են շատ հստակ և որոշակի. դրանցում ընդգրկված էին Այրարատի ծայր հյուսիսարևելյան հատվածը (Նիգ գավառի հյուսիսային հատվածը՝ «հայսկույս Բագումը» և ամենայն հավանականությամբ նաև Վարաժնունիք գավառի հյուսիսային մասը՝ մինչև Ծաղկոցաց-Ծաղկունյաց լեռները) և Գուգարքի ողջ արևելյան հատվածը՝ Կանգարքից մինչև Շամշուղե ամրոցը հյուսիսում, և Կայան բերդը՝ Աղստև գետի հովտում տարածվող համանուն գավառակով՝ արևելքում⁴: Ասվածին համահունչ է Վարդան վարդապետի այն հաղորդումը, որ Սմբատ Բ-ի եղբայր Գուրգենը «ժառանգե զՏաշիր Սևորդուվքն Ձորոյգետին. և զԿայեն և զԿայծոն, զԽորխոռունիք՝ որ ի Խոռայ շինեցաւ, որ է Խոշոռնի և Խոռակերտ, և զԲագունիք՝ որ է Բագկերտ ի գաւառն Տաշրայ»⁵: Հաղորդումից պարզ է, որ Գուրգենի թագավորության հյուսիսային և արևելյան սահմանները հիմնականում համապատասխանում էին Սմբատ Բ-ի հրովարտակում մանրամասնորեն նկարագրված հոգևոր վիճակի սահմաններին: Անանուն ժամանակագրություններից մեկում նշված է, որ «Գուրգէն (իմա՝ Տաշիրքի առաջին թագավորը – Ա. Ե.) տիրէ Գոգարացոց կողմանս սկսեալ ի Գագայ, Խառայ մինչև ի դուռն Տփխեաց»⁶, որն առնվազն հյուսիսային սահմանի առումով համապատասխանում է Սանահինի

⁴ Տե՛ս Մաթևոսյան Ռ., Կայան բերդի և գավառի տեղադրությունը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1972, № 2, էջ 53-62:

⁵ «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, ի Սուրբ Ղազար, 1862, էջ 90: Հեղինակի թվարկած բերդերից Կայանը գտնվում էր Ձորոփորում, Կայծոնը՝ Ձորագետի հատվածում, Խոշոռնին՝ Ծորոփորում, Բագկերտը՝ Տաշիրքում (տե՛ս Հովհաննիսյան Մ., Հայաստանի բերդերը, Վենետիկ, Ս. Ղազար, 1970, էջ 533-588):

⁶ «Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», հ. II, կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Երևան, 1956, էջ 501:

հիշատակարանի հաղորդած տվյալներին:

Տաշիրքի թագավորության հիմնադրման նշանակությունը չի կարելի թերագնահատել, քանի որ դրանով հերթական բաժանմանն էին ենթարկվում Բագրատունյաց արքունի և տոհմական տիրույթները: Եթե Աշոտ Գ Ողորմած թագավորի օրոք (953-978 թթ.) դրանցից բաժանվել էր արևմտյան հատվածը, որտեղ ստեղծվել էր Կարսի թագավորությունը, ապա այժմ՝ նաև հյուսիսարևելյանը: Ի դեպ, հույժ էական է հիշելը, որ ըստ «Թագաւորք վերջինք Բագրատունիք» կոչված ժամանակագրության՝ Աշոտ Գ-ի որդիներ Սմբատը, Գուրգենը և Գագիկը «... համակամ սիրով երիս բաժանեն զթագաւորութիւնն՝ հայրագլուխ⁷ առնելով զՍմբատ, եւ Գուրգեն տիրէ Գոգարացոց կողմանս...»⁸, ինչը նշանակում է, որ Բագրատունիների տիրույթները բաժանվել են երեք եղբայրների միջև, որից հետո Գուրգենը թագավոր է հռչակվել: Բայց, եթե Գուրգենի ստացած հողերը հիշատակվում են, ապա Գագիկին բաժին հասած տիրույթների մասին տեղեկություններ չկան: Ըստ որում, ճիշտ է՝ խոսվում է թագավորության և ոչ թե Բագրատունյաց տիրույթների բաժանման մասին, սակայն հավանական չէ, որ բաժանման մեջ տեղ գտնեին այլ տոհմերին՝ Արծրունիներին, Սյունիներին և այլոց պատկանող տարածքները, ինչն ակնհայտ է Գուրգենի ստացածից, որում ընդգրկված էին հատվածներ բացառապես Բագրատունիների տոհմական ու արքունի տիրույթներից: Գագիկի պարագային կանդրադառնանք այլ ուսումնասիրությամբ, քանի որ այն

⁷ «Հայրագլուխ» նշանակում է «իբրև հայր խնամակալող, խնամակալ» (տե՛ս «Հայերէն բացատրական բառարան», կազմեց Ս. Մալխասեանց, հատոր առաջին, Ա-Ե, Երևան, 1944, էջ 40):

⁸ «Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», հ. II, էջ 501, տե՛ս նաև «Յիշատակարան Սանահինյ վանից (Սանահինի քեթօրակը)», էջ 59:

առանձնահատուկ է, իսկ այժմ քննության առնենք Տաշիրքի թագավորության ստեղծման հարցը:

Պատմիչներից Տաշիրքի թագավորության հիմնադրման թվականի մասին տեղեկություններ է պահպանել միայն Մխիթար Այրիվանեցին՝ նշելով հայոց 430 թվականը և հետագուտոդների կողմից որպես հռոմեական թվական ընկալված 981-ը. «Աստեղև սկիզբն թագաւորելոյ Բագրատունեաց ի վերայ Վրաց, զի Գուրգէն ի Վիրս և Սմբատ եղբայր նորա ի Հայս թագաւորեցին»⁹: Ակնհայտ է, որ խոսքը Աշոտ Գ-ի որդի Գուրգենի թագավորելու մասին է, թեև սխալմամբ նրան վերագրված է Վիրքում թագավորելը, ըստ որում՝ վրաց առաջին Բագրատունի թագավոր լինելը:

Դեռևս Մ. Չամչյանցը Գուրգենի թագավորելը թվագրում էր 982 թ.՝ այն կապելով այդ ժամանակ Սմբատ Բ-ի ունեցած դժվարությունների ընթացքում Գուրգենի դրսևորած հավատարմության գնահատման հետ¹⁰:

Ղ. Ալիշանը իրադարձությունների ընթացքը ներկայացնում է հետևյալ կերպ. «Զկնի մահուան Աշոտոյ ի թուականին ՆԻԶ (426 թ.՝ մարտ, 977 թ. – մարտ, 978 թ. – Ա. Ե.), թագաւորէ որդի նորա Սմբատ. որում պատահէ երթալ ի տեսութիւն ողբօրն իւրում հարազատին Գուրգենայ, որ էր յայնժամ իշխան բնաւ երկրին Տաշրաց...»: Փաստորեն, ըստ հեղինակի՝ Գուրգենը իշխել է Տաշիրքում դեռևս նախքան թագավորելը: Երկու եղբայրներն այցելում են Սանահին և Գուրգենը հրովարտակ է գրում, որով նվիրատվություններ է կատարում վանքին՝ իրեն կոչելով

⁹ Տե՛ս «Մխիթարայ Այրիւանեցոյ պատմութիւն Հայոց», ի լոյս ընծայեաց Մ. Էմին, Մոսկվա, 1860, էջ 56, «Մխիթարայ Այրիւանեցոյ պատմութիւն ժամանակագրական», ի լոյս ընծայեաց Բ. Պ., Ա. Պետերբուրգ, 1867, էջ 71:

¹⁰ Տե՛ս Չամչեանց Մ., Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ 1784, Վենետիկ, ի Ս. Ղազար, հատ. Բ, 1785, էջ 851-852:

«Գուրգէն թագաւոր, Շահնշահի որդի Աշոտոյ Ողորմածի»¹¹: Ակնհայտ է, որ Ղ. Ալիշանը նկատի ունի Սմբատ Բ-ի 978 թ. այցելւոյնը Տաշիրք, ինչից կարելի է եզրակացնել, որ նա Գուրգէնի գահակալւոյան սկզբնավորումը համարում է 978 կամ 979 թվականը:

Հ. Ղևոնդ Մովսեսյանի կարծիքով Սմբատ Բ-ն 979 թ. հրովարտակով միաժամանակ «կը գծեր ... իւր եղբօր Գուրգէնի իշխանութեան սահմանները, եւ այս առթիւ տեղի կունենար Տաշիրքի անկախ հրատարակութեան հանդէսը Սանահնի մէջ, ուր գացած էր Հայոց թագաւորը այս նպատակաւ»¹²: Նա, հիմք ընդունելով հրովարտակի 979 և Գուրգէնի թագավորելու՝ Մխիթար Այրիվանեցու հիշատակած 981 թվականները, Տաշիրքի թագավորւոյան ստեղծումը թվագրում է 980 թ., այսինքն՝ նշված երկու թվականների միջակայքով¹³:

Տաշիրքի թագավորւոյան պատմւոյան վերաբերյալ մի շարք հետազոտւոյնների հեղինակ Ռ. Մաթևոսյանը շրջանառել է տեսակետ այն մասին, թե Տաշիրքի թագավորւոյնը ստեղծվել է դեռևս Աշոտ Գ-ի գահակալւոյան շրջանում: Նման տեսակետի հիմքում Մատթեոս Ուռհայեցու տեղեկւոյնն է, ըստ որի՝ 974 թ. բյուզանդական բանակին ընդառաջ շարժվող հայոց զորքի կազմում էր, ի թիվս այլ թագավորների ու իշխանների, «թագաւորն Աղուանից Գուրգէն»-ը¹⁴, որը նույնանում է Տաշիրքի առաջին թագավոր, Սմբատ Բ-ի եղբայր Գուրգէնին: Թեև ակնհայտ է պատմիչի կողմից հայոց զորքի կազմում ներկայաց-

¹¹ Տե՛ս Ալիշան Ղ., Հայապատում. պատմութիւն Հայոց, հ. Բ, Վենետիկ-ի վանս Ս. Ղազարու, 1901, էջ 105:

¹² Մովսէսեան Ղ., Լօռիի Կիրիկեան թագաւորներու պատմութիւնը, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1923, էջ 26:

¹³ Տե՛ս նույն տեղում, էջ 28:

¹⁴ Տե՛ս Մատթեոս Ուռհայեցի, էջ 22:

ված անձանց անվանացանկի ժամանակավրեպությունը¹⁵, սակայն Ռ. Մաթևոսյանն այն հիմք է ընդունել Գուրգենի թագավորելը դեռևս Աշոտ Գ-ի օրոք հիմնավորելու համար՝ որպես թագավորելու մեկնակետ նշելով 972 թվականը¹⁶: Հետագայում Ռ. Մաթևոսյանը խմբագրել է իր տեսակետը և Գուրգենի թագավոր դառնալը թվագրել 979 թվականով¹⁷, սակայն ծանոթագրության մեջ հավելել, թե «Գուրգենը գահակալությունը ստանձնել է 972 թ.»¹⁸, ինչը խիստ հակասական է: Թեմային առնչվող իր հոդվածներից մեկում էլ նա փորձել է հիմնավորել Տաշիրքի թագավորության՝ 969/970 թ. ստեղծված լինելը¹⁹: Իր վերջին ուսումնասիրություններից մեկում էլ Ռ. Մաթևոսյանը ներկայացրել է Տաշիրքի թագավորության ձևավորման հետևյալ ընթացքը: 960-ական թթ. Աշոտ Գ-ն վարչական բարեփոխումներ է կատարել Տաշիրքում՝ միավորելով դեռևս X դ. սկզբին գոյություն ունեցող Տաշիրք և Ուտի գավառները և ստեղծելով Տաշիրք «երկիրը»: Վերջինս ուղղակիորեն ենթարկվում էր արքունիքին: Միևնույն ժամանակ ստեղծվեց նաև Տաշիրք երկրի եկեղեցական թեմը՝ Սանահին կենտրոնով: Հետագոտողը Սանահինի Ս. Ամենափրկիչ եկեղեցու՝ Սմբատ և Գուրգեն Բագրատունիների քանդակից, որի ներքո գրված է «Կորիկէ թագաւոր, Սմբատ թագաւոր»²⁰, եզրակաց-

¹⁵ Տե՛ս Ղարիբյան Ի., Կյուրիկյան թագավորության հռչակման տարեթվի շուրջ, «Բանբեր Երևանի համալսարանի», 1977, № 1, էջ 82, Հարությունյան Բ., Սյունյաց թագավորության հիմնադրման տարեթիվը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, № 1, էջ 148-149:

¹⁶ Տե՛ս Մաթևոսյան Ռ., Դիտողություններ Կյուրիկյանների պատմության վերաբերյալ, «Պատմաբանասիրական հանդես», 1968, № 3, էջ 200-202:

¹⁷ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, Երևան, 1976, էջ 102:

¹⁸ Նույն տեղում, ծանոթ. 7:

¹⁹ Տե՛ս Մաթևոսյան Ռ., Լոռվա թագավորության կազմավորման պատմությունից, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1976, № 3, էջ 86-95:

²⁰ Ղաֆադարյան Կ., Սանահինի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 77, 98:

նում է, որ Սմբատը Տաշիրքում ուներ վարչական իշխանություն որպես Աշոտ Գ-ի թագավոր-գահակից, ավելի որոշակի՝ փոխարքա և հայոց թագավորի ներկայացուցիչ: Քանի որ Գուրգենը ևս այդ քանդակում հանդես է գալիս որպես թագավոր, նա եզրակացնում է, որ Ս. Ամենափրկիչ եկեղեցու կառուցման ժամանակ (957-966 թթ.) «Տաշիրում, բացի Սմբատից, կար նաև այլ կառավարիչ-թագավոր»²¹: Այստեղ միայն նշենք, որ Սանահինի վանքի ուսումնասիրությունն իրականացրած Կ. Ղաֆադարյանը նշված վիմագիրը թվագրում էր ոչ թե 960-ական թթ. երկրորդ կեսով, այլ 980-ական թվականներով²², երբ երկու եղբայրները թագավորում էին՝ Սմբատը՝ որպես գերակա և Գուրգենը՝ ստորակա: Պետք է նշել նաև, որ հետազոտողը մերժում էր Մխիթար Այրիվանեցու տեղեկության իսկությունը՝ այն համարելով անճշտություններով ու շփոթություններով լեցուն²³: Ի վերջո, հեղինակն իր «Տաշիր-Ձորագետ (X դ.-XII դ. սկիզբ)» աշխատության մեջ թագավորության հիմնադրումը առաջարկում է հաշվել առնվազն 966 թվականից, քանի որ ըստ նրա այդ թվականին ստեղծվել է տեղի եկեղեցական թեմը, իսկ այն չէր կարող ստեղծվել առանց տեղում սեփական թեմի կարիք ունեցող քաղաքական միավորի առկայության²⁴:

Ի. Ղարիբյանը հերքում է Աշոտ Գ-ի օրոք Գուրգենի թագավորելու վարկածը²⁵: Նա Գուրգենի թագավոր հռչակվելու հավանական ժամանակը սահմանափակել է 979 թվականից սկսած շրջանով՝ կարծելով, որ, եթե մինչ հրովարտակը, այսինքն՝ 972

²¹ Մաթևոսյան Ռ., նշվ. աշխ., էջ 153-154:

²² Տե՛ս Ղաֆադարյան Կ., նշվ. աշխ., էջ 98:

²³ Տե՛ս Մաթևոսյան Ռ., Դիտողություններ Կյուրիկյանների պատմության վերաբերյալ, էջ 200:

²⁴ Տե՛ս Մաթևոսյան Ռ., Տաշիր-Ձորագետ (X դ.-XII դ. սկիզբ), Երևան, 1982, էջ 65:

²⁵ Տե՛ս Ղարիբյան Ի., նշվ. աշխ., էջ 79-82:

թվականից, Գուրգենը թագավոր լինելը, ապա Սմբատ Բ-ն Տաշիրքում ազատ տնօրինել չէր կարող, քանի որ դա կդիտվեր որպես ֆեոդալական սեփականատիրական իրավունքի խախտում²⁶: Ի. Ղարիբյանը Գուրգենի թագավորության հիմնադրումը թվագրում է 979 թվականով և համարում, որ նա գահակալել է 10 տարի՝ մինչև 989 թվականը²⁷: Հետազոտողը Գուրգենի թագավոր հռչակվելը կապում է Սմբատ Բ-ի 979 թ. հրովարտակի հետ, որով, փաստորեն, համերաշխվում է Հ. Ղևոնդ Մովսեսյանի այն տեսակետին, որ հոգևոր վիճակի սահմաններն ամրագրելով՝ Սմբատ Բ-ն նաև սահմանում էր Գուրգենի թագավորության տարածքը: Սմբատ Բ-ն, գնալով Սանահին, հռչակում էր նոր թագավորության սկզբնավորումը, որը նրա բարի կամքի դրսևորումն էր և արդյունք էր հայոց թագավորության այդ հատվածը կենտրոնախույս ձգտումներից ապահովագրելու նրա ցանկության²⁸:

Ըստ Ա. Շահնազարյանի՝ Սանահինի վանքի դպիր Սիմեոնի 979 թ.²⁹ հիշատակարանում Գուրգենը ներկայացված է որպես «իշխան բնաւ երկրին Տաշրայ»³⁰, ինչը որոշակիորեն ցույց է տալիս Սմբատ Բ-ի հրովարտակում հիշատակված՝ Սանահինի

²⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 81:

²⁷ Թվագրման հիմքում Վ. Հակոբյանի այն ուղղումն է, ըստ որի՝ «Թագաւորք վերջինք Բագրատունիք» ժամանակագրության մեջ Գուրգենին 50-ամյա գահակալություն (ամս Ծ) վերագրելը վրիպակ է, իրականում պետք է լինի «ամս Ժ (10 – Ա. Ե.)»՝ նկատի ունենալով Ժ և Ծ տառերի հավանական շփոթը (տե՛ս «Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ.», հ. II, էջ 503, ծանոթ. 3):

²⁸ Տե՛ս Մովսէսեան Ղ., նշվ. աշխ., էջ 26, Ղարիբյան Ի., նշվ. աշխ., էջ 84-85, տե՛ս նաև, Ղարիբյան Ի., Լոռե բերդաքաղաքը և նրա պեղումները, Երևան, 2009, էջ 25-27:

²⁹ Ի դեպ, այս թվականը վերաբերում է ոչ թե ողջ հիշատակարանին, այլ այդ թվականով թվագրված և հիշատակարանում տեղադրված՝ Սմբատ Բ-ի հրովարտակին:

³⁰ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր № 3031, թ. 43 (հղումը՝ Շահնազարյան Ա., Տաշիր-Ձորագետի Կյուրիկյան թագավորության առաջացումն ու հզորացումը, «Պատմաբանասիրական հանդես», 2009, № 2-3, էջ 225, ծանոթ. 5):

վանքին տրված վիճակի՝ Տաշրաց երկրի և Գուրգենի իշխանությանը հանձնված տարածքների նույնությունը, առավել ևս, որ Գուրգենի տիրույթները պետք է ունենային առանձին եկեղեցական կազմակերպություն (հոգևոր վիճակ)³¹: Հաշվի առնելով Մխիթար Այրիվանեցու կողմից Գուրգենին 981 թ. թագավոր հռչակվելու վերաբերյալ հիշատակությունը՝ հետազոտողը համարում է ընդունելի հենց այդ թվագրումը³²:

Գուրգենի թագավորելու և ըստ այդմ՝ Տաշիրքի թագավորության ի հայտ գալու ժամանակի ու հանգամանքների վերաբերյալ առաջարկվել են այլ տեսակետներ ևս (Լեո, Հ. Հարությունյան և այլք), որոնց չենք անդրադառնում, քանի որ ներկայացված չեն թվագրման հիմնավորումները:

Ներկայացված աղբյուրային և հետազոտական նյութը հնարավորություն է տալիս հստակեցնելու, որ մինչև 978 թվականը՝ Աշոտ Գ Ողորմածի մահը, Գուրգենը թագավոր չէր հռչակվել: Խնդիրն այն է, որ դեպքերի ժամանակակից Ասողիկը որևէ կերպ չի հիշատակում այդ իրադարձությունը, մինչդեռ ներկայացնում է Մուշեղի թագավորելը Կարսում, ինչը ցույց է տալիս, որ եթե նման դեպք տեղի ունեցած լիներ Աշոտ Գ-ի օրոք, Ասողիկն այն անպայման կհիշատակեր: Մյուս կողմից, վերոհիշյալ տեղեկությունն այն մասին, որ Աշոտ Գ-ի մահից հետո երեք արքայազունները բաժանել են հայրական ժառանգությունը («երիս բաժանեն զթագաւորութիւնն»), ցույց է տալիս, որ Գուրգենի՝ սեփական տիրույթներ ստանալը և այնուհետև թագավորելը տեղի են ունեցել Սմբատ Բ-ի գահ բարձրանալուց հետո: Միևնույն ժամանակ, ելնելով վերոբերյալ ժամանակագրության տեղեկությունից,

³¹ Տե՛ս Շահնագարյան Ա., նշվ. աշխ., էջ 226:

³² Տե՛ս նույն տեղում, էջ 225, տե՛ս նաև «Հայոց պատմություն», հ. II, գիրք երկրորդ, էջ 127-130:

կարելի է որոշակիացնել, որ հայրական տիրույթների բաժանումը եղբայրների միջև կատարվել է Սմբատ Բ-ի թագադրությունից անմիջապես հետո, քանի որ ըստ նշված տեղեկության՝ եղբայրները բաժանել են տիրույթները և Սմբատին ճանաչել գերակա (հայրագլուխ): Սխալված չենք լինի, եթե նշենք, որ բաժանումը տեղի է ունեցել 978 թ., երբ Աշոտ Ողորմածի մահից հետո (978 թ. հունվարի 3)³³ Սմբատն անմիջապես թագադրվեց: Այսինքն՝ Գուրգենը ստացավ տիրույթներ, որոնց սահմանները ճշտվեցին ի սկզբանե: Խոսքը Տաշիրք երկրի մասին է, որի սահմանները հստակորեն հիշատակված են 979 թ. հրովարտական: Սակայն դրանք չէին համապատասխանում տեղի եկեղեցական կառույցի (հոգևոր վիճակի) սահմաններին, և այդ անհրաժեշտ համապատասխանեցումը տեղի ունեցավ արդեն 979 թ. հրովարտակով: Սակայն այստեղ ճիշտ չի լինի Ի. Ղարիբյանի օրինակով կարծել, որ Գուրգենի՝ նախքան այդ թագավոր հանդիսանալու պարագայում 979 թ. հրովարտակի գործադրումը Սմբատ Բ-ի կողմից կլինե՞ր կրտսեր եղբոր սեփականատիրական իրավունքի խախտում: Խնդիրն այն է, որ այդ հրովարտակով ոչ թե խախտվում էին նրա իրավունքները, այլ պարզապես համապատասխանեցվում էին Տաշիրք երկրի և տեղի եկեղեցական կառույցի սահմանները, ինչին, բնականաբար, Գուրգենը դեմ լինել չէր կարող: Ուստի կարծում ենք, որ ոչ թե Գուրգենն է ստացել տիրույթներ՝ համապատասխան հոգևոր վիճակի սահմաններին, այլ հոգևոր վիճակն է հետագայում համապատասխանեցվել Գուրգենի տիրապետության սահմաններին: Հրովարտական Գուրգենի չհիշատակվելու պատճառն էլ այն է, որ այնտեղ խոսքը զուտ հոգևոր վիճակի սահմանների մասին է:

³³ Տե՛ս Եղիազարյան Ա. , Աշոտ Գ Ողորմած. թագավոր հայոց, Երևան, 2020, էջ 120:

Այսպիսով՝ ավելի հավանական է թվում, որ Գուրգենի թագավոր հռչակվելը տեղի է ունեցել հենց 978 թ., երբ նա հայրական ժառանգությունից ստացել է իր ընդարձակ բաժինը և սկսել իշխել այնտեղ՝ փաստորեն, նաև ձեռք բերելով նոր՝ ենթակա թագավորի կարգավիճակ: Ճիշտ է, բաց է մնում մյուս եղբոր՝ Գագիկի պարագան, քանի որ, եթե Գուրգենը, ստանալով իր տիրույթները, թագավոր էր հռչակվել, ապա ինչո՞ւ նույնը չէր կատարվել Գագիկի հետ: Գագիկի դեպքը խիստ առանձնահատուկ էր և ամենայն հավանականությամբ առնչվում էր արքունիքում նրա ունեցած կարգավիճակին, երբ Սմբատ Բ-ի՝ ժառանգ չունենալու պայմաններում նա ընկալվում էր որպես գահաժառանգ՝ գտնվելով արքունիքում, ինչպես, օրինակ, 988 թ. ռազմարշավի ժամանակ³⁴:

Վերադառնալով Աշոտ Գ Ողորմածի մահից հետո արքունի տիրույթների բաժանմանը՝ արձանագրենք, որ «հայրագլուխ առնել» կնշանակի ճանաչել գերակա՝ ընդունելով սեփական ստորակա վիճակը: Նման գործողության կարիք չէր լինի, եթե իրավիճակը լիներ պարզ, և արքայի երեց որդին իրավունքի ուժով, առանց այլևայլության ժառանգեր գահը: Նախկինում նման նախադեպ Բագրատունի որևէ գահաժառանգի՝ գահ բարձրանալու դեպքում չէր եղել: Ակնհայտորեն, «հայրագլուխ առնելու» տրամաբանությունն այն էր, որ Սմբատի եղբայրները նրա թագադրությունից հետո, փաստորեն, ստացել էին սեփական տիրույթներ հայրական ժառանգությունից, իսկ նրանցից առնվազն մեկը՝ Գուրգենը, հռչակվել էր թագավոր, որով էլ առաջացել էր գերակայի ու ստորակայի հստակ տարանջատման ու շեշտադրման

³⁴ Տե՛ս Ստեփանոս Տարաւնեցի Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, «Մատենագիրք Հայոց», ԺԵ. հատոր, Ժ. դար, Պատմագրութիւն, գիրք Բ., Երևան, 2011, էջ 806:

անհրաժեշտություն, և Գուրգենն ու Գագիկը Սմբատին ճանաչել էին որպես գերակա: Այն, որ եղբայրների հետ հայրենի ժառանգությունը բաժանելու արդյունքում Գուրգենը հռչակվել է Տաշիրքի թագավոր, անուղղակիորեն հիշատակված է Սանահինի «Հիշատակարանում», որտեղ ներկայացնելով նշյալ բաժանմամբ Գուրգենի ձեռք բերած տիրույթի սահմանները՝ այնուհետև անմիջապես նշվում է, որ նա «վարեաց ... զամենայն ժամանակս թագաւորութեան իւրոյ յոգնապատիկ բարեպաշտութեամբ...»³⁵:

Տեղին է նշելը, որ կարիք չկա նաև Գուրգենի թագավոր հռչակվելու համար փնտրելու համապատասխան պատմական պատճառներ, քանի որ մասնատման գործընթացը Բագրատունյաց թագավորությունում սկիզբ էր առել վաղուց և խորացել Մուշեղի՝ Կարսում թագավոր հռչակվելով, որով նաև ստեղծվել էր համապատասխան նախադեպ: Աշոտ Գ-ի երեք որդիների միջև հայրական հողերի բաժանումն ու տեղերում թագավորներ հռչակվելն այդ առումով արտառոց երևույթներ չէին, և դա նման էր Վասպուրականի պարագային, երբ Աբուսահլ-Համազասպ թագավորի (959-969 թթ.) մահից հետո նրա երեք որդիները, գահերեց ճանաչելով Աշոտ-Սահակին, թագավորեցին նրան զուգահեռ՝ Սենեքերիմը՝ Ռշտունիքում, իսկ Գուրգենը՝ Անձևացիքում³⁶: Գուրգեն Բագրատունու՝ Տաշիրքում թագավոր հռչակվելը 978 թ. թվագրելուն չի հակասում նաև այն, որ Սանահինի «Սանահինի քեթօրկ»-ի «Պատմութիւնք անցից» գլխի «Նախադրութիւն»-ում նա ներկայացված է որպես «իշխան բնաւ երկրին Տաշ-

³⁵ «Յիշատակարան Սանահինոյ վանից (Սանահինի քեթօրկը)», էջ 59:

³⁶ Տե՛ս Չամչեանց Մ., նշվ. աշխ., էջ 841, Շալջյան Ս., Վասպուրականի թագավորության պատմությունից, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» հասարակական գիտությունների, 1949, № 4, էջ 57, ծանոթ. 1, Վարդանյան Վ., Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը 908-1021 թթ., Երևան, 1969, էջ 181:

րայ», որին տեսակցության էր գնացել Սմբատ Բ-ն³⁷: Տեղեկությունն անմիջապես հաջորդում է «Հիշատակարանի» տեքստի այն հատվածին, որտեղ ներկայացված են Աշոտ Գ-ի մահը, Սմբատ Բ-ի գահ բարձրանալը և Անիի պարիսպների ու Մայր տաճարի շինարարության սկիզբը: Երկու եղբայրները բազում օրեր անցկացրին ցնծության ու խրախճանքների մեջ, իսկ այնուհետև որոշեցին այցելել Սանահինի Ս. Աստվածածին կաթողիկե եկեղեցի, որը կառուցվել էր նրանց ծնողների՝ Աշոտ Ողորմած թագավորի և Խոսրովանույշ թագուհու ջանքերով: Այցի ընթացքում եղբայրները «...իբրեւ կատարին զուխտս իրեանց, փափագեցան յայն ժամ եւ իւրն ունել ընտանի Երուսաղէմ եւ զաւակ հոգեւոր ի տանս Աստուծոյ, գրէ կոնդակ եւ արծան յաւիտենական թագաւորական հրամանաւ՝ արինակ զայս [...]»³⁸: Տեքստը մնում է անավարտ, և հասկանալի չէ, թե ինչ կոնդակի մասին է խոսքը, թեև ակնհայտ է, որ «...իւրն ունել ընտանի Երուսաղէմ եւ զաւակ հոգեւոր ի տանս Աստուծոյ (իմա՝ Սանահինի վանքում – Ա. Ե.)» հատվածը նշանակում է, որ եղբայրները կամ առնվազն նրանցից մեկը (խնդիրն այն է, որ հիշատակության մեկ նախադասության մեջ հոգնակի և եզակի թվերը օգտագործված են խառը կերպով [«կատարին զուխտս իրեանց», «փափագեցան», «գրէ կոնդակ»]) որոշել են եկեղեցի կառուցել: Ակնհայտ է, որ Սմբատ Բ-ի սույն այցելությունը Տաշիրք և Սանահինի վանք չի նույնանում այդ ուղևորությամբ 979 թ. նրա կատարած ուղևորության հետ, այլ, անկասկած, նախորդել է դրան: Հետևաբար չեն նույնանում նաև Գուրգենի հետ Սանահինի վանք այցելության ընթացքում գրված կոնդակ-հրովարտակը և Սմբատ Բ-ի 979 թ. հրովարտակը,

³⁷ Տե՛ս «Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահինի քեթօուկը)», էջ 56:

³⁸ Նույն տեղում, էջ 56-57:

որոնց բովանդակությունը լիովին տարբեր էր: 979 թ. դրությամբ Գուգենն արդեն թագավոր էր, ուստի պատահական չէ, որ «Հիշատակարանում» հատուկ կերպով մատնանշվում է, որ Գուրգենը «իշխան բնաւ երկրին Տաշրայ» էր ոչ թե հիշատակարանի շարադրման ժամանակ, այլ դրանից առաջ՝ «յայն ժամ» («որ էր յայն ժամ իշխան բնաւ երկրին Տաշրայ»), երբ Աշոտ Ողորմածի մահից հետո գահ բարձրացած Սմբատ Բ-ն այցելել էր նրան, անկասկած, 978 թ.:

Ի վերջո, հարկ է անդրադառնալ նաև Մխիթար Այրիվանեցու կողմից Գուրգենի թագավոր հռչակվելը 981 թվականով թվագրելուն: Այն, որ այդ տեղեկությունը անճշտություններով և շփոթություններով լի է, նկատել է դեռևս Ռ. Մաթևոսյանը: Հավելենք, որ առաջին հայացքից թվացյալ՝ հռոմեական տոմարի թվականներով Բագրատունյաց շրջանի իրադարձությունների թվագրումը Մխիթար Այրիվանեցու երկերում (այդպես են ընկալել հետազոտողներից ոմանք) բացառիկ երևույթներ են այդ շրջանի հայկական սկզբնաղբյուրներում, քանի որ մյուս աղբյուրներում թվագրումները կատարված են կա՛մ հայոց մեծ, կա՛մ փրկչական (քրիստոնեական հայկական) տոմարների թվականներով: Վերջինս հռոմեական օրացույցին գերազանցում է երկու տարով³⁹: Դատելով այն բանից, որ Մխիթար Այրիվանեցու երկում թվականների վերևում նշված է «ամք տեառն», իրակա-

³⁹ Տե՛ս Խաչիկյան Լ., Հակոբյան Վ., Ինչպես չպետք է հրատարակվեն պատմական սկզբնաղբյուրները, «Տեղեկագիր (հաս. գիտ.)», 1949, № 2, էջ 82: Տե՛ս նաև «Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դարեր)», հ. I, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1951, էջ 23: Սամուել Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, բնագիրը կազմեց Ա. Հայրապետեանը, առաջաբանը՝ Կ. Մաթեոսեանի, Երևան, 2011, էջ 13, ծանոթ. 44:

նում դրանք կատարված են փրկչական թվականներով⁴⁰: Սակայն Մխիթար Այրիվանեցու տեքստում առկա են նաև այդ թվականներին կից նշված հայոց թվականներ, որոնց տարբերությունը փրկչական թվականների հետ կազմում է 551 տարի, մինչդեռ վերևում արված ճշգրտման դեպքում պետք է լիներ 553 տարի, քանի որ հայոց մեծ և փրկչական տոմարների թվականների տարբերությունը երկու տարով ավելի է հայոց մեծ և հռոմեական տոմարների թվականների միջև եղած տարբերությունից, այսինքն՝ 553 տարի է: Մնում է ենթադրել, որ Մխիթար Այրիվանեցու երկում ի սկզբանե թվականները (կամ առնվազն դրանց մի մասը) նշված են եղել փրկչական թվականներով, սակայն հետագայում գրիչները դրանք ընկալել են որպես հռոմեական տոմարի թվականներ և կից հավելել հայոց մեծ թվականին համապատասխան տվյալներ՝ 551 տարվա տարբերության սկզբունքով: Օրինակ՝ պատմիչի «Պատմութիւն ժամանակագրական» երկում խնդրո առարկա պարագայում 981 թվականին, որը նշված է «ամք տեառն» տողի ներքո, զուգահեռ հավելվել է հայոց 430 թ., փաստորեն, 551 տարվա տարբերությամբ: Եթե ճիշտ է մեր կոահումը, ուրեմն իրականում 430 թ. փոխարեն պետք է լիներ առնվազն հայոց 428 թվականը, որը սկսվել է 979 թ. մարտի 27-ին:

Ինչպես նշվեց, մեզ առավել հավանական է թվում Գուրգենի թագավոր, հետևաբար նաև՝ Տաշիրքի թագավորության հռչակման թվագրումը 978-ով, մինչդեռ վերևում կարծես ամեն ինչ 979 թվականի օգտին է: Սակայն Ա. Աբրահամյանը, անդրա-

⁴⁰ Կան թվականներ, որ համապատասխանում են հռոմեական-հուլյան տոմարի թվականներին (օրինակ՝ Աշոտ Ա-ի գահ բարձրանալը, Սմբատ Ա-ի գերեվարվելը, Անիի Մայր տաճարի շինարարության ավարտը, Բագրատունյաց թագավորության վերացումը և այլն (տե՛ս «Մխիթարայ Այրիվանեցոյ պատմութիւն ժամանակագրական», էջ 70-73):

դառնալով հռոմեական և փրկչական թվականների միջև եղած երկու տարվա տարբերությանը, նշում է, որ «Հայկական թվականները վերծանելիս պետք է հաշվի առնել մի այլ տոմարական նրբություն ևս. հայկական տարվա ամանորը քանի որ չի զուգահիստվում ներկա թվականի ամանորի հետ (այսինքն՝ հունվարի 1-ի հետ), ուստի բացի մատնացույց արած երկու տարվա տարբերությունից, կարող է մի տարվա առաջ ու ետ տարբերություն ևս ունենալ, նայած թե հայկական որ ամսաթվում է տեղի ունեցել իրադարձությունը»⁴¹: Բ. Թումանյանը, ներկայացնելով հայկական և հռոմեական տոմարների զուգահիստական հաշվումների կարգն ու սկզբունքները, հատկապես շեշտադրում է, որ «եթե հաշվումները կատարվում են 552 թվականից մինչև 1320 թվականի համար, ապա տվյալ տարվա նավասարդի մեկից հետո եկող ամսաթվերը որոշելու համար հռոմեական թվականից պետք է հանել 551, իսկ նավասարդի մեկից առաջ ընկնելու դեպքում՝ 552»⁴², այսինքն՝ իրադարձության՝ նավասարդի 1-ից առաջ կամ հետո տեղի ունելու դեպքում տոմարների զուգահիստական հաշվումներում ստացվում է հավելյալ մեկ տարվա տարբերություն: Տոմարական հաշվումների մեջ առավել խորանալը համարելով ավելորդ՝ միայն նշենք, որ այս պարագայում խիստ հավանական է, որ Գուրգենի թագադրությունը, հետևաբար նաև՝ Տաշիրքի թագավորության հռչակումը տեղի են ունեցել 981 թվականից երեք տարի առաջ, այսինքն՝ հանած փրկչական և հռոմեական թվականների միջև առկա երկու տարվա տարբերությունը ու ևս մեկ տարի՝ ընդունելով, որ Գուրգենի թագադրությունը տեղի

⁴¹ Աբրահամյան Ա., Ներկա թվականի սկզբնավորությունը ըստ հայ տոմարագետների հաշվումների, «Պատմա-բանասիրական հանդես», 1970, № 3, էջ 100:

⁴² Թումանյան Բ., Տոմարական հաշվումներ, ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր հասարակական գիտությունների», 1964, № 5, էջ 56:

է ունեցել տվյալ տարվա նավասարդի 1-ից (մարտի 26) առաջ: Այդ իրադարձության տեղի ունենալու հայոց թվականը ճշտելու համար 981-ից պետք է հանել նշված երկու տարին և 552. ստացվում է հայոց 427 թվականը (26 մարտի, 978 թ.-26 մարտի, 979 թ.): Փաստորեն, այս կերպ հիմնավորվում է Գուրգենի թագադրման և Տաշիրքի թագավորության ստեղծման թվագրումը 978 թ.:

Ի մի բերելով հետազոտության արդյունքները՝ կարող ենք նշել, որ Աշոտ Գ-ի մահից հետո գահ է բարձրացել Սմբատը, այնուհետև եղբայրներին բաժին է հանել հայրական տիրույթներից ու նրանցից առնվազն մեկին՝ Գուրգենին, 978 թ. հռչակել տեղական թագավոր Տաշիրքում: Այդ իրողությունը առաջ է բերել Գուրգենի և Գագիկի կողմից Սմբատ Բ-ի գերակայության ճանաչման անհրաժեշտություն, որն էլ արձանագրվել է երկու կրտսեր եղբայրների կողմից Սմբատ Բ-ին «հայրազուլիս առնելով»: Վերջինը, ի դեպ, անհրաժեշտ է ընկալել այն տրամաբանությամբ, ըստ որի՝ հայոց թագավորն իր տերության կազմի կրտսեր թագավորների նկատմամբ հանդես էր գալիս որպես հոգատար հայր, իսկ նրանք էլ հայոց թագավորին վերաբերվում էին իբրև հավատարիմ որդիներ: Այս առումով պատահական չէ, որ, երբ հետագայում Տաշիրքի թագավոր Դավիթը (հետագայում Անհողին կոչված) փորձեց չհնազանդվել Գագիկ Ա-ին, բայց ենթարկվեց զենքի ուժով հայոց 450 թ. (1001 թ.), կաթողիկոսի միջնորդությամբ հաշտվեց Անիի տիրակալի հետ՝ «կալ ի հնազանդութեան Դաթի, իբրեւ որդի առ հայր, եւ Գագկայ հայրենի խնամով սիրել զնա» պայմանով⁴³: Նմանապես, ըստ Մատթեոս Ուռայեցու՝ 984 թ. «...նստաւ Աբաս ի Կարս թագաւորական իշխանութեամբ՝ հրամանաւ ազգապետին իւրոյ Գագկայ (իմա՝

⁴³ Տե՛ս Ասողիկ, էջ 825-826:

Սմբատայ – Ա. Ե.) Հայոց արքային, և Գուրգէն՝ յԱղուանից աշխարհին, վասն զի յազգէ Հայոց թագաւորացն էին և կային ի հնազանդութիւն տանն Շիրակայ»⁴⁴, որից կարելի է եզրակացնել, որ Բագրատունյաց տոհմական և արքունի տիրույթներում ձևավորված երկու կրտսեր թագավորությունները ստորադասված էին Անիի տիրակալին, որը հանդես էր գալիս որպես ազգապետ կամ տոհմի ավագ⁴⁵ (նույնն է, ինչ հայրագլուխը) և պահպանում Կարսի ու Տաշիրքի թագավորներին տեղական գահերին հաստատելու իրավասությունը:

**Arman Yeghiazaryan, Yerevan State University, Dr. Hist. Sci.,
Professor, The time and circumstances of the creation of the Kingdom
of Tashirk (Lori)**

At the beginning of the reign of the Armenian king Smbat II Bagratuni (978-990), his brother Gurgen was crowned king of the Tashirk region of the Bagratid kingdom. This was the second kingdom formed in the Bagratid domains (after the kingdom of Kars or Vanand), which significantly reduced the territorial, human and economic resources of the Bagratids. It is no coincidence that this event interested many researchers, who dated the coronation of Gurgen to 979, 981 and other years.

The study shows that the proclamation of Gurgen as king is due to the fact that after the death of the Bagratid king Ashot III (953-978), his sons Smbat, Gagik and Gurgen divided the Bagratid possessions and recognized Smbat as the supreme ruler. Since Gurgen received the territory of Tashirk region, Smbat went there and in 978 proclaimed him king of that region. This is how the kingdom of Tashirk (Lori) was founded.

⁴⁴ Մատթեոս Ուռհայեցի, էջ 14:

⁴⁵ Ст'я Степаненко В., Из истории Армяно-византийских отношений второй половины X-XI в. (к атрибуции монет Кюрикс куропалата), «Античная древность и средние века», Свердловск, 1978, вып. 15, էջ 46:

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՁԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ պարտության ինստիտուտ, պ.գ.թ.

ՋԱԼԱԼՕՂԼԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ 1830–1900 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Ռուսական իշխանությունների կողմից XIX դ. առաջին երեսնամյակում Արևելյան Հայաստանում, այդ թվում՝ Լոռիում ռազմաքաղաքական և տնտեսական քաղաքականությունը շարունակվեց մինչև դարավերջ։ Լոռու գավառի օրինակով ցայտուն կերպով դրսևորվում է այդ քաղաքականության էությունը, այն է՝ հպատակ ժողովուրդներին իրեն ձեռնտու վարչական համակարգ պարտադրելու միջոցով և ռուսական օրենքների ներմուծմամբ նրանց հեշտ կառավարելի դարձնել։

Սոցիալ-տնտեսական վերափոխումների հետ առնչվող բազմաթիվ հիմնախնդիրների շարքում կարևորություն են ներկայացնում Լոռու բնակչության, հատկապես գյուղացիության կյանքի սոցիալական ծանր պայմանների, աղքատության, հողազրկության, հողատիրության կարգի, հարկային համակարգի ընդլայնման, շահագործման ձևերի նոր տարատեսակների առաջացման, կապիտալիստական հարաբերությունների զարգացման դրական և բացասական հետևանքների և այլ հարցերի անդրադարձը։ Ընդ որում, հստակորեն տարանջատվում են այն բնակավայրերը, որոնք առավելություն ունեին աշխարհագրական դիրքի, բնական պայմանների և այլ տեսանկյունից։ Դրանց շարքում հատկապես առանձնանում է Ձորագետի միջին հոսանքում գտնվող Զալալաօղլին, որն անմիջապես գրավեց ռուսական պաշտոնյաների ուշադրությունը։

Նախ՝ այն ռուսների համար ծառայեց որպես բնակավայր, ինչը բխում էր տարածքի բարեբերությունից և որպես առևտրային վայրի՝ նշանակությունից: Երկրորդ՝ Զալալօղլին գտնվում էր ռազմավարական և տնտեսական կարևոր նշանակության բանուկ ճանապարհների վրա: Հետևաբար այնտեղ տեղակայվեց ռուսական ռազմաբազա, ինչը վկայում է տարածքի ռազմաստրատեգիական կարևորության մասին: Վերջապես այն ուղղակի ծառայեց որպես ամառանոց, հագստավայր:

Ինչպես հայտնի է, 1830-ական թթ. սկսած ցարական Ռուսաստանի՝ ծայրամասային գավառներում իր դիրքերն ամրապնդելու առաջին քայլերից մեկը Հայաստանում ռուս զինվորականներ և կրոնական տարրեր վերաբնակեցնելու ծրագիրն էր: 1830 թ. հոկտեմբերի 20-ին ցարական պետական խորհրդի կողմից հաստատված առաջին օրենսդրական ակտով Անդրկովկասը պետք է վերաբնակեցվեր աղանդավորներով (դոկտորներ, իկոնոքորներ, մոլոկաններ և այլն)՝ նրանց իրենց բնօրրանից արտաքսելու ճանապարհով¹: Կառավարության նպատակն էր Երեվանի և Թիֆլիսի նահանգներն իրար կապող ուղեհանգույցներում ստեղծել ցարիզմի համար ուժեղ հենակետեր: Ռուսների բնակեցումը տեղի է ունենում հիմնականում ռազմավարական և տնտեսական կարևոր նշանակության բանուկ ճանապարհների երկայնքով: Լոռին կապող օղակ էր Հայաստանի մնացած գավառների և Ռուսաստանի միջև, ուստի մեծ թվով ռուսներ բնակեցվեցին հենց Լոռիում²: Հիմնվեցին ռուսաբնակ Նովոպոկրով-

¹ Տե՛ս Խոջաբեկյան Վ., Հայաստանի բնակչության վերարտադրությունը և տեղաշարժերը (XIX-XX դարերում, XXI դարի շեմին), Երևան, 2002, էջ 45:

² Տե՛ս Հայթյան Ա., Հայաստանի ռուս վերաբնակիչները (1830-1920), Երևան, 1989, էջ 34, Սարգսյան Հ., Երևանի նահանգի բնակչությունը 50 տարում (1850-1900), «Բանբեր Երևանի համալսարանի», 1990, № 1, էջ 115:

կա (Ուրասար, 1830-ական թթ.), Պրիվոլնոյե (1840 թ.), Վորոն-ցովկա (Տաշիր, 1844 թ.), Նովոմիխայլովկա (1845 թ.), Նիկոլան-կա (Կիրով, 1840-ական թթ.) և այլ գյուղեր՝ Լոռու տարածքի ներկայիս հատկապես Տաշիրի և Ստեփանավանի տարածաշրջաններում³: Նախատեսվում էր ռուսաբնակ գյուղեր հիմնել նաև Ալեքսանդրապոլ-Մեծ Ղարաքիլիսա-Ջալալօղլի ճանապարհի վրա, սակայն տեղական բնակչության համառ դիմադրությունը ձախողեց այդ ծրագրի կենսագործումը⁴:

Ռուսների վերաբնակեցումը մի կողմից նպաստեց, որ Ջալալօղլին վերածվի ավելի բարեկարգ բնակավայրի, քանի որ ինչպես շնչերի, այնպես էլ ծխերի ընդարձակությամբ հատկապես աչքի էին ընկնում ռուսական գյուղերը: Լոռու վեց պետական ռուսական գյուղերից Ռուսական Գարգառը և Ջալալօղլին տեղակայված էին ռուսական հրետանային մարտկոցի երեք բրիգադաներին՝ շտաբ-կվարտիրաներին տրամադրված հողերի վրա, իսկ բնակչությունը բաղկացած էր հիմնականում ամուսնացած զինվորական ու պետական ցածր պաշտոնյաներից: Այդ գյուղերի բնակչության թիվը, շնորհիվ տեղանքի և բարենպաստ պայմանների, կրկնակի աճել էր: Լոռու ռուսների թիվը՝ 301 ծուխ կամ 1938 շունչ, 1885 թ. հասել էր 453 ծուխ կամ 2734 շնչի⁵: Աճով երկրորդ տեղում էին հայերը: Դա բացատրվում է հայերի աստիճանական ներհոսքով, հատկապես Ղազախի և Ալեքսանդրապոլի գավառներից:

Մյուս կողմից, ռուսների վերաբնակեցումը սրեց Ջալալօղ-

³ Ст'ю Долженко И., Хозяйственный и общественный быт русских крестьян Восточной Армении, Ереван, 1985, с. 34, Саркисян Г., Население Восточной Армении в XIX-начале XX в., Ереван, 2002, էջ 140:

⁴ Ст'ю Հայոց պատմություն, հատոր 3, գիրք 1, Երևան, 2010, էջ 279-280:

⁵ Ст'ю նույն տեղում, էջ 117-118:

լում մինչ այդ առկա հողային խնդիրը: Պետական խորհրդով նախատեսվում էր ռուս գինվորականներին տրամադրել հարմարավետ վայրեր: Սակայն ազատ հողատարածություններ չկային, ուստի ռուս աղանդավորներին հողով հնարավոր էր ապահովել միայն տեղի գյուղացիության հաշվին:

Այդ ամենը բացասաբար անդրադարձավ Լոռու գավառում պետական հողատիրության կողքին գոյատևող ազնվականական հողատիրության համար: Հայտնի է, որ պետականության բացակայության պայմաններում, որպես դրա կրողներ հանդես են եկել հայկական տարբեր մելիքական տներ: Կարծում ենք դրանց վառ օրինակը կարելի է համարել նաև ընդհուպ մինչև 20-րդ դարն իրենց գոյությունը պահպանած Լոռու ազնվականական տները:

Սեփականատիրական էին Դեբեդի վերին հոսանքի շրջակայքում տեղակայված հողերը: Լոռու հարթավայրից հյուսիս, Զալալօղլի գյուղից սկսած՝ գետի միջին հոսանքից հաջորդում էին պետական հողեր: Վարդաբլուրից արևելք՝ Քերթևան և Թոգլուխ կալվածքները Զալալօղլիում բնակվող Խան-Ագովների (Խանագով, Խան-Աղյան) ժառանգական կալվածքն էին: Թոգլուխի և Քերթևանի հողերի մասնատեր էին Եգոր, Միխայիլ (պետական պաշտոնյա), Իվան, Մկրտիչ, Մովսես և Սարիբեկ Ֆադեևիչ Խան-Ագովները, Ասատուր Պետրովիչ Խան-Ագովը⁶: Քերթևանում հայտնի կալվածատեր էր Գևորգ Խան-Աղյանը⁷:

Ազնվականական հողերի և նրանց տերերի իրավունքների սահմանափակումը բնականաբար բխում էր ռուսական ղեկավա-

⁶ Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 66, ց. 1, գ. 85, թ. 8, գ. 89, թ. 8, գ. 94, թթ. 8-16, գ. 95, թ. 12, Кавказский календарь на 1891, Тифлис, 1890, էջ 71:

⁷ Տե՛ս Քարհանյան Գ., Գուգարք, Երևան, 2011, էջ 87:

րության շահերից: Նմանօրինակ հողատիրությունը կրճատվեց հատկապես, երբ XIX դ. II կեսից ցարական կառավարությունը կայսրության ծայրամասերում նախաձեռնեց գյուղացիական բարեփոխումներ՝ նպաստելով կալվածատիրական հողատիրության ընդարձակմանը⁸: Ձևավորվեց գյուղի հարուստ խավը՝ ի դեմս գյուղական կալվածատերերի: Եկեղեցին, պետությունն ու կալվածատերերն սկսում են հանդես գալ խոշոր կապալառուի դերում: Ավելի է կատարելագործվում հողօգտագործման վարձավճարային (արենդային) տեսակը, ինչն ավելի է խորացնում հողի համար պայքարը հողատերերի, հողի կառավարիչների, պետության ու գյուղացիների միջև:

1860-1890-ական թթ. Լոռիում ազնվականական հողատիրության կրճատման պատճառներից էր նաև քաղաքների աճը, առևտրի և արհեստների զարգացումը, ինչով զբաղվելն ավելի շահավետ է դառնում, և հողատիրության բնագավառում չունենալով մեծ եկամուտներ, տոհմիկ ազնվականներն սկսում են վաճառել հողը⁹:

Դրան հակառակ՝ մեծանում է Լոռիում հողատեր դարձած անհատ սեփականատերերի ու համայնքների քանակը: Հայկական Ջալալօղլիում 712 դեսյատին¹⁰ հողատարածք որպես սեփականություն պատկանում էր ընդամենը 2 ծխի, Հաղպատում՝ 12 դեսյատին՝ 3 ծխի¹¹: Եղել են նաև անձեռնմխելի, պետական բահ-

⁸ Ցարական կառավարությունը գյուղացիների ժամանակավոր պարտավորյալ կացությանը վերջ տվեց 1912 թ. հրատարակված օրենքով, որով գյուղացիները փրկագներով իրենց հողաբաժինները, դառնում էին սեփականատերեր (տե՛ս Համբարյան Ա., Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների համառոտ պատմություն, Երևան, 1983, էջ 107):

⁹ Տե՛ս Кавказский календарь на 1890, Тифлис 1889, էջ 69-71:

¹⁰ Մեկ դեսյատինը հավասար էր 1,0925 հեկտարի:

¹¹ Տե՛ս Аргутинский-Долгоруковъ А., Борчалинский уезд въ экономическомъ и коммерческомъ отношеияхъ, Тифлисъ, 1897, էջ 58:

րային հողեր, որոնք գտնվում էին զինվորական հրամանատարության տրամադրության տակ, ինչպես, օրինակ, ռուսական շտաբս-կվարտիրայի չինովնիկներին բնակվելու համար լավագույն հողեր էին հատկացվել պետական գյուղերում, այդ թվում՝ Ջալալօղլու տարածքում՝ 137 դեսյատին¹²: Ջալալօղլում որոշակի հողատարածք էլ գտնվում էր հրետանային մարտկոցի 39-րդ զորամասի տրամադրության տակ:

Տնտեսական վերելքին և առևտրի ընդլայնմանը զուգընթաց¹³ Ջալալօղլում սկսում են հողատարածքներ ու շինություններն ձեռք բերել ոչ տեղացիները: Այսպես, օրինակ, Ալեքսանդրապոլի խոշոր կապալառուներ Խաչատուր Աբուն (Աբովյան, 1830-1909) ու իր որդիները շենքեր ունեին Թիֆլիսում, Երևանում, Ջալալօղլում:

Կային տարածքներ՝ տրամադրված մասնավոր սեփականատերերին, որտեղ նրանց կողմից կառուցվել էին հասարակական շինություններ: Այսպես, նշենք 1859 թ. 50 տարով չինովնիկ Միխայիլ Խանագովին և Մաթևոս Այդոնովին հայկական Ջալալօղլում տրված հողերը, որտեղ կառուցվել էին այրաղացներ: Նույն թվականին միևնույն ժամկետով Ջալալօղլում և այլուր հողեր են տրվել Սահակ Արութունովին, Եգոր Սաղաթելովին, Գևորգ Սահակովին, Հովհաննես Չիլյաբովին և այլոց, որոնք կառուցել են այրաղացներ, տնկել այգիներ¹⁴:

Դեռևս 1765 թ. սեպտեմբերի 19-ի հրովարտակով Ռուսաստանում ձեռնարկված համատարած հողաչափական (ծրաչափական, սահմանազատման) աշխատանքներ կատարելու կարգը դրվեց Անդրկովկասում կատարվող հողային բարենորոգում-

¹² Տե՛ս նույն տեղում, էջ 62:

¹³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 82, թ. 391:

¹⁴ Տե՛ս Аргутинский-Долгоруковъ А., նշվ. աշխ., էջ 99-100, 103:

ների հիմքում: Դրա նպատակն էր հաշվառել բոլոր՝ մասնավոր և պետական հողերի քանակը, որոշակիացնել հողատիրությունների սահմանները և ապահովել դրանց անձեռնմխելիությունը: Հանձնաժողովի աշխատանքներն իրականացվել են Լոռու պետական գյուղերի հողատարածքներում, այդ թվում՝ Ջալալօղլում¹⁵: Հողաբաժանման աշխատանքներից հետո շատ գյուղերի հողաբաժինները կրճատվեցին: Որպես այդպիսին՝ հանձնաժողովի կողմից գրանցվել է Ջալալօղլի գյուղը, որի վարելահողերի մի մասն անցավ գյուղի շրջակայքում նոր ձևավորվող ռուսական գյուղերի բնակիչներին և տեղակայված շտաբս-կվարտիրային: Գրեթե բոլոր գյուղերի հողային չափումների ժամանակ առաջ են եկել անհամաձայնություններ՝ պետության ներկայացուցիչների և գյուղերի կալվածատերերի միջև: Խան-Ագովների Քերևան և Թոզլուխ ժառանգական կալվածքները ևս վիճահարույց էին պետության հետ:

Հաշվի առնելով Ջալալօղլի գյուղի, որպես առևտրային վայրի, հարմարավետ դիրքը, նահանգային կառավարությունը որոշեց այն վերածել գավառային քաղաքի: Հրապուրվելով քաղաքային հասարակություն լինելու և առևտրով զբաղվելու հեռանկարով, գյուղի բնակիչները դադարեցին հողագործությամբ և ընդհանրապես գյուղատնտեսությամբ զբաղվել՝ հաճախ կամավոր հրաժարվելով իրենց վարելահողերից, ինչից օգտվեցին բնակավայրի շուրջը նոր ձևավորվող ռուսական գյուղերը և տեղակայված շտաբս-կվարտիրան: Հողերի մի մասն էլ պետական ունեցվածքի կառավարման մարմնի կողմից հատկացվեց այլ կարիքավորների: Բնակիչների հողաբաժինները կրճատվեցին գրե-

¹⁵ Ст'я Ерицов А., Экономический быт государственных крестьян Борчалинского уезда Тифлисской губернии, Тифлис, 1889, էջ 38-39, 117:

թե 2/3 անգամ, 232 ծխից անհող էր 106-ը, 1630 շնչից՝ 647-ը¹⁶: Բայց ջալալօղիների հույսերը չարդարացան, գյուղը քաղաքի վերածելու միտքը ծախողվեց, առևտուրն անկում ապրեց, և երբ բնակիչներն անհրաժեշտությունից դրդված նորից վերադարձան գյուղատնտեսությանը, զգացին հողի խիստ պակաս: Այժմ խնդրում էին վերադարձնել նախկինում իրենց պատկանող հողերի գոնե մի մասը¹⁷:

Այս ամենն ավելի է սրում հողերի շուրջ վիճաբանությունները: Վեճեր էին ծագում պետական գյուղացիների և գյուղացիապատկան նախկին տարածքների վրա տեղակայված շտաբսկվարտիրայի չինովնիկների (տեղի ռուս կառավարիչների) միջև: Վերջիններս, ինչպես տեսանք, համարվում էին արտոնյալ խավ և բնակվելու համար տարածքներ էին ստացել պետական լավագույն հողերում: Քանի որ այս հողամասերն անմիջապես սահմանակից էին տեղի գյուղացիների հողատարածքներին, վերջիններիս հնարավորություն չէին տալիս ընդարձակել իրենց հողերը: Բորչալուի գավառում նման արտոնյալ խավի ներկայացուցիչների և նրանց տրված հողերի քանակը մեծ չէր, սակայն որակական տեսանկյունից դրանք լավագույններն էին և տեղակայված էին խոշոր գյուղերում:

Ջալալօղլում հողատերեր էին Խանագովները (չինովնիկ Միխայել Խանագով, Մկրտիչ և Մովսես Խանագովներ, Ասատուր Խանագով և այլք), չինովնիկներ Հայրապետ Տեր-Ակոպովը, Եգոր Սաղաթելովը, Տիգրան Տեր-Դավիթովը, դեռևս իրենց դիրքը պահպանած ազնվականներ Արազ Շահվերդովը, Փարսադան Զավրիևը, Սարգիս Տեր-Ակոպովը, Եգոր Քալանթարովը,

¹⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 26:

¹⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 51-52:

քահանաներ Տեր Հակոբ Շահինովը, Տեր Եսայի Աբովյանցը, Տեր Մկրտիչ Տեր-Հակոբյանցը և այլք, որոնք ունեին տներ, ջրաղացներ, կրպակներ, հողամասեր¹⁸: Վերջիններիս և գյուղացիների միջև գրեթե մշտապես վեճեր էին ընթանում հողային հարցի շուրջ:

1884 թ. հետո պետական արոտավայրերի վերաբերյալ ընդունվեց օրենք, որով մասնավոր սեփականատերերը պայմանական գումարով թույլ էին տալիս օգտվել իրենց հողամասերից: Բայց այդ վճարը տարեցտարի աճում էր, ինչը բացասաբար էր անդրադառնում մինչ այդ արոտավայրեր չունեցող պետական գյուղական համայնքների տնտեսության վրա: Լոռիում շատ գյուղացիական տնտեսություններ, հողազուրկ դառնալով, ստիպված սկսում են կալվածատերերից վարձակալել հողեր, ամառային և ձմեռային արոտավայրեր, իսկ անասուններին պահում էին կալվածատերերի, սեփականատերերի և հողը վարձավճարով տվողների մարգագետիններում: Զալալօղլու բնակիչների մի մասը վարձակալում էր մոտակա անտառները, մի մասը մեկնում էին Կոբուլովներից վարձավճարով վերցրած հողեր կամ վարձակալում էին պետական ամառանոցներ¹⁹:

Ի տարբերություն հայկական այլ տարածքների, ֆեոդալական հողատիրությունը հանձինս վրացական թավադների ու ազնավուրների, որոշ չափով գոյություն ուներ Լոռիում²⁰, բայց գյուղացիությունը ճորտագրված չէր՝ չնչին բացառություններով: 1842 թ. ճորտ ընտանիքներ արձանագրվել են Փամբակի Մեծ Ղարաքիլիսա և Լոռու Զալալօղլի պետական գյուղերում: Զալալօղլիում

¹⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 63-64:

¹⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. 82, թ. 391:

²⁰ 1801 թ. Լոռին Վրաստանի կազմում անցել էր ռուսական տիրապետության տակ:

Էջմիածնի վանքին էր պատկանում Գրիգոր Չոլաբովի վեց արական շնչից բաղկացած ընտանիքը²¹:

Այնուամենայնիվ, Զալալօղլին շարունակում էր մնալ Լոռու բարեկեցիկ բնակավայրերից մեկը, ինչը հստակ երևում է հարկային ցուցակների ուսումնասիրությունից: Մինչ այդ Լոռիում ծխային հարկատվության տեսանկյունից հավասարություն գոյություն չուներ. օրինակ տեղական, զենստվային հարկը յուրաքանչյուր ծովսը վճարում էր Հազվիում և Ագարակում՝ 5 ռ., Հայդարբեկում՝ 3 ռուբլի, Լեջանում, Ուռուտում, Գյուլագարակում և Հայկական Գարգառում՝ 4 ռ., Հոբարձիում՝ 3 ռ., Զալալօղլիում՝ 5 ռ., միայն ռուսական վեց գյուղերն էին, որ միանվագ վճարում էին 4 ռ.²²: Կոնսիստորիան ստիպված է լինում կանոնակարգել վանքային հողերի հարկային համակարգը և վանքապատկան կալվածքներից օգտվող գյուղացիների համար հարկման նոր կանոններ հաստատել:

Եսայի քահանա Աբովյանցի կազմած Լոռու վիճակի «Արդիւնք անշարժ կալուածոյ ի եկիղիցաց» ցուցակի համաձայն՝ 1858 թ. Զալալօղլուց ստացված գումարը կազմել է 49 ռ., 60 կոպ.²³: Համեմատելով նշված թիվը տվյալ ցուցակում ընդգրկված մյուս բնակավայրերի եկամուտների թվի հետ՝ գալիս ենք եզրակացության, որ հարկի վճարման քանակով Զալալօղլին զբաղեցրել է առաջին տեղը:

Հասարակական հարկերից Հայկական Զալալօղլին վճարում էր եկեղեցու պահակության համար՝ 60 ռուբլի, հրետանա-

²¹ Տե՛ս Ավդալբեկյան Խ., Հոդային հարցը Արևելյան Հայաստանում (1801-1917), Երևան, 1959, էջ 52-53:

²² Տե՛ս Ерицов А., նշվ. աշխ., էջ 126, Аргутинский-Долгоруковъ А., նշվ. աշխ., էջ 176-177:

²³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3823, թ. 32:

յին բրիգադի ծխանոցի համար՝ 600, զեմստվոյական պահակախմբերի համար կալվածքներ վարձելու նպատակով՝ 120, աղբյուրների, կամուրջների վերանորոգման համար՝ 160, ընդամենը՝ 940 ռուբլի²⁴:

Փամբակի տեղամասի պետական գյուղացիության 1842 թ. կամերալ ցուցակագրության գյուղերի մասին լրացուցիչ տեղեկությունների բաժնում նշվել է գյուղերի բարեկեցությունն ըստ եռաստիճան համակարգի՝ դրանք բաժանելով հարուստ, աղքատ և բարեկեցիկ վիճակների: Որպես միջին բարեկեցիկության վայր նշվում է նաև Զալալօղլին²⁵: Բավական է միայն նշել, որ քաղաքային շենքեր և մաքուր փողոցներ կային միայն Շոլավերում և Զալալօղլիում:

1880 թ., երբ Լոռին որպես առանձին ոստիկանական շրջան ներառվեց Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի մեջ, այնտեղ կար 66 գյուղ, որոնցից խոշորների թվում էր Զալալօղլին²⁶:

Երկրի տնտեսական կյանքի բնագավառում մեծ դեր կատարեցին ճանապարհաշինարարական աշխատանքները. կառուցվում են նոր ճանապարհներ, խճուղիներ, երկաթգծեր, վերանորոգվում են արդեն գոյություն ունեցողները: Տարածաշրջանի տնտեսական կյանքը վերահսկելու և տեղում տնտեսական գործունեություն ծավալելու նպատակով ռուսական կառավարությունը վերահսկում էր այդ աշխատանքները: 1854 թ. նոյեմբերի 22-ին Սանկտ-Պետերբուրգի ճանապարհաշինարարության ղեկավարության անդամ Պ. Կիսիլյևը Կովկասյան կոմիտեին զեկուցում է

²⁴ Տե՛ս Аргутинский-Долгоруковъ А., նշվ. աշխ., էջ 134:

²⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 82, թթ. 349-483:

²⁶ Մանուկյան Մ.Գ., Գրիգորյան Ա.Կ., Եղյան Գ.Բ., Լոռու մարզ, բնությունը, բնակչությունը, տնտեսությունը, Երևան, 2003, էջ 83:

Անդրկովկասի ճանապարհների պահպանման համար միջոցների հատկացման վերաբերյալ: Նախատեսվում էր Երևանի և Ալեքսանդրապոլի, ինչպես նաև այն ճանապարհների պահպանման համար, որոնք ապահովում էին հաղորդակցությունը Թիֆլիս և Ալեքսանդրապոլ քաղաքների հետ և անցնում Զալալօղլիի ու Գարգառի տարածքներով, հատկացնել 4000 ռուբլի²⁷:

Ճանապարհների բարելավմամբ շահագրգռված էին նաև տեղացիները, որոնք ամեն կերպ ընդառաջում էին աշխատանքների: Մինչ այդ Զալալօղլի-Թիֆլիս ճանապարհից հնարավոր էր օգտվել միայն չոր եղանակներին, ընդ որում ծանր բարձված սայլերով չէին համարձակվում²⁸:

Մյուս կողմից՝ այս ամենն ուղեկցվում էր բնակչության ծանր շահագործումով: Ռուսաստանի տիրապետության տակ անցնելուց հետո ցարական իշխանությունները Լոռու բնական հարստությունները շահագործելու նպատակով Ալավերդիում հիմնեցին առաջին փոքր պղնձագործարանը: Ի թիվս տեղի մի շարք գյուղերի՝ Ղազախի որոշ գյուղեր ևս կցվեցին գործարանին՝ բանվորական ուժով ապահովելու համար²⁹: Ալավերդու պղնձարդյունաբերությունը և երկաթուղին բանվորական ուժ էին ստանում գլխավորապես Ալավերդու, Զալալօղլու և Ղարաքիլիսայի շրջանների գյուղացիներից:

Լոռու գլխավոր բնակավայրերը՝ Զալալօղլին և Ղարաքիլիսան, աչքի էին ընկնում նաև գյուղատնտեսության զարգացմամբ,

²⁷ Документы и материалы по истории Армянского народа. Социально-политическое и экономическое положение Восточной Армении после присоединения к России (1830-1870), составители Н. Тавакалян, Э. Костандян, В. Газарян, Г. Аракелян, С. Мирзоян, Ереван, 1993, док. 148, с. 358.

²⁸ Տե՛ս Արցունցի-Դոլգորուկով Ա., նշվ. աշխ., էջ 31:

²⁹ Տե՛ս Բարխուդարյան Վ., Մելքոնյան Ա., Մաթևոսյան Ռ., Չոբանյան Պ., Պղնձահանքը շահագործել են հայ վարպետները, «Դեբեդ», 16 ապրիլի, 1999, № 6, էջ 3:

որի հիմնական ճյուղերն էին հողագործությունն ու անասնապահությունը: Զալալօղլիում Զադիյան եղբայրների գործարանը գյուղացիներից ամեն օր գնում էր 20 փուֆ կաթ՝ փուֆը 75 կոպեկ, ինչը կապիտալիստական ապրանքային արտադրության նոր որակի ցուցանիշ էր³⁰: Սակայն նման արտադրամասերը եզակի էին, կաթնամթերային անասնապահությունը թույլ էր զարգացած, յուղը, պանիրը, ինչպես նաև մյուս մթերքները, հիմնականում սպառվում էին բնատնտեսության մեջ³¹:

Ըստ վերևում նշված 1842 թ. կամերալ ցուցակագրության, ի թիվս այլ բնակավայրերի, այրադացներ կային նաև Զալալօղլիում՝ թվով երկուսը³²: Զալալօղլիում գործող շոգեշարժ ձիթահանքը Երևանի նահանգից ներմուծված հումքից տարեկան արտադրում էր 5,5 հազար փուֆ քնջութի և 3 հազար փուֆ կտավատի յուղատեսակներ³³:

Որոշ ընտանիքներ զբաղվում էին տնայնագործությամբ: Զալալօղլու և Գարգառի շտաբս-կվարտիրայի շրջակայքի գյուղերում տեղական կավից պատրաստում էին բարձր որակի կղմինդր և աղյուս, դրանցով կառուցում էին 1-2 հարկանի շենքեր:

Զալալօղլու հայերը ռուսների օրինակով սկսում են զբաղվել կառապանությամբ, ինչի հնարավորությունը չունեին Լոռու ցածր գոտիականության գյուղերը՝ հարմարավետ ճանապարհների բացակայության պատճառով³⁴:

Այս ամենի արդյունքում XIX դ. երկրորդ կեսերից սկսած

³⁰ Տե՛ս Հայոց պատմություն, հ. 3, էջ 588:

³¹ Տե՛ս Ամբարյան Ա., Развитие капиталистических отношений в армянской деревне (1860-1920), Ереван, 1959, էջ 72:

³² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 93, ց. 1, գ. թթ. 349-434:

³³ Տե՛ս Հայոց պատմություն, հ. 3, էջ 588:

³⁴ Տե՛ս Аргутинский-Долгоруков А., նշվ. աշխ., էջ 342:

նկատվում է նախկին գյուղական բնակավայրերի ընդարձակում, ինչի հետևանքով դրանցից որոշներն աստիճանաբար վերածվում են գյուղաքաղաքների: Ջալալօղլին ևս ստանում է գյուղաքաղաքի կարգավիճակ (քաղաքային բնակավայրեր Լոռիում կազմավորվել են ավելի ուշ՝ 1924 թ., երբ Ղարաքիլիսան ստանում է քաղաքի կարգավիճակ):

Ջալալօղլիում իր բաժանմունքն է ստեղծում 1881 թ. նոյեմբերի 15-ին Թիֆլիսում հիմնադրված «Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը», որը մեծ աշխատանքներ է տանում արևմտահայ գաղթականներին օգնելու գործում³⁵: Մինչև 1886 թ. Ջալալօղլիում բացվում են փոստային գրասենյակներ, որոնք ունեին փոստային կայաններ³⁶:

1899 թ. Ջալալօղլիում Ստ. Շահումյանը հիմնում է Հայաստանի տարածքում առաջին մարքսիստական խմբակը:

Այսպիսով, Ջալալօղլին, շնորհիվ իր բնական դիրքի և նպատավոր պայմանների, կարևոր դիրք է գրավում ռուսական կառավարության ոչ միայն տնտեսական, այլև ռազմավարական քաղաքականության բնագավառում: Կարծում ենք, սույն հարցերի քննարկումը կարևոր են ոչ միայն որպես Ջալալօղլի բնակավայրի առավելություններն ընդգծելու անհրաժեշտություն, մի բան որը XIX դարում նկատել ու կարևորել են օտարները, այլև որպես Լոռու և առհասարակ հայ ժողովրդի պատմության մի հետաքրքիր դրվագ:

³⁵ Տե՛ս Թառոյան Կ., Արևմտահայ գաղթականությունը և նրա վիճակը 19-րդ դարի 90-ական թվականների վերջերին և 20-րդ դարի սկզբներին, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1974, № 3, էջ 173:

³⁶ Տե՛ս Վիրաբյան Ս., Եթիմյան Գ., Մեծ Ղարաքիլիսա, հ. 1, Երևան, 2002, էջ 150:

Hasmik Amirjanyan, *Institute of History of the NAS RA, Cand. Hist. Sci.*, The social-economic life of Jalaloghli in the 1830-1900ss

Since the beginning of the 20th century, the tsarist government had carried out socio-economic transformations in Lori, including in Jalaloghli.

In the second half of the 19th c. Lori formed different kinds of landowners. The government, the church and the nobles are the main landowners and considered as a hereditary domain and they were preserved in the 19th c.

In the second part of the 19th c. tsarism in Transcaucasia pursued an agrarian policy: a regulation on the delimitation of lands was issued. After that, many lands became state-owned.

The government, the church and the nobility were the main landowners. As a result, there was a shortage of land in Jalaloghli. There was always a struggle for the lands. However, there are facts showing the Armenian church and landowners preserved in some parts of Jalaloghli in the 20th c. continued to be one of the prosperous settlements of Lori, which is clearly seen from the study of tax lists.

ՎԱՐԴԻԹԵՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայաստանի ազգային արխիվ, պ.գ.թ.

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ԻՄԵՐԵԹԻ ԹԵՄԻ ԼՈՌՎԱ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ 30-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ – XX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՄՆԱՄՅԱԿՈՒՄ

Ռուսական կայսրության սահմաններում գտնվող Հայ առաքելական եկեղեցու թեմերը վարչականորեն բաժանված էին առանձին եկեղեցական-վարչական շրջանների՝ փոխանորդությունների (Հոգևոր կառավարություններ), որոնք էլ իրենց հերթին տրոհված էին առավել փոքր միավորների՝ գործակալությունների (գործակատարություն):

Գործակալություններից ամենամեծն Ախալքալաքինն էր, ապա Լոռվա, Ղազախի և Թիֆլիսի գավառներինը¹: Վրաստանի և Իմերեթի թեմի կողմից էջմիածնի Սինոդին ուղղված տարեկան ամփոփիչ տեղեկագրերի համաձայն՝ XIX դարի առաջին կեսին Լոռվա գործակալության սահմաններում ընդգրկված էր շուրջ 27 գյուղ, 22 ծխական եկեղեցի²: Թեմական քննիչ Մաթևոս վարդապետի³ կազմած զեկուցագրի տվյալներով՝ XX դարի սկզբին Լոռ-

¹ Տե՛ս հավելված, աղյուսակ I:

² Գյուղերի և եկեղեցիների անվանացանկը տե՛ս ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3809, թթ. 124-126, 130-132, գ. 94, թթ. 114 շրջ.-115:

³ Մատթևոս վարդապետ (հետագայում՝ արքեպիսկոպոս) Մատթևոսյանը (1866-1936) եղել է էջմիածնի սինոդի անդամ, Մայր Աթոռի տպարանի վարչության, Վանական խորհրդի և Միաբանական ընդհանուր ժողովի նախագահ: 1910 թ. կաթողիկոս Մատթևոս Բ-ի N 1182 կոնդակով նշանակվել է Վրաստանի և Իմերեթի թեմի գործերի քննիչ, 1922 թ.՝ Բաքվի և Թուրքեստանի հայոց թեմի առաջ-

վա գործակալության սահմաններում գտնվում էր 1 քաղաք, 35 գյուղ⁴, սակայն ԱԲԳԴ⁵ տարեկան ամփոփիչ տեղեկագրի տվյալներով՝ գյուղերի թիվն անցնում էր 50-ի սահմանը: Մաթևոս վարդապետի հաղորդած տվյալներով Լոռվա գործակալությունում հաշվվում էր 36 եկեղեցի, 33 քահանա, իսկ նույն ժամանակահատվածի թեմական տեղեկագրերից մեկի համաձայն՝ 38 եկեղեցի, 34 քահանա⁶: Լոռվա գործակալությանն էին պատկանում նաև Հաղպատի և Սանահինի վանքերը⁷, Վարդաբլուրի Սբ Սարգիս և Օծունի Սբ Նշան ուխտատեղիները⁸:

Վարչական կառավարման տեսանկյունից որքան մեծ էր մեկ գործակալին ենթակա գյուղերի ու եկեղեցիների թիվը, այնքան ավելի բարդանում էր դրանց կանոնավոր կառավարումը:

Սինոդային կառավարման շրջանում⁹ եկեղեցական վար-

նորը: Մաթևոս վարդապետը հեղինակել է ավելի քանի 72 տպագիր ու ձեռագիր ինքնուրույն և թարգմանչական աշխատություն: Աշխատությունների ցանկը տե՛ս ՄՄ, Մաթևոս արքեպս. արխիվ, թղթ. 177, վավ. 13, թ. 1-3:

⁴ ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 105, թ. 6-ի շրջ.:

⁵ Էջմիածնի սինոդը յուրաքանչյուր տարի Ներքին գործերի նախարարություն էր ներկայացնում Ա, Բ, Գ, Դ տառերով համարակալված տեղեկագիր՝ թեմի եկեղեցիների, կալվածքների, բնակչության, հոգևորականների, դպրոցների վերաբերյալ վիճակագրական տեղեկություններով, որոնք հավաքվում էին թեմի ողջ տարածքից քահանաների և գործակալների միջոցով:

⁶ ՀԱԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1849, թթ. 2-4: 1909 թ. դրությամբ Վիրահայոց թեմի գործակալությունների ծխերի, եկեղեցիների, քահանաների, գյուղերի թվի քանակական հարաբերակցությունը տե՛ս հավելված, աղյուսակ II:

⁷ 1904-1910 թթ. Վրաստանի և Իմերեթի թեմի առաջնորդ Գարեգին արքեպս. Սաթունյանցը թեմակալությանը զուգահեռ եղել է նաև Սանահինի վանքի վանահայր:

⁸ ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 105, թ. 5:

⁹ Դեռևս մինչև 1836 թ. «Պոլսեմնիե»-ի հաստատվելը, Մայր Աթոռի գործերը կառավարելու համար կաթողիկոսին աջակցող վարչություն կազմելու փորձեր ձեռնարկել էր Դանիել կաթողիկոսը (1807-1808): Նրա՝ 1806 թ. հուլիսի 10-ի և 1808 թ. մայիսի 25-ի կոնդակներով հիմք էր դրվել «Սինիոդոսին» (Բարձրագույն խորհրդարան, Կառավարիչ Սբ Ժողով), որը չունեւր այն նույն լիազորությունները ինչ որ հետագայի Էջմիածնի սինոդը և կանոնավոր չգործեց: «Պոլսեմնիե»-ով

չական կառույցը հանդիսանում էր պետական վարչություններից մեկը: Էջմիածնի սինոդի գլխավոր դատախազն ու նրա գրասենյակը, որոնք վարում էին եկեղեցական ողջ գործերը, երբեմն ավելի քաջատեղյակ էին դրանց, քան իրենք՝ հոգևոր առաջնորդները:

Պետական կառավարման համակարգում դրսևորվող բյուրոկրատիան ներթափանցեց նաև եկեղեցական վարչական կառույց: Բյուրոկրատական վարչարարության բնորոշ գծերից էր ձևապաշտությանը տուրք տալը: Բյուրոկրատացման պայմաններում իշխանության մարմիններն իրենց խնդիրը տեսնում էին ոչ թե դրանց լուծման, այլ հրամանների մեխանիկական կատարման մեջ: Վարչարարությունը վերածվեց երկար-բարակ գրագրության: Գործը, խնդիրը փաստացի լուծելու փոխարեն ընթանում էր պաշտոնական փաստաթղթերի անվերջ լրացում: Հայ առաքելական եկեղեցու վարչական կառույցը բացառություն չկազմեց: Այստեղ ևս ի հայտ եկան բյուրոկրատացմանը բնորոշ տարրեր:

Փորձելով հստակեցնել թեմական վարչական կառույցը կազմող մարմինների գործառնությանին տարբերությունները՝ պետք է ասել, որ եթե կոնսիստորիան կենտրոնական համակարգող մարմինն էր, ապա Հոգևոր կառավարությունների ու գործակալությունների խնդիրն էր տեղերում հավաքել և կոնսիստորիային փոխանցել բոլոր անհրաժեշտ տվյալները: Դրա իրականացման համար կարևոր էր ոչ միայն գործակալների՝ գրասենյակային վարչարարության կանոններին տիրապետելն ու բավարար կրթական մակարդակ ունենալը, այլև բարձրագույն

հիմնված Էջմիածնի սինոդը պաշտոնապես բացվեց 1837 թ. փետրվարի 22-ին (Այդ մասին տե՛ս Դիան Հայոց պատմութեան, էջ 203-218; 228-232, 241, ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 49, թ. 3-4):

հոգևոր իշխանությունների հետևողական ու նպատակային քաղաքականությունը տեղական իշխանության մարմինների գործունեության կանոնավորման ուղղությամբ: Հավելենք, որ ռուսական իշխանությունները, եկեղեցական վարչական կառույցը վերափոխելով պետական կառավարման մարմինների օրինակով, նպատակ ունեին ինչպես պահպանել վերահսկողությունը եկեղեցու նկատմամբ, այնպես էլ օգտագործել նրա ռեսուրսները պետությանն անհրաժեշտ ուղղությամբ: Այդ էր պատճառներից մեկը, որ սինոդային շրջանում եկեղեցուն տրվեցին աշխարհական իշխանություններին բնորոշ մի շարք գործառույթներ:

Դեռևս 1832 թ. այլադավանների հոգևոր գործերը հանձնվել էին Ներքին գործերի նախարարության տնօրինությանը, որը, մեծ կարևորություն տալով իրեն ենթակա հիմնարկների վերաբերյալ վիճակագրական բնույթի տվյալներ հավաքելուն, 1858 թ. մարտի 4-ին ստեղծեց Կենտրոնական վիճակագրական¹⁰ կոմիտե: Վերջինիս վրա էր դրված ամենատարբեր հարցերով օրենսդրական նախագծեր մշակող կառավարական հանձնաժողովների հարցումներին պատասխանելու պարտականությունը¹¹:

Էջմիածնի սինոդը ևս Ներքին գործերի նախարարությանն

¹⁰ Նշված ժամանակաշրջանի այս կամ այն վիճակագրական աղյուսակի, տեղեկագրի կամ հաշվետվության հավաստիության աստիճանը պարզելու համար, երբեմն անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել, թե ինչպես էին տեղերում դրանք կազմվում: Թերևս այս հանգամանքով պետք է փորձել բացատրել այն փաստը, որ թեմի պաշտոնական տեղեկագրերում հաճախ կարելի է հանդիպել միմյանց հակասող տվյալների: Ինչպես օրինակ, այս կամ այն գործակալության սահմաններում գտնվող գյուղերի քանակի վերաբերյալ նույն ժամանակահատվածի տեղեկագրերում տվյալները տարբեր կարող են լինել և պետք է առանձնակի ուշադրություն դարձնել հասկանալու համար, թե որն է նրանցից առավել հավաստին: Հաշվետվությունների հավաստիության հարցի մասին տե՛ս «Քաներ Հայաստանի արխիվներ», 1983, № 3, էջ 159-164:

¹¹ Министерство внутренних дел. Исторический очерк, 1802–1902, СПб., 1901, с. 161, 166.

ուղարկում էր տարեկան հաշվետվություններ՝ բնակչության, եկեղեցիների ու եկեղեցականների, դպրոցների, եկեղեցական կալվածքների և դրանց եկամուտների վերաբերյալ վիճակագրական աղյուսակների տեսքով: Էջմիածնի սինոդից բացի, թեմական իշխանությունները նույնպես պարտավոր էին անհրաժեշտության դեպքում զանազան տվյալներ տրամադրել Անդրկովկասի վիճակագրական կոմիտեին: Տեղերում այս աշխատանքների համակարգման պարտականությունը դրված էր գործակալների վրա:

Գործակալների անմիջական պարտականությունների մեջ էր մտնում նաև՝

- Մասնավոր անձանց խնդրագրերը կոնսիստորիային ներկայացնելը,
- Աթոռապատկան արդյունքների ու առձեռն դրամի հավաքումն ու ամեն ամիս կոնսիստորիային ներկայացնելը,
- Եկեղեցու անշարժ և շարժական կալվածքների, ծխականների ցուցակները կազմելը,
- Քահանաների և ստորին եկեղեցական աստիճանավորների ծառայողական ցուցակները կազմելը,
- Քահանաներին մի վայրից մյուսը տեղաշարժվելու համար անցաթղթեր տալը¹²:

Պետք է նշել, որ նշված աշխատանքների իրականացման հարցում գործակալները բախվում էին մի շարք խնդիրների: Արխիվային վավերագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ եկեղեցական վարչական կառույցի միջին օղակներում առկա խնդիրները, որպես կանոն, երկկողմանի բնույթի էին: Նախ փոխանորդներն ու գործակալները միշտ չէ, որ կարողանում էին

¹² ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 451, թ. 12-14 շրջ.:

լիարժեքորեն իրականացնել իրենց վրա դրված պարտականությունները: Բարձրագույն հոգևոր իշխանություններն էլ, իրենց հերթին, չէին կարողանում ցանկալի ավարտին հասցնել այս կամ այն բարեփոխման նախագիծը:

Ընդհանուր առմամբ գործակալությունների կառավարման հիմնական բաց կողմերն էին՝

- թույլ կապն ինչպես փոխանորդության և գործակալությունների, այնպես և առաջինների ու կոնսիստորիայի միջև,
- աշխատանքային պարտականությունների անհամաչափ բաշխումն ու գործակալների, գրագիրների գերժանրաբեռնվածությունը,
- վարձատրության հարցը,
- նոր համակարգին համապատասխան հմտություններ ու կրթական մակարդակ ունեցող կադրերի պակասը:

Վերահայրց թեմի գործակալությունների կառավարման հարցում առկա խնդիրները բնորոշ էին նաև Լոռվա գործակալությանը: Մասնավորապես այստեղ ևս առկա էին նոր համակարգին համապատասխան կադրերի պակաս, թույլ կապը կենտրոնի հետ: Կային նաև այլ բարդություններ: Օրինակ՝ գործակալության սահմաններում ընդգրկված գյուղերը կարող էին գտնվել միմյանցից մեծ հեռավորությունների վրա: Նման դեպքերում գործակալն ուղղակի ֆիզիկապես անկարող էր մեկ տարվա ընթացքում անձամբ այցելել բոլոր գյուղերը և խնդիրներին տեղում ծանոթանալ:

Լոռվա գործակալ Հովհաննես քին. Բադալյանի՝ 1907 թ. կոնսիստորիային ուղղված խնդրագրում կարդում ենք. «Ես վարել և վարում եմ Տփխիսու գաւառի գործակալութեան պաշտօն և թէ գանձապահութեան պաշտօն, նոյնպէս և հսկել եմ աջալուրջ կերպով՝ թէ՛ Թիֆլիզի գաւառի և թէ՛ Բորչալուի գաւառի 40 հատ

եկեղեցիներին և նորանց պաշտօնեաներին, ծխական-եկեղեցական դպրոցներին և նորանց պաշտօնեաներին, ի միջիայլոց վարել և վարում եմ վանահայրության պաշտօն ճրիաբար Շամշուդայ գիւղի ուխտատեղում... վիճակիս 50-ի չափ գիւղերը և աւանները միմեանցից շատ հեռաւորութեան վերայ էն գտնուում ... ներկայիս խառը դրութեան ժամանակ մարդասպանութեան ու թալանութեան օրերին ճանապարհները շատ վտանգաւոր է դարձել...»¹³:

Երբեմն գործակալները ստիպված էին իրենց սեփական միջոցներից ծախսել ենթակա գյուղեր այցելւոյններ կատարելու համար, քանի որ նրանց անհրաժեշտ ծախսերի համար հստակ գումար առանձնացված չէր: Ինչպես քահանաների դեպքում¹⁴, գործակալների վարձատրւոյնը ևս կախված էր իրենց պաշտօնավարւոյան շրջանում գտնվող եկեղեցիների տնտեսական դրւոյնից: Բացի այդ՝ պակաս դեր չունէր նաև երեսփոխանը¹⁵, որի բարեխղճւոյնից էր կախված թե՛ եկեղեցապատկան գույքի կառավարւումը, թե՛ եկեղեցական պաշտօնյանների վարձատրւումն այդ նույն եկեղեցու դրամներից:

Օրինակ՝ Լոռվա գործակալ Ղևոնդ քահանա Մարիկյանը 1913 թ. փետրվարի 14-ին կոնսիստորիային ուղղված գրւոյթամբ թույլտւոյն էր խնդրում վիճակային արդւոյնքներից իրեն տրամադրել այն գումարը, որն ինքը ստիպված ծախսել էր իր

¹³ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 347, թ. 28 և շրջ.:

¹⁴ Վերահայրոց թեմում քահանաների համար առաջին անգամ ամսական վարձատրւոյն սահմանվեց միայն 1900 թ. Բաթումի գործակալւոյնում (Արեւելք, 1900, № 4333, էջ 1):

¹⁵ Կիրառելի է նաև երեսփոխան տարբերակը: Համայնքի թաղի կողմից ընտրված ներկայացուցիչ, որը մասնակցում է օրենսդրական մարմնի աշխատանքներին (Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. Ա, Երևան, 1969, էջ 576): Ժողովրդից ընտրված պետական ներկայացուցիչ (Անդրանիկ վրդ. Կոսեան, Բազմիրք հայերէն լեզուի, Պէրյուք, 1998, էջ 112):

միջոցներից գործակալությունում այցելություններ կատարելու, տեղերում եկեղեցիների, վանքերի գույքերի և դպրոցների ճշգրիտ ցուցակներ կազմելու համար¹⁶:

Այս պայմաններում, գործակալները երբեմն ստիպված էին հետաձգել այս կամ այն պարտականության կատարումը, ինչը շղթայական ձևով անդրադառնում էր ընդհանուր աշխատանքային արդյունավետության վրա:

Լոռվա գործակալի պաշտոնը զբաղեցրել են ինչպես Լոռվա գյուղերի և Ստեփանավան քաղաքի եկեղեցիների ծխական քահանաներն, այնպես էլ Թիֆլիսի գավառի գործակալները: Լոռվա գործակալներից են եղել քահանաներ՝ Արիստակես Աբովյանցը¹⁷, Հովհաննես Վերանյանը¹⁸, Ղևոնդ Մարիկյանը, Հովհաննես Բադալյանը և այլք:

Լոռվա գործակալությունում առանձնակի ուշադրության էր արժանի նաև Սանահինի, Հաղպատի և Մարցի կալվածքների կառավարման խնդիրը:

Սանահինի վանքին էին պատկանում վարելահողեր, արոտատեղեր, անտառ, ջրաղացատեղի, երկու այգի և այգետեղ, Հաղպատի վանքին՝ դարձյալ անտառ, վարելահողեր և երկու այգի, Մարցի կալվածքին՝ 4 գյուղ իր վարելահողերով, արոտատեղիներ և անտառ¹⁹:

Կալվածքների կառավարման հարցում խնդիրներ էին առաջանում ինչպես դրանց կանոնավոր կառավարման, եկամուտների բարեխիղճ գրանցման և թեմական կենտրոնական

¹⁶ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 3920, թ. 1: Ղևոնդ քահանա Մարիկյանի կազմած ցանկերը տե՛ս նույն տեղում, թթ. 2-5:

¹⁷ ՀԱԱ, ֆ. 56, ց. 15, գ. 795, մաս 3, թ. 342 շրջ.:

¹⁸ ՀԱԱ, ֆ. 53, ց. 1, գ. 319, թ. 13:

¹⁹ ՀԱԱ, ֆ. 56, ց. 14, գ. 105, թ. 30:

իշխանություններին դրանց փոխանցման, այնպես էլ տեղերում գյուղացիների և մեծահարուստ ընտանիքների հետ այս կամ այն տարածքի պատկանելության հարցի շուրջ:

Ըստ էության, ամփոփելով նյութը, պետք է նշել, որ Լոռվա գործակալությունը Վրաստանի և Իմերեթի թեմի խոշոր գործակալություններից մեկն էր, որի սահմաններում ընդգրկված գյուղերի թիվը XX դարի սկզբին անցնում էր 50-ից:

Լոռվա գործակալության կառավարումն իրականացվում էր նույն եղանակով, ինչպես թեմի մնացյալ տարածքներում: Թեմի եկեղեցական-վարչական կառույցում առկա խնդիրներն այստեղ ևս իրենց արտացոլումը գտան: Մյուս գործակալություններից Լոռին առանձնանում էր նաև այն հանգամանքով, որ այստեղ էին գտնվում թեմի խոշոր կալվածքներից մի քանիսը:

ՀԱՎԵԼՎԱԾ
ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՓՈԽԱՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աղյուսակ I

ՓՈԽԱՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Ախալցխա		Ելիզավետպոլ	Գորի
ԵՆԹԱԿԱ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
ք. Ախալցխա		ք. Գանձակ	ք. Գորի
Ախալքալաք և Ծալկա		Գետաշենի կամ Ա. մաս	Սուրամ
		Չարդախլու կամ Բ. մաս	Յիսինվալ
ԱՌԱՆՁԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Nº	XIX դ. 30–50-ական թթ.	Nº	XIX դ. վերջ – XX դ. սկիզբ
1	Սղնախ	1	Թիֆլիս քաղաքի Ա. մաս
2	Թելավ	2	Թիֆլիս քաղաքի Բ. մաս
3	Ղազախ-Շամշադին	3	Թիֆլիսի գավառ
4	Լոռի	4	Դուշեթ
5	Սոմխեթ	5	Թելավ
6	Թիֆլիս	6	Սղնախ
		7	Ջաքարթալա
		8	Քուլթայիս
		9	Բաթում
		10	Սուխում
		11	Արդվին
		12	Շուլավեր
		13	Շամշադին
		14	Ղազախի Ա. մաս
		15	Ղազախի Բ. մաս
		16	Լոռի

**ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԽԵՐԻ,
ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ, ՔԱՀԱՆԱՆԵՐԻ, ԳՅՈՒՂԵՐԻ ԹՎԻ
ՔԱՆԱԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 1909 Թ.
ԴՐՈՒԹՅԱՄԲ**

Աղյուսակ II

Գործակալության անվանումը	Ծխերի թիվը	Բնակիչ- ների թիվը	Եկեղեցի- ների թիվը	Քահանա- ների թիվը	Գյուղերի թիվը
Թելավ	1637	8832	15	12	23
Սղնախ	1549	8253	17	13	29
Ախալքալաք	7941	70487	70	62	71
Արդվին	516	2987	6	5	4
Զաքաթալա	276	1635	1	1	1
Դուշեթ	562	2128	9	6	20
Շուլավեր	1675	6285	15	9	13
Լոռի	3595	29982	38	34	36
Ղազախի Ա. մաս	141	527	1	1	20
Ղազախի Բ. մաս	1146	10602	10	12	10
Քութայիս	409	2252	2	2	4
Բաթում	300	6000	2	1	1
Շամշադին	1775	2906	18	18	18
Թիֆլիս քաղաքի Ա. մաս	6318	21897	23	41	10
Թիֆլիս քաղաքի Բ. մաս	3769	12611	15	20	10
Թիֆլիսի գավառ	1594	11522	24	13	31
Սուխումի շրջան	773	4266	7	5	7

7. 4. 1875

243 up to 250 p. 7

[illegible][illegible]

Sperry June 2nd 1864.

1	Buy up 1000 gal. water for the pump	24	10
2	Buy up 1000 gal. water for the pump	1	20
	Buy up 1000 gal. water for the pump	1	—
	Buy up 1000 gal. water for the pump	2	20

W. H. H. H.

1714 1/2

1/2 p. 250-251

26m 30.8

111

Գյուղի նունը	Այլ և անվան	Ամսաթիվը	Այլ և անվան	Այլ և անվան	Այլ և անվան	Այլ և անվան
3	17	26	Դարձվա :	Հարկի և արժեքի պահանջ	Հարկի և արժեքի պահանջ	Հարկի և արժեքի պահանջ
4	23	31	Դարձվա :	Հարկի և արժեքի պահանջ	Հարկի և արժեքի պահանջ	Հարկի և արժեքի պահանջ
5	1	5	Դարձվա :	Հարկի և արժեքի պահանջ	Հարկի և արժեքի պահանջ	Հարկի և արժեքի պահանջ
6	5	18	Դարձվա :	Հարկի և արժեքի պահանջ	Հարկի և արժեքի պահանջ	Հարկի և արժեքի պահանջ
7	16	24	Դարձվա :	Հարկի և արժեքի պահանջ	Հարկի և արժեքի պահանջ	Հարկի և արժեքի պահանջ
8	26	27	Դարձվա :	Հարկի և արժեքի պահանջ	Հարկի և արժեքի պահանջ	Հարկի և արժեքի պահանջ

Լոռվա գործակալության Ստեփանավան քաղաքի սբ. Աստվածածին եկեղեցու չափաբերական մատյանի օրինակ (1872 թ.)

Varditer Grigoryan, National Archive of Armenia, Cand. Hist. Sci., The Lori district of the Georgia-Imereti Diocese of the Armenian Apostolic Church in the 30s of the 19th century – the first decade of the 20th century

The Lori district was one of the largest units of the Georgia-Imereti Diocese of the Armenian Apostolic Church. The number of villages within its boundaries exceeded 50 at the beginning of the 20th c. The Lori district was administered in the same way as the rest of the Diocese.

The existing problems in the administrative structure of the Diocese were reflected here as well. Lori stood out among the other districts because some of the largest estates of the Diocese were located here.

**ԼՈՈՒԵՑԻ ՀԵՐՈՍՈՒՀԻ ԿԱՆԱՅՔ 19-ՐԴ ԴԱՐԱՎԵՐՁԻ
ԵՎ 20-ՐԴ ԴԱՐԱՍԿՁԲԻ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ-
ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ**

Հայոց ազգային-ազատագրական պայքարը զգալի չափով նախապատրաստվեց և լայն ծավալ ստացավ շնորհիվ այն բանի, որ 1860-1890-ական թվականները վերածննդի ու ազգային զարթոնքի յուրահատուկ շրջան հանդիսացան մեր ժողովրդի պատմության մեջ, երբ ավելի ուժեղացավ, ամրապնդվեց ազգային համախմբման գործընթացը, հայության հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքի գրեթե բոլոր բնագավառներում: Այդ շրջադարձային տարիներին լուսավորական շարժումը վճռական հաղթանակ տարավ կղերաավատատիրական, ռեակցիոն ուժերի նկատմամբ: Ձևավորվեց ու զարգացավ նոր, աշխարհիկ գրականությունը, կատարվեցին դպրոցական բարենորոգումներ, հիմնվեցին գրական, մշակութային, կրթական մի շարք ընկերություններ, նոր թափ ստացան հրատարակչական գործը, մամուլը, թատրոնը և այլն: Ձևավորվեց և քաղաքացիական իրավունք ստացավ աշխարհաբար գրական լեզուն, որը դարձավ ազգային միասնական լեզու՝ վեր կանգնելով տեղական բարբառներից, լայն ծավալ ստացան նաև լուսավորական գաղափարների քարոզչությունն ու տարածումը¹:

¹ Ներսիսյան Մ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1890 թթ., Երևան, 2002, էջ 77:

Գաղտնի կազմակերպությունների ստեղծումը պարարտ հող նախապատրաստեց ազգային կուսակցությունների առաջացման համար: Առաջին հայ քաղաքական կուսակցությունը ծնունդ առավ Վանում, որտեղ 1885 թվականին խիստ գաղտնիության պայմաններում ծնվեց առաջին քաղաքական կուսակցությունը²: Նրա անդամները իրենց ուսուցչի հրատարակած թերթի անունով կուսակցությունը կոչեցին «Արմենական», որի փաստական ստեղծողը և ղեկավարը Մկրտիչ Թերլեմեզյանն էր (Մկրտիչ Ավետիսյան, 1864-1896): Արմենականների գործունեությունը Վանում մեծ թափ ստացավ 1890-ական թվականների երկրորդ կեսին՝ թուրքական կառավարության ձեռնարկած զանգվածային կոտորածների ժամանակ:

Ժնևում սովորող մի խումբ ուսանողներ 1887 թվականին ստեղծեցին միասնական հեղափոխական կուսակցություն, որը 1887 թվականին հրատարակված «Հնչակ» թերթի անունով կոչվեց «Հնչակյան»: Այն այդպես էր կոչվում Գերցենի և Օգարյովի «Колос» թերթի նմանությամբ: Նրա ղեկավար անդամներն էին Ավետիս Նազարբեկյանը, Մարո Վարդանյանը և ուրիշներ: Նրանք գտնվում էին ռուս նարոդնիկների ազդեցության տակ, որոնց պայքարի եղանակները, հատկապես ահաբեկչությունը, գրավում էին հնչակյաններին: Նրանք կապված էին նաև Ժնևում գործող Գ. Պլեխանովի «Աշխատանքի ազատագրություն» մարքսիստական խմբի հետ:

«Հնչակյան կուսակցության» մասնաճյուղեր ստեղծվեցին մի շարք հայաշատ վայրերում: Կուսակցության ներսում սոցիալիզմի վերաբերյալ եղած տարաձայնությունները հարթելու համար 1896 թվականի հունվարին Լոնդոնում հրավիրվեց պատ-

² Հայոց պատմություն, քուիական դասագիրք, Երևան, 2012, էջ 370-372:

գամավորական ժողով, որտեղ կուսակցությունը բաժանվեց 2 թևի: Արևմտահայ թևը ստացավ «Վերակազմյալ հնչակյաններ» անվանումը³: Նրանք հետագայում կատաղի պայքար սկսեցին իրար դեմ, որը հաճախ ավարտվում էր երկու թևի գործիչների սպանություններով:

Թիֆլիսում տարբեր հեղափոխական կազմակերպությունները միավորվեցին Ք. Միքայելյանի ղեկավարած հայ նարոդ-նիկների խմբի հետ⁴: Արևմտահայերի ազատագրության համար պայքարող բոլոր խմբերի միավորումով ստեղծվեց «Հայ հեղափոխականների դաշնակցություն» կուսակցությունը, որի հիմնադիր ղեկավարներն էին Ք. Միքայելյանը, Ս. Զավարյանը և Ստ. Զորյանը: 1890 թվականի սեպտեմբերին լույս տեսավ նրա «Մանիֆեստը», որտեղ գործունեության նպատակը հայտարարվում էր «Թուրքաց Հայաստանի քաղաքական ազատությունը»: Ընտրվեց կենտրոնական վարչություն:

1890-ական թվականների երկրորդ կեսից սկսած՝ ՀՅԴ-ն աստիճանաբար դարձավ ամենաազդեցիկ համահայկական կուսակցությունը⁵: Հայ ազգային կուսակցությունները, չնայած իրենց ոչ համերաշխ գործելակերպին, մեծ աշխատանք կատարեցին ժողովրդի ազգային ինքնագիտակցության արթնացման, ինքնապաշտպանության կազմակերպման գործում:

Երբ 1890 թվականի օգոստոսին վերջնականապես ՀՅԴ-ն ձևավորվեց, բազմաթիվ հեղափոխական հայուհիներ ընդգրկվեցին կուսակցության կազմում և դարձան նորակազմ կուսակցության աջակիցները: Դժբախտաբար, մեզ չի հասել նրանցից շատերի անունները, գիտենք միայն, որ ազատագրական պայքարի

³ Նույն տեղում, էջ 390- 391:

⁴ Վարդանյան Հ., Արևմտահայերի ազատագրության հարցը, Երևան, 1967, էջ 293:

⁵ Վարդանյան Հ., նշվ. աշխ., էջ 289-290:

գաղափարներով ոգևորված հայուհիների խմբակներից մեկի գլխավոր կենտրոնավայրը արմատներով լոռեցի Ն. Մատինյանների բնակարանն էր։ Աչքի էին ընկնում Նիկոլ Մատինյանի երկու քույրերը՝ **Նատալյան և Սաթենիկը, Ս. Զավարյանի քույր Մարիամը, նաև Ժենյա Ադամյան-Քալանթարյանը, քույրը՝ Թամարա Ադամյանը, Վարդան Գոլոշյանի քույրը՝ Դարիա Գոլոշյան-Թադևոսյանը, լոռեցի Նատալյա Ամիրխանյանը և ուրիշներ։**

Այս բոլոր հայուհիները, գրեթե առանց բացառության, ավարտել էին Թիֆլիսի կանանց գիմնազիան (լիցեյը) և զանազան դպրոցների մեջ պաշտոնավարելով, ցանկանում էին այդ ճանապարհով օգտակար լինել հայոց ազատագրական շարժմանն ու հեղափոխական գործին։

Պատահական չէ, որ 1890-ական թվականների նախօրյակին, երբ արևմտահայ դատը գերազանցապես զբաղեցնում էր հայ մտավորականությանը, որոշակի քանակ էին կազմում այն օրիորդներն ու կանայք, որոնք նվիրված էին արևմտահայ դատի համար կազմակերպված խմբակների մեջ։

Առաջին հեղափոխական հայուհիները բոլորն էլ Թիֆլիսից էին։ Թիֆլիսը, Անդրկովկասի կենտրոն լինելուց բացի, նաև հայկական կենտրոն էր։ 1880-ական թվականներին քաղաքի 300000 բնակիչներից 120000-ը հայեր էին, 80000-ը՝ վրացիներ, 70000-ը՝ ռուսներ, 30000-ը՝ այլազգիներ⁶։ Կովկասի ամբողջ կենտրոնը՝ Թիֆլիսի բոլոր մեծ հիմնարկություններով՝ թատրոն, գրադարան, դրամատուն թե՛ վաճառատուն, հայերին էր պատկանում։ Քաղաքային պաշտոնյաների մեծամասնությունը հայեր

⁶ Խատիսեան Ա., Քաղաքապետի մը յիշատակները, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1932, մայիս, № 7։

էին, օրինակ՝ քաղաքապետը, վարչության անդամները, քաղաքային բժիշկները, ուսուցիչները և այլն: Բազմաթիվ վարժարանների գոյության շնորհիվ հայերի կրթական մակարդակը բարձր էր և կային միջնակարգ և բարձրագույն ուսումնառությամբ բազմաթիվ հայեր:

1880-ական թվականներին Ռուսաստանում տեղի ունեցած հեղափոխական շարժումների արձագանքները Թիֆլիս հասան և Անդրկովկասի երիտասարդ մտավորականներն էլ ընկան «Նարոդնայա Վոյա» («Ժողովրդական կամք») անունով ռուսական հեղափոխական կուսակցության ազդեցության տակ: Այդ կուսակցության համար առանձին ազգային քաղաքական հարցեր չկային, այլ բոլոր ազգերը եղբայրներ էին, և նրանց միակ նպատակը ցարիզմի տապալումն ու միջազգային սոցիալիզմի հաղթանակն էր:

19-րդ դարի 2-րդ կեսի ազատագրական շարժման նշանավոր հայուհիներից էր **Նատալյա Ամիրխանյան-Մուրադյանը (1863-1921)**: Նա ծնվել է 1863 թվականին Երևանում, Ղարաքիլիսայում ծնված ծնողների ընտանիքում: Նա ունևոր և կիրթ ընտանիքից էր: Գործի բերումով ծնողները Թիֆլիս էին փոխադրվել: Դեռ Օրիորդաց գիմնազիայի աշակետուհի լինելով՝ նա էլ Թամարա և Ժենյա Ադամյանների նման անդամակցել էր «Նարոդնայա Վոյային» և 1882 թվականին նրանց հետ մտել հայկական հեղափոխական առաջին մարմնի մեջ՝ մեծ խանդավառությամբ նվիրվելով ազգային գաղափարների իրականացմանը: Ն. Ամիրխանյանը մեծ աշխատանքներ է կատարել նաև ՀՅԴ կազմակերպման գործում՝ սատարելով կուսակցության զարգացմանն ու զորացմանը⁷:

⁷ Զեյթեան Ս., Հայ կնոջ դերը հայ լեղափոխական շարժման մեջ, Լոս-Անճելըս, էջ 23:

Ն. Ամիրխանյանն իր համար աշխատանքի յուրահատուկ ասպարեզ էր ընտրել: Ռուսական կառավարությունը մեծաթիվ միջնակարգ դպրոցներ էր բացել առաջին հերթին աղջիկների, ապա՝ տղաների համար. քաջատեղյակ էր, որ եթե աղջիկը սկսի ռուսերեն խոսել, տղաներն էլ հեշտությամբ ռուսախոս կդառնան: Նատալյայի նպատակը ծուլման աղետի դեմ պայքարելն ու նրա դեմն առնելն էր: Այդ պատճառով մեծ աշխատանքներ էր կատարում օտարանալու վտանգի տակ գտնվող, կիսով չափ կամ լիովին օտարացած երիտասարդ աղջիկների հայացման գործում: Մեծ եռանդով էր սովորեցնում հայոց լեզու, գրականություն և հատկապես տարածում էր օտար ասպարեզներում հայերեն գրքերի շրջանառմամբ զբաղվող «Հրատարակչական միության» լույս ընծայած աշխատությունները: Խմբակային պարապմունքներ սկսելու պահից Ն. Ամիրխանյանը ոգևորությամբ էր խոսում հայոց պատմության, արևմտահայ դատի, հայ ժողովրդի դարավոր իրավունքների վերականգման անհրաժեշտության մասին⁸: Աշակերտուհիները մեծ ուշադրությամբ հետևում էին, «ըմպում» նրա խոսքերը, կարծես ծարավ ինչ-որ մեկը «խմում էր լեռան վճիտ աղբյուրի ջրից»: Բոլորը զգում էին Նատալյայի ներքին բարոյական ուժը: Երբ նա խոսում էր զոհողության մասին, որին նրանցից յուրաքանչյուրը պետք է պատրաստ լիներ հայրենիքի ազատագրման համար, երիտասարդ աղջիկների սիրտն ու հոգին լցվում էին ազնիվ երազանքներով ու ձգտումներով⁹:

Ն. Ամիրխանյանն ամուսնացավ բժիշկ Մուրադյանի հետ: Մտածելով, որ հարազատ ժողովրդին ավելի օգտակար կլինեն, եթե գավառներում գործունեություն ծավալեն, երիտասարդ զույ-

⁸ Տե՛ս նույն տեղում:

⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 25:

գը շրջեց հայկական գավառներում և ի վերջո հաստատվեց Ղարաքիլիսայում: Նատալյան երբեք ցավ չապրեց, որ Թիֆլիսի աշխույժ և եռանդուն կյանքից հետո հեռավոր և հետամնաց շրջան մեկնեց: Ընդհակառակը, անմիջապես գործի անցավ, իրեն կապեց շրջանի երիտասարդությանը և վերջինիս մղեց ազատագրական շարժման, հեղափոխական աշխատանքին: Ստեղծեց կանանց ու աղջիկների խմբեր և նրանց կապեց այդ ժամանակվա «Կարմիր խաչի» կենտրոնական խմբերի հետ:

Ն. Ամիրխանյանը հավատում էր քարոզչության անհրաժեշտության և խմբակային հավաքություններում Ռաֆֆու, Ահարոնյանի գրվածքներից ու «Դրոշակից» մեջբերումներ էր անում, և հեղափոխական մտքերի վերլուծությամբ էր զբաղվում՝ նրանց յուրացումն ու տարածումը հեշտացնելու համար¹⁰:

Տարիներ շարունակ Ղարաքիլիսայի ՀՅԴ-ի կոմիտեի անդամ էր: Նրա տունը Ղարաքիլիսայում ապաստանող կամ այնտեղ գնացող հեղափոխական և գաղափարական գործիչների համար կենտրոնատեղի էր: Երբ թուրքերը Ղարաքիլիսա մտան, վերջինս թուրք ազդեցիկ մարդկանց հետ իր անձնական բարեկամության շնորհիվ մեծ թվաքանակով աղջիկների թշնամու ձեռքն ընկնելուց փրկեց¹¹:

Այդպես ապրեց և գործեց Ն. Ամիրխանյանը մինչև Հայաստանի Հանրապետության ծագումն ու անկումը: Երբ բոլշևիկները մտան Ղարաքիլիսա, լայն ժողովրդականություն վայելող Ն. Ամիրխանյանն էլ՝ իբրև վտանգավոր դաշնակցական գործիչ, բանտ նետվեց: Բանտում վաթսունամյա հայուհին բանտարկյալների մեջ միակ կին էր, որը միշտ սրտապնդում էր իր շրջապատին:

¹⁰ Տե՛ս նույն տեղում:

¹¹ Տե՛ս նույն տեղում:

Չնայած նրան, որ Ն. Ամիրխանյանը գիտեր, որ իրենց վախճանը մոտալուտ է, ոչ միայն կորովը չկորցրեց, այլև գթառատ մոր նման երիտասարդ բանտարկյալներին քաջություն ներշնչեց: Երբ 1921 թվականի փետրվարի 16-ին բռնակցություններ խուժեցին բանտ և սկսեցին բանտարկյալներին կոտորել, երիտասարդ դաշնակցական ուսանող Գ. Կիրակոսյանը և վաստակավոր դաշնակցական գործիչ Ն. Ամիրխանյանը գնդակահարվեցին կողք կողքի՝ ուղիղ նայելով իրենց դահիճների աչքերի մեջ¹²:

Նատալյան ազատագրական շարժման նշանավոր առաջին հայուհին էր, հեղափոխական կինը, որը զոհ գնաց բռնակցների նողկալի ոճիրին:

19-րդ դարավերջի ազատագրական շարժման նվիրյալ գործիչներից էր **Նատալյա Մատինյանը**: Մատինյան ընտանիքը Թիֆլիսում աչքի ընկնող հայ ընտանիքներից էր: Նրա հայրական պապը և տատն արմատներով Լոռվա Գյուլագարակ գյուղից էին: Նատալյայի հայրը լուսամիտ և ազգասիրական գաղափարներով տոգորված պետական պաշտոնյաներից էր, իսկ մայրը՝ տիպիկ հայուհի՝ նվիրված իր ամուսնուն և զավակներին: Եղբայրը՝ Նիկոլը, եվրոպական կրթություն էր ստացել և Թիֆլիսի ֆրանսիական հյուպատոսարանում թարգմանչի պաշտոն էր ստանձնել: Քույրերը՝ Սաթենիկը, Լուսիկն ու Սիրանուշը, բարձրակարգ կրթություն ստացած աղջիկներ էին: Մատինյանների տունն այդ ժամանակներում երիտասարդության հավաքատեղի էր, ըստ Մալխասի՝ «Դաշնակցական պապերի տուն էր»¹³:

Նատալյան «Երիտասարդ Հայաստանի» անդամ էր, և երբ

¹² Տե՛ս նույն տեղում, էջ 25:

¹³ Տե՛ս նույն տեղում, էջ 28:

կազմակերպվեց ՀՅԴ-ն, իր ժողովրդին օգտակար լինելու համար ամբողջությամբ նվիրվեց կուսակցական գործին: Նրա գաղափարակից ընկերները, նկատի ունենալով խելացի, լուրջ, գործունյա և հանդուգն բնավորությունը, խորհուրդ տվեցին նրան, որ գնա Մոսկվա և զբաղվի մանկաբարձությամբ: Այս ձևով ոչ միայն ժողովրդի բոլոր խավերի հետ շփման մեջ կարող էր մտնել, այլև իր մասնագիտության շնորհիվ կարող էր այնպիսի տեղեր գնալ, որտեղ մտնելը շատերի համար կարող էր մատչելի չլինել¹⁴:

Թիֆլիս վերադառնալով՝ զբաղվեց իր մասնագիտությամբ: Միաժամանակ տարիներ շարունակ տեղական Կենտրոնական կոմիտեի անդամ եղավ և մեծ օգուտ բերեց գաղտնի գրականության տարածման և փախստական հեղափոխականներ պահելու տեսակետից: Բյուրոյի և այլ կարևոր ընկերների խնդրանքով ամենայն բարեխղճությամբ և զգուշությամբ կատարեց ծանրակշիռ գաղտնի հանձնարարություններ¹⁵:

Մանավանդ սկզբնական տարիներին Նատալյան շատ նեղություններ և զրկանքներ կրեց առանց տրտնջալու, քանի անգամ բանտ նետվեց, սակայն միշտ մնաց իր գաղափարական բարձունքում: Թիֆլիսում բոլորի կողմից հարգված ու սիրված անձ էր, և ինչը ամենից կարևորն էր, մեծ վստահություն էր վայելում: Հակառակ այն բանի, որ անգիջում էր իր դատողությունների մեջ, «նրա անկեղծ, անձնվեր և անշահախնդիր նկարագիրը իրավունք էր տալիս նրան ամենախիստ քննադատության ենթարկելու տգետ արարքը, ով էլ որ լինեք դրա հեղինակը»¹⁶:

¹⁴ Գիլխանդանեան Ա., Յեղափոխական հայուհիներ, մաս I, Փարիզ, 1939, էջ 45:

¹⁵ Տե՛ս նույն տեղում:

¹⁶ Իփեկեան Գ., Կովկասի մէջ 1908-ին, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1951, դեկտեմբեր, № 12, էջ 46:

Հայաստանի Հանրապետության ժամանակահատվածում Նատայյան իր եղբոր՝ Նիկոլի հետ մնաց Ալեքսանդրապոլում և չնայած իր ծեր տարիքին՝ երիտասարդի խանդավառությամբ գործունեություն ծավալեց: Հանրապետության անկումից հետո գնաց Թիֆլիս և այնտեղ էլ մահացավ:

Հայդուկային պայքարի նվիրյալներից էր **Սաթենիկ Մատինյան-Արղությանը (Ծաղիկ)**: Սաթենիկը ծնվել է Ալեքսանդրապոլում: Նրա ծնողները գործի բերումով տեղափոխվել էին Թիֆլիս¹⁷: Նա չէր կարողացել հիվանդության պատճառով սովորել Թիֆլիսի օրիորդաց գիմնազիայում, սակայն հետագայում ստացել էր մանկավարժական կրթություն: Իրականում նա իր իսկական ուսումն առել էր իրենց տան գաղափարական մթնոլորտում:

Նատայյայի գործունեությունն իր աչքի առաջ ունենալով՝ քույրը՝ Սաթենիկը, որոշել էր նմանվել նրան, ուստի պատահական չէ, որ մտնելով ՀՅԴ-ի շարքերը՝ նա բարձր պահեց դաշնակցական կին գործչի անունը: Խիզախ ու ջերմ բնավորությամբ, աննահանջ կրթովի տեր, վճռական, հանդուգն, անզիջող և անսպառ եռանդով զինված՝ նա հեռացավ հայրենի տնից, անցավ Պարսկաստան՝ այնտեղ աշխատելով ուսուցչուհու պաշտոնում¹⁸: Նվիրվելով ազատագրական գաղափարներին՝ նա հարմար առիթներ էր որոնում «էրգիր» անցնելու և այնտեղ գործելու համար:

«Չափազանցություն չի լինի, եթե ասենք, որ հայ ուսուցչի լավագույն տիպը կատարելագործվել է Պարսկաստանում, – գրում է Ա. Գյուլխանդանյանը, – ապա ավելացնում՝ նշելով՝ «դաշ-

¹⁷ Գյուլխանդանեան Ա., նշվ. աշխ., էջ 44-45:

¹⁸ Գյուլխանդանեան Ա., նշվ. աշխ., էջ 46-47:

նակցական ուսուցիչը ոչ միայն դաստիարակիչ էր հայ մանուկների և հայ հասարակության, այլև անսահման զոհաբերող էր: Նա գրչի հետ միասին գիտէր եւ սովորեցնում էր ուրիշներին զէնքի գործածութիւնը, պէտք եղած ժամանակ զէնքը ձեռքին նա քաջաբար «էրգիր» էր անցնում եւ անվախ չափում էր թշնամու հետ»¹⁹:

Համարյա բոլոր մտավորականները, որոնք 19-րդ դարավերջին՝ 1890-ական թվականներին, եղել էին Պարսկաստանում, աշխատել էին որպես ուսուցիչներ՝ լինելով ազատագրական պայքարի նվիրյալ և հայտնի գործիչներ: Նրանց թվում էին Հովսեփ Արղությանը՝ Սաթենիկի ամուսինը, Հովնան Դավթյանը, Նիկոլ Դումանը, Սարգիս Օհանջանյանը, Բարսեղ Գրիգորյանը (Աբա-Մելիք), Տիգրան Ստեփանյանը, Վարդանը, Սարգիսը և ուրիշներ:

Սաթենիկն էլ, աչքի առաջ ունենալով նրանց օրինակը, չափազանց համեստ վարձատրությամբ նրանց նման ազգային գաղափարների տարածման համար դիմացել էր ամեն տեսակի զրկանքների ու զոհողությունների:

Հովսեփ Արղությանը, որ օրիորդ Սաթենիկի՝ իր ապագա տիկնոջ հետ Պարսկաստան էր անցել Երվանդ Ղազարյան ծածկանունով, նկարագրել է նրա կատարած լայնածավալ ազգային գործունեությունը հայ կանանց շրջանում: «Ո՛վ էր տեսել, որ Պարսկաստանի սահմանափակ կյանքին ենթակայ հայ կինը յաճախի թատրոն, ներկայ լինի դասախոսութիւններին ու երեկոյթներին»,– գրել է Հ. Արղությանը²⁰:

Այդ ամենը կատարվել էր օրիորդ Սաթենիկի ջանքերով: Քանի գնացել, ավելի էր խորացել ժողովրդի լայն համակրանքը

¹⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 49:

²⁰ Գիլխանդանեան Ա., նշվ. աշխ., էջ 48-49:

դեպի օրիորդ Սաթենիկը: Նա, մոտիկ հարաբերություններ հաստատելով մի քանի հայ ընտանիքների հետ, իր ծանրախոհ և լուրջ բնավորության շնորհիվ կարողացել էր Թավրիզի բոլոր հայ կանանց մեջ տարածել ազգային գաղափարներ:

«Թավրիզի հայ կանայք, փաթաթված սև ու կապույտ ծածկոցների մեջ, շտապել են ժողովի, ոչ ոք չի կամեցել բացակայել: Բոլորը լուռ նստել են, խոսել է միայն օրիորդ Սաթենիկը: Այդ ռուպէին նա կատարեալ առաքեալ էր, մարմնացած գաղափար, նորա հոգու խորքից դուրս էին թռչում հայրենիքի թշուառ ու դաժան կեանքի պատմութիւնները: Մոլեռանդ քարոզչի նման նա նկարագրում էր այն դժոխքը, որ Տաճկահայաստան էր կոչում, ուր տառապում էր հայ ժողովուրդը ազգովին...

Ժողովականները յուզւած, զգացւած են, շատերը լուռ հեկեկում են... Յանկարծ ամեն կողմից լսում է. «Օրիորդ, մենք պատրաստ ենք, մենք ամէն ինչ կանենք, ինչ որ պետք է, ինչ որ դուք ցանկանում եք...», – գրում է Ա. Գյուլխանդանյանը²¹:

Այդպիսի նվիրյալ, հայրենասիրական աշխատանքի շնորհիվ Թավրիզի լավագույն կանայք օրիորդ Սաթենիկի միջոցով կապվել էին ՀՅԴ-ի հետ՝ չխնայելով իրենց աշխատանքներն ու լումաները: Օգտվելով այդ հաջողություններից՝ օրիորդ Սաթենիկը հիմք էր դրել Թավրիզի «Հայուիյաց բարեգործական ընկերության», որի նպատակն էր չափահաս օրիորդների մեջ կրթություն իրականացնել, հայրենասեր լավ մայրեր դարձնել նրանց, միաժամանակ կարուճակ սովորեցնել:

Այդ գործերից զատ՝ օրիորդ Սաթենիկը զարկ էր տվել Թավրիզի «Աբովյան» գրադարանին, մասնակցել էր հեղափոխական, ազգային և այլ նպատակներով կազմակերպված երե-

²¹ Տե՛ս նույն տեղում, էջ 49:

կույթներին, դպրոցի եկամուտների և հեղափոխական նպատակների համար դրամահավաք կազմակերպելու համար նա սիրողական մակարդակով բեմ էր բարձրացել և խաղացել առանձին դերեր: Օրիորդ Սաթենիկը, լինելով ազգային նվիրյալ և հայրենասեր գործիչ, հավաքված գումարի մի մասով զենք էր գնել և կազմակերպել դրանց տեղափոխումը Արևմտյան Հայաստան: Օրիորդ Սաթենիկը դրա հետ միասին պատրաստվել էր անցնել «էրգիր»՝ իր ուժերը այնտեղ օգտագործելու, ազատագրական պայքարին նվիրվելու համար:

Նիկոլ Դումանը, Իշխանը (Հովսեփ Արղությանը) և օրիորդ Սաթենիկը, թողնելով Թավրիզը, անցել էին Սալմաստի շրջան, ապա փոխադրվել Դերեկի պատմական վանքը, որտեղ մի խումբ հայդուկներից զատ՝ «էրգրից»՝ Վանից եկել էին նաև Պետոն և Աբա-Մելիքը (Բարսեղ Գրիգորյանը)²²:

Հայդուկների այս խումբը Պարսկաստանի և «էրգիր» միջև կապը ապահովող հիմնական օղակն էր դարձել: Նրանց խորհրդակցության հավաքին մասնակցել էր նաև օրիորդ Սաթենիկը՝ Ծաղիկը՝ իբրև բոլորին հավասար անդամ: Այս խորհրդակցության ընթացքում Վանի վալին՝ տխրահոջակ Բահրի փաշան, Շարաֆ բեյի քրդերի հետ, մի խումբ զինվորներով հարձակվել էր Դերեկի վանքի վրա՝ վանքը ավերակ դարձնելու, իսկ հայդուկներին սրի քաշելու նպատակով²³: Սակայն փաշայի նպատակները չէին իրականացել, քանի որ վանքում ապաստանած հայդուկները, այդ թվում՝ Սաթենիկը, հերոսաբար կռվել էին, քաջաբար դիմադրել, քրդերին մեծ կորուստներ պատճառելով՝ ստիպել էին փախուստի դիմել: Այս կռվում իր քաջությամբ փայլել էր Նիկոլ

²² Տե՛ս նույն տեղում, էջ 51:

²³ Տե՛ս նույն տեղում, էջ 52:

Դումանը՝ դրսևորելով կազմակերպչական և ղեկավարման բացառիկ ընդունակություններ: Սաթենիկը անվեհեր կերպով դիրքից դիրք էր անցել, խրախուսել մարտիկներին, փամփուշտներ մատակարարել նրանց և շատ հաճախ դիպուկ կրակոցներով գետնին էր տապալել թշնամուն²⁴: Շուտով Սաթենիկը փորձել էր Կարսի վրայով Արամ Արամյանի և Հրայր Դժոխքի հետ անցնել Արևմտյան Հայաստան, սակայն չէր կարողացել: Նա հաստատվել էր Սալմաստում, որտեղ կազմակերպվել և Սալմաստից-Վան էին անցել զինատար խմբերը: Սաթենիկը՝ իբրև վարժուհի, բժիշկ Քրիստափոր Օհանյանի հետ կազմակերպել և իրականացրել էր «էրզիր» գնացող և վերադարձող զինատար և սուրհանդակների վերաբերյալ բոլոր գործերը²⁵:

Խանասորի արշավանքի կազմակերպման գործում ևս Սաթենիկը կարևոր դերակատարում է ունեցել: Նա ոչ միայն ջերմ կողմնակից է եղել այդ արշավանքին՝ հակառակ ոմանց, այլև այդ գործին նվիրել է իր բոլոր ուժերը: Սաթենիկը ոչ միայն օգտակար է եղել Սալմաստի շրջանում, այլև հաջողությամբ իրականացրել է զենքերի փոխադրման գործը մյուս շրջաններում ևս: Չափազանց դժվարին գործ էր Ռուսաստանի խորքերից զենքեր և այլ ռազմամթերք հասցնելը մինչև Թավրիզ, այնտեղի արհեստանոցում կարգի բերել և նույնպիսի զգուշությամբ փոխադրել Սալմաստ, իսկ այնտեղից՝ «էրզիր»²⁶:

Սաթենիկն առնական կեցվածքով Խանասորի արշավանքին է ճանապարհել իր սիրելի էակին՝ Իշխանին (Հովսեփ Արղությանին), չնայած Խանասորի արշավանքի արդյունքները գոհացուցիչ չեն եղել: Արշավանքի մասնակիցները հետապնդու-

²⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 53-54:

²⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 56:

²⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 57:

մից խուսափելու համար տարբեր վայրեր են տեղափոխվել: Սաթենիկն ու Հովսեփ Արղությանը անցել են Թիֆլիս և այնտեղ էլ ամուսնացել: Սակայն ցարական կառավարությունը նրանց՝ իբրև վտանգավոր հեղափոխականների, մի քանի տարով աքսորել է Ռուսաստանի հյուսիսային շրջան՝ հեռավոր Վոլոգդա նահանգը: Աքսորավայրից վերադառնալուց հետո՝ 1914-1915 թվականներին՝ կամավորական շարժման ժամանակ, չնայած իր տարիքին, Հովսեփ Արղությանը կնոջ՝ Սաթենիկի խորհրդով ու քաջալերանքով նվիրվել է կամավորական շարժմանը՝ դառնալով ջոկատներից մեկի հրամանատարը:

Անասելի ողբերգությամբ քառսի, խավարի միջից ծնունդ առավ Հայաստանի առաջին հանրապետությունը: Հովսեփ Արղությանը և Սաթենիկը դարձան հարապետության առաջին դեսպանն ու դեսպանուհին Պարսկաստանում, որտեղ նրանք մեծ նվիրումով աշխատեցին²⁷: Իբրև տարագիրներ՝ հետագայում տեղափոխվեցին Փարիզ, որտեղ էլ իրենց ծերության օրերին կրեցին աղքատության դառը ճակատագիրն ու կնքեցին իրենց մահկանացուն:

Հայոց ազատամարտի նվիրյալ հայուհիներից էր **Մարիամ Մակարյանը (Մարոն)**: Ծնողները Լոռվա Դսեղ գյուղից էին: Նա ծնվել է Դերբենտում, 1872 թվականին²⁸: Դեռ փոքր հասակից զրկվել է ծնողներից, որբացել ու մեծացել եղբայրների խնամքով: Ուսումը ստացել է տեղական գիմնազիայում: Դեռևս աշակերտական շրջանից աշխուժորեն մասնակցել է հայրենասիրական խմբակների աշխատանքներին: Կարդալով Րաֆֆու վեպերը՝ նա համակվել է հայրենասիրական խանդավառությամբ, որին

²⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 58-60:

²⁸ Զեյթեան Ա., նշվ. աշխ., էջ 35:

հաղորդակից է դարձրել իր ընկերուհիներին: Նրանք բոլորն էլ հանդիսավոր կերպով ուխտել են ծառայել իրենց թշվառ հայրենիքի ազատագրման գործին: Մարոն, չնայած իր նուրբ կազմվածքին, ուներ հզոր կամք, զվարթ բնավորություն, խստապահանջ էր և առնական: Նրա նպատակը «էրգիր» անցնելն էր և նրա ազատագրումը քուրդ ու թուրք ոճրագործների ձեռքից: Այդ նպատակով 1894 թվականին նա մեկնել է Թավրիզ իբրև ուսուցչուհի: «Հոգածու քոջ պէս կը գուրգուրեր «էրգիր» մեկող կամ վերադարձող հայդուկներուն վրայ»²⁹:

Մարոն ոչ միայն պատրաստում էր «էրգիր» անցնող խմբերի իրերը, այլև իր ոգևորիչ խոսքերով բարձրացնում էր նրանց պայքարի ոգին, ազդում էր հոգեկան ապրումների վրա, մղում հերոսության և մեծ զոհողությունների: Նա մասնակցություն ուներ նաև սահմանազուխ զենք ու զինամթերք փոխադրելու գործին: Նրա բնակարանը վերածվել էր զենք-զինամթերքի պահեստի և թշնամու հետապնդած ընկերների թաքստոցի³⁰: Նա, ժամանակակիցների բնութագրմամբ, «Հայուհյաց բարեգործական ընկերության» կարի արհեստանոցի ազգային ոգին էր. ոչ միայն հայուհիներին կարի և նուրբ ասեղնագործության հազարամյա գաղտնիքներն էր սովորեցնում, այլև խմբեր էր կազմում և ընթերցանություններով ու դասախոսություններով նրանց մեջ հայրենասիրություն դաստիարակում և ազատագրական պայքարի գաղափարներ ներշնչում³¹:

Զենքերի փոխադրությունը կազմակերպելու ժամանակ Մարոն ծանոթացել էր զենքի արհեստանոցի հիմնադիր և հմուտ զինագործ Արիստակես Զորյանի (հեղափոխական ծածկանու-

²⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 35:

³⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 37:

³¹ Տե՛ս նույն տեղում, էջ 35:

նով՝ Կարոյի) հետ (Ռոստոմի եղբայրը): Երկու գաղափարակից ընկերները խոր սիրով կապվել էին միմյանց հետ: Երբ 1896 թվականին Թիֆլիսում գումարված ՀՅԴ շրջանային ժողովը որոշեց կազմակերպել Խանասորի արշավանքը, Կարոն դեմ էր այդ արշավանքին՝ այն համարելով ուժերի ապարդյուն վատնում: Նրա այս դիմադրությունը այդ գաղափարին, որին նվիրված էր Մարոն, վերջինիս մտածելու տեղիք է տվել: Մարոն փորձել է Կարոյի դժկամության պատճառը փնտրել իրենց սիրո մեջ: Իրականությունն այդպիսին չէր, սակայն Մարոն, այդպես հավատալով, սկսել է հոգեպես տառապել: Նրա մոտ այն մտայնությունն է իշխել, որ սերը կխոչընդոտի հեղափոխական ազատագրական պայքարի ազատ գործունեությանը: Դրանից հետո նա հոգեկան ապրումներ է ունեցել, և անհետացել է նրա կենսուրախությունը: Նա հետզհետե դարձել է վշտահար ու թախծոտ:

1896 թվականին Մարոն մեկնել է Սալմաստ՝ Խանասորի արշավանքի նախապատրաստմանը ակտիվորեն մասնակցելու: Նա գիշերով պատրաստել է ասեղնագործ դրոշակ, որի վրա արշավանքի մասնակիցները պետք է երդում տային³²: Նա երազել է այն վայրկյանների մասին, երբ իր սիրած երիտասարդն էլ, զենքը ուսին, փամփշտակալները շարք-շարք կապած, պիտի մոտենար իր ձեռքով պատրաստած դրոշակին: Մարոյի աչքի առաջ են եկել Կարոյի ներքին պայքարը հայրենիքի ծառայության և անձնագրի սիրո միջև: Նա գնալով համոզվել է, որ ինքն է խոչընդոտել Կարոյի ազատագրական գաղափարների իրագործմանը: Դրա համար էլ նա 1896 թվականի դեկտեմբերի 2-ին ինքնասպանությամբ վերջ է դրել իր կյանքին: Մահից առաջ նա իր գրած նամակում կոչ է արել սիրած տղային՝ Կարոյին, գնալ հայրենիքի

³² Տե՛ս նույն տեղում, էջ 37:

համար գոհողության: «Լիցո՛ւք թունաւոր վրէժխնդրութեամբ Բաբկէն Սիւնիի նման: Կատարի՛ր վերջին կտակս, դրանով միայն կը հանգստանան ոսկորներս գերեզմանի մէջ», – գրել է Մարոն հրաժեշտի նամակում: Իսկապէս Կարոն, ներշնչված նամակի բովանդակութեամբ, մասնակցել է Խանասորի արշավանքին, առյուծի պէս կռվել, նահանջի ժամանակ շարունակել է դիմադրել՝ չնայած նրան, որ հրահանգ է ստացել թողնել դիրքերը: Նա իր սիրած աղջկա նման մահ է փնտրել՝ իր պարտականությունները կատարած համարելով: Նա զոհվել է, կնքել մահկանացուն սիրած աղջկա պատկերը աչքի առջև:

19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի կրթական գործի և ազատագրական պայքարի նվիրյալներից էր **Մարիամ Թումանյանը (1870-1945)**: Մարիամի հայրական պապը Լոռու Դսեղ գյուղից էր տեղափոխվել Թիֆլիս:

Մարիամը թիֆլիսեցի մեծահարուստի զավակ էր, սակայն օտար շրջանակների հետ շփում չունէր: Ընդհակառակը, շատ զգայուն էր իր ժողովրդի, դժբախտների, աղքատների ու որբերի նկատմամբ և ամեն բան անում էր՝ նրանց օգուտակար լինելու համար: Իր հասարակական գործունեությունը շատ շուտ սկսեց, նա նյութապէս օժանդակեց Պերճ Պոռոյանի ջանքերով արդեն 1861 թվականին բացված Թիֆլիսի Գայանյան հայ օրիորդաց ուսումնարանին, ինչպէս նաև իր հողվածներով և դասախոսություններով ջանում էր քաղաքի հասարակությանը դպրոցի շուրջ համախմբել՝ չքավոր սաների համար բարերարներ գտնելու համար³³:

Մարիամը մեծ հարգանք ուներ հայ մշակույթի գործիչների նկատմամբ, որոնց նյութապէս և բարոյապէս աջակցում էր: Նա

³³ Զէյթեան Ա., նշվ. աշխ., էջ 157:

հրատարակչական-ազգագրական և «Հայուիյաց» ընկերակցության հիմնադիրներից էր, «Թիֆլիսի հայոց բարեգործական ընկերության» փոխնախագահը և անգամ մի քանի տարի ղեկավարել էր թատերական միություններից մեկը:

Մարիամն ամուսնացել էր «Նովոյե Օբոզրենիե» թերթի խմբագիր իշխան Գեորգի Թումանովի հետ: Ուներ վեց երեխա: Բազմազավակ ընտանիքի կարիքները հոգալով՝ Մարիամը շարունակում էր իր հասարակական գործունեությունը և ջանք էր խնայում ժողովրդի տառապանքը թեթևացնելու համար:

Նախանձախնդիր հայուիին Աբասթումանում հիմնել էր առողջարան՝ թոքախտով հիվանդների համար, նաև կազմել տիկնանց խմբեր, որոնք պետք է պայքարեին համաճարակների դեմ: 1903 թվականին Թիֆլիսում հիմնադրել էր Խուդատյան որբանոցը՝ Հովհաննես Խուդատյանի բարերարությամբ³⁴: Այս որբանոցի մասին պատմաբան Լեոն գրել է հետևյալը. «Սոսկայի աղքատության ճիրաններից փրկված, կեղտերի մեջ կորած որբերին պահելն ու պահպանելը ոչ միայն լարված ուշադրություն, այլև կատարյալ անձնագրություն էին պահանջում, սակայն իշխանուհի Մարիամ Թումանյանի անսպառ եռանդը և որբերին ցուցաբերած մայրական վերաբերմունքը տարիների ընթացքում վերացրին բոլոր դժվարությունները: Տիկին Թումանյանը ամբողջ ժամանակն անցկացնում էր որբանոցում, նա իր ձեռքով լողացնում էր որբերին, ամեն տեղ պաշտպանում էր նրանց շահերը, իսկ որբանոցի բարեկեցությունը իր գլխավոր հոգսն էր»³⁵:

Իրապես հայ որբերի և անպաշտպան մանուկների խնամքը Մարիամ Թումանյանի հասարակական գործունեության

³⁴ Տե՛ս նույն տեղում:

³⁵ Վարդանես Ս., Իշխանուհի Մարիամ Թումանյան, «Առագաստ» շաբաթաթերթ, Երևան, 1991, № 3:

առանցքն էր: Նրա հայրը սեփական զավակների նկատմամբ ունեցած պարտականությունների մասին էր հիշեցնում Մարիամին և հորդորում սահմանափակել մարդասիրական աշխատանքները: Մարիամի վկայությամբ, մի անգամ ծայրահեղության գնալով, հետևյալն է ասել նրան. «Եթե գնաս, իմացիր, որ իմ տան դռները փակ կլինեն քեզ համար»: Լարված Մարիամը, չդիմանալով, սկսել է հեկեկալ, սակայն հայրը մնացել է անվրդով և դուռն անաղմուկ ծածկելով՝ դուրս է եկել սենյակից: «Իմ խեղճ, սիրելի հայրիկ, դու մոռացել էիր, որ ես էլ վեց զավակի մայր էի և ուզում էի քեզ հնազանդվել, ինչպես մի փոքրիկ աղջնակ, սակայն այստեղ միայն վեց երեխա կար, իսկ այնտեղ հազարավոր տանջված, հյուծված և մոր խնամքից զրկված երեխաներ, ես դա չէի կարող հանդուրժել: Հորս խռովությունը մեծ դառնություն էր ինձ համար, բայց ես կանգ չառա այդ հանգամանքի առջև», – գրել է նա³⁶:

1903 թվականին «Բազմավեպի» խմբագրությունը, Մարիամ Թումանյանի հասարակական գործունեությունը մեծապես գնահատելով, գրել է. «Իշխանուհի Թումանյանը Թիֆլիսի հայ կանանց մեջ համարվում է ամենաեռանդուն գործիչներից մեկը, տակավին երիտասարդ, շատ համակրելի դեմքով և միևնույն ժամանակ ծանրաբեռնված բազմաթիվ մանր երեխաներով, այնուհանդերձ շարունակում էր իր ժամանակի մեծ մասը նվիրել հասարակական գործունեությանը»:

Թումանյան ընտանիքը Դիլիջանում մի ամառանոց ուներ, և 1914 թվականից հետո Երևան եկած գաղթականներին Մարիամը տեղավորեց այդ ամառանոցում, իսկ «Թիֆլիսի հայ բա-

³⁶ Թումանեան Մ., Դիլիջանի որբանոցը, «Առազաստ» շաբաթաթերթ, Երևան, 1991, № 3:

րեգործական ընկերության» օժանդակությամբ Դիլիջանի նախկին գորանոցը վերածեց որբանոցի և 16 տուն վարձակալելով՝ այնտեղ ևս տեղավորեց որբերին: Զուգահեռ ստեղծեց կանանց միություն՝ մանուկների կարիքները հոգալու համար: Այդ ամենի մասին Մարիամը ինքը վկայում է. «Մեր լայն ծրագրերը մենք կարողացանք միայն մասամբ իրականացնել, քանի որ գաղթականները շատ էին, իսկ մենք այդքան հագուստ ու մթերք չունեինք: Պիտի ասեմ, որ այդ գործում կանայք շատ համերաշխ ու անձնվիրաբար էին աշխատում, բացի ընտրվածներից՝ շատ կամավորներ էլ կային, հատկապես երիտասարդներից: Մենք հերթապահություն էինք կազմակերպել, սակայն ես նկատում էի, որ միևնույն կանայք ամբողջ օրը մնում էին զորամասում, քանի որ գործը շատ էր, իսկ օգնող ձեռքերը՝ քիչ»³⁷:

Նույն գրության մեջ Մարիամն ավելացրել է. «Զարմանալի էր, որ սկզբնական շրջանում որբանոցներում մեռելային լուծություն էր տիրում, չնայած որ ամենափոքր շինության մեջ 50-ից պակաս երեխա չէր լինում, իսկ ինձ մոտ 150-ից անցնում էր: Ոչ միայն ծիծաղ, այլև ժպիտ անգամ չէինք տեսնում երեխաների տանջված, տխուր դեմքերին: Երեխայական ոչինչ չէր մնացել նրանց մեջ: Եվ միայն կես տարի անց որոշ կենդանություն երևաց նրանց մեջ, և նրանք սկսեցին հետաքրքրվել իրենց շրջապատով»³⁸:

Հետագայում Դիլիջանի որբանոցի սաներից ոմանք հայտնի դարձան արվեստի և գիտության բնագավառներում իրենց կատարած նվաճումներով:

Դիլիջանի որբանոցի սան Գուրգեն Մահարին Մ. Թուման-

³⁷ Զեյթեան Ա., նշվ. աշխ., էջ 159:

³⁸ Տե՛ս նույն տեղում:

յանին անվանել է «Հայի պահապան»՝ նմանեցնելով հայ հին ավանդության հերոսուհուն, որն ապրում է հայրենի բնության գրկում, հոգում ժողովրդի կարիքները: Իր որբախնամ ծավալուն աշխատանքի հետ Մ. Թումանյանը պահեց հայ մշակույթի հանդեպ ունեցած իր հետաքրքրությունը՝ դառնալով հայ մտավորականների ժողովավայր-հավաքատեղի «Վերնատան» անդամ:

Մ. Թումանյանը պատկանում է այն հայուհիների շարքին, որոնք ժողովրդի վշտերով տառապեցին և ուժերի առավելագույն լարումով փորձեցին ամոքել ցավերը:

Կին նշանավոր և աննկուն զինատարներից էր հայդուկապետ Սևքարեցի Սաքոյի կինը՝ **Մարո Ղարաքեշիշյանը**, որի ծնողները Լոռվա Ղարաքիլիսայից էին տեղափոխվել Թիֆլիս: Այսօր քչերին հայտնի այդ հերոսուհու շնորհիվ բազմիցս զենք ու զինամթերք է փոխադրվել Արաքսից այն կողմ: Մ. Ղարաքեշիշյանը ծնվել և մեծացել է Թիֆլիսում՝ հայրենասեր հայի ընտանիքում: Դեռ փոքր հասակից ոգևորվել է արևմտահայ ազատագրական պայքարով, որոշել է իրեն նվիրել Արևմտյան Հայաստանի ազատագրման սուրբ գործին: Ահա թե ինչու դպրոցն ավարտելուց հետո նա դարձել է զինատար խմբի առաջատարներից մեկը: Նկատի ունենալով նրա հերոսական կերպարը՝ կարող ենք ասել, որ միայն Մարոյի նման նվիրյալները կարող էին Ռուսաստանից և Միջին Ասիայից այդքան մեծ քանակի զենք տեղափոխել հենց ռուսների միջոցով և այն ծառայեցնել ազգային-ազատագրական պայքարի սուրբ գործին³⁹:

Երբ Մահկանաբերդի արծիվը՝ Սևքարեցի Սաքուն, աշխուժորեն զբաղվել է զենք հայթայթելու և դեպի Ավետյաց երկիր տե-

³⁹ Առաքելյան Կ., Հայ կնոջ դերը հայդուկային պայքարում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2016, № 1, էջ 147:

ղափոխելու բարդ ու վտանգավոր գործով, հանդիպել է շատերի հետ, դիմավորել է բազմաթիվ զինատար խմբերի, իսկ նրան անհրաժեշտ տեղեկությունները հասնել են Մարո Ղարաքեշիշյանի միջոցով⁴⁰: Եղել է նաև ժամանակահատված, երբ զենք ու զինամթերք հայթայթող և ազգային-ազատագրական պայքարի ազնիվ ու անաղարտ զինվոր Մարոյի «մատը խառն է եղել ամեն ինչում»⁴¹:

Աննկուն հերոսուհի Մարոն 1900 թվականի սկզբին ձերբակալվել է Ռուսաստանից և Միջին Ասիայից զենք տեղափոխելիս, սակայն հայրենասեր հայորդու՝ Գևորգ Կարաքեշիշյանի տված կաշառքով Սամարղանդի զինվորական դատախազը բավարարվել է զենքը բռնագրավելով⁴²: Սակայն Մարոն շարունակել է այդ նվիրական գործը Թիֆլիս վերադառնալուց հետո ևս:

1906 թվականին նշանավոր հայդուկապետ Սևքարեցի Սաքոյի հետ ամուսնանալուց հետո տեղափոխվել է Երևան: Ցավալի է, որ նրանց համատեղ կարճ կյանք էր վիճակված: Լեռնային կոիվներում հայդուկի մարմնի մեջ խրված գնդակը տարիներ հետո՝ 1909 թվականին, նրան գերեզման է տարել: Հենց նրա գերեզմանին սրբազան երդում տալով՝ Մարոն վերահաստատել է իրենց կյանքի գործը մինչև վերջ հասցնելու վճռականությունը: Ամուսնու մահից հետո նա կրկին Թիֆլիսում էր: Հովհաննես Թումանյանի օգնությամբ ծանոթացել է քաղաքի մեծահարուստների հետ, որոնց օգնությամբ հանգանակության գումարները հասցրել է աննախադեպ չափերի: Թիֆլիս-Ղազախ-Քարվանասարա-Դիլիջան-Երևան-Դավալու ուղեգծով զինատար ֆուրգոնը

⁴⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 147:

⁴¹ Բեգլարյան Ի., Մահկանաբերդի արծիվը, Սևքարեցի Սաքո, Երևան, 2010, էջ 40, 180, 250:

⁴² Մամյան Ի., Մերթրեհմ բանտի կալանավորը, Երևան, 1989, էջ 330:

Մարոյի ուղեկցությամբ հրացաններ ու փամփուշտներ է տեղափոխել Արևմտյան Հայաստան: Հայերեն, ռուսերեն, վրացերեն և թուրքերեն լեզուների տիրապետումը, բնածին համարձակությունն ու ծանր իրավիճակից դուրս գալու հնարամտությունը օգնել են նրան: Բայց միշտ չէ, որ մահացու վտանգը շրջանցել է խիզախ կնոջը: 1909 թվականի վերջերին նա ծերբակալվել է և շուրջ հինգ տարի անցկացրել Սամարղանդի բանտում⁴³: Բանտից դուրս գալուց հետո քիչ բան է մնացել նրա երբեմնի շքեղ գեղեցկությունից: Մազերը կիսով չափ ճերմակել են, դեմքը պատվել է կնճիռներով: Միայն ուժեղ ու կրակոտ աչքերն են նույնը մնացել: Նրա մեջ պահպանվել է ըմբոստ, մարտնչող ոգին, և վերադարձից ընդամենը օրեր հետո կրկին առաջվա զինատարն էր: Երկու անգամ հաջողությամբ զենք է հասցրել Նորշեն: Նրա անունը վաղուց հայտնի էր ֆիդայական աշխարհում: Սևքարեցի Սաքոյի զենքի ընկերները, այդ թվում՝ ֆիդայապետ Նիկոլ Դումանը, իմացել ու ողջունել են, որ նա ազատվել է բանտից՝ շարունակելով իրագործել սրբազան երդումը:

1914 թվականին հոկտեմբերին՝ Սևքարից Դիլիջանով հրացաններ ու փամփուշտներ տեղափոխելիս, ավազակային հարձակման արդյունքում Մարոն կնքել է իր մահկանացուն: Նա կռվել է մինչև վերջ՝ նույնիսկ սպանելով այդ ավազակներից մեկին: Սակայն դարանակալ գնդակը վերջ է տվել այդ անվեհեր ու քաջասիրտ հայուհու կյանքին⁴⁴:

Հայոց 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի ազգային-ազատագրական պայքարի պատմությունը վկայում է, որ քաջարի ու արիասիրտ տղամարդու կողքին միշտ էլ վճռական պահե-

⁴³ Տե՛ս նույն տեղում, էջ 331:

⁴⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 333:

րին հայտնվել են խիզախ ու անվախ հերոսուհի հայուհիներ, հատկապես մայրեր, որոնք ոչ միայն ոգևորել են նրանց թշնամու դեմ մինչև վերջ պայքարելու կոչերով, այլև իրենք են զենքը ձեռքին կռվել ոսոխի դեմ՝ սխրագործությունների ու անձնազոհության օրինակներ ցույց տալով: Շատ հաճախ նրանք ակտիվորեն մասնակցել են հայդուկային կռիվներին, զինատար խմբերի աշխատանքներին, ստանձնել են հետախույզի վտանգավոր և պատասխանատու գործը, անցնելով թշնամու թիկունքը՝ անհրաժեշտ ու կարևոր տեղեկություններ են բերել կռվողներին:

Հայուհին կնոջ կամ մոր կերպարով միշտ եղել է օջախի պահապան հրեշտակը, հերոսներ ծնող մայր, ազգային ոգով սերունդներ կրթող ու դաստիարակող ազգային հեղափոխական գործիչ: Լինելով ազգային գաղափարախոսության կրողը՝ վարժուհու կարգավիճակով հայուհին, նաև լոռեցի կանայք դաստիարակել են ազգային-ազատագրական պայքարի նվիրյալների, տղամարդկանց ու կանանց բազմաթիվ սերունդներ, հիմնել օրիորդաց գիմնազիաներ, բարեգործական հաստատություններ, որբանոցներ՝ լինելով վերջիններիս մայրական գուրգուրանք տվող ու հոգևոր սնունդ մատակարարողը:

Անշուշտ, հերոս ազատամարտիկի ոգու, կորովի և հայրենասիրական նվիրումի մեջ մեծ է հայ մոր դերը: Հայոց ազատագրական պայքարին զինվորագրված ֆիդայական (հայդուկային) պայքարի հերոս մայրերից՝ Սոսե և Աննա Մայրիկներից մինչև 1915-1923 թվականների ինքնապաշտպանական վերջին դյուցազնամարտերում աչքի ընկած հերոսուհիները ապագա սերունդներին թողեցին հանուն ազգի ազատագրության կռվելու և նահատակվելու պատգամն ու պատմական կարևորագույն դասը: Այն լավագույնս յուրացրին Արցախյան ազատամարտի հերոսուհիները, որոնք, տղամարդկանց կողքին քաջաբար կռվելով,

ազատագրեցին հայոց հինավուրց հողը՝ Արցախը: Նրանք իրենց ներդրումն ունեցան նաև Հայկական երկրորդ հանրապետության՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կայացման գործում:

Edik Minasyan, Yerevan State University, Dr. Hist. Sci., Professor,
The role of the heroic women of Lori in the Armenian national liberation struggle in the late 19th and early 20th centuries

In the second half of the 19th century, the changes that took place in Europe, particularly in the Ottoman and Russian empires, including the revitalization of public life, redefined the role of the Armenian women. The latter, being involved in the Armenian national liberation struggle, distinguished themselves with innovative patriotic initiatives. Owing to their efforts, many girls' colleges and schools were opened at the end of the 19th and the beginning of the 20th century, where Armenian women played a major role in the education and upbringing of the generation involved in the national liberation struggle. With the direct participation of Armenian women, many companies and associations were founded. Tamara and Zhenya Adamyans, born and raised in Tiflis, natives of Lori, notable Armenian women Natalia Amirkhanyan-Muradyan, Natalia and Satenik Matinyans, Mariam Tumanyan and others made a great contribution to the development of these structures. Those heroic women, being the first revolutionaries and figures of the national-liberation movement, educated and brought up a whole generation, a whole constellation of famous freedom fighters, who by their actions proved the willingness and importance of serving their own people and motherland, and also confirmed the idea that apart from liberating the motherland from foreigners there is no other mission. Many of them gave their lives for the freedom of generations, always remaining faithful to the messages of the first revolutionary heroines.

This study is dedicated to the life and activities of these noble and heroic Armenian women, whose origin was from Lori. Many facts are presented to the reader for the first time.

СТЕПАН ШАУМЯН НА ПОЗИЦИЯХ РЕШЕНИЯ ОБЩЕНАЦИОНАЛЬНЫХ ЗАДАЧ В 1917–1918 ГГ.*

Политическая история Закавказья в 1917-1918 гг., проблемы межнациональных отношений, узел многовекторных территориальных задач национальных независимых государств, Армянский вопрос, прямым образом связаны с проблемой развертывания борьбы за власть в крае.

После свержения российского самодержавия в феврале 1917 г. в Тифлисе был организован местный орган Временного правительства – Озаком (Особый закавказский комитет). Он был сформирован по национальному признаку из бывших членов Государственной Думы. Председателем был назначен кадет В. Харламов, армян представлял кадет М. Пападжанян, грузин – социалист – федералист Абашидзе, кавказских татар – мусульман - мусаватист Джафаров.

Октябрьский большевистский переворот создал в Закавказье новую политическую ситуацию. Советской власти в центре было противопоставлено правительство демократического социалистического толка – Закавказский Комиссариат, который в корне опять-таки носило национальное начало. Вся последующая политика, в частности, грузинских социал-демократов меньшевиков можно рассматривать в контексте национальной деятельности. Они заняли главные посты в правительстве и сумели на антибольшевистской волне сплотить вокруг себя армянский Дашнакцутюн (Союз-АРФД) и татарский Мусават (Равенство).

* Մելիքյան Վ.Հ., Պայքար Բարձր համար (1917 թ. նոյեմբեր – 1918 թ. ապրիլ), Երևան, 2018, Меликян В.Г., Борьба за Баку (ноябрь 1917 г. – апрель 1918 г.), Ереван, 2019.

С момента образования Закавказского комиссариата, с 15-го ноября 1917 г. проблема альтернативы власти в Тифлисе стала как главной задачей закавказского краевого центра, так и Бакинского совета РСДРП.

1. На первом этапе данного процесса с ноября по декабрь 1917 г., эта первостепенная задача поднималась в контексте победы большевиков “против контрреволюции”, т.е. против демократического блока закавказской власти. В период январь-март 1918 г., в условиях турецкого нашествия на Западную Армению и Закавказье, окончательно стала очевидной цель свержения Бакинского совета, а также тенденции политической изоляции армянства в лице влиятельной партии Дашнакцутюн со стороны грузино-татарского большинства краевой власти. Совет, который в лице председателя Степана Шаумяна представлялся турецкой и грузино-татарской стороной в качестве проармянской власти, объективно трансформировал план Ст. Шаумяна и некоторых армянских военно-политических деятелей о согласованных взаимодействиях по установлению большевистской власти в Тифлисе и Баку, в национально – освободительную идею.

2. В своих телеграммах от 23, 25-го ноября, адресованных В. Ленину, Ст. Шаумян сообщал, что “при помощи армии мы можем заставить Комиссариат принять власть народных комиссаров” и далее подчеркивал то обстоятельство, что большевизированные части Кавказской армии рассматривают образование и антисоветскую деятельность Комиссариата как способ отделения Закавказья от России”¹. Ст. Шаумян не получил ответа, и кстати, он не получил поддержку также в августе-сентябре 1918 г., в следствие чего и была разгромлена Бакинская комунна, было истреблено 30.000 армянского населения Баку.

В Тифлисе сложилась следующая картина. Комиссариат не поверил заверениям большинства большевиков краевого комитета в том, что они не намерены организовать вооруженное выступление и что предпочитают захватить власть в Тифлисе мирным путем как в

¹ Шаумян Ст., ПСС, Ереван, 1978, т. 4, с. 45, 47(на арм.).

Баку. Комиссариат во главе Н. Жордания и других грузинских меньшевиков, был озадачен.

“Когда мы узнали о телеграммах,- говорил Н. Жордания,- стало ясно, что в Тифлисе готовится вооруженное выступление”².

26-го ноября (9 декабря) меньшевистское краевое бюро и Тифлисский исполнительный комитет предприняли предупредительные меры, была организована “Красная гвардия”. 28-го ноября Тифлис был объявлен в военном положении³.

Это был первый шаг на пути к сохранению власти Комиссариата.

3. В тот же день, вечером, Карсскому полку было предъявлено требование немедленно покинуть Тифлис и отправиться на Северный Кавказ. Это первая победа меньшевиков и второй этап к сохранению власти. Следующий, третий этап относится к проблеме захвата тифлисского Арсенала.

Закавказского комиссариата и тифлискую городскую Думу беспокоила судьба главного оружейного склада краевого политического центра, а также позиция большевистского руководства, которая не подчинялась властям и не представляла оружие комиссариату. Угроза усугублялось возвращением из фронта большевизированных частей Кавказской армии. Исполнительный комитет потребовав оружия, фактически использовал фактор отказа со стороны солдат – большевиков для оправдания дальнейших действий.

Для захвата Арсенала меньшевистский центр спешно организовал сборный отряд в составе “Красной гвардии”, грузинского, армянского 218-го полков и 30-го ноября (13 декабря) подавил восстание. В тот же день в Тифлисе были разгромлены издательства большевистских газет “Кавказский рабочий”, “Брдзола” (Борьба), “Банвори крив” (Борьба рабочего), 218-ый полк был выведен из города и отправлен в Трапизон–Эрзрумском (Карин)направлении.

Воспользовавшись удачным моментом Н. Жордания обвинил

² Жордания Н.Н., За два года, Доклады и речи, Тифлис, 1919, с. 59.

³ Известия совета рабочих и солдатских депутатов гор. Тифлиса, Тифлис, 1917, № 198.

Ст. Шаумяна в “мятеже”, “бонапартизме”⁴.

Замысел большевиков и Ст. Шаумяна в Тифлисе ясен, однако события вокруг Арсенала свидетельствуют, что наступили именно антибольшевистские силы, особенно грузинские меньшевики, которые целеустремленными действиями смогли предотвратить первую попытку захвата Тифлиса.

Исходя из того, что первый этап захвата власти в Закавказье продолжался до декабря 1917 г., до захвата Арсенала и разгона большевистской демонстрации в Александрийском саду в феврале 1918 г., поэтому факт относительно легкой уступки Арсенала нужно объяснить не столько тактическими ошибками руководящей группы большевиков, а в большей степени некоторыми объективными предпосылками фигурирующими в тот период.

“Ошибки” тифлисских большевиков имеют и другое обоснование: здесь еще раз проявляется роль национального фактора. Даже в организационном смысле такая сплоченная структура как большевистская партия, дала трещины в Закавказье.

Ведь не только грузинские меньшевистские лидеры были национальными деятелями, но и большевики, в частности, Ф. Махарадзе.

Во главе с Ст. Шаумяном и большевистским руководством Кавказской армии, и, в основном, при содействии русских солдат, захват Тифлиса и ликвидация Комиссариата рассматривались в качестве антигрузинского шага и не столько как победа большевиков, сколько победа армянского фактора.

И еще: Тифлис имел опыт Баку и поэтому вовремя им удалось избежать поражения. Фактически против плана Ст. Шаумяна грузинские меньшевики и большевики выступили вместе. Получается, что грузинский национализм в данном историческом промежутке победил армянский. Понятно, что тенденциозно не был использован также решающий фактор большевизированных частей Кавказской русской армии, более того, против этих русских частей была осуществлена грубая сила.

⁴ Жордания Н.Н., там же, с. 59-60.

С конца ноября 1917 г., в условиях массового отступления этих частей, они столкнулись с последовательными препятствиями, с одной стороны грузино-татарского руководящего большинства Комиссариата, антибольшевистского центра совета солдатских и рабочих депутатов, и с другой стороны антироссийскими действиями, возглавляемым Мусаватом и мусульманским национальным комитетом.

Эти эшелоны останавливались в главных узлах Баку-Тифлис Закавказской железной дороги, где и были зафиксированы факты насильственного отбирания оружия и массовые погромы безоружных мирных солдат⁵.

Если эмиссары турецкого командования спровоцированием мусульманских мятежей в Елизаветпольской (Гандзак) губернии преследовали цель – путем полного разложения русских тыловых и отступающих фронтовых частей, организовать полномасштабный поход против Закавказья, то Комиссариат и краевой революционный антибольшевистский комитет стремились предотвратить программу советизации Закавказья при помощи согласованных действий уже Бакинского совета и большевизированных частей.

Получив поддержку меньшевистского центра и тем самым якобы обеспечив законность действий, меньшинство краевого совета армии, фактически большевистскими методами захватило центральный аппарат совета, провозгласив себя армейским советом. Эти силы действовали довольно-таки смело, так как большевистские части, как мы уже видели, заранее были выведены из Тифлиса.

Первостепенной задачей нового совета стало обезоруживание русских частей. Несмотря на то что это стало победой над местным большевизмом, однако в создавшейся ситуации такое развитие событий никоим образом не соответствовало национальным интересам армянского населения, так как разграбленное оружие и боеприпасы

⁵ Меликян В.Г., Грузино-татарские антироссийские мятежи в районе Закавказской железной дороги и армянская позиция (ноябрь 1917 – март 1918), “Историческое пространство”, Москва, 2010, № 1.

достались, в основном, мусульманам, также грузинским частям. Процесс обезоруживания осуществлялось при участии национальных воинских формирований, что и без того в условиях обостренных межнациональных отношениях, вылилось в провокационную политику.

Одной из целей мусульманских – татарских лидеров было провозглашение Азербайджанского ханства. Кстати, впервые понятие “Азербайджан” как географическое национально – территориальное понятие, появляется с апреля 1917 года, в ходе работ мусульманского съезда в Москве⁶.

Только в декабре 1917 г. полностью были уничтожены 11 армянских селений в Нухийском уезде. Были опустошены десятки русских поселений в Елизаветпольской губернии. Кулминацией данных событий является погромы в январе 1918 года в Елизаветполе, Шамхоре, Акстафа, Хачмасе и т. д.. Только в Шамхоре погибло 2000 русских солдат⁷.

Основной вывод таков: мусульманские крестьянские мятежи в Елизаветполе и, дале, кровавые погромы вдоль закавказской железной дороги являются составной частью более всеобъемлющей проблемы – проблемы власти в Закавказье.

И если Н. Жордания, Н. Рамишвили, А. Чхенкели и другие обосновали все это исходя из задачи организации самообороны против надвигающегося турецкого похода, однако ясно, что главная задача – это борьба против большевизма и сохранения власти Комиссариата. Заметим, что весной 1918 г. грузинские части почти не сопротивлялись туркам, а армянские части, которые под Шамхором не участвовали в антироссийских зверствах, в одиночестве попытались осуществить защиту Кавказского фронта, т.е. в основном Западной Армении. Основное политическое противоречие единых закавказских правительств в том числе Озакома, Комиссариата, затем и Сейма

⁶ Байков Б., Воспоминания о революции в Закавказьи (1917-1920 гг.), Архив русской революции, т. IX, Берлин, 1923, с. 108.

⁷ НАГ (Национальный архив Грузии), ф. 1818, оп. 2, д. 12, лл. 30-32.

кроется именно в данной проблеме. Единое правительство должно было защитить общие интересы и, в частности, Кавказский фронт. Но так как Кавказский фронт, в основном, охватывал территорию Западной Армении, отсюда и вытекают все последующие объективные и одновременно антиармянские действия грузино-татарского тандема.

Этот процесс фактически закончился лишь в сентябре 1918 г., после захвата Баку турецкими войсками и антибольшевистскими силами. В конце ноября 1917 г., центром борьбы против тифлисской власти стал также один из войсковых большевистских центров Кавказского фронта – Сарыкамыш, где в процессе отхода русских частей скопилось огромное количество - 30000 большевизированных солдат.

Среди их требований выделяется пункт, по которому до окончательного укрепления власти, ни коим образом не принимался процесс расформирования армии. Проармянское направление данной резолюции в том, что таким образом становилось возможным оставить некоторые хотя и большевизированные части, в Закавказье и на фронте.

После Шамхорских событий Ст. Шаумян нелегально перебрался в Тифлис, чтобы при помощи именно Сарыкамышских частей осуществить план захвата власти, хотя и Ст. Шаумян и председатель армейского совета Н. Корганян не отказывались от программы мирного захвата власти. Этим они хотели избежать гражданской, а то и межнациональной большой войны, и к тому же пока не обладали достаточными силами.

По инициативе меньшевиков и эсеров 19-го декабря (января 1918 г.) в Тифлисе был созван 2-ой съезд рабочих депутатов, который имел целью после поражения на 2-ом армейском съезде в Эрзруме, противопоставить большевикам большинство эсеров-меньшевистского совета. Учитывалось также плачевное состояние коммуникаций, отсутствие финансовых средств, когда из Северного Кавказа, Баку и других рабочих центров не могли бы съехать в Тифлис представители

большевистских советов⁸.

Данная ситуация наталкивала большевиков к решающим действиям. Этим и объясняется необходимость наступления сарыкамышских частей в январе 1918 г.

Понятно, что главной задачей этих солдат было возвращение в Россию. В условиях непризнания Советской власти в центре, они должны были преодолеть все антибольшевистские силы, а в контексте антироссийских мятежей и погромов, низложить и главного “врага” – Комиссариат.

Ясно также, что весь этот маневр не носил особую проармянскую окраску. Однако, объективно проармянским стала ситуация ослабления и нейтрализации грузино-татарского, одновременно антирусского и антисоветского союза.

Если меньшевики и эсеры всячески старались направить эти части на восток, удалить их из Тифлиса и Сарыкамыша, то ВРК Сарыкамыша наоборот, сокращая количество эшелонов отправляющихся на Северный Кавказ и одновременно организуя их шествие, создал надежную ударную силу, которая должна была войти в Тифлис. В то время, в конце января 1918 г. солдаты уже полностью заняли линию железной дороги Сарыкамыш – Тифлис.

Руководство Комиссариата было уверено, что решение Ст. Шаумяна и Сарыкамышского ВРК не представляет из себя авантюру. 18-го января (31 января) 1918 г. Тифлисский губернский комиссар Джапаридзе сообщил Комиссариату, что в Тифлисе фактически повторно объявлено военное положение. В тот же день краевая власть наделила председателя Комиссариата Е. Гегечкори чрезвычайными полномочиями, подчинив ему все вооруженные силы, кстати в том числе и армянские национальные формирования. Комиссар по внутренним делам А.Чхенкели предоставил Комиссариату 60 тыс. руб. с целью усиления боеспособности грузинских частей⁹. Комиссариату

⁸ Церцвдзе М.В., Революционное движение в Грузии в 1914-1917 гг., часть II (1917г.), Тбилиси, 1960, с. 313-314.

⁹ Кавказское Слово, Тифлис, 1918, № 26.

беспокоила также наделение Ст. Шаумяна чрезвычайными полномочиями. Известно, что указом В. Ленина он стал Временным чрезвычайным комиссаром по делам Кавказа.

Важен тот момент, что сами министры Комиссариата не были уверены в собственных силах и походом лишь одного Шаумяна и сарыкамышских частей связывали факт краха демократического правительства. Выступления министров комиссаров на заседании от 24-го января (6 февраля) свидетельствуют именно об этом, о возможности уступки власти. И только решительные действия нескольких грузинских меньшевистских лидеров и наоборот нерешительная позиция большевистского центра остановил этот процесс. Ст. Шаумяну и Н. Кузнецову было предложено в течении 24 часов покинуть Закавказье, в противном случае – арестовать. 20-го февраля Ст. Шаумян тайно вернулся в Баку¹⁰. В чрезвычайных условиях в Тифлис вошла также мусульманская “Дикая дивизия”.

Факт, что в лице Ст. Шаумяна краевой большевизм идентифицировался проармянской политикой, получил свое отражение в периодической партийной печати, в частности в грузинской национальной периодике. Газета “Сакартвело” (Родина) писала: “может быть что объединившись с беглыми русскими частями, армяне провозгласят Шаумяна национальным лидером. Тем не менее, мы должны быть осторожны. Прыкрывающиеся под знаменем интернационализма, крайние шовинисты нашего соседского народа, вместе с Шаумяном, наверно мечтают создать “Великую Армению”¹¹.

И действительно, план Ст. Шаумяна не только грузинским, но и армянским национально-демократическим лагерем на данном этапе рассматривалась как “сугубо национальная идея”.

Что касается новой должности Шаумяна - чрезвычайного комиссара, то нужно заметить, что она не нова на Кавказе: при царском режиме эту должность осуществлял наместник на Кавказе, при Временном правительстве – “Комиссар по делам Кавказа в

¹⁰ НАГ, ф. 1818, оп. 2, д. 12, лл. 53-54 об.

¹¹ Оризон (Горизонт), Тифлис, 4 февраля, 1918.

Петрограде”. Теперь же эта должность, фактически, являлся политическим намеком и средством для установления советской власти в Закавказье.

Соавторами плана Ст. Шаумяна являются один из основателей АРФД Ростом Зорьян, губернатор Вана (назначенный командованием русской Кавказской армии весной 1915г.) Арам Манукян, заместитель по гражданской части Генерал-Комиссариата Западной армении Акоб Завриян, царский генерал Акоп Багратуни, которому в период большевистского вооруженного восстания, Временным правительством была поручена должность коменданта г. Петрограда и военного округа. Данный неполный список армянских военно-политических деятелей отражает содержание и направленность программы, которая и представляется общенациональным:

1. путем сопротивления турецким войскам достичь независимости Западной Армении (для этого существовало также политическая воля и поддержка Совнаркома в лице Ленина и Сталина. Имеется ввиду “Декрет о Турецкой Армении”),
2. В Закавказье образовать армянский кантон,
3. Тифлис и Баку провозгласить свободными городами,
4. Из Баку, Гандзака и Шуши (Нагорный Карабах) армянские силы перебросить к Закавказской железной дороге, тем самым открыть путь Баку-Тифлис и Баку-Ереван,
5. После открытия линии Шуши-Баку они вместе с большевиками должны были захватить власть¹².

Программа не осуществилась, потому что:

1. В большевистском краевом и Тифлисском комитетах не образовалась единая тактика по захвату власти;

2. Сотрудничество армянских национальных деятелей и Шаумяна не имело долгосрочного характера. Оба политических лагеря не полностью доверяли друг-друга, более того имели радикальные противоречия. В следствии этих событий партия Дашнакцутюн признала, что в контексте безкомпромиссных политических развития главным и реальным политическим оппонентом армянства в

¹² Рубен, Мемуары армянина-революционера, т. 7, Тегеран, 1982, с. 142-143 (на арм.).

Закавказье является политика грузинского меньшевизма и грузинского большевизма, преобразившегося в национальное движение.

3. С ноября 1917 г. конфронтация меньшевиков и большевиков в Закавказье проявилось не в виде борьбы тактик двух крыльев социал-демократии, как в центре, а как противостояние двух больших и важных национально – политических сил в лице противостояния Дашнакцутюн – грузинский меньшевизм, Шаумян – Жордания. Уход большевистской власти и вообще России из Закавказья создавал реальную возможность установления в крае грузинской гегемонии.

Захват власти же в Тифлисе путем советизации, способствовал бы стабилизации положения армянского населения в Баку и Восточном Закавказье, предотвратил бы волну мусульманских мятежей, может быть даже турецкое нашествие и погромы армян.

Однако есть важнейшая причина, которая в целом сводит на нет осуществление этой программы. Данная проблема не обсуждалась, понятно, по объективным причинам и со стороны советской историографии. Суть вопроса кроется в сохранении любой ценой большевистской власти в самой России. Весь процесс Брест – Литовска служил одной главной цели – путем территориальных потерь удержит власть. Составной частью этой большой политики является скорейшее возвращение по приказу Ленина и Троцкого от 10-го декабря 1917 г. частей Кавказской армии в Северный Кавказ, а затем и в Россию.

Получается, что большевистская центральная власть обоснованно не была заинтересована пока – что программой советизации Закавказья.

Наделив Шаумяна чрезвычайными полномочиями, Ленин и Сталин, ни каким указом и действиями не повлияли на Тифлисский и краевой большевистские комитеты.

Шаумян своим авторитетом и несколькими частями должен был осуществить то, что даже большевики не сделали в Петрограде собственными силами.

С января 1918 г. проблема власти в Закавказье стала

непосредственно связываться с вопросом об окончательном отделении региона от Советской России и провозглашением независимости национальных государств. Идеологом этой последовательной политики был сперва Комиссариат, а затем и Сейм, в котором преобладала грузинская с.-д. меньшевистская фракция. В этом контексте изменились и политические устремления властей Закавказья, выразившиеся в принятии германо-турецкой ориентации.

Vahan Melikyan, *Institute of History of the NAS RA, YSMU after M. Heratsi, Dr. Hist. Sci., professor, Stepan Shahumyan in the Positions of solving nationwide problems in 1917-1918*

After the Bolshevik coup of 1917, on November 15, a new body of power was formed in Tiflis, the Transcaucasian Commissariat, which did not recognize the Soviet power of Russia. As a demonstration of an alternative to the government, the body of the Soviet government operating in Baku the council with the SR-Menshevik majority under the chairmanship of the Bolshevik St. Shahumyan, embarked on the implementation of the program of Sovietization of the region in two stages (November 1917 and February-March 1918).

There was a significant contradiction: on the one hand, the government defending the values of the February revolution of 1917 on behalf of the socialist parties of the commissariat, did not accept and was hostile to the victory of Bolshevism, which led the region to secession from Russia, on the other hand, the Georgian-Tatar agreement formed against Armenians and its influential political forces clearly carried out a plan to weaken the Armenian element in Transcaucasia. In addition to that Turkey intruded into Transcaucasia in 1918 which contributed to the isolation of the ARF within the Commissariat and then the Seim.

St. Shahumyan was trying to oppose his plan to that big anti-Armenian alliance, which has a national character in that difficult and fatal historical stage. Accordingly, it was planned to put an end to the anti-

Russian and anti-Armenian riots in Baku and then the Yerevan province with the forces of the national military units subordinate to the Baku Council, and then to protect Western Armenia with the support of the Bolshevized military units (only Sarighamish garrison had 30,000 soldiers who were waiting for St. Shahumyan's order to capture Tiflis) of the Caucasian Army. The Soviet Decree "On Turkish Armenia" published on December 29, 1917 was circulated in this context.

The nationwide nature of St. Shahumyan's plan is evidenced by the defense of Baku in March 1918, where the exceptionally far-sighted cooperation of national and Bolshevik figures (Rostom, General H. Bagratuni, Hamazasp, St. Shahumyan and others) defeated the first Musavat attempt to capture Baku.

ՀԱՄՈՍՈՒՔԻԱՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ պարամոթյան ինստիտուտ,
պ.գ.թ., դոցենտ

**ԿԻՐՈՎԱԿԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍՆՆԴԻ
ՑԱՆՑՈՒՄ ԵՂԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ 1960-ԱԿԱՆ
ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ***

Հետպատերազմյան տարիներին Հայկական ԽՍՀ տնտեսությունը լրջագույն վերափոխումների ենթարկվեց: Նկատելի փոփոխություններ տեղի ունեցան նաև բնակչության կենցաղսպասարկման բնագավառում: Եթե պատերազմին հաջորդող մեկ-մեկուկես տասնամյակում դեռևս նկատելի չէին բնակչության կենցաղսպասարկման կարիքների բավարարմանն ուղղված փոփոխությունները, ապա արդեն 1960-ականներից այդ փոփոխություններն ընդգրկեցին հանրային կյանքի ամենատարբեր ոլորտները: Բնակչության պահանջմունքները տարեց-տարի մեծանում, ավելանում էր, սակայն դրա բավարարմանն ուղղված պետական միջոցառումներն առավել դանդաղ ընթացք ունեին: Սա բնակչության տարբեր շերտերում դժգոհություններ էր առաջ բերում, և իշխանություններին ստիպում օրենսդրական և ենթաօրենսդրական ակտեր, կուսակցական որոշումներ ընդունել, զանազան քայլեր նախաձեռնել՝ եղած խնդիրները լուծելու նպատակով:

Առավել խնդրահարույց ոլորտներից էր հասարակական սննդի ցանցը, որտեղ մեծ ծավալներ էին կազմում չարաշահում-

* Հետազոտությունը կատարվել է ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ-ի տրամադրած ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6A274 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

ները: Ասվածը բնորոշ էր ինչպես Հայկական ԽՍՀ մայրաքաղաք Երևանին, այնպես էլ մեծ ու փոքր բնակավայրերին: Եղած արատավոր իրողությունների դեմ պայքարելու նպատակով օգտագործվում էին ոչ միայն պետական ու կուսակցական վերահսկողական մարմինները, այլև վերջինների գործունեությանը զուգահեռ ստեղծվում էին հասարակական վերահսկողության կառույցներ: Վերահսկողական մարմինների կողմից պարբերաբար կազմակերպվող ստուգայցերը նպատակ ունեին պարզել, թե ինչպես է կատարվում հասարակական սննդի զարգացման և բարելավման մասին Հայկոմկուսի կենտկոմի և Մինիստրների խորհրդի որոշումները, վեր հանել առկա խնդիրները և դրանց համար լուծումներ գտնել: Առաջնային հարցերից էր համարվում բնակավայրերի՝ անհրաժեշտ քանակի նստատեղերով հագեցված հասարակական սննդի հաստատություններով (ճաշարաններ, խորտկարաններ, բուֆետներ և այլն) ապահովվածության, դրանցում անհրաժեշտ կահկարասու, պահանջարկ ունեցող սննդամթերքի առկայության, առևտրի կանոնների պահպանման վիճակի գնահատումը և այլն: Չնայած գործադրվող ջանքերին, պարբերաբար կազմակերպվող ստուգումներին ու ստեղծվող բազմաթիվ փաստաթղթերին՝ այս բնագավառում առկա բացերը տարեցտարի ոչ թե պակասում էին, այլ՝ ավելանում: Արդյունքում՝ կայացված որոշումների մեծամասնությունն իրականություն էին դառնում միայն «թղթի վրա»:

Ասվածի օրինակներից մեկն էլ 1960-ականների երկրորդ կեսին Կիրովական արդյունաբերական քաղաքի հասարակական սննդի ցանցում առկա խնդիրներն էին, որոնք բացահայտելու նպատակով 1967 թ. գարնանն աշխատանքներ էր կատարել շուրջ երկու տասնյակ անհատներից (Ժողովրդական վերահսկողության Կիրովականի քաղաքային կոմիտեի, քաղաքային

խորհրդի առևտրի բաժնի, Քիմիական կոմբինատի և այլ կառույցների ներկայացուցիչներ) կազմված ստուգող հանձնաժողովը: 1967 թ. ապրիլի 8-ին ՀԽՍՀ ժողովրդական վերահսկողության կոմիտեի համար հանձնաժողովի պատրաստած ընդարձակ տեղեկանքն ընդհանուր պատկերացում է տալիս Կիրովականի հասարակական սննդի ցանցի դրության վերաբերյալ, և քաղաքի տնտեսական պատմության ուսումնասիրության ուշադրության արժանի աղբյուր է: Խմբի կողմից ստուգվել էր քաղաքի արդյունաբերական ձեռնարկությունների 7 ճաշարան, 5 բուֆետ, «Գուգարք» ռեստորանը, դպրոցական 8 բուֆետ:

Ստուգումների արդյունքներից տեղեկանում ենք, որ հասարակական սննդի հիմնական օբյեկտները գտնվում էին քաղաքի կենտրոնական հատվածում: Չնայած առկա պահանջարկին՝ ծայրամասերում դրանք սակավաթիվ էին: Քաղաքի արդյունաբերական ձեռնարկությունների ճաշարաններում ու բուֆետներում գրեթե համատարած էր փաթեթավորված փոքր սննդամթերքի, հանքային ջրերի, լիմոնադի, ձվի դեֆիցիտը (պակասորդը), որոնց պահանջարկը մեծ էր: Ապրանքները թարմ պահելու հարցում խնդիրներ էր առաջացնում նաև այն, որ ճաշարանների շուրջ 30 %-ն ապահովված չէր սառնարաններով և այլ սարքավորումներով: Եղած ճաշարաններն իրենց փոքր թողունակությամբ աշխատավոր բնակչության կարիքները միայն մասամբ էին բավարարում: Հասարակական սննդի օբյեկտներում մեծ ծավալներ էին կազմում առևտրի կանոնները չպահպանելու, թերաչափում, թերակշռում և թերահաշվառում կատարելու դեպքերը: Չնայած բացահայտումներին, տույժերի ենթարկվելու տարեկան տասնյակ դեպքերին՝ սույն բացասական գործելակերպով առաջնորդվողների թիվը չէր պակասում, ինչի հիմնական պատճառը հանրային անհանդուրժողականության գործուն համակարգի բացա-

կայությունն էր: Ավելին, նման բնույթի չարաշահումներ կատարող անհատների վարմունքը բնակչության լայն խավերի կողմից ոչ միայն չէր դատապարտվում, այլև, առավել հաճախ, խրախուսելի արարք էր դիտվում՝ բնորոշվելով իբրև «հնարամտություն», «ճարակություն»: Արդյունքում՝ պարարտ միջավայր էր ստեղծվում պաշտոնեական դիրքը չարաշահելու, պետական ու հանրային ունեցվածքը յուրացնելու հակվածություն ունեցող անձանց գործունեության համար:

Ստորև հավելվածի ձևով հրատարակվող փաստաթուղթը Կիրովականի հասարակական սննդի ցանցի ստուգման արդյունքները ներկայացնող վերը նշված տեղեկանքն է: Այն փաստաթղթի մեքենագիր պատճենն է, որը պահվում է Հայաստանի ազգային արխիվի Լոռու և Տավուշի մարզային մասնաճյուղի ժողովրդական վերահսկողության Կիրովականի քաղաքային կոմիտեի ֆոնդում (Ֆ. 39, ց. 1, գ. 37, թթ. 9–19):

Հավելված

ՏԵՂԵԿԱՆՔ

ԿԻՐՈՎԱԿԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍՆՆԴԻ ՑԱՆՑԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

8 ապրիլի 1967 թ.

ք. Կիրովական

1966 թ. ալանով Կիրովական քաղաքում պետք է շահագործման հանձնվեր սննդի 6 օբյեկտ՝ 498 նստատեղով, փաստացի շահագործման է հանձնվել 11 օբյեկտ՝ 448 նստատեղերով, այն է՝ պրոֆուսումնարանում՝ 80 նստատեղ, ճաշարան նո. 15

Դիմաց թաղամասում՝ 56, ճաշարան նո. 16 էլեկտրոլամպերի գործարանի Կիրովականի ֆիլիալում՝ 40, ճաշարան նո. 17 կահույքի ֆաբրիկա՝ 40, սրճարան Երևանյան խճուղու վրա՝ 56, սրճարան Աղայան փողոցի վրա՝ 40, սրճարան Ժդանովի թաղամասում՝ 40, սրճարան արհեստական լճի ափին՝ 40 նստատեղերով: Տաղավար քաղաքնայգում և տաղավար Կիրովի հրապարակում:

1967 թվի համար նախատեսված է ընդլայնել հասարակական սննդի ցանցը նոր շահագործման հանձնվող շենքերի առաջին հարկերի և կապիտալ շինարարության հաշվին 8 օբյեկտ՝ 818 նստատեղով, որից մեկը՝ տնային խոհանոց: Առ 25-ը մարտի 1967 թ. դրությամբ հատկացված է Մյասնիկյան փողոցի վրա կառուցված բնակելի շենքի առաջին հարկում մեկ ռաստվոր, որը պետք է լինի կիսաֆաբրիկանտի խանութ, բար (գարեջրի), խորովածարան, որոնք շահագործման պետք է հանձնվեն մինչև ս./թ. հուլիսի 1-ը: Սովետների փողոցի վրա մեկ ռաստվոր սրճարան 24 նստատեղով շահագործման կհանձնվի մինչև մայիսի 1-ը:

1967 թ. կապիտալ շինարարության հաշվին կառուցվելու է քաղաքի մուտքի մոտ 150 տեղանոց ռեստորան, որի շինարարական աշխատանքները սկսված է:

Վանաձորում կառուցվելու է 120 տեղանոց ռեստորան, նույն թաղամասում Մեհրաբի աղբյուրի մոտ մինչև մայիսի 1-ը շահագործման կհանձնվի մեկ խորովածարան: Մինչև մայիսի 15-ը քաղաքի տարբեր մասերում շահագործման կհանձնվի հավաքովի տաղավարներ՝ 4 և սրճարաններ՝ 2 հատ:

Հասարակական սննդի հիմնական օբյեկտները գտնվում են քաղաքի կենտրոնական մասում: Հասարակական սննդի օբյեկտների թիվը քաղաքի ծայրամասերում՝ Առափնյա, Դիմաց կոչվող և Երևանյան խճուղու թաղամասերում, քիչ են:

Վերանորոգման պատճառով մեքենաշինական գործարանի (որտեղ աշխատում են 950 բանվոր-ծառայողներ) ճաշարանը 1966 թվի նոյեմբերի 22-ից մինչև 1967 թվի հունվարի 24-ը եղել է փակ:

[...]¹

Քաղաքի արդյունաբերական ձեռնարկություններում եղած ճաշարաններում և բուֆետներում, հատկապես դպրոցական բուֆետներում, չկան փոքր փաթեթավորված սննդամթերք, որի պահանջը ինչպես ձեռնարկություններում, այնպես էլ դպրոցներում խիստ անհրաժեշտ է:

Արդյունաբերության ձեռնարկությունների ճաշարաններում թողարկվող ճաշերի որակը բարելավելու, ճաշերի պատրաստման համար օգտագործվող մթերքների քանակի, նրանց սանիտարական մշակման և բաց թողնվող ճաշատեսակների քաշի և կալորիականության նկատմամբ մշտական հսկողություն սահմանելու համար կոլեկտիվների կողմից առանձնացված են հանձնաժողովներ և հերթապահում են ճաշարաններում:

Արդյունաբերական ձեռնարկություններում եղած ճաշարաններում ճաշերի պատրաստման համար օգտագործված վառելիքի համար գումարը մինչև 1967 թվի փետրվար ամիսը վճարվել է ձեռնարկություններին հասարակական սննդի տրեստի կողմից: Մթերքների փոխադրումը նույնպես կատարվում է հասարակական սննդի տրեստի տրանսպորտով:

Հասարակական սննդի տրեստն իրեն համար նախատեսված ֆոնդերը, միսը և կաթը ստացել է լրիվ, որը ապահովում է մսի կոմբինատը և կաթի գործարանը: Տրեստը ապահովված է

¹ Հրապարակումից դուրս թողնված հատվածը վերաբերվում է հասարակական սննդի տրեստի ապրանքաշրջանառության պլանի կատարմանը: Այն մեզ հետաքրքրող թեմային անմիջականորեն չի առնչվում:

եղել նաև կարտոֆիլով և բանջարեղենով:

Առևտրի կանոնները խախտելու, թերաչափում, թերակշռում և թերահաշվառում կատարելու համար տրեստի ղեկավարության կողմից 1966 թ. տարբեր չափերի տույժերի են ենթարկվել 42 հոգի, իսկ 1967 թ. առաջին եռամսյակում՝ 5 հոգի: 1966 թվին տույժի են ենթարկվել նաև առևտրի մինիստրության ապրանքների վերահսկողության և որակի տեսչության գծով՝ 4 հոգի: Այսպես՝ օրինակ.

1. Կաֆե «Սասուն». խոհարար Ա. Գ.-ն ճաշերի քաշը պակաս և ցածր որակի լինելու համար ստացել է խիստ նկատողություն,

2. Ճաշարան նո. 7. խոհարար Ա. Հ.-ն ստացել է խիստ զգուշացում պահանջված չափով որակով ճաշեր չպատրաստելու համար,

3. Ճաշարան նո. 11. խոհարար Յու. Մ.-ն ճաշերի մեջ նախատեսված նորման խախտելու և անորակ ճաշ պատրաստելու համար 3 ամսով իջեցված է նյութական պատասխանատու աշխատանքից,

4. Կաֆե «Անահիտ». խոհարարներ Ա. Գ.-ն, Ս. Ս.-ն 3 ամիս ժամանակով իջեցվել են նյութական պատասխանատու աշխատանքից՝ ճաշերի մեջ նախատեսված նորման խախտելու և անորակ ճաշ պատրաստելու համար:

Ժողովրդական վերահսկողության Կիրովականի քաղաքային կոմիտեն, 1967 թ. հունվարի 18-ի իր նիստում քննության առնելով հասարակական սննդի տրեստի ռեստորաններում, սրճարաններում և խորտկարաններում թույլ տրված առևտրի կանոնների խախտման դեպքերը, որը հայտնաբերված է ժողովրդական վերահսկողության կոմիտեի կողմից կազմակերպված ռեյդի ժամանակ, ենթարկել են տույժի.

1. Առևտրի կանոնների պահպանման ուղղությամբ անբավարար հսկողություն սահմանելու, իր ղեկավարած օբյեկտում անհրաժեշտ կարգ և կանոն չստեղծելու համար նկատողություն է արված «Տալին» սրճարանի վարիչ Ա. Խ.-ին,

2. Առևտրի կանոններ խախտողների, անօրինականություններ թույլ տվողների նկատմամբ անհրաժեշտ հսկողություն չսահմանելու համար նկատողություն է արված նո. 3 խորտկարանի վարիչ Ս. Գ.-ին:

3. Առևտրի կանոնները խախտելու համար խիստ նկատողություն է արված «Բաթումի» ռեստորանի մատուցող Վ. Ս.-ին և նո. 6 խորտկարանի բուֆետապան Ս. Բ.-ին:

4. Առևտրի կանոնների պահպանման և առևտրի կազմակերպման գործում տեղ գտած թերությունների ու խախտումների դեմ թույլ պայքար ծավալելու և անհրաժեշտ վերահսկողություն չսահմանելու համար հասարակական սննդի տրեստի առևտրաարտադրական բաժնի վարիչ Հ. Մ.-ին հայտարարված է նկատողություն:

5. Ռեստորանների, սրճարանների և խորտկարանների աշխատանքների կազմակերպման և առևտրի կանոնների խախտումների նկատմամբ թույլ պահանջկոտություն ցուցաբերելու համար դիտողություն է արված հասարակական սննդի տրեստի դիրեկտոր Հ. Ս.-ին և զգուշացված է, որ աշխատանքները չվերակառուցելու, առևտրի կանոնների խախտումներն իսպառ չվերացնելու դեպքում կձեռնարկվեն ավելի խիստ միջոցառումներ: Հասարակական սննդի բոլոր օբյեկտներում կան բողոքների և առաջարկությունների գիրք: Գրքերում եղած բողոքներին, որոնց թիվը քիչ է, տրեստի ղեկավարության կողմից ժամանակին տրվում է ընթացք:

Քաղաքում եղած սննդի օբյեկտների, հատկապես արդյու-

նաբերական ձեռնարկությունների ճաշարանների 70 %-ն են ապահովված սառնարաններով և այլ սարքավորումներով: Արդյունաբերական ձեռնարկություններում եղած սնդի օբյեկտներում շատ խիստ կարիք է զգացում սառնարանների և այլ սարքավորումների (կից ներկայացվում է հասարակական սննդի տրեստի պահանջը՝ ըստ ճաշարանների, որի մասին մի շարք անգամ հայտ է ներկայացված առևտրի մինիստրություն և մինչև հիմա չեն ապահովել)²:

Քաղաքում եղած հասարակական սննդի ինչպես բաց ցանցում, այնպես էլ ձեռնարկություններում եղած սննդի բոլոր օբյեկտները ապահովված են համապատասխան քանակի խոհանոցային ամանեղենով, ճաշարանային պարագաներով:

Սանէպիդկայանի կողմից հաճախակի են ստուգվում հասարակական սննդի բոլոր օբյեկտների սանիտարական վիճակը, ձեռնարկվում միջոցառումներ այդ բարելավելու համար, վերահսկողություն սահմանում կերակուրների պատրաստման գործում սանիտարական ռեժիմի պահպանմանը: Բոլոր սննդի օբյեկտներից հաճախակի վերցվում է ճաշերի տեսակները, նրա որակը և կալորիականությունը որոշելու համար (կից ներկայացվում է սանէպիդկայանի լաբորատորիայի անալիզի արդյունքները)³:

Հասարակական սննդի տրեստի տարբեր օբյեկտներում աշխատում են 52 խոհարարներ, որից 7-ը ունեն միջնակարգ մասնագիտական կրթություն (ավարտել են Երևանի սննդարդյունաբերության խոհարարների դպրոցը), 18 հոգի ունեն ընդհանուր միջնակարգ և 27 հոգի՝ 3-ից մինչև 7-րդ դասարանի կրթություն: Հասարակական սննդի տրեստը 1965–1966 թվերին

² Հիշյալ գրությունը հրապարակման բուն նյութին չի առնչվում:

³ Հիշյալ գրությունը հրապարակման բուն նյութին չի առնչվում:

տրեստում կազմակերպել է խոհարարների 19-ամսվա կուրսեր, որտեղ ընդգրկված են եղել ընդամենը 22 հոգի: Այդ կուրսերում ընդգրկվածները ունեցել են 7-ից 10-րդ դասարանի կրթություն: Կուրսերն ավարտածներից աշխատում են 17-ը:

Քաղաքում այժմ գործում է հասարակական սննդի 93 օբյեկտ՝ 2665 նստատեղով, այդ թվում բանվորական 12 ճաշարան՝ 1102 նստատեղով, 21 բուֆետ՝ 284 նստատեղով, 2 ուսանողական ճաշարաններ՝ 112 նստատեղով, դպրոցական 22 բուֆետ՝ 212 նստատեղով, իսկ մնացած օբյեկտները համարվում են բաց ցանց:

Առ 1 հունվարի 1966 թվի դրությամբ քաղաքում եղել է հասարակական սննդի 78 օբյեկտ՝ 2309 նստատեղով:

Խոհանոցային արտադրանքի պլանը 1965 թվին եղել է 1760 հ. ռ., փաստորեն կատարված է 1498 հ. ռ., կամ պլանը կատարված է 85,1 %-ով:

1966 թվի պլանը եղել է 1666 հ. ռ., փաստորեն կատարվել է 1679,5 հ. ռ., կամ պլանը կատարված է 100,8 %-ով:

Հասարակական սնդի օբյեկտներում ստուգման ժամանակ հայտնաբերվեց նաև մի շարք թերություններ: Այսպես, օրինակ, շինարարական հրապարակներում աշխատող մեծ թվով շինարարներ զուրկ են տաք ճաշից օգտվելուց, իսկ շինարարական կազմակերպությունների ղեկավարները գլանում են շինհրապարակներում տարրական հարմարություններ ստեղծելու (սեղաններ, նստարաններ և տաք ջուր ունենալու), որպեսզի հասարակական սննդի տրեստի ղեկավարությանը հնարավորություն տան տեղումներով տաք ճաշ մատակարարել շինհրապարակում աշխատող բանվորներին:

Մեքենաշինական գործարանում, որտեղ աշխատում են 950 բանվոր-ծառայողներ, այժմյան ճաշարանը, որը ունի 32

նստատեղ, միանգամայն չի ապահովում բանվորների պահանջին: Ընդմիջումների ժամանակ ինչպես խոհանոցի, այնպես էլ բուֆետի առջև գոյանում են մեծ հերթեր: Ճաշարանի բուֆետը զրկված է սառնարանից, որի պատճառով հնարավորություն չի լինում պահելու շուտ փչացող սննդամթերք, բուֆետում բացակայում է փոքր փաթեթավորված սննդամթերքը, նրբերշիկը, բաժակներով կոմպոտը, թեյը, հանքային ջրերը: Ճաշասրահում բացակայում է ջրի գրաֆինկաները: Չնայած նրան, որ խոհանոցում կար մեծ քանակությամբ թղթյա անձեռոցիկներ, բայց ստուգման օրը այդ բացակայում էր ճաշասրահում:

Մեքենաշինական գործարանի նոր կառուցված կորպուսի երկրորդ հարկում նախագծով նախատեսված 80 նստատեղով բուֆետը գործարանի դիրեկցիան իր նպատակին չի օգտագործում և բուֆետի համար նախատեսված ճաշասրահը զբաղեցնում են գործարանի կոնստրուկտորական և տեխնոլոգիական բաժինների աշխատողները: Սննդի և սպասարկման գործը մեքենաշինական գործարանում լավ հիմքերի վրա դնելու և բանվորների սպասարկումը կուլտուրապես կազմակերպելու համար անհրաժեշտ է, որ նախատեսված 80 նստատեղանոց բուֆետի շենքը գործարանի դիրեկցիան օգտագործի իր նպատակին:

Կարի ֆաբրիկայում աշխատում են 550 բանվոր-բանվորուհիներ, այստեղ կա մի փոքր բուֆետ, որը զուրկ է ամեն տեսակի հարմարությունից: Բանվոր-բանվորուհիները ընդմիջումների ժամանակ զրկված են տաք ճաշից, որի պահանջը շատ է: Բուֆետում չի լինում փոքր փաթեթավորված սննդամթերք, թեյ, բուդերբրոտ և այլ անհրաժեշտ սննդամթերք: Ըստ ֆաբրիկայի դիրեկտորի հայտարարության՝ ֆաբրիկայի նորակառույց կորպուսի առաջին հարկում նախատեսվելու է 200 նստատեղով ճաշարան:

Տրիկոտաժի ֆաբրիկայում աշխատում են 3500 բանվոր-

ծառայողներ: Ֆաբրիկան մինչև 1966 թվի հունիսի 15-ը ուներ մեկ ճաշարան՝ 80 նստատեղով, որը չէր համապատասխանում իր կոչմանը և զուրկ էր բոլոր տեսակի հարմարություններից: Այդ ճաշարանը լիկվիդացվել է 1966 թ. հունիսի 15-ից, Ֆաբրիկայի ներսում գործում է մի փոքր բուֆետ, որը նույնպես զուրկ է ամեն տեսակ էլեմենտար հարմարությունից: Բուֆետում բացակայում է բոլոր տեսակի փոքր փաթեթավորված սննդամթերք: Ֆաբրիկայի վարչության շենքի հետ միասին կառուցվել է նաև 120 նստատեղով նոր ճաշարան, որը շահագործման է հանձնված 1967 թ. փետրվարի 16-ից և գտնվում է Ֆաբրիկայի տերիտորիայից դուրս, իսկ այդտեղ գնալու համար պետք է բանվորները ստուգվեն պահակների կողմից, որի համար պահանջվում է երկար ժամանակ և ռեալ կերպով չեն կարող օգտագործել իրենց կեսժամյա ընդմիջումը: Այժմյան գործող նոր ճաշարանը նույնպես չի բավարարում այսօրվա պահանջը, ընդմիջումների ժամին ճաշարանի դրամարկդի, խոհանոցի և բուֆետի առջև գոյանում են մեծ հերթեր: Սննդի գործը տրիկոտաժի Ֆաբրիկայում բարելավելու և կոլտուրական սպասարկումը լավ կազմակերպելու համար անհրաժեշտ է Ֆաբրիկայի ներսում ունենալ 200 նստատեղով մեկ ճաշարան ևս:

Մորթի-մուշտակի Ֆաբրիկայում աշխատում են 300-ից ավելի բանվոր-բանվորուհիներ: Ճաշարանն ունի 30 նստեղատեղ, որը չի համապատասխանում իրեն կոչմանը: Ճաշարանի սրահը և խոհանոցը խիստ պահանջ ունի վերանորոգման այստեղ թողարկվող ճաշատեսակները շատ քիչ են, չկա փաթեթավորված սննդամթերք, թեյ, հանքային ջրեր և լիմոնադ և այլն:

Հասարակական սննդի օբյեկտների ստուգման ժամանակ համարյա 70 %-ի չափով ճաշարաններում չկային հանքային ջրեր, լիմոնադ, չկար ծու, փոքր փաթեթավորված և այլ տեսակի

սննդամթերք:

Ստուգումների ժամանակ ստուգված են արդյունաբերական ձեռնարկությունների 7 ճաշարան, 5 բուֆետ, «Գուգարք» ռեստորանը և դպրոցական 8 բուֆետ: Դպրոցական և ոչ մի բուֆետում չկար փոքր փաթեթավորված սննդամթերք, նրբերշիկ, ձու և այլն, իսկ բուլկեղենը շատ քիչ էր: Նո. 3, 5, 6 դպրոցների բուֆետները տեղավորված են փոքր սենյակներում և զուրկ տարրական հարմարություններից:

Արդյունաբերական ձեռնարկություններում եղած ճաշարաններն ու բուֆետները, բացի Քիմիական կոմբինատի ճաշարանից, աշխատում էին միայն մեկ հերթ: Երկրորդ հերթում աշխատող բանվոր-բանվորուհիները գրկված են իրենց մոտ եղած սննդի օբյեկտից օգտվելուց:

Հանրակրթական դպրոցներում, որտեղ տեղավորված են նաև բաներիտ դպրոցները⁴, իսկ դրանց թիվը 7-ն է, նույնպես սովորող բանվորները սննդի բուֆետներից հնարավորություն չունեն օգտվելու՝ նկատի ունենալով, որ երեկոյան ժամերին սննդի բուֆետը լինում է փակ: Անհրաժեշտ է, որ հասարակական սննդի տրեստի ղեկավարությունը աշխատանքները կազմակերպի այնպես, որպեսզի ձեռնարկություններում երկրորդ հերթի աշխատող բանվոր-բանվորուհիները և բաներիտ դպրոցներում սովորողները հնարավորություն ունենան նրանք ևս օգտվելու սննդի օբյեկտներից:

Հասարակական սննդի օբյեկտների ստուգմանը մասնակցել են Ժողովրդական վերահսկողության 19 վերահսկիչներ:

Կից ներկայացվում է ճաշարանների տրեստից վերցված նո. 4 և 7 ձևերը՝ 4 օրինակ, ճաշերի լաբորատոր անալիզների

⁴ Բանվոր երիտասարդության համար նախատեսված դպրոցներ:

արդյունքները՝ 18 թերթ, տրեստի կողմից սառնարանների և սարքավորման պահանջագիրը՝ 2 թերթից⁵:

*Ժողովրդական վերահսկողության Կիրովականի քաղաքային
կոմիտեի նախագահի տեղակալ՝ Ռ. Դանիելյան
Ժողովրդական վերահսկողության արտահաստիքային բաժինների
վարիչներ՝ Գ. Ղազարյան, Վ. Ասլանյան
Քաղսովետի առևտրի բաժնի վարիչ՝ Ս. Բադալյան
Հասարակական ժողովրդական վերահսկիչ՝ Մ. Մելիքյան
Քիմիական կոմբինատի քիմիական մանրաթելի և հասարակական
սննդի տրեստի ժողովրդական վերահսկողության խմբի նախագահներ՝
Յու. Ղազումյան, Ա. Մելքոնյան, Բ. Քոթանջյան
Հասարակական վերահսկիչներ՝ թվով 10 ընկերներ*

Hamo Sukiasyan, Institute of History of the NAS RA, Cand. Hist. Sci., associate professor, The problems in the public food network of Kirovakan city in the second half of the 1960s

In order to fight against the abuses in the public food network of the Armenian SSR, state, party and public control bodies were engaged. Problems existed both in the capital Yerevan and in the regions. In the spring of 1967, in order to identify the problems in the Kirovakan city's public catering network, the commission conducted inspections and found out that in the canteens and buffets of the city's industrial enterprises there were widespread shortages of high-demand products, cases of non-observance of trade rules, under-measurement, under-weighting and under-accounting. The extensive reference prepared on the results of the inspection is an important source for the study of the economic history of Kirovakan.

⁵ Հիշյալ փաստաթղթերը հրապարակման բուն նյութին չեն առնչվում:

ԳԱԳԻԿ ԺԱՄՀԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ.

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՈՒՇ ՇՐՋԱՆԻ (1985-1987 ԹԹ.) ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՎԱԳՆԵՐՈՒՄ*

1985 թվականին գորբաչովյան վարչակազմի կողմից հռչակված վերակառուցման քաղաքականությունը ԽՍՀՄ սոցիալական կյանքում բերեց առանցքային փոփոխություններ: Դրանք, ըստ էության, կանխորոշեցին սոցիալիստական հասարակարգի անկումը և հետագա տասնամյակի անցումային գործընթացների բովանդակությունը: Վերակառուցման ժամանակաշրջանի հայաստանյան առօրեականությունը դեռևս առանձին ուսումնասիրությունների առարկա չի դարձել՝ մի հանգամանք, որը մեր ժողովրդի պատմության այս բեկումնային ժամանակաշրջանի պատմագիտական ընկալումները դարձնում է ոչ ամբողջական: Մինչդեռ պետք է արձանագրել, որ խորհրդային պատմության հետազոտություններում խորհրդային առօրեականության ուսումնասիրությունների, վերլուծությունների ներմուծման անհրաժեշտությունն այսօր փաստված է բազմաթիվ նշանավոր պատմաբանների կողմից:

Ռուսական պատմագրության մեջ այս գաղափարի հայտնի աջակիցներից Ա. Կազանկովը և Օ. Լեյբովիչն առօրեականությ-

* Հետազոտությունը կատարվել է ՀՀ ԿԳՄԱՆ ԲԿԳԿ-ի տրամադրած ֆինանսական աջակցությամբ՝ 21Т-6А274 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

յունը դիտարկում են որպես խորհրդային պատմության հետազոտության հայեցակարգ: Նրանք վիճարկում են խորհրդային անցյալի ուսումնասիրություններում խորհրդայնագիտության ամբողջատիրական դպրոցի ներկայացուցիչների մոտեցումները, որոնցում առկա է «չափազանցված հետաքրքրություն իշխանական հաստատությունների և նրանց կողմից իրականացված միջոցառումների նկատմամբ»: Հեղինակները համոզված են, որ զանգվածային գործընթացների նկատմամբ իշխանական վերահսկողությունը համընդգրկուն չի կարելի համարել¹: Խորհրդային պատմության ռեկվիզիտական մոտեցումներից բխող այս դիտարկումը հենվում է այն համոզմունքի վրա, որի համաձայն խորհրդային քաղաքացիները, չնայած իշխանական կուռ վերահսկողությանը, ունեցել են սոցիալական կյանքի, սոցիալական փորձառության ինքնավարություն, ձևավորել են սեփական նախաձեռնություններով, մղումներով, այսպես ասած՝ «կենսական հաշվարկներով» պայմանավորված սոցիալական վարքագիծ, որի տարբեր դրսևորումներում արտահայտված է եղել պետության քաղաքականության և պետական–կուսակցական գաղափարախոսության նկատմամբ ոչ միանշանակ վերաբերմունք: Ուստի խորհրդային ժամանակաշրջանը պետք է բացահայտել քաղաքական և սոցիալական փոփոխությունների համադրության, սրանց փոխգործակցության համապատկերում:

Այս դիրքորոշումն առավել արժևորված է հենց վերակառուցման ժամանակաշրջանի համար, երբ իշխանության վերահսկողական ազդեցությունները նվազում էին, ինչին ի պատասխան հանրային մտածողության մեջ առաջ էին գալիս ազա-

¹ Казанков А. И., Лейбович О. Л., Понять повседневность: эвристический потенциал концепции в исследованиях советской эпохи, Вестник Пермского университета, 2017, 3 (38), с. 82-88.

տականացման որոշակի միտումներ: Այս գործընթացները կդիտարկենք խորհրդային կյանքի որոշ դրվագներում՝ շեշտը դնելով հատկապես մտածողական մոդելներին վրա, որոնք արտահայտվում էին մարդկանց սոցիալական վարքագծում:

Առաջին դիտարկումը, որ կարող ենք անել թեմային վերաբերող սկզբնաղբյուրների ուսումնասիրությամբ՝ դա հանրային մտածողության մեջ սոցիալիստական գաղափարախոսությամբ քարոզվող կոլեկտիվ համակեցային կենսաձևից հրաժարումն էր և սեփական անձնական կենսամիջավայրի արժևորումը: Եթե ստալինյան ժամանակաշրջանում նման մտածելակերպը ոչ միայն չէր խրախուսվում, այլ նաև պատժվում էր և խորհրդային քաղաքացիների անգամ անձնական կյանքը ենթարկվում էր գրաքննության, ապա վերակառուցման տարիներին այս մոտեցումներն այլևս չկային, ինչի նախաձեռնողը նույնպես պետությունն էր: Սոցիալական կյանքի տարբեր ոլորտներում մենք կարող ենք դիտարկել պետական վերահսկողական ազդեցությունների ակնհայտ թուլացում: Այսպես՝ ընտանեկան բռնությունների նկատմամբ, օրինակ, խորհրդային պետությունն ուներ առանձնահատուկ վերաբերմունք: Այն մենք դիտարկել ենք 1950-1960-ական թվականներին վերաբերող քրեադատավարական նյութերում՝ հանգելով այն եզրակացության, որ պետությունն այդ տարիներին ազդեցություն չէր ունենում այդօրինակ սոցիալական շեղումները կանխելու, դրանք ծնող սոցիալ-հոգեբանական պատճառները վերացնելու ուղղությամբ, սակայն բռնություններն այնուամենայնիվ խստորեն պատժվում էին²:

² Ժամհարյան Գ., Առանձնապես ծանր հանցագործությունները խորհրդային Հայաստանում 1950-ականների վերջին – 1960-ականների սկզբին, «Խորհրդային Հայաստանի առօրյա կյանքի «սպիտակ էջերը» (1940-1960-ական թվականներ), հոդվածների ժողովածու», 2020, էջ 115-129:

Ակզբունքորեն այլ իրավիճակ ենք տեսնում նմանատիպ նյութերում, որոնք վերաբերում են 1980-ական թվականներին: Օրինակ՝ 1987 թ. Կիրովականի քաղսովետի խնամակալության և հոգաբարձության բաժնում ամուսնալուծվող ամուսինների միջև գույքի բաժանման և երեխաների խնամքի վերաբերյալ տեղի է ունենում վիճաբանություն, և ամուսինը դանակով հարվածում է կնոջը: Դատական քննության ընթացքում հաստատվում է ամուսնու մեղքը, որին դատարանն ընդամենը դատապարտում է 200 ռուբլի տուգանքի: Ավելին՝ դատաճոհի այն հատվածում, որտեղ ներկայացվում են արարքը մեղմացնող հանգամանքները, ասվում է, որ կինը միջնորդում է մեղմ վերաբերվել իր ամուսնուն, որովհետև «բացառված չէ, որ իրենց ընտանիքը կվերականգնվի»: Նշվում է նաև, որ մեղադրյալը բնութագրվում է դրականորեն, զբաղվում է հանրագուտ աշխատանքով և այլն³: Ակնհայտ է, որ ժողդատարանի վճիռը, չնայած արարքի մեղմացուցիչ հանգամանքներին, արարքի հանրային վտանգավորությանը համարժեք չէ: Դատարանի կողմից նման վճռի կայացումը պայմանավորված է այն հանգամանքով, որ մեծ հաշվով ընտանիքը պետության կողմից ընկալվում էր որպես քաղաքացու մասնավոր միջավայր և ինքնակարգավորվող ինստիտուտ այն աստիճան, որ պետության կողմից անտեսվում էին անգամ ընտանեկան հարաբերություններում սոցիալական վտանգ ներկայացնող ակնհայտ վարքագծային շեղումները:

Պետական հիմնարկ-ձեռնարկություններում ևս զգացնել էր տալիս պետական վարչական հսկողության անբավարարությունը: Նախկինից ժառանգություն մնացած մանր տնտեսական չարաշահումների ու պետական ունեցվածքի յուրացումների

³ ՀԱԱ, Լոռու մարզային մասնաճյուղ, (ԼՄՄ), ֆ. 9, ց. 6, գ. 34, թ. 43:

պրակտիկան 1980-ականներին ավելի էր կատարելագործվել՝ ավելի քիչ արժանանալով պետության կոշտ արձագանքին: Պետական միջոցների նկատմամբ նման վերաբերմունքը, այն է թե՛ սրանց տնօրինումը սեփական հայեցողությամբ և իրավական պետական կարգադրագրերի շրջանցմամբ, տեղավորվում է այն տրամաբանության մեջ, որը ներկայացրել են Ա. Կազանկովը և Օ. Լեյբովիչը խորհրդային աշխատանքային առօրյայի որոշ դրվագներ, մասնավորապես՝ «թոցնողների» (несуны) գործունեությունը բացատրելիս. «Այստեղ մենք բախվում ենք ավելի բարդ երևույթի, քան առանձին մարդկանց հանցագործ վարքն է: Դրանում բացահայտվում է նախ և առաջ աշխատողի վերաբերմունքը հիմնարկին՝ որպես ինչ որ բան, որ պատկանում է ոչ միայն պետությանը, այլ որոշ չափով նաև իրեն: Գործարանում նա գտնվում է, ինչպես իր տանը»⁴:

Պետք է արձանագրենք, որ վերակառուցման տարիներին այս մտածողությամբ պայմանավորված վարքագիծը արտադրական աշխատանքային հարաբերություններում զանգվածային էր և իրապես ձեռք էր բերել սոցիալական հաբիտուալիզացիայի կարգավիճակ: Մարդիկ գործարաններում, փաստորեն, կառուցարկում էին ինքնուրույն՝ սոցիալական առանձնահատուկ կապերով (լավություններով, հիերարխիկ շահերով կամ էլ զուտ կենցաղային հետաքրքրություններով) բնութագրվող իրականություն և այս ամենի նյութական ապահովվածությունը մեծ մասամբ իրականացվում էր հիմնարկի միջոցների հաշվին: Ներկայացնենք ասվածի համար մեկ տիպիկ օրինակ: Կիրովականի Լուսատեխնիկական գործարանի ֆինբաժնի վարիչը գործարանի

⁴ Казанков А., Лейбович О., Агрегатная повседневность сталинской эпохи: К постановке проблемы, Вестник Пермского университета. История, 2019, № 4 (47), с. 77.

տնօրենից հանձնարարություն է ստանում Երևանի «Լույս» արտադրական միավորման՝ վերահսկողական նպատակներով գործարան ժամանած հանձնաժողովին «անուշադրության չմատնել»։ Գտնվելով նյութական դժվարին կացության մեջ և չունենալով անձնական բավարար միջոցներ՝ աշխատակիցը տնօրենի հանձնարարությունը կատարում է գործարանի ֆինանսական միջոցների հաշվին⁵։ Երևանից ժամանած հյուրերի կենցաղային կարիքների ապահովման և նրանց հյուրասիրությունների նպատակով նա ֆինանսական մեքենայություններ է կատարում, կուտակում պարտքեր և տնօրենի համաձայնությամբ փորձում այդ պարտքերը մարել նորից մեքենայությունների միջոցով։ Սույն գործով դատական նիստին տնօրենը ցուցմունք է տալիս, որի համաձայն՝ նա չի հանձնարարել իր աշխատողին նշված ծախսերը կատարել գործարանի ֆինանսների հաշվին։ Իսկ Երևանի հանձնաժողովի անդամները ցուցմունք են տալիս առ այն, որ իրենց ստուգայցի ընթացքում որևէ խախտում գործարանում չեն հայտնաբերել և որ գործարանի աշխատակցի հյուրասիրությունները պայմանավորված չեն եղել իրենց կողմից չարաշահումների արձանագրումները կանխելու մտադրությամբ։ Սակայն հենց այս վկայությունները կասկած են հարուցում, որովհետև նախ իմանալով իր աշխատակցի ֆինանսական ծանր վիճակի մասին (մի հանգամանք, որ չէր կարող չիմանալ տնօրենը) ինչու՞ էր տնօրենը նման պարտավորություն դնում նրա վրա, ինչ էր առհասարակ նշանակում նրանց «անուշադրության չմատնել», ինչու՞ տնօրենն իր աշխատողին համաձայնեց օգնել, մասնավորապես՝ թույլ տվեց, որ նա մեքենայություններ անի կոլեկտիվի աշխատավարձի և պարգևավճարների ֆոնդի հետ։ Իսկ վերահսկո-

⁵ ՀԱԱ, ԼՄՄ, ֆ. 9, ց. 6, գ. 35, թ. 116-127:

ղական ստուգայցերի ժամանակ ստուգողներին «լավ դիմավորելու», «չանտեսելու» ավանդույթը, որը խորհրդային հիմնարկներում ծառայողական աստիճանակարգային հարաբերությունների հայտնի բնութագրիչ էր, չէր կարող ինքնանպատակ լինել: Այն, որպես կանոն, ունենում էր սեփական պաշտոնեական դիրքն ամրապնդելու, ծառայողական առաջընթացի կամ էլ այլ անձնական հետաքրքրություններով պայմանավորված ենթատեքստեր:

Գործարանը, փաստորեն, այլընտրանքային եկամուտի աղբյուր էր բոլորի համար՝ և՛ աշխատողների, և՛ վարչակազմի: Այդ պատճառով էր, որ, օրինակ, 1987 թվականին Կիրովականի տրիկոտաժի արտադրական միավորման տնօրենն ու աշխատակիցները նույն միավորման պահպանության ծառայության աշխատակցուհիներից մեկի հագուստին ներկարված գրպանիկ՝ թաքստոցում հայտնաբերած գումարների համար, որոնք նա ստացել էր միավորման բանվորներից՝ գողացված տրիկոտաժեղենը դուրս բերել թույլատրելու դիմաց, կանչում են Կիրովականի քաղ. բաժնի ԲԽՍՍ բաժնի ներկայացուցչին միայն այն բանից հետո, երբ պարզում են, որ գրպանիկի ռուբլիների «քանակությունը շատ է»⁶: Մեր համոզմամբ՝ սա խոսում դրվագ է, որը հիմք է տալիս ենթադրելու, որ տնօրենը գործին այդքան խիստ ընթացք չէր տա, եթե դրամը գրպանիկում քիչ լիներ: Իսկ սա նշանակում է, որ միավորումում այսօրինակ պրակտիկան դիտվում էր սովորական, և որ տնօրենը սրա մասին տեղյակ էր: Նրան անհանգստացնող հանգամանքը յուրացման չափն էր, և պետք է ենթադրել, որ ավելի փոքր մասշտաբի յուրացումների վրա գործարանի ղեկավարությունը կարող էր նաև աչք փակել:

Ապօրինությունների համատարած բնույթն, ըստ էության,

⁶ ՀԱԱ ԼՄՄ, ֆ. 9, ց. 6, գ. 35, թ. 46:

սրանք դուրս էր բերում սոցիալական դեհացիաների (շեղումների) ընկալումից, որովհետև սրանցում արտահայտված էին հանրային մտածողության մեջ տեղի ունեցած արմատական փոփոխությունները, որոնք թելադրում էին սովետական քարոզվող արժեհամակարգին հակոտնյա վարքագիծ: Այս շրջանում նկատում ենք իրականության և պետական քարոզչության արժեքային մոտեցումների միջև ակնհայտ խզում, խորհրդային իրականությունը սահմանափակվում է քարոզչական միջավայրերում (թերթեր, հեռուստատեսություն և այլն), մինչդեռ խորհրդային մարդու առօրյան կազմակերպվում էր այլ արժեքային ուղենիշներով: Նշենք, որ այս փոփոխությունների արձագանքները կարող ենք հանդիպել նաև 1985-1987 թթ. մամուլի հրապարակումներում, որտեղ, սովետական կենսակերպի հերթական հաղթանակներն ազդարարող բարձրագույն վերնագրերի կողքին, հանդիպում ենք նոր կենցաղային մտածողության մասին «ահագանգող» բավականին խորհրդանշական վերնագրեր՝ «Արժանապատվություն... մի՞շտ ենք արդյոք պահպանում»⁷, «Ապրելու միջոցը ապրելու նպատակ»⁸, «Ընդդեմ սպառողական հոգեբանության»⁹, «Ոչ հոռի բարքերին»¹⁰ և այլն: Երևույթները, որոնք քննադատվում են այս վերնագրերի տակ զետեղված հոդվածներում, իրականում ոչ թե շեղումներ պետք է դիտարկել, ինչպես դրանք մատուցվում էին, այլ առօրեական պրակտիկաներ, որոնք ավելի ու ավելի էին ընդլայնում իրենց «տիրապետության շրջանակը»: Պատահական չէ, որ, օրինակ, առաջին վերնագրի տակ զետեղված նյութի մեջ, երբ հոդվածագիրը վաճառողին մեղադրում է դրամն իրեն

⁷ «Հայաստանի աշխատավորուհի», Երևան, 1986, № 5, էջ 7:

⁸ «Հայաստանի աշխատավորուհի», 1986, № 11, էջ 7:

⁹ «Հայաստանի աշխատավորուհի», 1985, № 2, էջ 13:

¹⁰ «Ավանգարդ», Երևան, 1987, № 9, էջ 4:

պակաս վճարելու մեջ, վերջինս ինքնավստահ արձագանքում է. «Իսկ դու քո գործատեղում չե՞ս խաբում...»: Վերոնշված իրողությունների համատեքստում այս հարցը հիրավի հռետորական շեշտադրություն է ստանում:

Ոչ միայն աշխատանքային պարտականությունների նկատմամբ վերաբերմունքը, այլև, առհասարակ, մարդկանց կենսական առաջնահերթությունները նոր բովանդակություն էին ստանում: Դրանց փաթեթավորումը «հոռի բարքեր», «սպառողական հոգեբանություն» և նմանատիպ այլ արտահայտությունների մեջ ու դրանց վերաբերյալ բարոյագիտական խորհրդածությունները, որոնք հանդիպում ենք ժամանակի մամուլում, հիշեցնում են խորհրդային ասկետիզմը պահպանելու հուսահատ փորձեր, մինչդեռ իրականության մեջ մարդիկ անձնական բարեկեցության առավել հավակնոտ պատկերացումներ ունեին: Օրինակ՝ դժվար է չհամաձայնել «Հայաստանի աշխատավորուհի» թերթում գետեղված «Ապրելու միջոցը ապրելու նպատակ» հոդվածում արտահայտված մտքերին, որոնք մարդկային նյութապաշտությանը հակադրելով ինտելեկտուալ և ստեղծագործական աճը՝ ընդգծում են սրանց առավելությունը: Սակայն այս հոդվածում հեղինակը ներկայացնում է ժամանակի առօրյայի այնպիսի ատրիբուտներ՝ «արտասահմանյան մոդայիկ հագուստ», «մոդայիկ երաժշտություն», «կենցաղի գեղեցիկ առարկաներ» և այլն, որոնք անդառնալիորեն խորհրդային մարդկանց կենցաղ էին «ներխուժել»՝ որպես բազմազանության և այլընտրանքի խորհրդանիշներ: Վերակառուցման ժամանակաշրջանի առանձնահատկությունը, թերևս, պետք է համարել այն, որ պետությունն առաջին անգամ իր քաղաքականությամբ՝ հասարակական-քաղաքական կյանքի ազատականացման իր ուղերձներով, նաև՝ վարչահրամայական հսկողության թուլացմամբ, մարդկանց հա-

մար նշված պատկերացումները կյանքի կոչելու և խորհրդային միօրինակ կենցաղը փոխելու արտոնություն էր տալիս, համեմայն դեպս հասարակության մեջ այս ընկալումը կար: Սակայն արտոնությունը չպետք է շփոթել հնարավորության հետ. տնտեսական ծախսողված բարեփոխումների ֆոնին այս հնարավորությունները մարդիկ փորձում էին ձեռք բերել ինքնուրույն՝ հենվելով սեփական հնարամտության և ճարպկության վրա:

Այս ժամանակաշրջանի խորհրդային մարդկանց մտածողության մեջ տեղի ունեցած փոփոխությունների ընդհանրացված բնութագիր պետք է համարել սեփականատիրական ձգտումների և անձնական միջավայրի արժևորումը: Անցումային շրջանի՝ հիմնականում անարդյունավետ պետական քաղաքականության արդյունքում նման մտածողությունը շատ հաճախ կամայականությունների ձևով էր արտահայտվում: Այդպիսի բնութագրական կամայականությունների մասին ենք կարդում, օրինակ, Կիրովականի ժողովրդական պատգամավորների քաղաքային խորհրդի՝ 1987 թ. նստաշրջանների արձանագրություններում: Կոոպերատիվ բնակարանների շահագործման բազմաթիվ խախտումների մեջ նշվում է, որ կոոպերատիվների նախագահները չեն կատարում իրենց պարտականությունները բնակիչների հանդեպ և բավարարվել են միայն «շենքի բնակարանի վիճակահանության ժամանակ հարմարավետ բնակարան ընտրելով», տարբեր շենքերում բնակիչները «քանդել են պատշգամբ դուրս եկող ներպատուհանային և ինքնակրող պատերը», «շենքի տակ կառուցել են մառաններ», «պատշգամբները միացրել են սենյակներին» և այլն¹¹:

Այսօրինակ երևույթները խթանվում էին սոցիալական նոր

¹¹ ՀԱԱ, ԼՄՄ, ֆ. 1, ց. 8, գ. 13, թ. 5-6:

հոգեբանությամբ, որի խոստուն նկարագրություններ կան նաև ժամանակի մամուլի հրապարակումներում: Երևանի կոոպերատիվ բնակարանների բնակիչների առօրյայի դրվագներում հանդիպում ենք բնակիչների, որոնք հանրային և մասնավոր տարածքների վերաբերյալ ունեին իրենց պատկերացումները: Ըստ այդմ՝ նրանցից մեկն իր բնակարանի հարակից միջանցքն արգելափակել և դարձրել էր իրենը, մյուսը մեքենայի պահեստասեր էր պահում իր բնակարանում և հարկ եղած դեպքում մեքենայի մասերը նորոգում էր ոչ թե բակում, այլ հարևանի բնակարանին կից սենյակում՝ խանգարելով հարևանների անդորրը և այլն¹²:

Վերը նշված իրողություններն ընդհանրացնելով՝ կարող ենք արձանագրել, որ խորհրդային հասարակարգի փլուզման նախաշեմին խորհրդային մարդկանց սոցիալական մտածողությունն ու վարքագիծն արդեն կանխատրամադրված էր ԽՍՀՄ փլուզման արդյունքում տեղի ունեցած տնտեսական ու սոցիալական ցնցումներին, ինչքան էլ որ ԽՍՀՄ-ի փլուզման քաղաքական հետևանքները հոգեբանական շոկային ազդեցություն թողնեին հանրության գիտակցության վրա:

Gagik Zhamharyan, *Institute of History of the NAS RA, Cand. Hist. Sci.* Changes in the social mindset of the population in the episodes of the daily life of Armenia in the late soviet period (1985-1987)

It is well known that state comprehensive control over public relations is a basic feature of totalitarian rule. In the USSR, this control

¹² «Հայաստանի աշխատավորուհի», 1987, № 8, էջ 27-28:

began to weaken significantly during the Perestroika. The article discusses changes in the consciousness of ordinary Soviet Armenians that occurred as a consequence of the relaxation of political and ideological supervision over public consciousness. In illustrations of some industrial, family and household practices, the author traces the trend of rethinking the Soviet way of life and mindset, in particular, the prevalence of personal interests over ideological attitudes about Soviet collectivism and morality.

ԼՈՒՍԻՆԵ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ

Երևանի պարամության թանգարան

ԼՈՌՎԱ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆԿԱԽԱՑՈՒՄԻՑ ՀԵՏՈ (ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Վանաձորն իր մեծությամբ Հայաստանի Հանրապետության երրորդ քաղաքն է՝ Երևանից և Գյումրիից հետո: Այն նաև Լոռու մարզի կենտրոնն է: Տեղակայված է Փամբակի և Բազումի լեռնաշղթաների միջև ընկած նեղ ու երկարավուն գոգավորությունում, Փամբակ և Տանձուտ գետերի միախառնման վայրում:

Վանաձորի վերաբերյալ առաջին հիշատակությունները վերաբերում են XVIII դարին: Սանահնի վանահայր Սահակի ձեռագիր ավետարանի տիտղոսաթերթի վրա արված գրառումներից մեկում 1713 թ. օգոստոսի 18-ին տեղի ունեցած երկրաշարժի կապակցությամբ հիշատակվում է Ղարաքիլիսա տեղանունը: Այդ անվանումը հայկական բնակավայրը ստացել է օտարների կողմից՝ տեղի միջնադարյան եկեղեցու՝ սև (կարա) գույնի քարից կառուցված լինելու պատճառով: Ռուսական կայսրության շրջանում տեղանունը գործածության մեջ է մտել և պահպանվել մինչև 1935 թ.: Նույն թվականին քաղաքն անվանակոչվել է բոլշևիկ-հեղափոխական, պետական գործիչ Սերգեյ Կիրովի անունով:

Վանաձոր քաղաքը հարուստ անցյալ չունի: 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի ընթացքում այն ռուսական զորքերի տեղակայման գլխավոր վայրերից էր: Նրան քաղաքային բնակավայրի կարգավիճակ տրվեց Հայաստանի խորհրդայնա-

ցումից հետո՝ միայն 1924 թ.: Քաղաքի ձևավորմանն ու զարգացմանը նպաստեց Թիֆլիս-Կիրովական-Լենինական երկաթուղու կայարանային փոստատան և իջևանատան կառուցումը: 1929-1930 թթ. ճարտարապետներ Կարո Հալաբյանի, Միքայել Մազմանյանի և Գևորգ Քոչարի կողմից կազմվեց քաղաքի նոր հատակագիծը, որով նոր թաղամասերը պետք է ընդլայնվեին դեպի արևելք և արևմուտք: 1939 թ. արդյունաբերական թաղամաս և ամառային առողջապահական գոտի ստեղծելու նպատակով կազմվեց նոր հատակագիծ (հեղ.՝ Ն. Զարգարյան, Ա. Մինասյան):

1949 թ. կազմված հերթական հատակագծով քաղաքը դառնալու էր արդյունաբերական հզոր կենտրոն: Այդ ժամանակաշրջանում, որպես կանոն, փողոցների և թաղերի անվանումները շատ քիչ էին փոփոխվում: Օրինակ՝ ի նշանավորումն Հայաստանի լենինյան կոմերիտմիության 50-ամյակի, «Դիմաց» թաղամասի Աղայան փողոցի վրա գտնվող պուրակն անվանակոչվեց «Կոմերիտմիության» պուրակ¹:

Քաղաքի ընդարձակմանն ու զարգացմանը զուգընթաց՝ Կիրովականի քաղգործկոմի խորհուրդը որոշում կայացրեց վերակազմել քաղաքի թաղամասերը:

1975 թ. Կիրովականն արդեն ուներ 33 թաղամաս: Շատ փողոցների անուններ կրկնվում էին, չկար համակարգված անվանումների ցուցակ, անհրաժեշտ էր ըստ այդ փողոցների համարակալել շենքերը²:

Խորհրդային շրջանի քաղխորհրդի գործկոմի ընդունած մի փաստաթղթում նշվում էր, որ, հիմք ընդունելով ստալինյան բռնատիրության շրջանում խորհրդային ժողովրդի դեմ ժգանովի

¹ Հայաստանի ազգային արխիվ, Լոռու մարզային մասնաճյուղ (այսուհետև՝ ՀԱԱ ԼՄՄ), ֆ. 1, ց. 3, գ. 8, թ. 45:

² Նույն տեղում, ֆ. 1, ց. 4, գ. 12, թ. 122:

գործած հանցագործությունների իրողությունը և ելնելով ԽՍՀՄ բոլոր վայրերում նրա անունով տեղանունները փոխելու ԽՄԿԿ կենտկոմի կայացրած որոշումից, «Ժդանով» թաղամասը վերանվանակոչել հայկական լեռներից մեկի՝ Տավրոսի անունով³:

Խորհրդային կարգերի ճգնաժամը, գորբաչովյան «վերակառուցման» քաղաքականությունը որոշ չափով հնարավորություն տվեցին միութենական հանրապետություններին առաջ մղելու ազգային խնդիրները: 1985 թ. հետո Հայաստանում ևս սկսվեց փողոցներին և թաղերին հայկական անվանումներ տալու գործընթացը: Այսպես, Կիրովական քաղաքի Շիրակի խճուղու արևմտյան հատվածը անվանակոչվեց Մարշալ Բաղդամյան, իսկ արևելյան հատվածը՝ Շիրակի փողոց⁴:

Սակայն մինչև 1988 թ. շարունակվեց ռուսական և խորհրդային անվանումներով փողոցների անվանակոչությունը: Օրինակ՝ Կայսրանի փողոցը կոչվեց Մոսկովյան, Տանձուտ գետի առափնյա ճանապարհը՝ Լենինգրադյան⁵:

1988 թ. աղետալի երկրաշարժի պատճառով քաղաքի բազմաթիվ թաղամասեր, փողոցներ, պուրակներ շարքից դուրս եկան և դարձան շահագործման համար ոչ պիտանի: Վերականգման աշխատանքների իրականացման, ժամանակավոր կացարանների տեղադրման, նոր շինարարության ընթացում մի շարք հրապարակներ, պուրակներ, պողոտաներ, փողոցներ ուղղակի դադարեցին գոյություն ունենալ: Ավերված շենքերի բնակիչները տեղավորվեցին ժամանակավոր կացարաններում:

Հայաստանն աշխարհի տարբեր երկրներից օգնություն էր ստանում: Կառուցված ժամանակավոր թաղամասերին, որպես

³ Նույն տեղում, ֆ. 1, ց. 8, գ. 16, թ. 51:

⁴ Նույն տեղում, ֆ. 1, ց. 7, գ. 27, թ. 264:

⁵ Նույն տեղում, գ. 26, թ. 278:

կանոն, տրվեցին շինարարությունն իրականացրած երկրների անուններ: Այդպես առաջացան Բելառուսական, Մոլդովական, Շվեդական և այլ թաղամասեր ու փողոցներ: Շահագործման հանձնված մի թաղամասի տրվեց Տարոն անվանումը: Շուտով սկսվեց վերջինի նորաշեն ու անանուն փողոցների անվանակոչման գործընթացը:

1988 թ. սումգայիթյան եղեռնագործությունը հանրության շրջանում առաջ բերեց բուռն դժգոհություն մի շարք տեղանունների հարցում և առաջադրվեց դրանք անմիջապես փոխելու հանրային պահանջ. Երևանում Բաքվի փողոցը դարձավ Արցախյան, Կիրովականում Սումգայիթ փողոցը՝ Սուփումի⁶: 1988 թ. Լենինի պողոտայի արևելյան մասում գտնվող հրապարակը անվանվեց «Արցախի հրապարակ»⁷:

Այդուհանդերձ, ինչպես ՀՀ այլ քաղաքներում, այնպես էլ Վանաձորում 1990-ական թվականների սկզբին անվանափոխության գործընթացը կրում էր տարերային բնույթ և համակարգված չէր: Հիմնականում զգացմունքային հողի վրա առաջարկվում էին նոր անուններ՝ վայրկյան առաջ հին տեղանուններից ազատվելու մղումով:

Կիրովականի քաղխորհրդի գործկոմը 1990 թ. օգոստոսի 27-ին ստեղծեց աշխատանքային հանձնաժողով, որի մեջ ընդգրկվեցին պետական, քաղաքական, հասարակական գործիչներ: Հանձնարարվեց մեկ ամսվա ընթացքում կատարել քաղաքի փողոցների, հրապարակների անվանափոխումներ, իսկ նոր փողոցների անվանակոչումների կապակցությամբ կատարել ուսումնասիրություններ, ներկայացնել առաջարկություններ՝

⁶ Նույն տեղում, ֆ. 1, ց. 8, գ. 9, թ. 211:

⁷ Նույն տեղում, թ. 217:

ապահովելով լայն հրապարակայնություն⁸:

Առաջարկվում էր անվանափոխել.
Կալինինի փողոցի մի մասը՝ Ֆիդայիների
Մյուս մասը՝ Արամ Երկանյան
Կարմիր Բանակին՝ Վարպետ Մեհրաբի
Կարբիշևի»ը՝ Եղիշե
Վանաձորի 7-րդ փողոցը՝ Եզնիկ Կողբացու
26 Կոմիսարները՝ Սախարովի
Կիրովը՝ Խորենացու
Հոկտեմբերյանը՝ Օգոստոսի 23
Էնգելսը՝ Լեո
Աթարբեկյանը՝ Սողոմոն Թեհլերյան
Ֆրունզեն՝ Մայիսի 28
Մարքսը՝ Նժդեհ
Չապանը՝ Բուզանդի
Նիզամին՝ Նահապետ Քուչակ
Դերժինսկին՝ Սփյուռքի
Սվերդլովը՝ Շիրազի
Քիմիագործների 1-ին փողոցը՝ Քիմիագործների
Քիմիագործների 2-րդ փողոցը՝ Սերո Խանզադյան
Լենինգրադյան խճուղին՝ Երևանյան⁹:

Վերոհիշյալից երևում է, որ գրեթե բոլոր օտարահունչ անունները, որոնք կապ չունեին քաղաքի հետ, անվանափոխվում էին: Սակայն նոր անունները, առանձին բացառություններով, կրկնում էին ՀՀ մյուս քաղաքների փողոցների փոփոխված անունները և գրեթե չէին կապվում Վանաձորի տեղանվանաբա-

⁸ Նույն տեղում, գ. 25, թ. 127-128:

⁹ Նույն տեղում, գ. 14, թ. 182-183:

նության հետ:

Անվանափոխության գործընթացը շարունակվում էր: Սակայն հաճախ մարդկանց նոր տնային հասցեների տրամադրումը ձգձգվում էր, տեղ-տեղ պահպանվում էին հին անվանումները: Այդ ամենն առաջ էր բերում բնակիչների իրավացի դժգոհությունը:

Երկրաշարժից հետո Վանաձորում անվանակոչման գործընթացը հանդիպում էր նաև այլ դժվարությունների: Ծավալված բուռն շինարարական աշխատանքների հետևանքով քաղաքը զարգանում էր անկանոն, չկար նոր հատակագիծ: Քաղխորհրդի գործկոմը, հետագայում՝ քաղաքապետարանը, ավելի ուշ՝ ավագանին, ստիպված էին գոնե որոշումներով կամ հանձնարարականներով սահմանել, թե որն է քաղաքի կենտրոնը, ծայրամասը և այլն¹⁰:

Քաղխորհրդի գործկոմն ընդունած առանձին որոշումներով՝ Զորավար Անդրանիկի ծննդյան 125-ամյակի կապակցությամբ, Երևանյան խճուղու մի հատվածն անվանակոչվեց Անդրանիկ զորավարի անունով¹¹, իսկ մեկ այլ որոշումով՝ Մովսես Խորենացու ծննդյան 1500-ամյակի կապակցությամբ, Կիրովի պողոտան վերանվանվեց Մովսես Խորենացու անունով¹²:

1997 թ. հաստատվում է Վանաձոր քաղաքի գլխավոր հատակագիծը, որտեղ արդեն հստակ պետք է նշվեին նոր անուններով հրապարակները, փողոցները, բակերը, թաղամասերը և այլն¹³: ՀՀ նոր վարչական բաժանման և նոր համայնքների կազմավորմամբ պայմանավորված, քաղաքի տեղանունների փոփո-

¹⁰ Նույն տեղում, գ. 32, թ. 75:

¹¹ Նույն տեղում, գ. 23, թ. 133:

¹² Նույն տեղում, գ. 27, թ. 38:

¹³ Նույն տեղում, ֆ. 1, ց. 10, գ. 38, թ. 203-204:

խոթյունը սկսեց իրականացվել միայն ավագանու որոշմամբ: 1996 թ. ավագանու որոշմամբ քաղաքի թաղամասերի անվանակոչության հարցը դրվեց համաքաղաքային քննարկման և Լոռու մարզ թերթում տպագրվեց նախնական անվանումները: Եվ այսպես՝ ՀՀ «տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 30-րդ հոդվածով որոշվեց. միայն թվերով գոյություն ունեցող թաղամասերին տալ նոր անուններ.

Թաղամաս 1 – Խնձորուտ

Թաղամաս 2 – Բագում

Թաղամաս 3 – Ուսանողական

Թաղամաս 4 – Թագավորանիստ

Թաղամաս 5 – Դիմացի

Թաղամաս 6 – Խանդակ

Թաղամաս 7 – Զուխտ Ախպուր (կամ Զույգ Աղբյուր)

Թաղամաս 8 – Վանաձոր

Թաղամաս 9 – Կենտրոն

Թաղամաս 10 – Ցալկուտ (կամ Ժամի թաղ)

Թաղամաս 11 – Քիմշեն

Թաղամաս 12 – Առափնյա

Թաղամաս 13 – Տավրոս

Թաղամաս 14- Տարոն -2

Թաղամաս 15 – Տարոն -4

Նախատեսվում էր յուրաքանչյուր թաղամասի համար ստեղծել փակ բաժնետիրական ընկերություններ¹⁴: 1998 թ. Վանաձորի համայնքի ավագանին կայացրեց նոր որոշում. այս անգամ փողոցների հետ մեկտեղ անվանափոխվում էին պուրակները, հրապարակները և այլն: Այսպես՝

¹⁴ Նույն տեղում, գ. 39, թ. 8-9:

Կոմերիտմիության պուրակ – Երիտասարդության պուրակ
Շահումյանի հրապարակ – Վարդավառի հրապարակ
Աթարբեկյան փողոց – Պարույր Սևակ
Դիմացի Առաջին փողոց – Իսրայել Օրի
Դիմացի Երկրորդ փողոց – Հովսեփ Էմինի
Մուսաբեյյան – Լեոյի
Մռավյան – Նիկողայոս Մառի
Սպանդարյան – Ստեփան Զորյանի
Կասյան – Հրաչյա Աճառյանի
Ձերժինսկի – Իսակովի
Վանաձորի 7-րդ փողոց – Հովսեփ Օրբելու
Դիմացի թաղամասի Տավրոս փողոց – Միսաք Մանուշյան
Օգոստոսի 23 – Անանիա Շիրակացու
Լենինգրադյան – Սանկտ-Պետերբուրգի

1998 թ. Բազում փողոցն անվանակոչվում է Վիկտոր Համբարձումյանի, իսկ Կարո Հալաբյանի 100-ամյակի կապակցությամբ՝ Կուրդինյան փողոցը վերանվանվում է Հալաբյան¹⁵: 1999–2013 թթ. քաղաքային ավագանին գրեթե որևէ անվանափոխություն չի կատարել՝ հիմնականում զբաղված լինելով բնակչությանը բնակարաններով ապահովելու և բնակարանները օրինականացնելու հարցերով: Հիմնականում անվանափոխության են ենթարկվել դպրոցները, ձեռնարկությունները:

Այսպիսով՝ Վանաձորի տեղանվանաբանությանը բնորոշ էին հետևյալ առանձնահատկությունները.

1. Ազգային զարթոնքը և Արցախյան շարժումը հնարավորություն տվեցին փողոցների, պուրակների գրեթե բոլոր օտար տեղանուններն անվանափոխել և դրանք կոչել ազգային, նշա-

¹⁵ Նույն տեղում, գ. 81, թ. 120:

նավոր գործիչների անուններով կամ վերականգնել պատմական տեղանունները:

2. Երկրաշարժի հետևանքով ավերված Գյումրիում, Սպիտակում, Վանաձորում ձևավորված թաղերն ու փողոցներն ստացան նոր անվանումներ:

3. Աշխարհի տարբեր երկրներից ժամանած փրկարար ջուկատների ջանքերով կառուցված թաղամասերի մի մասին տրվեցին այն կառուցող շինարարների երկրների անվանումներ:

4. Անվանափոխությունները համահայաստանյան էին, և շատ տեղանուններ գրեթե բոլոր մարզերում ու քաղաքներում կրկնվում էին և չկար համակարգված մոտեցում:

6. 2000-ականներին անվանափոխություններն ավելի հազվադեպ դարձան: Նախ՝ արդեն անվանափոխության գործընթացը գրեթե ավարտվել էր, և հետագայում հիմնական փոփոխությունները կապված էին կա՛մ հոբելյանական իրադարձությունների հետ, կա՛մ պայմանավորված էին քաղաքական-ազգային գործչի, Արցախյան պատերազմի հերոսների անուններով կոչելու ցանկությամբ:

7. Տեղանվանաբանության խնդրում չկային որոշակի օրինաչափություններ:

8. Նախկին Կիրովականի, ներկայիս Վանաձորի շատ պատմական անուններ (օրինակ՝ Դիմացի, Թագավորանիստ և այլն), վերականգնվեցին:

9. Քաղգործկոմի, քաղաքապետի, ավագանու որոշումներով Վանաձորի անվանաբանությունն արմատապես փոխվեց և ձեռք բերեց բոլորովին այլ՝ ազգային պատկեր, ինչը հստակ երևում է թաղերի ու փողոցների հին և նոր անվանումների վերաբերյալ ստորև ներկայացված ցանկից.

9019ԱԿ
ՎԱՆԱՉՈՐԻ ՎԵՐԱՎԱՆՎԱԾ ՓՈՂՈՑՆԵՐԻ

Լենինի պողոտա	Տ. Մեծի փ.
Շահումյան փ.	սկիզբը՝ Զեռայան փ. - շարունակությունը՝ Վարդանանց փ.
Մարցիսի փ.	սկիզբը՝ Դեմիրճյան փ. - շարունակությունը՝ Գր. Լուսավորչի փ.
Էնգելսի փ.	Ֆեյխի փ.
Սպանդարյան փ.	Զորյան փ. / Սպանդարյան փ.
Ձին ավան Ձինկերական թաղամաս Միլաշի թաղ	Միկաշական ավան
Սովետական Բանակի փ.	Բանակի փ.
Ժյանուլի 1 փ. – Ժյանուլի 22 փ.	Տավրուսի 1 փ. – Տավրուսի 22 փ.
Կիրովի փ.	Խորենացու փ.
Լեոնիդոսյան փ.	Սամկո-Դեմեթրուքի փ.
Սվերդլովի փ.	Նարեկացի փ.
Կալինինի փ.	Ֆիդայիների փ.
Կայարանի փ.	Մոսկովյան փ.
Ֆրունզեյի փ.	Օգոստոսի 23-ի փ.
Օգոստոսի 23-ի փ.	Երևակացու փ.
26 Կոմիտասների փ.	Մխ. Գոշի փ.
Հոկտեմբերյան փ.	Ազատամարտիկների պուր.
Ալալեբեղյան փ.	Պ. Սևակի փ.
Սթաբելյան փ.	Վ. Սարոյան փ.
Մուսաբեյյան փ.	Լեոյի փ.
Մալյան փ.	Մառի փ.
Կասյան փ.	Ամառյանի փ.
Չեռոմնկու փ.	Իսակովի փ.
Երևանյան խճ.	սկիզբը՝ Զոր. Անդրանիկի փ.- շարունակությունը՝ Երևանյան խճ.
Բազումի փ.	Վ. Համբարձումյանի փ.
Դիմաց թաղամասի Տավրուսի փ.	Սանուշյան փ.
Դիմաց 1-ին փ.	Իսրայել Օրու փ.
Դիմաց 2-րդ փ.	Հովսեփ Էմինի փ.
Ե թվ կամ Ե թաղամաս	Աղայան ԵՂՂ. Աղայան ԵՂՂ
Կուրդիյան փ.	Կ. Հալաբյան փ.
Հարթանակի փ.	Նաիրի փ.
Սուսայիթի փ.	Սուխուսի փ.
Վանաձորի 1-ին փ.	Բուսաբանական փ.
Վանաձորի 2-րդ փ.	Լալվարի փ.
Վանաձորի 3-րդ փ.	Գուգարցի փ.
Գուգարցի փ.	Աղաբաբյան փ.
Վանաձորի 5-րդ փ.	Լոռվա փ.
Վանաձորի 6-րդ փ.	Կարբիշևի փ.
Վանաձորի 7-րդ փ.	Հ. Օրբելու փ.
Հարավսլավական թղմ.	Հարավսլավական ավ.

«Կարս» ռեստորանից մինչև «Լոռանց գոմեր» տանող ճանապարհը	Մայմնիխի խճ.
Մաշտոցի փ. 89շ	Երևարարների փ. 7շ
Մաշտոցի փ. 91շ	Երևարարների փ. 9շ
Մաշտոցի փ. 93շ	Երևարարների փ. 13շ
Մաշտոցի փ. 106շ	Երևարարների փ. 2շ
Մաշտոցի փ. 108շ	Երևարարների փ. 4շ
Մաշտոցի փ. 110շ	Երևարարների փ. 6շ
Մաշտոցի փ. 112շ	Երևարարների փ. 8շ
Մաշտոցի փ. 114շ	Երևարարների փ. 10շ
Վ. Համբարձումյան փ. 2գ շ	Վ. Համբարձումյան փ. 13շ
Ներսիսյան թաղ. 15շ	Բաֆու փ. 15շ.
Գր.Լուսավորչի փ. մինչև Նորեմացու փ.հետ հասկանալի	Կ.Դեմիրճյան փ.

Գր.Լուսավորչի փողոցի և Երվանդացի փողոցի հատման կետից դեպի Մոսկովյան փ.-ի հետ հատվելը /միջոցի չուկա/՝ Երվանդացի փողոց

Lusine Amirjanyan, *Yerevan History Museum*, Features of the process of renaming toponyms of Lori region after gaining independence (Using the example of Vanadzor city)

At the last period of the existence of the Soviet Union and in the first years of independence, the process of renaming toponyms began in the Republic of Armenia. Each region had its own characteristics. From this point of view, the city of Vanadzor (formerly Karakilisa, Kirovakan), the regional center of Lori, was no exception.

The national awakening as a result of the Artsakh movement of 1988 led to the need to rename almost all former toponyms which remained from the Soviet times. New names of streets and parks received the names of prominent Armenian national figures or regained the historical toponyms of the area. The process of renamed toponyms of the Lori region has the following features:

- districts and streets destroyed by the earthquake and the newly formed ones received new names. Some neighborhoods appeared with the names of the countries that participated in rebuilding and construction. The repeated names of the places were practically renamed almost everywhere. From now on, the process of renaming neighborhoods, streets, and parks took place exclusively under the strict control of local authorities.

- due to the fact that the process was almost completed, in the beginning of the XXI century all cases of name changes became less frequent. Later the changes were mainly associated with anniversary events or with the logic of naming settlements after contemporary political and national figures, heroes of the Artsakh War.

ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ
ԳԻՏԱԾԽԱՏՈՂՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ XLIII ԳԻՏԱԿԱՆ
ՆՍՏԱԾՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ՍԻՄՈՆ ԿՐԿԱԾԱՐՅԱՆԻ
ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

ՀԴՄՀ, բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

ԳՈՀԱՐ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ., դոցենտ

ՍԻՄՈՆ ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆ՝ ՊԱՏՄԱԲԱՆԸ ԵՎ ԹԱՐԳՄԱՆԻՉԸ (100-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ)

Հայ պատմաբան, թարգմանիչ, աղբյուրագետ Սիմոն Միսակի Կրկյաշարյանը ծնվել է 1923 թ. դեկտեմբերի 7-ին Հունաստանի մայրաքաղաք Աթենքի Կոկինիա արվարձանում, ուր ծնողներն ապաստանել էին Կիլիկյան Հայաստանի Հաճն քաղաքից: Սկզբնական կրթությունը ստացել է տեղի յոթնամյա հայկական դպրոցում, որն ավարտել է 1936 թ.: Ապա ընդունվել է հունական գիմնազիա և այն ավարտել 1943 թ.: Նրա կյանքի լուսավոր էջերից է Հունաստանի Դիմադրության շարժմանը գործուն մասնակցությունը:

1944-1946 թթ. սովորել է Աթենքի Կապոդիստրիասի անվան ազգային համալսարանում: 1946 թ. Աթենքում լույս է տեսել նրա հունարեն գրած «Ցայգալույս» բանաստեղծությունների անդրանիկ ժողովածուն: 1947 թ. կիսատ թողնելով ուսումը՝ Ս. Կրկյաշարյանը ներգաղթել է Հայաստան: Սկզբնական շրջանում՝ 1948-1950 թթ., պատմություն է դասավանդել Երևանի № 48 դպրոցում, 1955-1958 թթ. աշխատել է Հայպետհրատում՝ որպես թարգմանիչ:

1950 թ. ընդունվել է Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը, որը գերազանցությամբ ավարտել է 1954 թ.: 1959-ին ընդունվում է ԳԱ

պատմության ինստիտուտի ասպիրանտուրա և գործուղվում
Լենինգրադի համալսարանի պատմության ֆակուլտետի
Հունաստանի և Հռոմի պատմության ամբիոն: Այստեղ նա ա-
շակերտում է նշանավոր գիտնականներ Հ. Օրբելուն, Բ.
Պիոտրովսկուն, Վ. Ստրովեին, Ի. Դյակոնովին, Կ. Կոլբովա-
յին:

Ասպիրանտուրայից վերադառնալուն պես սկսել է աշխա-
տել ՀՍՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտում, 1962-1968 թթ.՝
որպես կրտսեր, 1986-1990 թթ.՝ ավագ, 1990-1992 թթ.՝ առա-
ջատար, 1992-ից՝ գլխավոր գիտաշխատող: 1966-1975 թթ. և
1996-ից դասավանդել է Երևանի պետական համալսարանում,
1976-1992 թթ.՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: 1977 թ.
դարձել է ԽՍՀՄ Գրողների միության անդամ: 1963 թ.
պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Հելլենիս-
տական թագավորների փոխհարաբերությունները Փոքր
Ասիայի և Հայաստանի քաղաքների հետ» թեմայով, 1980 թ.
դոկտորական՝ «Հին Հայաստանի պետական կառուցվածքը»
խորագրով: 2000 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ:

Ս. Կրկյաշարյանի գիտական հետաքրքրությունների
շրջանակը լայն է ու բազմազան. այն ընդգրկում է հելլենիստա-
կան քաղաքների, հին Հայաստանի պետական կառուցվածքի,
հասարակական-քաղաքական պատմության, հայ-հունական,
հայ-հռոմեական, հայ-պարսկական հարաբերությունների բնա-
գավառները՝ ժամանակագրորեն ընդգրկելով մի ամբողջ հա-
զարամյակ՝ մ.թ.ա. VI դ. – մ.թ. V դ.՝ մինչև Մեծ Հայքի Արշա-
կունյաց թագավորության անկումը: Հատկապես արժեքավոր
են նրա մենագրությունը՝ «Հին Հայաստանի և Փոքր Ասիայի
քաղաքների պատմության դրվագներ, Երևան, 1970 (216 էջ),
բազմաթիվ հոդվածները, որոնցից հատկապես՝ «Թագավորա-

կան իշխանությունը Արշակունյաց Հայաստանում», Երևան, ՊԲՀ, 1971, № 1, «Երվանդունիների արքայատոհմի մասին», ՊԲՀ, Երևան, 1973, № 4 և այլն:

Ս. Կրկյաշարյանը թարգմանություններն արել է հատուկ ընտրությամբ: Հին Աշխարհի գրական եզակի հուշարձաններից է Հոմերոսի «Ոդիսականը», որը հայ ընթերցողի սեղանին դրվեց 1957 թ.: Հին հունարենի, գրաբարի, այլ լեզուների քաջիմացությունը, բազմագիտակությունը հնարավոր դարձրեցին իրականացնելու Հին Աշխարհի մատենագրական գանձերին համարժեք հայերեն ընտիր թարգմանությունները: Ս. Կրկյաշարյանը թարգմանել է Հունաստանի պատմահոր՝ Հերոդոտոսի «Պատմություն ինը գրքից» կոթողային երկը: Մ.թ.ա. V դ. Հունաստանի մատենագրության ամենափայլուն ժամանակահատվածներից էր: Այդ շրջանի երևելի երկերից են Եվրիպիդեսի «Իֆիգենիան Ավլիսում» և Սոֆոկլեսի «Անտիգոնե» ողբերգությունները: Վերջինս նշանավորում է աթենական մտավոր կյանքի ամենաշքեղ շրջանը, նրանում ի մի էին բերված հին Հունաստանի քաղաքական, բարոյական, կրոնական լավագույն պատկերացումները: Այդ թարգմանությունները ևս գիտնականին են: «Իֆիգենիան Ավլիսում» ողբերգությունը 1975-ից սկսած հաջողությամբ բեմադրվել է Երևանի Գ. Սունդուկյանի անվան թատրոնում՝ ճանաչում ու փառք բերելով նաև թարգմանչին:

Նրա շնորհիվ հայ ընթերցողի սեփականությունը դարձան Քսենոփոնի «Անաբասիսը» (1970), «Կյուրոպեդիան» (2000), «Սոկրատյան երկերը» (2001), Պլուտարքոսի «Կենսագրությունները» (2001): Այս երկերը ոչ միայն վարպետորեն թարգմանված են, այլև դասական բանասիրության ու պատմագիտության պահանջներին համապատասխան ծանոթագր-

ված: Գիտնականի գրչին են պատկանում Հովսեպոս Փլավիոսի, Դիոն Կասսիոսի, Դիոդորոս Սիկիլիացու երկերի՝ Հայաստանին վերաբերող հատվածների թարգմանությունը: Վերջինիս գրչին պատկանող 40 գրքերը հայտնի են «Պատմական գրադարան» ընդհանուր խորագրով: Այդ մատյաններն ընդգրկել են պատմական մի ժամանակահատված, որն սկսվում էր վաղնջական անցյալից և հասնում մինչև Հուլիոս Կեսարի կողմից գալլերի դեմ մղված պայքարի դրվագները:

Հույժ կարևոր են Երևանի պետական համալսարանի հրատարակած «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա» ժողովածուի առաջին հատորի նյութերը, որոնց թարգմանիչն է Ս. Կրկյաշարյանը: Դրանք վերաբերում են Հայաստանի պատմության հնագույն շրջանին և անհրաժեշտ աղբյուրագիտական գրականություն են ոչ միայն ուսանողների, այլև հայոց պատմամշակութային անցյալով հետաքրքրվողների համար: Նյութերը քաղված են անտիկ շրջանի հույն մատենագիրների՝ Հերոդոտոսի, Քսենոփոնի, Դիոդորոս Սիկիլիացու, Պոլիբիոսի, Հովսեպոս Փլավիոսի, Ապիանոսի, Դիոն Կասսիոսի, Պլինիոս Ավագի երկերից, որոնցում արժեքավոր տվյալներ կան Հայաստանի հեռավոր անցյալի վերաբերյալ:

Մեծ է Ս. Կրկյաշարյանի ավանդը «Հին հունական աղբյուրներ» մատենաշարի նյութերը հարստացնելու գործում: 1985-ին այդ մատենաշարով լույս տեսած Դիոդորոս Սիկիլիացու երկերում եղած Հայաստանին վերաբերող հատվածներին թարգմանիչը կցել է առաջաբան, որում համառոտ, բայց փաստերով հագեցած ներկայացված է Դիոդորոս Սիկիլիացու երկերի ընդհանուր բնութագիրը: Նա բացատրում է, թե ինչու որոշակի շրջանում լատին պատմիչները դեռ հունարենով էին շարադրում մատյանները. «Քանի որ այդ շրջանում հռոմեա-

կան գրականությունն ու պատմագրությունը դեռևս հազիվ իրենց առաջին քայլերն էին անում, ապա բնական է, որ ժամանակաշրջանը արտացոլող երկերը պետք է գրվեին ոչ թե Հռոմի պաշտոնական լեզվով, այն է՝ լատիներեն, այլ դարձյալ հունարեն, որը ժամանակի *lingua franca*-ն էր»¹, այսինքն՝ գիտական գրականության մեջ ընդունված համընդհանուր լեզուն: Թարգմանիչը ներկայացնում է, թե ինչպես 30 տարի շարունակ Դիոդորոսը շրջել է Եվրոպայի և Ասիայի երկրների մեծ մասում, զանազան դժվարություններ հաղթահարելով՝ նյութեր հավաքել, որոնց հիմամբ գրել է իր երկերը: Ս. Կրկյաշարյանը նաև տարանջատում է Դիոդորոսի գրադարանի տարբեր հատորների սկզբնաղբյուրները, ցույց տալով, որ, օրինակ՝ համաշխարհային պատմության մեջ Եգիպտոսի նյութը շարադրելիս պատմիչն օգտվել է Հեկատեոսից, Ասորեստանի և Պարսկաստանի պատմության համար՝ Հերոդոտոսից:

Պատմաբան-թարգմանիչը գնահատում է Դիոդորոսի գրադարանի հատորների ճանաչողական արժեքը, մատնացույց անում թերությունները, բնութագրում լեզվաոճական առանձնահատկությունները. «Դիոդորոսի լեզուն և ոճը հատկապես բարձր է գնահատել բյուզանդական հայագգի մատենագիր, Կոստանդնուպոլսի պատրիարք Փոտը (IX դ.), որը նույնիսկ իր հեղինակած մատյանը, հետևելով Դիոդորոսին, անվանել է «Գրադարան»²: Ս. Կրկյաշարյանը մատնանշում է Դիոդորոսի երկի կարևորությունը խորենացիագիտության ասպարեզում, ինչն ավստոսանքով խոստովանել է Պատմա-

¹ Դիոդորոս Սիկիլիացի, Թարգմանություն բնագրից, առաջաբանը և ծանոթությունները Ս. Մ. Կրկյաշարյանի, Երևան, 1985, էջ 5-6:

² Նույն տեղում, էջ 9:

հայրն ինքը. «Ոչ հնախօսութիւնք եղեալ մերոյ աշխարհիս, և ոչ ընդ ամենայն յունականսն անցանել ատակեալ սակս կարծութեան ժամանակին. նա և ոչ մատենագրութիւնք Դիողորի հուպ առ մեզ են, զի ի նմա պահելով զակն՝ անմոռաց անցանէաք ընդ բնան, զի մի՛ ինչ ի մէնջ մնասցէ ի գլխաւորացն և ի պիտանեացն, և արժանի յիշատակի մերոց շարագրութեանց»³:

Կրկյաշարյանը ուշագրաւ դիտարկումներ ունի Շամիրամի պատմության վերաբերյալ: Նրա կարծիքով Շամիրամի մասին Մովսես Խորենացու պատմածներն իրենց հիմքում ունեն Դիողորոսի երկի ընդարձակ պատումը: Ըստ պատմաբանի՝ արդեն V դ. Դիողորոսի գրադարանի շատ գրքեր կորած էին, և Պատմահայրը նրա երկից օգտվել է հատվածաբար: Ս. Կրկյաշարյանի կարծիքով Դիողորոսի երկն ազդել է Մովսես Խորենացու աշխարհայացքի վրա՝ հեթանոսական ժամանակներում նշանավոր պատմական անձանց աստվածացնելու առումով: Հետաքրքիր է նաև, որ Դիողորոսի երկում կան Քսենոփոնի «Անաբասիսում» եղած դեպքերի նկարագրություններ, որոնք, ըստ պատմաբանի, քաղված են նույն արշավանքին մասնակցած ուրիշ ականատեսի գործից:

Խիստ արժեքավոր են Ս. Կրկյաշարյանի գիտական ծանոթագրությունները: Շամիրամի «Կախովի պարտեզների» մասին նա գրում է. «Այս «կախյալ պարտեզները» իրականում կառուցել է բաբելոնյան թագավոր Նեբուկադրեզարը (Նաբուգոդոնոսոր II) (մ.թ.ա. 605-562 թթ.) իր կնոջ՝ մարական իշխանուհի Ամյուհայի համար: Այս մասին հաղորդում է նաև հրեա

³ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և ներածութիւնը Մ. Աբեղեանի և Ս. Յարութիւնեանի, Երևան, 1991, էջ 257:

մատենագիր Հովսեպոս Փլավիոսը»⁴: Ծանոթագրություններում արժեքավոր փաստեր կան Բեհիսթունի սեպագիր արձանագրության վերաբերյալ, «որը ոչ միայն ունի խոշոր պատմական նշանակություն, այլև դարձել է բանալի սեպագիր արձանագրությունների վերծանման համար»⁵: Հովսեպոսի երկի թարգմանության առաջաբանում Ս. Կրկյաշարյանը նկատում է, որ «Ճաշակով ընտրված բառամթերքը, դասական համաչափ ու շքեղ ոճը մեծապես պարտավորեցնում է թարգմանչին և դժվարին խնդիրներ հարուցում նրա առաջ»⁶:

Պատմաբանն անաչառ է համարում հրեա պատմիչի վերաբերմունքը Հայաստանի թագավորներ Տիգրան Մեծի և Արտավազդի վերաբերյալ: Պլուտարքոսը Արտավազդին բնութագրում է «իբրև նենգամիտ և հռոմեական շահերին դավաճանած մարդ, մինչդեռ Հովսեպոսի մոտ նա ներկայացված է իբրև զոհ Անտոնիոսի մեքենայությունների և փառասիրության»⁷: Ս. Կրկյաշարյանը մատնացույց է անում հայոց Պատմահոր գլուխգործոցի՝ «Հայոց պատմության» և Հովսեպոսի երկերի աղերսները: Նրա հեղինակած առաջաբանից իմանում ենք, որ Հովսեպոսի «Հրեական պատերազմի մասին» մատյանը 1660 թ. Ստեփանոս Լեհացին լատիներենից թարգմանել է հայերեն, որը տպագրվել է 1787 թ.: 1760–1761 թթ. Տայի Սիմոնյան Աթանաս վարդապետը իտալերեն թարգմանությունից հայերենի է վերածում Հովսեպոսի «Հրեական հնախոսությունը», որը մնում է անտիպ: Պատմաբանը Ստեփանոս Լեհացու

⁴ Դիողորոս Սիկիլիացի, էջ 167:

⁵ Նույն տեղում, էջ 168:

⁶ Հովսեպոս Փլավիոս, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ս. Մ. Կրկյաշարյանի, Երևան, 1976, էջ 16:

⁷ Նույն տեղում, էջ 23:

թարգմանությունն առավել հաջողված է համարում և այդ երկու գրաբար թարգմանություններում եղած անճշտությունները կապում XVII – XVIII դդ. պատմաբանասիրական մակարդակի հետ:

Բացի անտիկ գրական հուշարձանների թարգմանություններից, Ս. Կրկյաշարյանը հայերենի է վերածել ժամանակակից մի շարք հույն գրողների երկեր (Կ. Վառնալիս, Է. Պանսելինու): Հատկապես ուշագրավ է Մ. Ալեքսանդրապուլոսի «Հայերը» երկը (1984): Անվանի գիտնականը նաև թարգմանել է «Դիցաբանական բառարան»-ը, հարստացնելով այն հայկական նյութով:

Ականավոր գիտնականի վաստակն ըստ արժանվույն գնահատվել է նաև արտասահմանում. 1986 թ. ընտրվել է Հռոմի գրականության և արվեստի «Տիբերինա» ակադեմիայի արտասահմանյան անդամ: Տարիների ընթացքում Ս. Կրկյաշարյանն արժանացել է Հայաստանի Գրողների միության Ե. Չարենցի անվան «Կանթեղ» և Մայր աթոռ Ս. Էջմիածնի մրցանակներին:

Սիմոն Կրկյաշարյանի գիտական, թարգմանական, ստեղծագործական նվաճումներով և քաղաքացիական խիզախումներով լի կյանքն ընդհատվել է 2011 թ. մայիսի 1-ին, սերունդներին բարի հիշատակ թողնելով պատմագիտության նվիրյալի մասին:

Aelita Dolukhanyan, *ASPU, Dr. Phil. Sci., Professor, Corresponding member of NAS RA*, **Gohar Vardumyan**, *Institute of History of the NAS RA, Cand. Hist. Sci., associate professor*, **Simon Krkyasharyan**, *the historian and translator*

Armenian historian and translator Simon Krkyasharyan was born in 1923, on December 7, in Athens, where his parents had taken refuge from the Hachn city of Cilician Armenia. He received his initial education at the local Armenian school, then at the Greek gymnasium. One of the bright pages of his life in Greece was active participation in the Resistance movement in 1941-1945. In 1947, leaving his studies halfway, S. Krkyasharyan immigrated to Armenia. In 1950 he studied at Faculty of History of the Pedagogical Institute named after Kh. Abovyan. In 1959, he was admitted to postgraduate courses at the Institute of History of the Academy of Sciences and was assigned to the Department of History of Greece and Rome at the Faculty of History of Leningrad University. His teachers were such famous scientists as H. Orbeli, B. Piotrovsky, V. Struve and others. After returning, he started working at the Institute of History of the Academy of Sciences of Armenia. In 1966-1996 he was a lecturer at the Yerevan State University, in 1976-1992 at the Gevorgian Seminary of St. Ejmiadzin.

S. Krkyasharyan's range of scientific interests is wide, embracing the history of Hellenistic cities, the state structure of ancient Armenia, social-political history, Armenian-Greek, Armenian-Roman, Armenian-Persian relations, chronologically covering an entire millennium (VI ce. BC – V ce. AD), until the fall of the Arshakuni (Arsacid) kingdom of Great Armenia. His monograph work "Episodes of the History of Ancient Armenia and Cities of Asia Minor" (Yerevan, 1970) and numerous articles are especially valuable. In 1963 he defended his candidate thesis on the topic "Relationships of Hellenistic kings with the cities of Asia Minor and Armenia", in 1980 – the doctorate thesis – "The State Structure of Ancient Armenia". In 2000 was elected corresponding member of RA NAS.

Important contribution are S. Krkyasharyan's translations from the literary monuments of the Ancient World: Homer's "Odyssey", Herodotus' "The Histories", Euripides' "Iphigenia in Avlis", Sophocles' "Antigone", etc. Especially valuable are the materials of the first volume of the collection "Anthology of Armenian History" (published by Yerevan State University), translated by S. Krkyasharyan. The materials are taken from the works of Greek historians of the ancient period: Herodotus, Xenophon, Diodorus Siculus, Polybius, Josephus Plavius, Appianus, Dion Cassius, Pliny the Elder, which contain valuable information about ancient Armenia. All these translations have S. Krkyasharyan's scientific notes to the original texts.

In 1977 S. Krkyasharyan became a member of the Union of Writers of the USSR. Over the years, S. Krkyasharyan was awarded by the Union of Writers of Armenia, by "Kantegh" award of Charents, and by the award of Mother See of St. Ejmiadzin. The outstanding scientist's merits were also appreciated abroad. In 1986 was elected a foreign member of the "Tiberina" Academy of Literature and Art in Rome. Simon Krkyasharyan's life full of scientific, creative achievements and civic courage was interrupted in 2011, leaving a good memory of the devotee of historiography to the generations.

**ԵՐՎԱՆԴՈՒՆՅԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅԱՆ
ՁԵՎԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (Մ.Թ.Ա. IV–III ԴԴ.)**

Երվանդունյաց թագավորության մ.թ.ա. IV–III դդ. առնչվող սկզբնաղբյուրային տեղեկությունների սակավության պատճառով շատ հարցեր դեռևս ուսումնասիրման կարոտ են մնում: Այս ժամանակաշրջանի պատմության մի շարք դրվագների անդրադառնալու համար անհրաժեշտ է քննության առնել Երվանդունյաց Հայաստանում գոյություն ունեցած հողատիրության ձևերը:

Նորանկախ պետական համակարգի կայացման գործընթացի համար առաջնահերթ անհրաժեշտություն էր տնտեսական համակարգի ճշգրիտ, լիարժեք կազմակերպումը: Տվյալ ժամանակաշրջանում երկրի տնտեսության առաջընթացն ապահովող ոլորտներից էր գյուղատնտեսությանը, որի հիմքում ընկած են հողային հարաբերությունները: Հարցի լուսաբանման համար մեզ հետաքրքրող նյութերից է Արմավիրի հունարեն արձանագրություններից մեկը (գտնվել է 1911 թ.)¹, Արտաշես Ա (մ.թ.ա. 189–160 թթ.) արքայի արամեատառ սահմանաքարերը² և Մովսես

¹ Արձանագրությունը գտնվել է 1911 թ. Արմավիրի բլրի հարավային լանջին: Հայերեն թարգմ. հմմտ. տե՛ս Болтунова А. И., Греческие надписи Армавира, «Տեղեկագիր» ՍՍՌԴ Գիտությունների Ակադեմիայի Հայկական Ֆիլիալի, Երևան, 1942, № 1-2 (15-16), էջ 35-37, Մանանդյան Հ., Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ, Երևան, 1946, էջ 5-8:

² Արտաշեսի սահմանաքարերի մասին տե՛ս Տիրացյան Գ., Արտաշես I-ի ևս մեկ նորագյուտ արամեական արձանագրություն, ՊԲՀ, 1977, № 4, էջ 254-259, Հմայակյան Ս., Արտաշեսյան սահմանաքարերի շուրջ, Հայաստանի հնագույն

Խորենացու տեղեկությունները նրա տնտեսական բնույթի գործունեության մասին:

Խորհրդային և արդի հեղինակների կողմից բազմիցս շոշափվել են հին Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքին վերաբերող զանազան հարցեր, այդ թվում և հողային հարաբերությունների խնդիրները, սակայն դրանք ներկայացված են ընդհանուր հեղինաստական դարաշրջանի շրջանակներում, որոնք ժամանակագրորեն ընդգրկում են մ.թ.ա. IV-I դդ.: Հետազոտողները հին Հայաստանի հողային հարաբերությունները ներկայացրել են երկրում առկա մասնավոր և համայնական հողերի առկայությամբ³:

Ընդունված է համարել, որ Հայաստանում պետության ամբողջ հողը բաժանված էր երկու մասի: Մի մասը ամբողջապես համարվում էր թագավորի սեփականությունը, որտեղից նա հողամասեր էր բաժին հանում քրմական տաճարներին, նորաստեղծ քաղաքներին, զինվորական ու վարչական ավագանու ներկայացուցիչներին: Հողերի մյուս մասում թագավորը հանդես էր գալիս որպես տնօրինող: Այդ հողերը առաջնահերթ պատկանում էին տոհմապետ-իշխողներին, արքայի հարազատներին, մեծատոհմիկներին, իսկ հետո՝ քաղաքներին, համայնական հողատե-

մշակույթը 2, Երևան, 2002, էջ 72-75, Հագեյան Ն., Հակոբյան Հ., Հմայակյան Ս., Երկու նոր Արտաշեսյան սահմանաքար Վարդենիկից, Հայաստանի հնագույն մշակույթը 12, Էմմա Խանգադյանի հորեյանին նվիրված գիտաժողովի նյութեր, Երևան, 2002, էջ 76-77, և այլն:

³ Հարցի շուրջ կատարված հետազոտություններից տե՛ս Еремян С., Основные черты общественного строя Армении в эллинистическую эпоху, «Известия» Академии наук Армянской ССР. Общественные науки, 1948, № 1, նույնի՝ Развитие городов и городской жизни древней Армении, "Вестник Древней Истории", 1953, № 3, Սարգսյան Գ., Հայաստանի սոցիալ-տնտեսական կարգը հեղինաստական դարաշրջանում, «Հայ ժողովրդի պատմություն», հատոր I, Երևան, 1971, էջ 635-663, Կրկյաշարյան Ս., Հին Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Երևան, 1970 և այլն:

րերին, քրմերին ու քաղաքացիներին: Այսինքն, կային և՛ մասնատիրական և՛ համայնատիրական հողեր՝ համապատասխան աստիճանակարգով⁴:

Սույն հողվածի նպատակն է մինչ այժմ գիտական շրջանառության մեջ առկա վիմագրական և մատենագրական նյութերի ընձեռած տվյալների համեմատական, պատմավերլուծական մեթոդների կիրառմամբ վերականգնել Հայաստանի հողային հարաբերությունների ընդհանրական պատկերը՝ Երվանդունիների թագավորության երկրորդ ժամանակահատվածում:

Հայ միջնադարյան աղբյուրներում մասնատիրական հողերը բնութագրվում են երկու անվամբ՝ «դաստակերտ» և «ագարակ»⁵: Մեզ հետաքրքրող ժամանակահատվածում արքունական հողատիրության գոյությունը Հայաստանում վկայվում է Երվանդ արքայի կառուցած դաստակերտի մասին Պատմահոր տեղեկություններով: Նա իր երկում հիացմունքով է նկարագրում Երվանդակերտը, նրա գեղեցկությունը, ուրվագծում է արքայական դաստակերտի տնտեսական բաժինները՝ այգիները, ծաղկանոցները, բուրաստանները, դաշտերը. «Քաղցր է ինձ ասել եւ յաղագս գեղեցիկ դաստակերտին Երուանդակերտի, զոր յարինեաց նոյն ինքն Երուանդ գեղեցիկ եւ չքնաղ յարինուածովք: Քանզի զմիջոց հովտին մեծի լնու մարդկութեամբ եւ պայծառ շինուածովք, լուսաւոր որպէս ական բիր: Իսկ շուրջ զմարդկութեամբն՝ ծաղկոցաց եւ հոտարանաց կազմութիւն, որպէս շուրջ զբբովն զայլ բոլորակութիւն ական: Իսկ զբազմութիւն այգեստանոյ՝ իբր զարտեանանց խիտ եւ գեղեցիկ ծիր. որոյ հիւսիսային կողմանն դիր կարակնածեւ՝ արդարեւ գեղաւոր կուսից յանից

⁴ Հայ ժողովրդի պատմություն, հատոր I, Երևան, 1971, էջ 640-641:

⁵ Տե՛ս Սարգսյան Գ., Դաստակերտները և ագարակները V դարի հայկական աղբյուրներում, ՊԲՀ, 1962, № 3:

դարաւանդաց համեմատ: Իսկ ի հարաւոյ հարթութիւն դաշտաց՝ ծնատից պարզութեան գեղեցկութիւն: Իսկ գետն բերանացեալ դարաւանդաք ափանցն՝ զերկթերթիսն նշանակէ շրթունս: Եւ այսպիսի գեղեցկութեան դիր՝ անքթթելի իմն գոգցես ի բարձրաւանդակ թագաւորանիստն զհայեցուածսն ունի. եւ արդարեւ բերրի եւ թագաւորական դաստակերտն»⁶:

Հայաստանում նման տնտեսական համալիրների գոյությունը ավելի վաղ շրջանում հիմնավորվում է նաև անտիկ հեղինակների կողմից: Քսենոփոնի վկայմամբ՝ այդ տնտեսական համալիրներն արմատներով գնում են դեպի սատրապական շրջան⁷: Դաստակերտի խորենացիական նկարագրությունը հնարավորություն է տալիս ենթադրել նմանատիպ տնտեսական համալիրների շարունակական լինելության առավել զարգացած տեսակների մասին Հայաստանում մ.թ.ա. IV-III դդ.⁸:

Երվանդունի արքաների կառավարման ժամանակ Հայկական թագավորությունում մեկ այլ դաստակերտի մասին է վկայում Թովմա Արծրունին. «...առաջի տեսնելով զկապուտակ ծիրանափայլ դաշտածեւ ծովն. դաստակերտս մեծամեծս շուրջ զեզերքն անտառախիտ ծառովք եւ գինեբեր որթովք եւ զանազան պտղովք»⁹: Դաստակերտը գտնվում էր Վանա լճի մոտակայքում

⁶ Մովսիսի Խորենացու, Պատմութիւն Հայոց, Աշխատութեամբ՝ Մ. Աբեղեանի և Ս. Յարութիւնեանի (այսուհետ՝ Մովսես Խորենացի) Տիփսիս, 1913, էջ 167:

⁷ Տե՛ս Քսենոփոն, Անաբասիս, թարգմ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1970, III, 4, 2:

⁸ Հայկական լեռնաշխարհում այգի-բուրաստաններին և պարտեզներին առնչվող տվյալները վկայված են մ.թ.ա. I հազարամյակից ընդհուպ մինչև միջնադար (տե՛ս Քոչարյան Գ., «Արքունի ծառագարդ ապարանքը» Երվանդակերտից առաջ և հետո, ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. II, Գյումրի, 1999, էջ 125):

⁹ Արծրունյաց տան պատմիչը նկարագրում է Երվանդական բնակավայրը և նրա շրջակա այգիները և դաստակերտը: Արտաշեսը թագավոր դառնալուց հետո այն վերանվանում է Արտամետ: Այսինքն, մինչ նրա այդ գործողությունները այնտեղ արդեն կար դաստակերտ իր այգիներով (տե՛ս Թովմայի վարդապետի

և հավանաբար ոռոգվում էր Մենուա (մ.թ.ա. 810–786 թթ.) թագավորի կառուցած ջրանցքի օգնությամբ¹⁰:

Արքունական հողատիրության գոյությունն արձանագրող հաջորդ փաստը Երվանդ արքայի ամառանոցն է Ուտիքում՝ կրկին Մովսես Խորենացու հավաստմամբ. Երվանդ-Արտաշես առճակատման ժամանակ Երվանդը գտնվում էր իր ամառանոցում, երբ տեղեկություն է ստանում Արտաշեսի՝ զորքով Հայաստան մուտքի մասին¹¹:

Հայաստանում՝ մ.թ.ա. IV-III դդ. տաճարային տնտեսության գոյությունը փաստվում է մատենագրական¹² և վիմագրական տվյալներով¹³: Տաճարներին պատկանող այդ հսկայական հողային տարածքները քրմական դասը ձեռք էր բերել նվիրատվության շնորհիվ: Մովսես Խորենացին վկայում է, որ Երվանդ արքան կառուցում է Բագարան քաղաքը և քրմապետ է նշանակում իր եղբորը՝ Երվագին¹⁴: Անշուշտ, քրմական դասին և քրմա-

Արծրունյոյ Պատմութիւն տանն Արծրունեաց, Երևան, 2006, էջ 62):

¹⁰ Մարգարյան Հ., Արտաշես Ա արքայի Արտամատ քաղաքը՝ ըստ Թովմա Արծրունու «Արծրունյաց տան պատմության», ԼՀԳ, 2018, 1, էջ 290:

¹¹ Տե՛ս Մովսես Խորենացի, էջ 169:

¹² Երվանդ թագավորի և նրա եղբայր Երվագ քրմապետի սպանությունից հետո, Արտաշեսի զորավար Սմբատը տիրանում է Բագարան տաճարային քաղաք-կենտրոնին, նրա հարստությանը և այնտեղ աշխատող 500 ծառաներին (տե՛ս Մովսես Խորենացի, էջ 175):

¹³ Արմավիրի հունարեն արձանագրությունը վկայում է նույն Երվանդ արքայի և Երվագ քրմապետի միջև առկա նամակագրական կապը (տե՛ս Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 6–30):

¹⁴ «Բայց Երուանդայ շինեալ զքաղաքն իւր եւ փոխեալ անդր զամենայն ինչ յԱրմարայ, ուրոյն իկոռցն, զոր ոչ աւգուտ իւր համարեալ յիւրն փոխել ի քաղաքն, զի մի՛ ի գալ եւ ի զոհել անդ աշխարհի՛ ոչ զգուշութեամբ պահեսցի քաղաքն. այլ հեռագոյն ի նմանէ իբր քառասուն ասպարիսաւ զհիւսիսով՝ նման իւրոյ քաղաքին շինեաց քաղաք փոքր ի վերայ գետոյն Ախուրենայ, եւ անուանեաց Բագարան, այս ինքն թէ ի նմա զբազնաց յարինեալ է զկազմութիւն. եւ փոխեաց անդր զամենայն զկուռսն որյԱրմաիր: Եւ մեհեանս շինեալ՝ զեղբայր իւր զԵրուագ քրմապետ կացուցանէր» (Մովսես Խորենացի, էջ 166):

պետին էին պատկանում Հայաստանում գոյություն ունեցող բազմաթիվ այլ տաճարներին կից հողակտորներ, կամ էլ ամբողջական տաճարային քաղաքներ:

Մեզ հետաքրքրող ժամանաշրջանում, անգամ Երվանդունիներին հաջորդած Արտաշեսյանների ժամանակ, քրմական դասին զանազան շնորհումներ և զրկումներ կատարում էին միայն արքաները¹⁵: Սա խոսում է այն մասին, որ մ.թ. ա. IV-I դդ. Հայաստանում դեռ վերջնականապես չէին ձևավորվել լիիրավ մասնատիրական հողային հարաբերություններ: Հակառակ պարագայում քրմական տաճարներին հողային տիրույթների տեսքով նվիրատվության օրինակների կիանդիպեինք՝ կատարված ոչ միայն արքայի, այլ նաև այլազան մեծատոհմիկ և ծառայողական ավագանու կողմից:

Հայաստանում լիակատար սեփականատեր հանդիսանում էր միայն արքան՝ որպես երկրի ամբողջ հողային տիրույթի միանձնյա տեր: Նրան էր իրավունք վերապահված կատարել զանազան նվիրատվություններ պաշտոնյաներին, քաղաքներին, քրմական տաճարներին: Այն հողերը, որ արքան նվիրաբերում էր ռազմավարչական ավագանուն, չէին դառնում նրանց սեփականությունը, ուղղակի նրանք տվյալ հողի և այդ հողից ստացված բարիքների տերն ու տնօրինողն էին:

Հավանական է անգամ, որ ավատատիրական հարաբերությունների նախօրեին Հայաստանում գոյություն ունեցող «ձեռական իշխանություն» հողատիրության ձևի սաղմերը գցված լինեին հենց Երվանդունյաց Հայաստանում և, որպես ժառան-

¹⁵ Օրինակ՝ վերոհիշյալ Երվանդի կողմից իր եղբորը՝ Երվանգին քրմապետ նշանակելը, Արտաշես Ա արքայի կողմից Մաժանին Հանիի գլխավոր մեղյանում քրմապետ կարգելը, Տիգրան Միջինի կողմից Վահունիներին քրմական աստիճանից զրկելը (Մովսես Խորենացի, էջ 166, 183, 128):

գություն, փոխանցված հետագա արքայատոհմերին: Ս. Երեմյանը նշում է, որ «ձեռական» կոչվող հողատիրությունը հիմնականում կապված էր գործակալությունների, արքունիքի և արքունական պաշտոնյանների հետ¹⁶: Վերը նշվածը վկայվում է Պատմահոր երկում. Արտաշեսը Երվանդ արքայի հետ առճակատման ժամանակ իր կողմն է քաշում երկրորդական գահը և երկրի գլխավոր տնտեսի պաշտոնը զբաղեցնող Արգամին՝ խոստանալով նրան թողնել այն ամենը, ինչ նա ստացել էր Երվանդ թագավորից և ավելացնում է նորանոր շնորհումներ: Նոր շնորհումների մեջ մտնում էր արքունիքում ելումուտի ժամանակ մարգարտակապ վարսակալ կրելը, ոսկյա ըմպանից և մսակալից օգվելը¹⁷: Թե ինչ ուներ Արգամը մինչև Արտաշեսի հետ պայմանավորվածության մեջ մտնելը, կրկին երևում է Մովսես Խորենացու շարադրանքում: Արտաշեսի որդի Արտավազդը՝ նախանձելով Մուրացյան Արգամին, խարդավանքների միջոցով խլեց նրանից թե՛ երկրորդական գահը, թե՛ այն գյուղերը, որոնք դրված էին նրա տնօրինման տակ¹⁸: Առք ու վաճառքի, վարձակալության, նվիրատվության և նմանատիպ այլ իրավական ակտերի կամ գործողությունների մասին տեղեկությունների բացակայությունը չի խոսում հօգուտ լիիրավ մասնավոր սեփականության գոյության մասին մ.թ.ա. IV-III դդ.¹⁹:

¹⁶ «Գործակալությունների մասին հայ մատենագիրների մոտ պահպանված տեղեկությունները ցույց են տալիս, որ դրանք հիմնականում այն արքունական պաշտոններն էին, որ գոյություն ունեին հելլենիստական թագավորությունների արքունիքում» (Երեմյան Ս., Պայմանական հողատիրության առաջացման հարցի շուրջը ֆեոդալականացող Հայաստանում. «Ձեռական իշխանությունը» հին Հայաստանում, ՊԲՀ, 1971, № 1, էջ 4):

¹⁷ Մովսես Խորենացի, էջ 174:

¹⁸ Նույն տեղում, էջ 180-181:

¹⁹ Արմավիրի հունարեն արձանագրություններից մեկում հանդիպում ենք Արտեմիս-Անահիտ աստվածուհու հորդորը գույքի ժառանգման և «լավ և արդա-

Երվանդունի արքաների կառավարման շրջանում հողօգտագործման ձևերից մեկի առկայությանն է վերաբերում Արմավիրից 1911 թ. գտնված արձանագրությունը: Հ. Մանանդյանի կարծիքով՝ վիմագիրը ներկայացնում է գույքի ժառանգման, կալվածքների ճշգրիտ ու արդարացի բաժանման, հարազատների և մոտիկ ազգականների միջև խաղաղ գոյակցության դիմում՝ գրված խրատական ոճով: Առաջին տեքստում դատապարտվում է ժառանգական գույքի անարդար բաժանումը, իսկ երկրորդում՝ առկա է պահանջ: Տողերից մեկում կարդում ենք. «այն տունը, որ վատ ու անարդար կերպով է սահմանազատվում՝ ինքն իրեն փորում է գերեզման»²⁰: Նա անառարկելի է համարում այն, որ արձանագրությունը ոչ թե հայ տեղաբնակների, այլ հույն կամ հեղինական վերաբնակներին էր առնչվում ²¹: Ս. Երեմյանը հետևելով Մանանդյանին՝ կարծում է, որ Արմավիրի հունարեն արձանագրության վկայությունները առնչվում են Արմավիրի շրջակայքում հունական վերաբնակեցված վարձու զինվորներին: Նրանք այնտեղ տիրապետում էին հողակտորների, որոնք հատկացված էին արքունապատկան հողերից, և նրանք կարող էին դրանք փոխանցել ժառանգաբար: Այդ հողերը նույնպես ենթարկվում էին հարկման, իսկ անժառանգ մնացածների հողերը կրկին դառնում էին արքունական: Հաջորդիվ եզրակացնում է, որ հունարեն արձանագրության տողերը ակնարկում են

րացի» սահմանազատման մասին վկայության: Այս վիմագրում տեղ գտած տողերը հիմք են հանդիսացել կարծելու, որ Երվանդունի արքաների կառավարման ժամանակ արդեն համայնական հողատիրությունն իր տեղը զիջում էր մասնատիրականին, որն առավել լայն թափով շարունակվեց Արտաշես Ա-ի թագավորման ժամանակ (տե՛ս Դանիելյան Ա., Արտաշես I-ի հաստատած սահմանաքարերի իրավական նշանակությունը, ՊԲՀ, 1977, № 3, էջ 238):

²⁰ Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 5-8:

²¹ Նույն տեղում, էջ 10:

նրանց ժառանգական կարգի և իրավունքի խախտման մասին: Իրավունքի խախտման պարագայում նրանք այն բողոքարկում էին Ատեմիս աստվածուհուն, որը համարվում էր արդար բաժանման և կալվածքների սահմանների պահապան²²:

Ի՞նչ հանգամանքներում էին խախտվել վերաբնակ հույների իրավունքները, և ո՞վ էր խախտել: Արձանագրությունում փորագրված տողերից և աստվածուհու ուղղակի խոսքից կարելի է ենթադրել, որ նրանց իրավունքները խախտվել էին ոչ թե կոնկրետ անձի կամ պաշտոնյայի, այլ հենց այդ վերոհիշյալ հույների՝ ժառանգատուի, այսինքն՝ տան կամ ընտանիքի հոր կողմից: Այլապես դժվար է բացատրել արձանագրության տողերի՝ «**այն տունը** (ընդգծումը մերն է – Ա. Պ.), որ վատ և անարդար կերպով է սահմանազատվում՝ ինքն իրեն փորում է գերեզման» հատվածը:

Այսպիսով, կարելի է ենթադրել, որ մ.թ.ա. IV-III դդ. առկա էին թե՛ հողաբաժանման, թե՛ ժառանգման երևույթներ, սակայն միաժամանակ հակված ենք կարծելու, որ չկային ժառանգություն թողնելու հստակեցված նորմեր, որոնցով պետք է առաջնորդվեր ժառանգատուն, և հավանաբար սա էր պատճառներից մեկը, որ առաջ էր բերել վերը նշված խնդիրները: Արմավիրի հունարեն արձանագրության բնույթը գույքի ժառանգման և հողամասերի կամ կալվածքների սահմանազատման ընթացքում առաջացած խնդրի լուծման տարբերակ է ներկայացնում: Տեքստի բովանդակությունից կարելի է կռահել, որ նմանօրինակ խնդիրներն այնքան շատ էին, որ հարցին լուծում տալու համար միջամտել են Արմավիրի քրմական դասի ներկայացուցիչները: Գույքի անար-

²² Еремян С., Основные черты общественного строя Армении в эллинистическую эпоху, «Известия» Академии наук Армянской ССР. Общественные науки, 1948, № 1, с. 61.

դար բաժանումը պիտի հանգեցնե՞ր տնտեսական խնդիրների, որոնց լուծմանն էլ հետամուտ էր Արմավիրի քրմական դասը, քանզի նրանց վրա էր դրված դատաիրավական զանազան հարցերի կարգավորումը²³:

Արմավիրի հունարեն արձանագրության՝ Արտեմիս աստվածուհու հորդորից ենթադրելի է, որ խոսքը գնում է մասնատիրական, այլ ոչ համայնական հողերի մասին, քանզի համայնական հողերն ընդհանուր համայնքի սեփականությունն էին՝ քաղաքային կամ գյուղական, և դրանք հնարավոր չէր փոխանցել ժառանգաբար, առավել ևս՝ բաժանել տան անդամների միջև: Համայնական հողերը նույնպես պիտի ենթարկվեին սահմանազատման, սակայն այդ գործընթացը ամբողջությամբ վերահսկվում էր պետության կողմից և, բացի դրանից, այն ուղղակի բաժանվում էր այդ նույն համայնաբնակ երդերի միջև, այլ ոչ նրա ամեն մի անդամի: Արտաշես Ա-ի սահմանաքարերից մեկի վրա արամեերեն արձանագրված է՝ «Արտաշես արքան, որդին Զարեհի բաժանեց հողը գյուղերի միջև»²⁴: Վերը նշված մեր ենթադրությունը կարող է ևս մեկ անգամ փաստվել, եթե հիմք ընդունենք նաև այս իրողությունը:

Արտաշես Ա արքայի կողմից սահմանաքարեր կանգնեցնելու, գյուղերի և ագարակների միջև սահմանազատում իրականացնելու պատճառների մասին պատկերացում է տալիս

²³ Հակոբյան Հ., Հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունը Հայաստանում Երվանդական ժամանակաշրջանում (Ք.ա. IV-III դարեր), Մեսրոպ Մաշտոց Համալսարանի լրատու, 2019, էջ 43:

²⁴ Բիշոնե Ռ., Հակոբյան Հ., Հմայակյան Ս., Պարմեջիանի Ն., Արտաշես արքայի նորահայտ սահմանաքարը Սարուխանից (նախնական հաղորդում), Հին Հայաստանի պատմության եւ մշակույթի հարցեր, Գետրգ Տիրացյանի հիշատակին նվիրված գիտաժողովի զեկուցումներ, Երեւան, 2001, էջ 82:

Մովսես Խորենացին²⁵: Սահմանազատում իրանանացնելը խոսում է հողային հարաբերություններում առաջացած վեճերի կարգավորման, պետության կողմից համայնական հողի վրա ամրագրված գյուղական համայնքի՝ հարկատու միավորի ամբողջականության պահպանման մասին: Երվանդ արքայի հետ ունեցած վատ հարաբերությունների խորենացիական նկարագիրը, թե՛ զանազան նախարարների, թե՛ նրա վախերը՝ կապված ժողովրդական ցասման հետ, կարող են մի ենթադրություն անելու հիմք հանդիսանալ: Այն հողային հարաբերությունները, որ տեսնում ենք Արտաշես արքայի թագավորելու տարիներին, գոյություն ունեին Երվանդունիների օրոք, և մասնատիրական հողերի ընդլայնումը ի հաշիվ համայնականի, ըստ երևույթին, սկսվել էր Արտաշեսյաններին նախորդող արքայատոհմի կառավարման ժամանակ: Մենք այս ենթադրությունը կատարում ենք, հիմք ընդունելով այն իրողությունը, որ մասնատերերի և կալվածատերերի նման պահվածքը հնարավոր էր միայն թույլ, երերուն ու խառը կառավարման ժամանակ, ինչպիսին էին Երվանդ արքայի կառավարման վերջին տարիները:

Առկա տվյալների համադրումը հնարավորություն է տալիս անել հետևյալ եզրակացությունները. ա) նախ այն, որ Երվանդական ժամանակաշրջանի հողային հարաբերություններին բնորոշ էին Աքեմենյան շրջանի վարչատնտեսական որոշակի գծեր, որոնք առկա էին սատրապական Հայաստանում: Մյուս կողմից, մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի հողային հարաբերություններում առկա էին այնպիսի երևույթներ, որոնք արդի հայագիտության մեջ դիտարկվում են որպես առավել վաղ շրջանի երևույթներ, բ) Մ.թ.ա. IV-III դդ. առկա էին թե՛ հողաբաժանման,

²⁵ Մովսես Խորենացի, Բ, ԾԶ:

թե՛ ժառանգման երևույթներ, սակայն միաժամանակ հակված ենք կարծելու, որ չկային ժառանգություն թողնելու հստակեցված նորմեր որոնցով պետք է շարժվեր ժառանգատուն, գ) վերջնականնապես չէր ձևավորվել լիիրավ մասնավոր սեփականությունը, դ) Երվանդ արքայի երերուն կառավարման ժամանակ սկսվել էր մասնավոր և համայնական հողատերերի միջև որոշակի պայքար, որը, ըստ երևույթին, առավել սրվել էր Երվանդին հաջորդած Արտաշես Ա-ի կառավարման տարիներին: Եվ, թերևս, դա է պատճառ հանդիսացել, որպեսզի Արտաշես արքան հողաբաժանման հարցերը կարգավորելու նպատակով ճշգրտի այն նորմերը, համաձայն որոնց հասարակության տարբեր շերտերին հողատիրույթներ էին հատկացվում:

**Armen Poghosyan, *Institute of History of the NAS RA, applicant,*
On the question of land ownership forms in Yervandid Armenia (IV-III cc. BC)**

Because of the lack of primary sources concerning to the kingdom of Yervandids in the IV-III centuries BC, many questions still need to be studied. This article is an attempt to refer to the forms of land ownership existing in Armenia during the reign of the Yervandids, in connection with which the data of the original sources, particularly in the Greek inscriptions of Armavir and Aramaic inscriptions of king Artashes are examined, as well as evidencie of medieval Armenian historians.

A comparison of the available data leads to the following conclusions: a) the land relations of the Yervandid era were characterized by certain administrative and economic features of the Achaemenid period, which existed in the satrapy of Armenia; on the other hand, in the land relations of the period of interest, there were such phenomena, which in contemporary armenology are considered as inherited from the earlier

stage; b) in the IV and III centuries BC private property was not fully formed c) during the unstable reign of king Yervand some struggle between private and communal landowners began, which seems to have become even stronger during the reign of Artashes I, who followed Yervand.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆ ԸՍՏ
ՊԵՏՐՈՍ ՊԵՏԻԿԻ «CEHIL SUTUN» ԳՐՔԻ**

«Հոգիների փրկության» ծրագրի իրագործման նպատակով Իրան ներթափանցած և ոչ մուսուլմաններին իրենց քարոզչության ծիրում ներառած հերթական կաթոլիկ միսիոներ Պետրոս Պետիկը, իր «Cehil Sutun» («Քառասյուն սյուն») վերնագրով լատիներեն աշխատությունում¹ հանգամանորեն ներկայացնում է իրանական պետությունը՝ գրքի մի ամբողջական գլուխ նվիրելով հայերին և հայոց կաթողիկոսի հետ ունեցած երկարատև բանակցություններին: Այստեղ նա մանրամասնորեն ներկայացնում է Հակոբ Զուլայեցի կաթողիկոսի հետ ունեցած հանդիպումներն ու դրանց արդյունքները՝ վեր հանելով հետաքրքիր ու կարևոր տեղեկություններ հայոց կաթողիկոսի՝ Հայաստանի ազատագրության տեսլականի և հայ ազատագրական շարժման նախահիմքերի ձևավորման վերաբերյալ:

XVII դարում Սեֆյան Իրանը դարձավ եվրոպական պետությունների ուշադրության կենտրոնում գտնվող տարածաշրջանային կարևոր դերակատար՝ վերջիններիս աշխարհաքաղաքական հետաքրքրությունները բավարարելու համար:

¹ Տե՛ս Petrus Bedik, Cehil Sutun, Explicatio utriusque celeberrimi, ac pretiosissimi theatri quadraginta columnarum in Perside Orientis, Vienn, 1678: Հոդվածը շարադրելիս մենք օգտվել ենք Պետրոս Պետիկի աշխատության անգլերեն թարգմանությունից տե՛ս A Man of Two Worlds, Pedros Bedik in Iran 1670-1675, Translated from the Latin and annotated by Ouhaes C. and Floor W., Washington, 2014.

Սույն հետաքրքրությունները դրսևորվում էին երկու ասպարեզում. առաջին՝ ապահովել Իրանի աջակցությունը թուրքական հնարավոր սպառնալիքին դիմադրելու և հակաթուրքական դաշինք կազմելու համար և երկրորդ՝ օգտագործել Իրանի առևտրային տարանցիկ ուղիները:

Վերոնշյալ իրողություններին զուգորդվում էր նաև 17 տարեկանում Սեֆյան հարստության գահին բազմած և «իրանական ազգայնականության նախահայր»² հորջորջվող Շահ Աբաս I-ի (1587-1629) նպատակադրվածությունը՝ Օսմանյան կայսրության դեմ եվրոպական պետությունների՝ Իրանի հետ միավորման և վերջինիս վերահսկողությամբ Եվրոպայում մետաքսի վաճառքի իրականացման առնչությամբ: Վերոնշյալ հանգամանքով պայմանավորված՝ շահ Աբասը, փաստացի, իր տերության ոչ կաթոլիկ քրիստոնյա հպատակների «աջակցությունն առաջարկեց» Պապին³, հրավիրելով «քարոզիչների և քրիստոնեական կրոնի հիմնադիրների՝ հատուկ արտոնություններով»⁴:

Սկսվեց կաթոլիկ միսիոներների հոսքը Սեֆյան Իրան: Այն հիանալի հնարավորություն էր կաթոլիկ եկեղեցու խարխուլված դիրքերի վերականգնելուն ուղղված՝ «հոգիների փրկության» ծրագիրը կյանքի կոչելու համար: Ուստի, առանց ժամանակ կորցնելու, 1603 թ. Ավգուստինյան միաբանության երեք միսիոներներ հաստատվեցին Սպահանում⁵: Չորս տարի անց՝ 1607 թ., Հռոմից ժամանեցին երեք Կարմեյյան միաբաններ՝ Սպահանում

² Տե՛ս Բայբուրդյան Վ., Նոր Զուղա, Երևան, 2007, էջ 18:

³ Տե՛ս Ghougassian V., The Emergence of the Armenian Diocese of New Julfa in the Seventeenth Century, Atlanta, 1998, էջ 128:

⁴ A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVIIth and XVIIIth centuries, vol. 1, London, 1939, էջ 78:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 92:

ստեղծելով երկրորդ Կաթոլիկ միսիոներությունը⁶:

Հաջորդը՝ 1628 թ., նշանավոր կարդինալ Ռիշելյեի կողմից ուղարկված Կապուչինյան միսիոներներն էին, ովքեր հաստատվեցին Սպահանում⁷: Ամենավերջին խումբը Պապի նվիրակներն էին՝ հիսուսյանները, որոնք իրենց հատուկ առաքելությամբ մուտք գործեցին տարածաշրջան 1640-ականներին⁸:

Կաթոլիկ միսիոներների գործունեության համար պարարտ հող էր հայկական միջավայրը: Օտար բռնակալների լծից կեղեքված հայ ժողովուրդը կարող էր դառնալ կաթոլիկների գործունեության թիրախ, «առատ հունձի» ապահովման գործուն ասպարեզ: Կաթոլիկ միսիոներները լավ կրթված, բազմակողմանի զարգացվածությամբ աչքի ընկնող անհատներ էին, ովքեր իրենց տրամադրած անվճար բժշկական օգնությամբ, տարաբնույթ գիտելիքներով դրական կերպար էին ձևավորել, մեծ համբավ և հեղինակություն ձեռք բերել: Այդպիսի բազմաթիվ նկարագրություններ կարող ենք հանդիպել ինչպես Կարմեյանների տարեգրության մեջ, այնպես էլ Պետրոս Պետիկի գրքի էջերում⁹:

Միսիոներների՝ շուրջ երեք տասնամյակների ընթացքում ծավալված գործունեության արդյունքում իր սպասած շոշափելի արդյունքը չստացած կաթոլիկ Արևմուտքը ձեռնարկեց նոր հուժկու «հարված»՝ Սեֆյան տերություն ուղարկելով միսիոներների նոր՝ ավելի պատրաստված և եռանդուն խմբի՝ եզուիտներին (ճիզվիտներ):

Կաթոլիկ գործիչ Իգնատիոս Լոյոլայի (1491–1556) հիմ-

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 105:

⁷ Տե՛ս Encyclopedia Iranica, v. IV, London, 1990, էջ 786:

⁸ Տե՛ս Matthee R., Poverty and Perseverance: The Jesuit Mission of Isfahan and Shamakhi in late Safavid Iran, “Al-Qantara” XXXVI, 2015, էջ 466:

⁹ Տե՛ս The Chronicle of Carmelites, pp. 265-271, A Man of Two Worlds, էջ 434:

նադրած Հիսուսյան (Society of Jesus) կամ ճիզվիտական միաբանության (Jesuit Order) ներկայացուցիչները Սեֆյան Իրանի մայրաքաղաք Ներթափանցեցին 1640-ականներին: Նրանք շատ մեծ դժվարությունների գնով կարողացան միայն 1653-ին թույլտվություն ստանալ հաստատվելու Նոր Զուղայում: Ֆրանսիացի ճիզվիտ հայր Ռիգորդին շահ Աբաս II-ին (1642–1666) է հասցնում Ֆրանսիայի Լուի XIV թագավորի նամակը, ինչպես նաև խոստումների «փաթեթ», որով Ֆրանսիան խոստանում էր օգնել Իրանին՝ Օսմանյան կայսրության և մյուս թշնամիների դեմ պայքարում: Արդյունքում՝ Ռիգորդիին հաջողվում է ստանալ շահի թույլտվությունը, որով ճիզվիտները կարող էին հաստատվել Նոր Զուղայում, Թավրիզում և Շիրազում¹⁰:

Թեև ճիզվիտները Երևանում պաշտոնապես հաստատվեցին 1700 թ.՝ հիմնելով իրենց միաբանությունը երկու հոգևորական և մեկ աշխարհիկ անձանցով, ովքեր իրենց գոյությունը պահպանում էին գինու արտադրություն կազմակերպելու միջոցով¹¹, այնուհանդերձ, նրանք ավելի վաղ էին ներթափանցել Երևան և Էջմիածին՝ հանգամանքներն ուսումնասիրելու համար¹²:

Հակոբ Զուղայեցի կաթողիկոսին հռոմեական եկեղեցու գիրկը բերելու և հայ ազգին կաթոլիկացնելու նպատակ հետապնդող ճիզվիտ միսիոներների առաջին ներկայացուցիչները հանդիպեցին հայոց կաթողիկոս Հակոբ Զուղայեցու կոշտ դիմադրությանը: Զուղայեցու «սրտին դիպչելու» բախտը վիճակված էր հայազգի կաթոլիկ Պետրոս Պետիկին, ով եռանդուն գործունեություն ծավալեց 1660-ականների վերջին:

¹⁰ Տե՛ս Yarshater E., նշվ. աշխ., էջ 635:

¹¹ Տե՛ս նույն տեղում, էջ 637:

¹² Լեո, Երկերի ժողովածու, հ. 3, գ. 1, Երևան, 1969, էջ 335:

XVII դարի երկրորդ կեսին դարձյալ առաջնային էր մնում հակաթուրքական դաշինքի ստեղծումը, թուրքական հնարավոր վտանգին դիմակայելը և այդ պայքարում Իրանին ներգրավելու՝ նախորդ դարի վերջից գոյություն ունեցող նպատակադրությունը: Այս միտումով շահ Սուլեյմանին (1666–1694) եվրոպական ղեկավարների նամակները հասցնելու առաքելությունը հանձնարարվում է հայազգի կաթոլիկ Մատթեոս Հովհաննիսեցին: Վերջինս գալիս էր Նախիջևանի արքեպիսկոպոս Պողոս Պիրոմալիին¹³ փոխարինելու, եվրոպական ազդեցության շնորհիվ հարկերի և պարտքերի ծանրությունը թեթևացնելու, որի տակ հյուժվում էին կաթոլիկ հայերը¹⁴, միևնույն ժամանակ հետամուտ լինելու նաև հակաթուրքական դաշինքի ստեղծմանը՝ իր հետ վերցնելով Պասի, Տոսկանայի դքսի, Լուի XIV-ի, Վենետիկի դոժի նամակներն ուղղված շահ Սուլեյմանինին¹⁵: Մատթեոս Հովհաննիսեցին ուղեկցորդ է կարգվում «իր դասընկերներէն ամէնէն կարող համարվող»¹⁶ հայազգի կաթոլիկ Պետրոս Պետիկը: Վերջինս իր՝ Իրանում իրականացրած առաքելության մասին թողել է «Cehil Suttun» վերնագրով ստվարածավալ լատիներեն աշխատություն՝ նվիրված Ավստրիայի Լեոպոլդ I կայսերը, որը լույս է տեսել վերջինիս ծննդյան տարեդարձի օրը՝ Վիեննայի համալսարանի

¹³ Պողոս Պիրոմալիի մասին մանրամասն տե՛ս Ճեմճեմյան Ս., Պողոս Պիրոմալի արքեպիսկոպոս Նախիջևանի, «Բազմավեպ», 1992, № 1-4, էջ 44-61:

¹⁴ Տե՛ս Հովհաննիսյան Ա., Նոր նիւթեր հայ-ունիտորական պատմագրութիւնից, «Արարատ», 1915, № 1, էջ 61:

¹⁵ Տե՛ս A Man of Two Worlds, էջ XXIII:

¹⁶ Տե՛ս Ապետիք կոմսին զարմանալի կեանքը, «Բազմավեպ», 1947, № 3-4, էջ 65 («Ապետիք կոմսին զարմանալի կեանքը» աշխատությունը Անդրեաս Ֆոկոլյանը Հարություն Քյուրտյանի խնդրանքով հունգարերենից թարգմանել և հրատարակել է «Բազմավեպում» 1946-1956 թթ.: Նա նշում է, որ աշխատության հեղինակներն են Քալլոշը և Քերեքեշհագին:)

տպարանում¹⁷: Այն ինքնին աղքատագիտական կարևոր նշանակություն ունեցող աշխատություն է և կարևոր մանրամասներ է պարունակում նշված ժամանակահատվածում Հայաստանի ազատագրության ծրագրի նախահիմքերի ձևավորման մասին:

Պետրոս Պետիկը ծնվել է Քիլիսում՝ կաթոլիկ հայերի ընտանիքում¹⁸: Նրա մասին մենք մանրամասներ ենք քաղում իր հեղինակած գրքի վերջին՝ XXXIII գլխից: Այստեղ նա հանգամանորեն ներկայացնում է իր գործունեության պատմությունը: Խոսելով իր ընտանիքի ազնվական ծագման մասին և զարմի արմատները տանելով մինչև Արշակունիների թագավորություն, նա մանրամասն ներկայացնում է գերդաստանի գլխապետույտ առաջացնող հաջողություններն ու կրած դժբախտությունները՝ թուրք սուլթանի կողմից: Ընտանիքի 12 երեխաներից միակ ողջ մնացած 13-ամյա Մանուկ Պետիկին սուլթանի արքունիք տանելու հեռանկարը ստիպում է նրա մորը վերջինիս ուղարկել Երուսաղեմ: Այստեղ կարմեյիտ միաբան Ֆրանսուա Պիկեն, որը Պետիկների ընտանիքին մտերիմ անձ էր, ցանկանում է նրան Ֆրանսիա ուղարկել, սակայն մեկ այլ հոգևորականի՝ Պիսկուտի խորհրդով նրան ուղարկում են Հռոմի Ուրբանյան դպրոց

¹⁷ Տե՛ս նույն տեղում, էջ 63:

¹⁸ Պետրոս Պետիկի աշխատության անգլերեն թարգմանության առաջաբանում թարգմանիչները, հղում կատարելով ֆրանսիացի արևելագետ Ֆրանսիս Ռիչարդին, նշում են, որ Պետիկն Ուրբանյան դպրոց է ընդունվել 1661 թ. մայիսի 30-ին, ուսումնառություն ստացել 11 տարի և «վնասակար և անուղղելի» լինելու պատճառով վտարվել դպրոցից 1668 թ. հունվարի 30-ին (տե՛ս A Man of Two Worlds, էջ XXI-XXII): Ֆ. Ռիչարդի աշխատությունը ձեռքի տակ չունենալու պատճառով չենք կարող ասել՝ որ կողմն է թույլ տվել այս վրիպակը: Առաջնորդվելով Ռ. Գևորգյանի ֆրանսերեն հոդվածում տեղ գտած տեղեկությամբ՝ ընդունելի ենք համարում այն տեսակետը, որ Մանուկ Պետիկը ծնվել է 1643/1644 թ., 13 տարեկանում հեռացել Քիլիսից և ընդունվել Ուրբանյան վարժարան 1657 թ. (տե՛ս Kevorkian R., *Diplomatie et mouvement de liberation Armenien de la guerre de Candie au siege de Vienne (1683), Moyen Orient & Ocean Indien XVI^e-XIX^e s.*, 6, Paris, 1989, էջ 17):

(Collegium Urbanium): Նա Ուրբանյան դպրոց ընդունվելիս նշում է, որ տիրապետում է հայերեն, արաբերեն և թուրքերեն լեզուներին, իսկ դպրոցում ուսումնառություն ստանալուց 11 տարի անց նա նշում է, որ գիտի հայերեն ու իտալերեն և Մանուկից դառնում է Պետրոս¹⁹:

Իտալերեն լեզվի դասեր առած և փիլիսոփայության մեջ հմուտ աշակերտին ահա այսպես է բնութագրել նրա ուսուցիչ, կրոնավոր Իվան Պաշտրիչը. «Այս մեծ ոգով երիտասարդը նվիրված է իր ուսմանը, բարեպաշտ է, սակայն ցանկասեր է և սնափառ, շատ մեծ կարծիք ունի իր մասին»²⁰:

Շուտով, ինչպես նշվեց, Պետիկն առաջարկ է ստանում գալ հայրենիք: Նրանք՝ Մատթեոս Հովհաննիսեցու հետ Նախիջևան են հասնում 1671 թ. հոկտեմբերին՝ նախապես կանգ առնելով Կ. Պոլսում և հանդիպում ունենալով Պոլսո հայոց պատրիարք Սարգիս Թեքիրդաղցու (1664–1665, 1667–1670) հետ, որը ցանկանում էր Հռոմ գնալ «իր ժողովրդի ազատագրման հարցը քննարկելու համար»²¹:

Պետիկի միսիոներական գործունեությունն ինքնին կրկնում էր գրեթե արդեն մեկ դար գոյություն ունեցող ծրագիրը, որի բաղկացուցիչ մասն էր հանդիսանում խոջայական դասին իրենց կողմը գրավելը և նրանց հնարավորություններն ի նպաստ իրենց հովանավորող պետության օգտագործելը: Ուստի նա երկխոսության մեջ է մտնում առանձնահատուկ ուշադրության արժանացած նորջուլայեցիների հետ՝ սերտ կապեր հաստատելով նաև Նոր Զուլայի քալանթար Աղա Փիրիի հետ, որը նրան 1671

¹⁹ Տե՛ս A Man of Two Worlds, p. XXI.

²⁰ Տե՛ս նույն տեղում, էջ XXI:

²¹ Տե՛ս Kevorkian R., նշվ. աշխ., էջ 18:

թ. հրավիրում է Ջուլա և հյուրընկալում իր տանը²²: Արդյո՞ք Նոր Ջուլայի քալանթարն ինքն էր Պետիկին հրավիրել, թե քալանթարի արտոնություններից և կարողությունից «արբած» մեր հեղինակն էր, ճիզվիտին հատուկ խորամանկությամբ, այցելել նրա տուն, չենք կարող ասել: Պետիկը քննարկումներ է ունենում նրա և մյուս երևելիների հետ՝ կրկին ասպարեզ բերելով Հռոմի հետ միավորման ծրագիրը: «Հայերը, ովքեր ներառված էին այս ծրագրում,– նշվում է գրքի առաջաբանում,– անհագստացած էին, որ շահը չի ընդունի միությունը, բայց եթե Եվրոպան ստանձնի նրանց հովանավորությունը և, եթե Ֆրանսիան դեսպան ուղարկի, դա կարող է իրագործվել»²³: Ըստ նույն աղբյուրի՝ Պետիկը համոզում է ազնվականներին, այդ թվում Աղա Փիրիին, նամակ գրել Լուի XIV-ին՝ խնդրելով ստանձնել հայերի հովանավորությունը²⁴: Այն, որ Նոր Ջուլայի երևելիները նամակ են ուղարկել Լուի XIV-ին, նշում է նաև Պետիկը: Սակայն, բոլորովին այլ բովանդակությամբ: Պետիկը նշում է, որ «հերետիկոսները» թագավորին զագրելի բաներ էին ասել պարսկական (Հայոց) եկեղեցու մասին և թագավորն իր դեսպանի միջոցով ցանկացել էր պարզաբանումներ ստանալ կաթողիկոս Հակոբ Ջուլայեցուց: «Փոպաջան կաթողիկոսը,– գրում է Պետիկը,– առաջին իսկ առիթով ինձ ուղարկեց հայ եպիսկոպոսների և մեծամեծերի նամակը, ովքեր ապրում էին Պարսկաստանում»: Այնուհետև ավելացնում է, որ ինքը հանդիպել է Նոր Ջուլայի Դավիթ արքեպիսկոպոսի, այլ եպիսկոպոսների, այնուհետև շրջանի ազնվականների հետ և կարդացել զրպարտող նամակը: Այնուհետև շատ տրամաբանական և գրագետ նամակ գրել ստախոսների դեմ՝ ի

²² Տե՛ս A Man of Two Worlds, p. XXIII:

²³ Նույն տեղում, էջ XXIV:

²⁴ Տե՛ս նույն տեղում, էջ XXI:

չիք դարձնելով նրանց գրապարտությունները²⁵:

Վերոհիշյալ նամակի ճշմարտացիությունը ապացուցում է նաև Մաշտոցյան Մատենադարանում պահպանված մի վավերագիր, որը լուսաբանել է ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը: Ըստ դրա՝ նորջուղայեցիները հետ են մղում «չարափառության մեղադրանքը և շարադրում իրենց դավանանքը»²⁶: Գրությունը ստորագրել են Դավիթ, Իսահակ և Ստեփանոս արքեպիսկոպոսները: Վավերագրի մյուս երեսի վրա Նոր Զուղայի քալանթար Աղա Փիրին և մյուս երևելիները գրում են «խնդրեմք հրամանաց մեծութենին մեզ չհամարել որպես զուր ամբաստանյալ ենք»²⁷:

Այստեղ որևէ խոսք չի գնում Նոր Զուղայի երևելիների կաթոլիկ դավանանք ընդունելու մասին, ինչպես նշում են ֆրանսիացի պատմաբան Ջարլզ Անթելմիին հղում կատարած թարգմանիչները: Սակայն հնարավոր էր, որ դրա իսկության պարագայում Պետիկը շրջանցեր այն, քանզի այն ևս մեկ անգամ հնարավորություն կտար նրան բարձրացնելու իր անձը, ով կարողացել էր իրականություն դարձնել այն, ինչը չէր հաջողվել իր նախորդներին:

Ենթադրելի է, որ կաթոլիկ հայրերը, իրենց գործելակերպի համաձայն, չափազանցված տեղեկություններ են փոխանցել, կամ էլ՝ Պետիկն է դիտավորություն պարունակող մտայնությամբ թաքցրել դա՝ հետապնդելով ինչ-ինչ նպատակներ, քանի որ դրան հաջորդող առանցքային իրադարձությունը՝ Աղա Փիրիի մահմեդականացումը, որը նախաձեռնվեց շահ Սուլեյմանի կողմից՝ Նոր Զուղայի քալանթարի հավատարմությունն ապացուցելու

²⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 398-399:

²⁶ Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 2, Երևան, 1959, էջ 191:

²⁷ Նույն տեղում, էջ 192:

համար,²⁸ ամենևին չէր բխում Հռոմեական եկեղեցու շահերից:

Պետիկը, հիշատակելով աղա Փիրիի մասին, գրում է. «Ներկայիս քալանթարը ականավոր մարդ է և հարգված հայերի և պարսիկների կողմից: Նա շատ հարուստ է և հավասար պարսիկ սատրապի: Նա շատ օրինակելի կյանք է վարում և զարմանալիորեն կրթված է գրականության մեջ՝ հայկական, պարսկական, արաբական և հնդկական: Նա նաև շատ մոտ է Հռոմեական կաթոլիկ հավատքին և նրա ու Ջուղայի կողմից մենք համակրանքի ենք արժանացել մարդկայնորեն և նա մերձավոր է մեզ հետ: Ապա շարունակելով նշում է,– նա կուրացավ չար ոգուց, երբ հրաժարվեց իր քրիստոնեական հավատքից թագավորի պահանջով... նա գերադասեց իր երկրային կյանքը հավիտենական կյանքից... Աղա Փիրին խաբվեց այս կեղծ և սատանայական կրոնից այն աստիճան, որ այն բանից հետո, երբ նա նախաձեռնեց իր սեփական կործանումը, նույնիսկ այնքան հեռուն գնաց, որ փորձեց ստիպել ինձ չեղյալ համարել իմը (այսինքն՝ փորձեց ստիպել Պետիկին մահմեդականություն ընդունել-Զ.Ա.)»²⁹: Սակայն Պետիկը կապուչինյան միսիոներ Ռաֆայել դյու Մանի, անգլիացի գործակալների խորհրդով, որոնք գործում էին շահի արքունիքում Ապահանից անցավ Նախիջևան³⁰:

Պետիկն իր հոգևոր հայրերի կողմից հրահանգ էր ստացել հատուկ ուշադրության արժանացնել Ամենայն հայոց կաթողիկոսին և նա դա դարձնում է իր գործունեության առանցքային կողմը: Հայոց կաթողիկոսի հետ բանակցությունների ընթացքին է

²⁸ St' u Baghdiantz-MacCabe I., Princely Suburb, Armenian Quarter or Christian Ghetto? The Urban Setting of New Julfa in the Safavid Capital of Isfahan (1605-1722), "Open Edition Journals", 2005, September, էջ 433:

²⁹ A Man of Two Worlds, p. 348:

³⁰ Նույն տեղում:

նվիրած նրա գրքի XXVIII գլուխը՝ «Հայերը, նրանց ծեսերը և պատրիարքը» վերնագրով: Պետիկը մասնավորապես նշում է. «Նրանց (հայերի) մեջ կան այնպիսի մարդիկ, ովքեր ցանկանում են միավորվել Հռոմեական եկեղեցու հետ՝ հավատալով, որ իրենց ազատագրությունը իրագործվելու է շուտով: Եվ կան այնպիսիները, ովքեր մերժում են իրենց դարձը, առանց անհանգստանալու, որ երջանիկ հավիտենականությունը կախված է իրենցից: Նրանցից շատերը կրթված մարդիկ, աշխարհականներ և կրոնավորներ, գաղտնի մտածում են, թեև կարող են բաց խոսել բայց նրանք ուրախ են, որ իրենց մեղքի մեջ են և հեռու Քրիստոսի ծոցից: Նրանց թվում էր և Հայոց կաթողիկոս Հակոբը, որը համարվում էր մեծ բարեպաշտ և սուրբ իր ժողովրդի կողմից: Կարելի է կարծել, որ սա հենված է իրենց գրքերի և սուրբ առաքելական ավանդույթների վրա»³¹: «Ես,– մեջքերելով Կղեմես Գալանոսին, գրում է նա,– ամբողջ քրիստոնյա աշխարհում չեմ ճանաչում այլ մարդկանց, որոնք այնքան եռանդով պաշտեն Քրիստոսին, որքան հայերը»³²:

«Հայոց կաթողիկոս Հակոբը 80 տարեկան է,– գրում է Պետիկը,– սակայն 30 տարեկանի տոկոսություն ունի և, անխոս, շատ տարիներ ունի դեռ ապրելու»³³: Այնուհետև հավելում է, որ կաթողիկոսը թշնամաբար է տրամադրված մուսուլմանների նկատմամբ և հավատացած է, որ չի մահանա, մինչև չտեսնի մուսուլմանների դեմ տարած հաղթանակը՝ խաչի դրոշի տակ: Հենվելով իր մարդկային ուժի և կարողության վրա՝ նա միայն հույս ունի օժանդակ, այսինքն՝ պաշտոնական օգնություն ստանալ հռոմեացիներից՝ համաձայն իր նախորդի՝ Ներսեսի մարգա-

³¹ A Man of Two Worlds, p. 396:

³² Նույն տեղում, էջ 402:

³³ Նույն տեղում, էջ 396:

րեության³⁴:

Իսկ ո՞րն էր կաթողիկոսի մարդկային ուժն ու կարողությունը, որի վրա հենվելու էր՝ ակնկալելով միայն օժանդակ ուժեր Արևմուտքից: Այստեղ հարկ ենք համարում մեջբերել մի հատված Լեոյի աշխատությունից, որը նա քաղել է իտալացի միսիոների գրքից: Նրանում ասվում է. «Յակոբը՝ թշնամի մահմեդականաց՝ կըսեր, թե կը յուսայ տեսնել և յետոյ գոհ մեռնել՝ թուրքերու խրոխտանքը ջախջախված քաջ Պարսկահայերեն Հռոմեյացւոց ամենագոր բազկին հետ»³⁵: Իսկ ինքնին ապացուցված է, որ «քաջ պարսկահայեր» ասելով նկատի են առնվում հյուսիսարևելյան Հայաստանի իշխանները՝ մելիքները³⁶: Մելիքների առնչությամբ հետաքրքիր ակնարկ ունի նաև Պետիկը: «Այս թագավորությունում (Իրանում),- գրում է նա,- կան բազմաթիվ հայեր, որոնք պահում են իրենց ազնվականությունը և իշխանական գործառույթներ են իրականացնում»: Ապա ավելացնում է, որ նրանք հաջողության են սպասում իրենց քրիստոնյա հարևանների հետ գաղտնի հարաբերություններից՝ ընդդեմ մուսուլմանների³⁷:

Նախ հարկ ենք համարում նշել, որ թեև Պետիկը և՛ թուրքերի, և՛ իրանցիների մասին խոսելիս որպես բնութագրական ցուցիչ է օգտագործում նույն բառը՝ անհավատ, սակայն իր ամբողջական շարադրանքից պարզ է դառնում, որ նա ընդգծված հակակրանք է տաժում թուրքերի նկատմամբ: Նա համեմատության մեջ դնելով թուրքերին և իրանցիներին՝ վերջիններիս իրենց և քաղաքակրթությամբ, և բարոյական մղումով մի քանի

³⁴ Նույն տեղում:

³⁵ Լեո, նշվ. աշխ., էջ 336:

³⁶ Մելիքությունների մասին տե՛ս Մաղալյան Ա., Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII–XIX դարերում, Երևան, 2007:

³⁷ Տե՛ս A man of two worlds, էջ 381:

գլուխ բարձր է դասում թուրքերից: Հաշվի առնելով, որ Պետիկն Իրան էր եկել հատուկ առաքելությամբ՝ Իրանին հակաթուրքական դաշինքի մեջ ներգրավելու նպատակով, տրամաբանակն է, որ նա հայերին կուղղորդեր թոթափել թուրքական լուծը, առավել ևս, որ Եվրոպան նպատակ ուներ նաև հարկ եղած դեպքում օգտագործել հայերի և վրացիների ապստամբական ուժերը թուրքերի դեմ՝ «ներգրավելով հայ ազատագրական շարժումը միայն հակաթուրքական ճակատ կազմելու համատեքստում»³⁸:

Հայոց կաթողիկոս Հակոբ Զուղայեցու վերաբերյալ Պետիկը գրում է, որ կաթողիկոսը բարյացակամ վերաբերմունք է ունեցել Ալեքսանդր VII, Կլեմենտ IX պապերի, Պիրոմալիի նկատմամբ և նամակների միջոցով ցույց է տվել իր հարգանքը: Սակայն, թեև վերապատվելի Պիրոմալին և մյուս կրոնավորները փորձել են բոլոր տեսակի հնարքները, այնուամենայնիվ, նրանք որևէ հաջողություն չեն ունեցել իրենց ձեռնարկումներում և միայն «իմ համեստ անձը ութ տարվա ջանքերից հետո կարողացավ դիպչել նրա սրտին»³⁹: Կարծում ենք՝ դա մեծամասամբ պայմանավորված է այն հանգամանքով, որ Հակոբ Զուղայեցի կաթողիկոսն արդեն ավարտել էր իր բանակցությունները և «քաջ պարսկահայերի» և հարևան վրացիների հետ: Ստեղծելով բոլոր նպաստավոր պայմանները՝ ժամանակն էր օժանդակ ուժեր ստանալ Արևմուտքից, ինչին էլ հետևում է Պետիկի «ձեռքբերումը» Հայոց կաթողիկոսին «դարձի բերելու», այսինքն՝ կաթոլիկ դարձնելու ուղղությամբ:

«Հիմա ընթերցողը կհարցնի,– գրում է Պետիկը,– ինչու էինք ես և կաթողիկոսը երկուստեք ուրախ: Նրա դեպքում պատ-

³⁸ Տե՛ս Kevorkian, նշվ. աշխ., էջ 28:

³⁹ A Man of Two Worlds, p. 396.

ճառն իր իրավիճակն էր, իմ դեպքում՝ իմ աշխատանքը: Տարիների ընթացքում ես Աստծո շնորհքով կարողացա հաղթել և հաղթահարել սատանայի աղանդավորներին, մենք կարող եղանք որսալ նրանց»⁴⁰: Թե ինչ նկատի ունի իրավիճակ ասելով, հեղինակը չի պարզաբանում և ոչ էլ հպանցիկ ակնարկներ է անում, թե ինչն է կաթողիկոսին, որն իր խոսքով այդքան կառչած էր իր առաքելական գրքերին, «դրդել ընդունել կաթոլիկ հավատքը»:

1673 թ. Նախիջևան է ժամանում հաթոլիկ հայր Ֆրանցիսկ Պիսկոպը՝ որպես Նախիջևանի գավառի հայ կաթոլիկ համայնքի վերահսկիչ: Շուտով Պիսկոպին է վստահվում Հռոմի պապի և Եվրոպայի միապետերի նամակները շահ Սուլեյմանին ներկայացնելու առաքելությունը, որոնք տեղ էին հասցրել Ազարիա Ջահկեցի և Անտոն Ապրակունիսեցի միսիոներները: Պիսկոպը և վերոնշյալ կաթոլիկները 1675 թ. փետրվարին Նախիջևանից անցնում են Թավրիզ, այնուհետև ժամանում մայրաքաղաք Ղազվին:

Վեց ամիս Ղազվինում մնալուց և շահի կողմից ընդունելության արժանանալուց հետո նա 1675 թ. սեպտեմբերին ստանձնում է շահի բանագնացի պարտականությունները՝ շահ Սուլեյմանի՝ Կոնստանդնուպոլսի և Լոնդոնի II կայսերն ուղղված նամակները տեղ հասցնելու գործը: Նա հոկտեմբերին ժամանում է Նախիջևան և հանդիպում Պետրոս Պետիկին: Այնուհետև նրանք գալիս են Երևան և կաթողիկոսական աթոռում Հակոբ Ջուղայեցու հետ Զատիկի տոները նշելուց հետո, ըստ Պետիկի, ուղևորվում են Եվրոպա⁴¹: 1676 թ. մայիսի 2-ին Պիսկոպն ու

⁴⁰ Նույն տեղում, էջ 398:

⁴¹ Նույն տեղում, էջ 499:

Պետիկն անցնում են Շամախի, իսկ 1677 թ. հունվարին Պիսկոպը որպես շահի պատվիրակ, իսկ Պետիկը՝ նրա օգնական արդեն Մոսկվայում էին⁴²: Մոսկովյան բանակցությունների մասին Պետիկը ոչինչ չի գրում, միայն իր դժգոհությունն է հայտնում մոսկովյան ցրտերի համար և գոհունակություն հայտնում, որ արագ ուղևորվեցին Լեհաստան⁴³: Իսկ Ա. Ֆոկոլյանի թարգմանած հունգարերեն աղբյուրը նշում է, որ շահի բանագնացները ջերմ ընդունելության են արժանացել ռուսական կողմից⁴⁴, սակայն բանակցային ընթացակարգի մասին աղբյուրը լռում է:

1677 թ. հունիսի 17-ին նրանք Վարշավայում էին, որտեղ ռազմական և կրոնական բնույթի քննարկումներ են ունենում Յան Սորեսկու հետ⁴⁵:

Վիեննայում Պետիկն իրեն ներկայացնում է որպես Հայոց եկեղեցու բանագնաց, ով փաստաթղթեր է բերել հայոց կաթողիկոսից: Ավելի վաղ հեղինակը գրում է, որ Լեոպոլդ կայսերն ուղղված նամակում կաթողիկոսը իր (Պետիկի) մասին գրում է, որ վերջինս շատ լավ ծանոթ է իրենց խնդիրներին և կբացի իրենց բոլոր գաղտնիքները: Այնուհետև հավելում է, որ նա վստահելի է և լիովին տեղյակ իր մտադրությունների մասին⁴⁶:

Նույն հունգարերեն աշխատությունից տեղեկանում ենք, որ Պետիկը Լեոպոլդ կայսերն ուղղված նամակը ներկայացրել է առաջին ունկնդրության ժամանակ⁴⁷: Այդ մասին Պետիկը գրում է. «Հետո մենք ներկայացրեցինք Հակոբ կաթողիկոսի նամակը և այն, որ մենք առնչվում ենք այս շրջանների քրիստոնյաների

⁴² Նույն տեղում, էջ 500:

⁴³ Նույն տեղում:

⁴⁴ Ապետիք կոմսին զարմանալի կեանքը, «Բազմավեպ», 1953, № 11-12, էջ 227:

⁴⁵ A Man of Two Worlds, p. XXV.

⁴⁶ Նույն տեղում, էջ 398:

⁴⁷ Ապետիք կոմսին զարմանալի կեանքը, «Բազմավեպ», 1954, № 3-4, էջ 61:

գործերին և իրավիճակի հետ, որոնք իրենց դժբախտությունների մեջ դեռ հարգում են Վատիկանին և Ավստրիայի սուրբ տանը՝ որպես ապաստան»⁴⁸։ Բայց թե վերջիվերջո ինչ ձեռքբերումներ են եղել այդ բանակցություններից, Պետիկը ոչինչ չի նշում։ Հունգարերեն աղբյուրը այս առիթով ևս լռում է և հավելում, որ երկրորդ ունկնդրության ժամանակ այս հարցին անդրադարձ չի կատարվել, իսկ օրակարգում այլ խնդիրներ են են եղել, ինչպես, օրինակ Պետիկի՝ զինվորական ծառայության անցնելու սեպտեմբերի 2-ին ուղղված խնդրագիրը բավարարելը և նրան 600 ֆլորին ռոճիկ նշանակելը⁴⁹։

Մինչ այդ նա՝ Արևելքի մասին իր բազմակողմանի գիտելիքների շնորհիվ լավ ընդունելության է արժանանում։ Այստեղ նրանք քննարկումներ են ունենում Թուրքիայի վրա հարձակման մասին։ Ինչպես նշվեց, Պետիկը Լեոպոլդ I-ին խնդրում է իրեն ներառել Ավստրիական բանակ։ «Մարդ կարող է պատիվ գտնել երկու ճանապարհով. գրականությամբ կամ բանակի միջոցով»⁵⁰։ Սակայն, իր խոսքով, հեղինակը չկարողանալով տիրոջն ապացուցել իր նվիրվածությունը բանակում ծառայելու առնչությամբ, գերադասում է իր համեստ ծառայությունը մատուցել նորին մեծությանը ներկայացնելով իր գրվածքները⁵¹։

Իսկ, թե բարոյական պահանջմունքներին հագուրդ տալուց բացի, ուրիշ ինչ այլ հեռուն գնացող նպատակներ էին նպաստել նրա՝ ավստրիական բանակում ծառայության անցնելու համար, դժվար է ասել, թեև Պետիկին ասպետի կոչում շնորհելու շարժառիթը նշանավոր պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը համարում

⁴⁸ St' u A Man of Two Worlds, էջ 501։

⁴⁹ Ապետիք կոմսին զարմանալի կյանքը, «Բազմավեպ», 1954, № 3-4, էջ 61։

⁵⁰ St' u A Man of Two Worlds, էջ 531։

⁵¹ Նույն տեղում։

է կաթողիկոսների կողմից կանխամտածված քայլ՝ նրան «որպես ապագա հայկական գահին արժանի թեկնածու ունենալու համար»⁵²:

Պետիկը 1678 թ. հունվարին թույլտվություն է ստանում մեկնել Հռոմ, իսկ Պիսկոպը Հռոմ էր գնացել ավելի վաղ՝ շահի նամակը Պապին հասցնելու, սակայն մահացել էր՝ առանց Պապի հետ հանդիպման: Հռոմում Պետիկի գործունեության առանցքային կողմն էր Հայոց կաթողիկոսի ժամանման շուրջ տարվող աշխատանքները⁵³: Պետրոս Պետիկին նվիրված հունգարերեն աշխատության թարգմանությունից պարզ է դառնում, որ Պետիկը Հռոմից վերադարձել է 1680 թ. մայիսի 15-ին՝ իր հետ բերելով կարևոր փաստաթղթեր⁵⁴:

1678 թ. վերջին Հակոբ կաթողիկոսը որոշում է գնալ Հռոմ՝ «Հռոմի հետ միավորման» պլանը կյանքի կոչելու և ղեկավարում դեպի Եվրոպա պատվիրակությունը Հայաստանն ազատագրելու համար: Արդյո՞ք Պետիկը տեղյակ էր կաթողիկոսի՝ Կ. Պոլսում գտնվելու մասին և նրանք նամակագրական կապի մեջ էին, մենք սա հաստատող որևէ փաստ չունենք:

Հակոբ Զուղայեցին մահանում է Կ. Պոլսում 1680 թ. օգոստոսի 1-ին⁵⁵, և նրա մահով փակվում է Հռոմեական եկեղեցու հետ ունեցած բանակցությունների այս էջը՝ Հայաստանը ազատագրելու առնչությամբ:

Պետրոս Պետիկն իր կյանքի վերջին տարիներն անցկացնում է անընդհատ դեգերումների մեջ: Հակաթուրքական ճա-

⁵² Հովհաննիսյան Ա., նշվ. աշխ., էջ 201:

⁵³ Տե՛ս Kevorkian, նշվ. աշխ., էջ 29:

⁵⁴ Ապետքի կոմսին զարմանալի կեանքը, «Բազմավեպ», 1954, № 3-4, էջ 63:

⁵⁵ Ութուջյան Ա., Ամենայն հայոց կաթողիկոս Հակոբ Դ. Զուղայեցու մահվան օրվա առեղծվածի շուրջ, «Էջմիածին», 2013, № Ը, էջ 89:

կատ կազմելու պատրաստությունները նրան ուղղորդում են եվրոպական տարբեր երկրներ: Վիեննայի պաշարումից հետո նրան դարձյալ ուղարկում են Իրան, իսկ 1684 թ. ձմռանը Մոսկվա գնալու ճանապարհին անհետանում է լեհ-ռուսական սահմանի մոտ⁵⁶: Սակայն, ըստ ֆրանսիացի արևելագետ Ֆրանսիս Ռիչարդի, Պետիկն իր խռովահույզ կյանքն ավարտել է 1686 թ. Հունգարիայում՝ հիվանդանալով ռազմական գործողությունների ընթացքում⁵⁷:

Այսպիսով, ամփոփելով կարող ենք ասել, որ XVII դարում եվրոպական պետությունների ուշադրության կենտրոնում հայտնված Սեֆյան Իրանը դարձավ նպաստավոր միջավայր կաթոլիկ քարոզիչների գործունեության համար: Հայերի շրջանում իրականացրած քարոզչության արդյունքում՝ իրենց ցանկացած շոշափելի հաջողությունները չգրանցած կաթոլիկները միտումնավոր առաջ քաշեցին քրիստոնյա Արևմուտքի օգնությամբ թուրքական լծից ազատագրվելու հայերի՝ ազատագրության հին, բայց չմոռացվող լեգենդը: Հայոց կաթողիկոսին «դարձի բերելու» միջոցով հայերին կաթոլիկացնելու նպատակով Հայաստան եկած հայ կաթոլիկ Պետրոս Պետիկը՝ Հռոմում կրթված եւ դաստիարակված ճիզվիտը, ստանձնեց հայոց կաթողիկոսի «սրտին դիպչելու» առաքելությունը:

Իրանին նվիրված իր սովարածավալ աշխատության մեջ Պետրոս Պետիկը կարևոր մանրամասներ է ներկայացնում հայոց կաթողիկոս Հակոբ Զուղայեցու հետ ունեցած բանակցությունների մասին և թեև մի փոքր կողմնակալ կերպով, սակայն այնուհանդերձ կարևոր մանրամասներ է հայտնում հայ ազատագ-

⁵⁶ Ապետքիկ կոմսին զարմանալի կեանքը, «Բազմավեպ», 1955, № 11-12, էջ 228:

⁵⁷ A Man of Two Worlds, p. XXXII.

րական շարժման նախահիմքերի ձևավորման մասին և հնարավորություն ընձեռում նորովի վերաբժնորել Հակոբ Զուղայեցի կաթողիկոսի դերը՝ որպես ազատագրական շարժման առաջամարտիկի և հայ ժողովրդի ճակատագրով մտահոգ հոգևոր հոր:

Zina Avetisyan, *Institute of History of the NAS RA, PhD student,*
The issue of Armenia's liberation according to Pedros Bedik's book
“Cehil Sutun”

The prospect of forming anti-Turkish alliance forced Shah Abas to open the doors of his country to catholic missionaries. The Armenian environment could become fertile ground for their activities. The catholic church which had not been achieving any significant result for about 5 years, sent Jesuits to the East. Jesuits were the most intolerant and active group of Catholics. One of the Jesuit missionaries was Armenian-born Pedros Bedik, who had graduated from Urban Collage. Soon he arrived to Persia as an assistant of Matheos Hovhanisets who had brought letters for Shah Suleiman from Pope and European emperors. Bedik, about his journey to Iran, wrote an important Latin book entitled “Cehil Sutun”.

The far-reaching idea of liberation of Armenia brought Bedik and Hakob Jughayetsi closer. After long-time negotiations they reached a common agreement and soon Bedik and Piskop, who was an envoy of Shah, took the letters of Catholicos addressed to emperor Leopold I and Pope. Bedik, as a delegate of Armenian Patriarch, presented the situation of Armenia and had a discussion with the Catholic leaders. In his work Bedik presented the vision of Catholicos for the liberation of Armenia and helped to draw conclusions about the approaches and existing intentions to gain independence. It gives an opportunity to value Hakob Jughayetsi anew as a forerunner of the liberation movement and Patriarch concerned with the fate of his nation.

**ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁԻ
ՀԱՐՑԸ (1898–1908 թթ.)**

1890-ական թթ. Արդուլ Համիդ II-ի կազմակերպած զանգվածային կոտորածներից փրկված արևմտահայերի մի մասը հարկադրաբար գաղթեց և սփռվեց աշխարհով մեկ: Միայն 50.000 գաղթական պատսպարվեց Արևելյան Հայաստանում¹: Վերջիններս գոյատևեցին տարբեր հանգանակությունների շնորհիվ: Չնայած կազմակերպված օգնությանը՝ արևմտահայ գաղթականների սոցիալական դրության շարունակում էր մնալ ծանր, և հարկ էր քայլեր ձեռնարկել գաղթականներին իրենց ծննդավայր վերադարձնելու համար: Հայ ժողովրդի թվաքանակի աղետալի նվազումը նաև խիստ բացասական ազդեցություն էր ունենում Արևմտյան Հայաստանի ժողովրդագրության վրա, որը հենց Արդուլ-Համիդ II սուլթանի որդեգրած քաղաքականության կարևոր բաղկացուցիչն էր: Այդ իսկ պատճառով էլ հայաթափված հարյուրավոր բնակավայրեր բնակեցվեցին մահմեդական ցեղերով: Նրանք «մուհաջիրներ» (գաղթականներ) անվան տակ հաստատվում էին Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում²:

Փախստականների հոսքը Կովկասի կառավարչապետութ-

¹ Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը, հ. 3 (1901-1918), Վենետիկ, 1926, էջ 11, «Դրօշակ», 1902, № 3, էջ 42:

² Տե՛ս Հայոց պատմություն, հ. III, Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես-1918 թ.), Գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես-XIX դարի վերջ), Երևան, 2010, էջ 544:

յուն համընկալ Գր. Գոլիցինի կառավարչապետության ժամանակաշրջանին (1896-1904 թթ.): Գր. Գոլիցինը երկրամասում ստեղծեց այնպիսի կառավարման համակարգ, որով ցույց տվեց, թե ինչպես չպետք է կառավարել Կովկասը³:

Գաղթականների վերադարձի գործընթացը պայմանականորեն կարելի է բաժանել երկու շրջանի. առաջինը՝ 1898 թ., երբ ցարական կառավարությունը փորձեց օգտագործել գաղթականների համար կարևորագույն հարցը, սուլթանից զիջումներ կորզելու նպատակով: Կ. Պոլսի դեսպան Ի. Ա. Զինովկը 1898 թ. պահանջեց Աբդուլ Համիդից հետ ընդունել Արևելյան Հայաստանում ապաստանած հայ գաղթականներին: Օսմանյան կառավարության խնդրանքով Ցարական Ռուսաստանը պետք է գաղթականների մոտավոր թվաքանակ ներկայացներ, որոնց թիվը հասնում է շուրջ 30000-ի⁴: Սուլթանը սկզբում երկմտում է՝ պատճառաբանելով, որ հայերի հողերն արդեն բնակեցված են քրդերով ու մուհաջիրներով և նրանց տեղաշարժը կարող է բերել նոր արյունահեղության: Նույնիսկ սուլթանն առաջարկում է գաղթականներին փոխադրել Կրետե՝ այստեղից գաղթող մահմեդականների փոխարեն⁵: Մերժում ստանալով՝ սուլթանը 1899 թ. մայիսի 20-ին առերես թույլատրում է հայերի վերադարձը իրենց հայրենիք⁶: Համաձայն Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան Ի. Ա. Զինովկի և Բ. Դռան միջև ձեռք բերված համաձայնության՝ հայերը պետք է վերադառնային և հաստատվեին իրենց նախկին բնակավայրերում⁷:

³ Ст'я Ибрагимова З. Х., Мир чеченцев. XIX век, Москва, 2000, էջ 150, 151:

⁴ Ст'я Արասխանեանց Ա., Զանազան լուրեր, «Մուրճ», 1899, № 6, էջ 720-721:

⁵ Ст'я նույն տեղում:

⁶ Ст'я Գաղթականների վերադարձը, «Նոր Դար», 1899, № 90, էջ 1:

⁷ Ст'я նույն տեղում:

Հայրենիք վերադառնալու լուրը գաղթականության մեջ ընդունվեց տարաբնույթ կերպ: Շատերն այլևս չէին կամենում վերադառնալ իրենց ավերված բնակավայրերը, քանզի ոչ մի երաշխիք չկար, որ կոտորածները չեն կրկնվելու: Այնուամենայնիվ, չնայած վերոնշյալ հանգամանքներին, շատերը կամեցան վերահաստատվել ծննդավայրերում: «Մշակ» թերթը գրում է. «Գաղթականների հոսանքը դեպի Թուրքաց Հայաստան սկսվել էր բավականին մեծ չափով»⁸: Նրանք դիմում են ցարական իշխանություններին խնդրելով անցագիր և նպաստ՝ հայրենիք վերադառնալու համար⁹:

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերության մի շարք մասնաճյուղերում ճանապարհաձախս է հատկացվում: Երևանի մասնաճյուղը 137 ռուբլի ճանապարհաձախս է հատկացրել հայրենիք վերադարձող 40 ընտանիքի՝ 131 հոգու համար¹⁰:

Ընկերության Բաթումի մասնաճյուղը ԿՀԲԸ խորհրդի տեղեկացնում է, որ վերոհիշյալ համաձայնությունից հետո գաղթականների հոսքն ավելացել է դեպի հայրենիք: Այս ամենն ի նկատի ունենալով՝ վարչությունն արդեն բանակցել է մի քանի շոգենավային ընկերությունների հետ և համաձայնություն ձեռք բերել մատչելի իրականացնել գաղթականների տեղափոխումը¹¹: 1898 թ. հունիսին Բաթումից ԿՀԲԸ խորհրդից գումար են խնդրում գաղթականների ճանապարհաձախսի համար և հաղորդում, որ արդեն մոտ 40 անձ շոգենավով վերադարձել է հայրենիք¹²:

Օսմանյան կառավարությունը, սակայն, արհեստական

⁸ Ա-Դօ, Նամակ Երեւանից, «Մշակ», 1898, № 88, էջ 3:

⁹ Նույն տեղում:

¹⁰ ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 364, թ. 28-28 շրջ.:

¹¹ ՀԱԱ, ֆ. 28, ց. 1, գ. 922, թ. 6:

¹² Նույն տեղում թ. 7:

դժվարություններ է ստեղծում գաղթականների համար՝ պատճառաբանելով, որ հայերի վերադարձի թույլտվությամբ նա նկատի է ունեցել անհատ 10 հազար հոգի և ոչ թե 10 հազար ընտանիք: Կ.Պոլսի դեսպանը ոչ միայն պահանջում է հայերի վերադարձը, այլև պնդում է, որ նրանք հարկ է ապրեն իրենց նախկին բնակավայրերում: Տեսնելով, որ ցարը անդորդվելի է, սուլթանն անգամ առաջարկում է 100 հազար լիրա՝ պայմանով, որ հայերը մնան Կովկասում կամ արտաքսվեն Սիբիր¹³: Բանակցությունների ընթացքում սուլթանն առաջարկում է անգամ մինչև 160.000 լիրա: Նիկոլայ II-ը այս պայմանին ևս չհամաձայնելով՝ ստիպում է, որ սուլթանը 1900 թ. ապրիլի 2-ին կնքի համաձայնագիր, ըստ որի Արևմտյան Հայաստանի և Սև ծովի հարավային ափերի երկաթգծի կոնցեսիաներն անցում էին Ռուսաստանին և Աբդուլ Համիդը շարունակում էր վճարել 1877-1878 թթ. պատերազմի չմարած ծախսերը: Նիկոլայ II-ն իր հերթին պարտավորվեց այլևս սուլթանին չներկայացնել հայ գաղթականների վերադարձի հարցը¹⁴, վերջինս մոռացվեց, սակայն առժամանակ:

1901 թ. վերջին սկսվեց գաղթականների վերադարձի երկրորդ փուլը: Կովկասի կառավարչապետ Գր. Գոլիցինը, որը, ինչպես նշվեց, հայտնի էր իր հայատյաց հատուկ վերաբերմունքով¹⁵ հրաման արձակեց, ըստ որի այն գաղթականները, որոնք Անդրկովկաս էին եկել 1893 թ. սկսած, կա՛մ պետք է հեռանան կամ ընդունեն ռուսահպատակություն¹⁶: Հրամանում նշվում էր, որ այն գաղթականները, որոնք ցանկություն կհայտնեն վերա-

¹³ Արասխանեանց Ա., Չանազան լուրեր, «Մուրճ», 1899, № 6, էջ 720-721:

¹⁴ Տե՛ս Համբարյան Ա., Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898-1908 թթ.), Երևան, 1999, էջ 17:

¹⁵ <https://regnum.ru/news/polit/3269125.html>

¹⁶ Անանուն Դ., Ռուսահայերի հասարակական զարգացումը, հատոր 3 (1901-1918), էջ 12:

դառնալ, կստանան աջակցություն¹⁷, իսկ այն գաղթականները, որոնք չեն ցանկանա հեռանալ և կընդունեն Ցարական Ռուսաստանի հպատակությունը պարտավոր են.

- 1902 թ. զինվորագրվել կայսրության մնացած ազգությունների նման,
- Քաղաքից դուրս անշարժ գույք ձեռք բերելու իրավունք նրանք կունենան ռուսահպատակ դառնալուց 20 տարի անց,
- Վեր նշված կանոնները վերաբերվում են այն փախստականներին, որոնք սահմանը հատել են մինչև 1901 թ. փետրվարի 1-ը, իսկ ավելի ուշ եկածները կարտաքսվեն¹⁸:

Գաղթականները հայտնվեցին անելանելի վիճակում. ընդունել ռուսահպատակություն՝ նշանակում է առհավետ հրաժարվել վերադարձի գաղափարից, իսկ վերադարձը դեռևս անհնարին էր:

Ուշագրավ է, որ արևմտահայ գաղթականները Կովկասի կառավարչապետությունում զբաղվում էին ամենատարբեր գործերով՝ բանվորությամբ, բեռնակրությամբ, վաճառականությամբ, հովվությամբ, երկրագործությամբ՝ միայն թե կարողանային գումար վաստակել¹⁹ և գոհանում էին այն չնչինով, որ ունեին այդ պահին և փորձում հստակեցնել իրենց հետագա քայլերը²⁰:

Վերոհիշյալ հրամանն անակնկալ էր բոլոր գաղթականների համար և արդյունքում նրանք պայմանականորեն բաժանվեցին երկու խմբի՝ «վերադառնալ ցանկացողը «գյուղն է, հողագոր-

¹⁷ Հայ գաղթականների խնդիրը, «Դրօշակ», 1902, թիվ 11, էջ 162:

¹⁸ Լազեան Գ., Հայաստանը և Հայ Դատը հայ և ռուս յարաբերություններու լույսին տակ, Գահիրե, 1957, էջ 115-116:

¹⁹ Արամեան Հ., Տաճկահայ գաղթականները, «Ապագայ», 1907, № 9, էջ 3:

²⁰ Աղասեան Վ., Դէպի հուր եւ սուր, «Հնչակ», 1902, թիւ 5, էջ 37:

ծը», իսկ վաճառականն արդեն գտել է իր տաք տեղը հայրենիքից դուրս»²¹: Ըստ Թիֆլիսի ոստիկանապետի կազմած ցուցակի՝ 494 փախստականից ռուսահպատակություն ընդունեցին 361 հոգի, իսկ Բաքվի ոստիկանապետի կազմած ցուցակի՝ 72 ընտանիքից՝ 52-ը, ընդունեցին ռուսահպատակություն²²: Ստեղծված իրավիճակով պայմանավորված՝ գաղթականները սկսեցին ինչ որ ելքեր որոնել ևս մի քանի տարի Կովկասի կառավարչապետությունում մնալու համար: Փախստականները սկսեցին դիմել նահանգապետերին՝ թույլատրել որոշ ժամանակ ևս ապաստանել Կովկասի կառավարչապետությունում: Չստանալով որևէ պատասխան, գաղթականները մտածեցին հարցը լուծված է, սակայն 1902 թ. օգոստոսի 5-ին ծանուցվեց Թիֆլիսի կառավարչապետի հրամանը՝ այն գաղթականները, ովքեր մինչև օգոստոսի 10-ը կմնան երկրում, կհամարվեն ռուսահպատակ: Այս իրավիճակից դուրս գալու համար գաղթականները հաջորդ օրը՝ օգոստոսի 6-ին, ժողով են հրավիրում և որոշում մեծամասնությամբ շարժվել սահման և ճնշում գործադրել օսմանյան կառավարության վրա, որ կարողանան վերադառնալ ծննդավայր²³:

1902 թ. օգոստոսի 11-ին շուրջ 800 մարդ գնացքով մեկնում է Կարս, որտեղ ռուս սահմանապահները այդպես էլ թույլ չեն տալիս նրանց հատել սահմանը ²⁴: Չնայած արգելքին՝ արևմտահայերի հոսքը Կարս շարունակվում էր և արդեն օգոստոսի 24-ին նրանց թիվը հասավ շուրջ 1000-ի²⁵:

Գաղթականների թվաքանակի աճը, սակայն, որևէ ազդե-

²¹ Խառն լուրեր, «Մշակ», 1902, № 181, էջ 3:

²² Նեքրին լուրեր, «Մշակ», 1902, № 222, էջ 3:

²³ Հայ գաղթականների խնդիրը, «Դրօշակ», 1902, թիվ 11, էջ 163:

²⁴ Մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 163-165:

²⁵ Համբարյան Ա., նշվ. աշխ., էջ 18:

ցություն չի ունենում իշխանությունների վրա: Նրանց արգելում են հատել սահմանը և անգամ սպառնում են զենք կիրառել: Ստեղծված իրավիճակը փախստականներին հարկադրում է 1902 թ. սեպտեմբերի 23-ին օգնության խնդրանքով դիմել Ռուսաստանի, Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարներին: Միաժամանակ դիմում են նաև Ամենայն հայոց կաթողիկոսին և Կ. Պոլսի հայոց պատրիարքին: Նրանք առաջարկում են գաղթականներին փոքր խմբեր կազմել և Պարսկաստանի վրայով գաղտնի անցնել Հայրենիք: Ընդունելով այս տարբերակը՝ գաղթականների առաջին 120 հոգանոց խումբը շարժվում է դեպի Էջմիածին, բայց ձերբակալվում ոստիկանության կողմից և բանտարկվում Կաղզվանի բանտում²⁶:

Կովկասի կառավարչապետ Գր. Գոլիցինը, տեղեկանալով Մեծ Բրիտանիային և Ֆրանսիային ուղղված նամակների մասին 1903 թ. դիմում է ՆԳ նախարար Պ. Դուռնավոյին հետևյալ առաջարկություններով.

- արտաքսել արտասահման բոլոր այն հայերին, որոնք հաստատվել են Ռուսաստանում 1901 թ. փետրվարից հետո,
- փակել Ռուսաստանի սահմանները արևմտահայերի առաջ, անգամ եթե անցագիր ունեն,
- տեղափոխել (կամ ավելի ճիշտ կլինի ասել աքսորել) կայսրության ներքին նահանգներ, կայսրությունում հաստատված բոլոր գաղթականներին:

Կառավարչապետի այդ առաջարկները քննարկվեցին Պետերբուրգում 1904 թ. Նախարարների խորհուրդում և ընդունվեց որոշում.

- ընդառաջել այն հայերին, որոնք հաստատվել են Անդր-

²⁶ Նույն տեղում, էջ 19:

կովկասում 1893 թ. հետո և ցանկանում են մեկնել արտասահման,

- ընդառաջել այն հայերին ովքեր ուզում են տեղափոխվել կայսրության ներքին սահման գավառները,
- թույլատրել մյուսներին ապրել Կովկասում՝ բացառությամբ Երևանի նահանգից և Կարսի մարզից, այսինքն՝ Արևելյան Հայաստանից, գտնելով, որ կլինի հայերի համախմբում, որն էլ կառաջացնի անհանգստություն կառավարության համար,
- Կովկասում հաստատված հայերին հողաբաժին հատկացնել 20 տարի հետո²⁷:

Այս որոշումները թեև ավելի մեղմ էին, քան Գոլիցինի կողմից արված առաջարկությունները, բայց բնավ դուրս չէին գալիս ցարիզմին բնորոշ քաղաքականության շրջանակներից:

Փաստորեն, ի սկզբանե այս հրամանն իր մեջ պարունակում էր մի քանի նպատակ, որոնցից առանցքայինը արևմտահայ գաղթականներին Ռուսաստանի խորքերն ուղարկելն էր: Այդ հրամանը հիմնավորվում էր նրանով, որ արևմտահայերը ունենալով հայկական թագավորության վերականգնման տենչ, կարող են «վարակիչ» լինել նաև կովկասյան մուսս ժողովուրդների համար և լուրջ խնդիրներ ստեղծել²⁸: Իրականում արևմտահայերին ռուսահպատակություն պարտադրելով իրականանում էր նաև սուլթանի գլխավոր նպատակը՝ Արևմտյան Հայաստանի հայաթափումը և զուգահեռ տարվում էր ռուսական կայսրությունում հայերի ծուլման քաղաքականություն²⁹: Այս քաղաքականությամբ նաև, 1904 թ. սկզբին սկսված ռուս-ճապոնական պա-

²⁷ ՀԱԱ, ֆ. 560, ց. 22, գ. 282, թ. 19:

²⁸ Նույն տեղում, թ. 2:

²⁹ Աղասեան Վ., Դեպի հուր եւ սուր, «Հնչակ», 1902, թիւ 5, էջ 38:

տերազմի իրադրությունում, ցարական կառավարությունը նպատակ չունեի լարելու իր հարաբերություններն Օսմանյան կայսրության հետ և որոշ ժամանակ մոռացության մատնվեց արևմտահայ գաղթականների վերադարձի հարցը:

Lilit Kosyan, *Institute of History of the NAS RA*, The issue of the return of Western Armenian refugees (1898–1908)

In the 1890s, a large part of Western Armenians who survived the mass massacres organized by Abdul Hamid II took shelter in Eastern Armenia. They survived thanks to various aids. However, it was necessary to organize their return, first of all, to preserve the demographic picture in Western Armenia. Their process of returning to their homeland took place in two stages: in 1898 and in 1902. However, the actions showed that these speculations were made deliberately by Russia and the Ottoman Empire.

**ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՖԻԼՄԵՐԸ ՈՐՊԵՍ ՊԱՏՄԱԿԱՆ
ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ («ՄԵՆՔ ԵՆՔ ՄԵՐ ՍԱՐԵՐԸ» ՖԻԼՄԻ
ՕՐԻՆԱԿՈՎ)***

Նոր ինֆորմացիոն միջավայրը ձևավորում է նոր տեսակի անհատի՝ «դիտող մարդու», ով համապատասխանաբար ունի իր սեփական պահանջները տեղեկատվական արտադրանքի նկատմամբ: Այս պարագայում շատ կարևոր է հասկանալ, թե ինչ փոփոխություններ են տեղի ունենում պատմական գիտության ոլորտում, որի համար գրավոր տեսքերը եղել և շարունակում է մնալ տեղեկատվության կարևոր աղբյուր և պատմական գիտելիքի ներկայացման միջոց: Ընդհանուր առմամբ, պատմագիտության մեջ տեսողական շրջադարձը կատարվում է ավելի դանդաղ, քան սոցիոլոգիայում և մշակութաբանությունում¹: Այդ շրջադարձը տեղի է ունեցել տեսողական մարդաբանության զարգացման հետ մեկտեղ: Ընդհանուր առմամբ, տեսողական մարդաբանությունը նպատակ է դնում հետազոտել մարդկության պատմությունը, մշակույթների միջև ստեղծել յուրահատուկ երկխոսություն՝ օգտագործելով ֆոտո և վիդեո տեսախցիկներ²: Եվ երբ այն տե-

* Հետազոտությունը կատարվել է ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ի տրամադրած ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6A274 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

¹ Мазур Л., «Визуальный поворот» в исторической науке на рубеже XX–XXI вв.: в поисках новых методов исследования, "Диалог со временем", 2014, Вып. 46, с. 102.

² Александров Е., Вместо рецензии. В поисках предмета визуальной антропологии, <https://cyberleninka.ru/article/n/vizualnaya-antropologiya/viewer> (վերջին մուտք՝ 26.06.2023):

ղափոխվում է պատմական հետազոտության ոլորտ, պատմական տեքստի կողքին ի հայտ է գալիս կերպարը: Այն, իհարկե, կարող է ստեղծվել նաև գրավոր տեքստի միջոցով, սակայն ստեղծվում է նաև նկարչության, նկարների ու ֆիլմերի միջոցով³:

Անդրադառնալով ֆիլմերին, պետք է նշել, որ դրանք բաժանվում են երկու տիպի՝ փաստավավերագրական և գեղարվեստական, որոնք միմյանցից տարբերվում են իրականությունն արտացոլելու տեսանկյունից: Փաստավավերագրական ֆիլմերը սովորաբար համարվում են ավելի հավաստի, քանի որ ֆիքսում են օբյեկտիվ իրականությունը: Գեղարվեստական ֆիլմերը, չնայած այն հանգամանքին, որ պատկերում են ժամանակաշրջանի առօրյան, կենցաղը, այնուամենայնիվ հիմնական մասով արտացոլում են մտացածին իրականությունը և հենց այդ հիմքով էլ չեն համարվում հավաստի: Դրանց տրվում է երկրորդական, երբեմն էլ ոչ հավաստի դեր: Հետևաբար՝ պատմաբանը, գեղարվեստական ֆիլմերը հետազոտական նյութ դարձնելով և պատմական աղբյուր դիտարկելով, պետք է մեծ զգուշավորություն ցուցաբերի: Դրանք ուսումնասիրելով, հետազոտողը հնարավորություն է ստանում ընդլայնել իր հետազոտական շրջանակը, նոր գույն ու շունչ հաղորդել թեմաներին: Բայց չպետք է ոչ մի պարագայում այն պատմաբանի համար դառնա ինքնանպատակ, կամ «հետազոտական նորաձևությանը» հետևելու միտում: Պատմաբանը պետք է հիմք ընդունի հետազոտության խնդիրները և ըստ այդմ դիրքորոշում արտահայտի:

Օ.Գորբաչևն առանձնացրել է այն խնդիրները, որոնք հետազոտողը պետք է պարզաբանի ֆիլմը որպես աղբյուր դիտար-

³ Мазур Л., Горбачев О., Советские фильмы о деревне: Опыт исторической интерпретации художественного образа, Москва, 2022, с. 15.

կելուց առաջ.

1. Ֆիլմի ստեղծման պահին ինչպիսի՞ գործոններ էին նպաստում իրականության աղավաղմանը,

2. Որքան՞ով է հեղինակը շահագրգռված իրականությունը ճշմարտացի արտացոլելու մեջ⁴:

Առաջին խնդրի առումով պետք է առանձնացնել մի քանի գործոններ.

✓ Ֆիլմը ստեղծող կինոռեժիսորի հեղինակային հայացքն է, նրա մասնագիտական միջամտությունը, երևակայությունն ու մտքի թռիչքը⁵: Այստեղ հետազոտողը պետք է ֆիլտրի ֆիլմի գեղարվեստական մասը, և հասկանա, թե որքանով է ֆիլմը «պետքական» ուսումնասիրության համար,

✓ Խորհրդային ժամանակաշրջանի հետազոտողները հատկապես պետք է ուշադրություն դարձնեն գաղափարական միջամտության հարցին⁶: Այս դեպքում պատմաբանին օգնության է հասնում գրավոր փաստական նյութը, քանի որ առանց դրանց ուսումնասիրության անհնար է հասկանալ ֆիլմում պատկերվածը որքանով է արտացոլում իրականությունը:

✓ Ֆիլմի թեմատիկայի պահանջարկը⁷: Այսինքն՝ պետք է հասկանալ, թե ինչ մատուցել մարդկանց:

Հաշվի առնելով վերը նշված փաստերը՝ կարելի է առանձնացնել, թե ինչ փուլերով պատմաբանը պետք է հետազոտի գեղարվեստական ֆիլմերը.

1. Կատարի ֆիլմի ընտրություն՝ համապատասխան ուսում-

⁴ Горбачев О., Советский художественный кинематограф как исторический документ, особенности анализа и интерпретации, <https://elar.urfu.ru/bitstream-/10995/32956/1/dais-2015-15-11.pdf> (վերջին մուտք՝ 29.06.2024).

⁵ Նույն տեղում:

⁶ Նույն տեղում:

⁷ Նույն տեղում:

նասիրվող թեմատիկայի ու իր առջև դրված խնդրի,

2. Կատարի աղբյուրագիտական վերլուծություն, ուսումնասիրի ժամանակաշրջանը, ֆիլմի ստեղծման պայմանները, տվյալ ժամանակահատվածի քաղաքական վիճակը, հասկանա կինոմատոգրաֆիայի զարգացման միտումները, ուսումնասիրի ֆիլմը ստեղծող կինոռեժիսորի կյանքն ու գործունեությունը, նրա մասնագիտական ունակություններն ու հայացքները:

Եվ հենց միայն այսպիսի հետազոտություն իրականացնելուց հետո պատմաբան ուսումնասիրողը կարող է գեղարվեստական ֆիլմերը դիտարկել որպես ուսումնասիրության աղբյուր և կատարել եզրահանգումներ:

Մեր պարագայում ուսումնասիրության առարկա ենք դարձրել 1969 թ. Հրանտ Մաթևոսյան սցենարով ռեժիսոր Հենրիկ Մալյանի կողմից «Հայֆիլմ» կինոստուդիայում նկարահանված «Մենք ենք մեր սարերը» ֆիլմը⁸: Այն կարևորություն և հետաքրքրություն է ներկայացնում 1960-ական թվականների Խորհրդային Հայաստանի առօրեականության պատմության ուսումնասիրության տեսանկյունից:

Ֆիլմը կարևորվում է հետևյալ պատճառներով՝

1. Պատկերում է 1960-ական թվականների գյուղական առօրյան: Ներկայացնում է աշխատանքի կազմակերպումը, գյուղական միջավայրը, տների կահավորանքը:

2. Ֆիլմում արծարծվում են հարցեր և բարձրացվում խնդիրներ, որոնց պարզաբանումը թույլ կտա ավելի ճիշտ հասկանալ տվյալ ժամանահատվածը:

1960-ականները նշանակալի էին ինչպես համաշխարհա-

⁸ «Մենք ենք մեր սարերը» <https://www.youtube.com/watch?v=9CbMaPXC8SI> (վերջին մուտք՝ 27.06.2024):

յին⁹, այնպես էլ հայկական կինեմատոգրաֆիայի համար: Կինո-գետների մեծամասնությունն այդ ժամանակահատվածը համարում է «Մեծ թռիչքի» շրջան, որի բացումն, իհարկե, արվեց 1965 թ. Ֆրունզե Դովլաթյանի նկարահանած «Բարև ես եմ»¹⁰ ֆիլմով: Իսկ գազաթնակետը եղավ Հենրիկ Մայլանի կողմից նկարահանված «Մենք ենք մեր սարերը» ֆիլմը: Հ. Մաթևոսյանի վիպակի հիման վրա և իր իսկ սցենարով նկարահանված ֆիլմը մեծ առումով չի կրում գաղափարական ազդեցություն, չկա բարու և չարի, գեղեցիկի ու տգեղի համեմատություն: Այստեղ փորձ է արվում բացահայտել մարդկանց հոգեբանությունը: Քննարկվում են ոչ միայն խորհրդային մարդուն անհանգստացնող ու 1960-ականների խորհրդահայ հասարակությանն անհանգստացնող խնդիրներ, այլև համամարդկային կարևորություն ունեցող և հավերժ արդիական ու քննարկվող հարցեր: Եվ պատահական չէ, որ կինոգետ և կինոքննադատ Սուրեն Հասմիկյանը այն համարում է հայկական կինոմատոգրաֆիայում առաջին սուր սոցիալական խնդիրներ արժարժող ստեղծագործությունը¹¹:

Ֆիլմում շոշափվում է երկու կարևորագույն հարց՝

1. գյուղի և քաղաքի հակադրությունը,
2. քաղաքացի-պետություն, իշխանություն, օրենք հակադրություն:

Սրանք խնդիրներ էին, որոնց անդրադառնալը, այն էլ ֆիլ-

⁹ «The Sweet Life» (1960, ռեժ.՝ Ֆ.Ֆելինի), <https://www.youtube.com/watch?v=Rh3-PFjQ2kw> (վերջին մուտք՝ 25.06.2024), «Иваново детство» (1962, ռեժ.՝ Ա.Տարկովսկի), <https://www.youtube.com/watch?v=aRkPoF7iVGc> (վերջին մուտք՝ 24.06.2024):

¹⁰ «Բարև ես եմ» (1965, ռեժ.՝ Ֆ. Դովլաթյան), <https://www.youtube.com/watch?v=enccuq0Jeip4>

¹¹ Асмирян С., Тесный кадр, Ереван, 1992, с.139.

մի տեսքով, ոչ միայն համարձակություն էր պահանջում, այլև գերագույն պատասխանատվություն ենթադրում: Եվ պատահական չէ, որ ֆիլմը ստեղծեցին հենց ինքը՝ արդեն իսկ այդ խնդիրները հանրությանը վիպակի ձևով գեղարվեստորեն մատուցած Հրանտ Մաթևոսյանը և «5 մկրտիչների» գեղեցիկ ու բարի պատմությունը ստեղծած, ինչպես կինոգետներն են բնորոշում, «փափուկ և նրբանկատ» ռեժիսոր Հենրիկ Մայլանը:

Բնականաբար, ժամանակի իրական խնդիրները արծարծող ու հանրությանը ներկայացնող ֆիլմը մինչև էկրան բարձրանալը պետք է անցնէր սցենարական փոփոխությունների ու քննադատությունների միջով: Հատկապես սուր էր դրված գյուղի և քաղաքի հակադրությունը ներկայացնող խնդիրը: Ժամանակի կինոքննադատները երբեմն այդ խնդրի արծարծումը փորձում էին ներկայացնել որպես հետընթաց, արհեստական ստեղծված պրոբլեմ, իսկ որոշները նույնիսկ դա կապում էին Հրանտ Մաթևոսյանի անձնական ապրումների հետ: Այս առթիվ Հասմիկյանը հետևյալ ձևակերպումն է տալիս. «Մաթևոսյանը ոչ թե քաղաքն է հակադրում գյուղին, այլ մարդկանց, ովքեր կորցրել են կապը գյուղի հետ»¹²: Այսինքն՝ գյուղը վերանում է ոչ թե նրա համար որ փախչում են քաղաքի հարմարավետությունը և հաճույքները տեսնելով, այլ գյուղացու մոտ ճնշվում է իր հիմնական բնագործ՝ սերը հողի նկատմամբ և երբ նրա հոգեբանության մեջ խախտում է տեղի ունենում, երբ շրջակա միջավայրը դադարում է ընկալել հոգեհարազատ, և երբ «մենք ենք մեր սարերին գալիս է վերջը»: Այսինքն՝ դրանք մարդիկ են, ովքեր սիրում են հողը, սիրում են իրենց գյուղը, սիրում են իրենց աշխատանքը և, ամենակարևորը, սիրում են միմյանց:

¹² Асмирян С., նշվ. աշխ., էջ 137:

Մյուս և ամենակարևոր խնդիրը մարդ-պետություն, իշխանություն, օրենք առնչությունն է: Ֆիլմի սցենարիստն ու ռեժիսորը ասելիք ունեն մարդու իրավունքների պաշտպանության առումով, որը հանդիսանում է կոմունիստական բարոյականության կարևորագույն սկզբունքներից մեկը: Ֆիլմում խոսվում է հավերժական հարցի՝ քո և ուրիշի վարքի, արարքների գնահատման, արդար գնահատելու կարողության մասին, որը նույնական է տվյալ ժամանակաշրջանի հետ: Եվ պատահական չէ, որ հենց այս հարցը ժամանակին դարձավ թեժ քննարկումների առարկա: Ճիշտ է հարաբերական ազատության պայմաններում հարցերի քննարկման ժամանակ որոշ դեպքերում գաղափարական կապանքները թուլացել էին, այնուամենայնիվ բարձրացվող թեման խրթին էր և պետք է հարցին տրվեր ճիշտ լուծումներ: 1968 թ. մայիսի 5-ին ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի Կինեմատոգրաֆիայի խորհրդի գլխավոր խմբագիր Ի. Կոկորևան և խմբագրական կոլեգիայի անդամ Ռ. Զուսևան «Հայֆիլմ» կինոստուդիայի տնօրեն Լ. Վաղարշյանին գրած նամակում հստակ նշում են, որ ֆիլմում արծարծվող խնդրին՝ հովիների բախմանը օրենքին, պետք է տրվի շատ ճիշտ լուծում: Այն պետք է ներկայացվի շատ մեղմ և հատկապես մեծ հումորով¹³: Առանց այդ էլ հարցի առնչությամբ արդեն իսկ հայ ռեժիսորներից ու կինոգետներից շատերը կոշտ էին արտահայտվում: Ահա թե ինչ է ասում ռեժիսոր Արտաշես Հայ Արտյանը Գեղարվեստական խորհրդի 1968 թ. մարտի 19-ի նիստում սցենարի քննարկման ժամանակ. «Մարդիկ, ովքեր գողություն են արել, չպետք է արդարացվեն, ինչպես ասում են՝ ծու գողացողը, ձի էլ կգողանա: Այդ ձևով կարող ենք արդարացնել և՛ բանդիտներին, և՛ բռնաբարողներին, որոնք հե-

¹³ ՀԱՍ, ֆ. 1381, ց. 9, գ. 265, թ. 37-39:

տո են գիտակցում իրենց արածը»¹⁴: Եվ հենց այս ամենի արդյունքում էլ ծնվում է ֆիլմի կուլմինացիան հանդիսացող ինքնադատաստանի տեսարանը, որտեղ հերոսներից յուրաքանչյուրը պատրաստ է ընդունել իր մեղավորությունը: Այստեղ շատ կարևոր է այն միտքը՝ մարդը պետք է քաջություն ունենա սեփական արարքները գիտակցելու ոչ թե օրենքի առաջ պատժվելու հեռանկարով, այլև պետության առաջ իր արած արարքի նկատմամբ ունեցած պատասխանատվության ներքին պահանջով:

Ֆիլմում ցայտուն ձևով արտացոլվում է գյուղական կենցաղն ու առօրյան: Ֆիլմի հերոսները՝ գյուղացիները, իրենց գործը լավ իմացող, աշխատանքը վարպետորեն և սիրով կատարող մարդիկ են: Ապրում են բավականին համեստ՝ կենցաղավարման տարրական պայմանների բացակայությամբ, սակայն միմյանց և իրենք իրենց հետ ներդաշնակ: Նրանք այնքան են վստահում միմյանց որ նույնիսկ արոտավայր գնալուց տան դռները չեն փակում, որը, իհարկե, զարմանք է առաջացնում քաղաքից եկած ոստիկանի մոտ: Կողպված էր միայն գյուղխորհրդի նախագահի տան դուռը: Ռեժիսորը այս դրվագով ցույց է տալիս ներդաշնակության և վստահության միջավայրում ապրող գյուղացիներին¹⁵:

Հատկանշական է խորհրդային գյուղական տան կահավորանքը: Ֆիլմի դրվագներից մեկում գյուղացիների տանը տեսնում ենք Անդրանիկի նկարը: Սա արդեն խոսում է այն մասին, որ զարթոնքը իր արտացոլումն էր գտնում նաև ֆիլմերում: Եթե, 1940-1950-ական թթ. նկարահանված ֆիլմերի դրվագներում ակնհայտ և ցուցադրական կախված էր Ստալինի նկարը կամ պատատոներ, ապա «Մենք ենք մեր սարերի» պարագայում պատկերվում է հայ

¹⁴ Նույն տեղում, թ. 24-25:

¹⁵ «Մենք ենք մեր սարերը», <https://www.youtube.com/watch?v=9CbMaPXC-8SI&t=329s> (դրվագ՝ 32.15-35.51, 27.06.2024):

նշանավոր զորահրամանատար Անդրանիկը¹⁶:

Կարևոր էր նաև, թե ինչ է տեղի ունենում էկրանից այն կողմ: Այսինքն՝ ինչպես էր ֆիլմն ընկալում հեռուստադիտողը ու ինչ ազդեցություն էր այն թողնում ժամանակակիցների վրա: Ահա թե ինչպես էր տեսնում կապը էկրանից այս կողմ կատարվածի ու այն կողմ զգացածի միջև ռեժիսոր Հ. Մալյանը. «Ի վերջո ֆիլմն է, որ ժամանակակից մարդու մեջ ծնում է բազմաթիվ մտքեր, բազում հույսեր, որ ժամանակակից մարդու առաջ դնում է բազմաթիվ հարցեր, բազմաթիվ հարցականներ»¹⁷:

«Էկրան» ամենամյա հանդեսի 1970 թ. 5-րդ համարում¹⁸ տեղ է գտել մի հետաքրքրական հատված, երբ Հ. Բեկնազարյանի անվան «Հայֆիլմ» կինոստուդիայիաշխատակիցը «Ձեր կարծիքը ֆիլմի մասին» հարցով դիմում է կինոթատրոններից դուրս եկող մարդկանց: Եթե փորձենք ընդհանուր եզրահանգումներ անենք այդ փոքրիկ հարցախույզից, կարող ենք ասել, որ հատկապես երիտասարդներն ընկալում էին ֆիլմի ասելիքը, փորձում շեշտադրումներ անել որոշ հարցերի վրա: Սակայն կա մի պարզ ճշմարտություն. ֆիլմը հատկապես սիրվեց դերասանական փայլուն խաղի շնորհիվ: Եվ դա պատահական չէր, քանի որ այնտեղ ներգրավված էին այդ ժամանակահատվածում արդեն իսկ մեծ սեր ու ժողովրդականություն վայելող Ֆրունզիկ Մկրտչյան-Սոս Սարգսյան-Խորեն Աբրահամյան դերասանական եռյակը: Նրանց հուզել և տպավորել էր նաև ժամանակակից հայ կինոարվեստում իրենց առաջին քայլերն անողների՝ Ազատ Շերենցի և Արմեն Այվազյանի խաղը:

¹⁶ «Մենք ենք մեր սարերը», <https://www.youtube.com/watch?v=9Cb-MaPXC8SI&t=329s> (դրվագ՝ 32.15-35.51, 27.06.2024):

¹⁷ Մալյան Հ., Երկխոսություն երրորդի համար, Երևան, 2010, էջ 92:

¹⁸ «Էկրան», Երևան, 1970, N 5, էջ 1:

Այսպիսով, գեղարվեստական ֆիլմերը կարող են պատմա-բանի համար դառնալ ուսումնասիրության օբյեկտ և պատմական սկզբնաղբյուր: Բայց դրան զուգահեռ պետք է օգտագործել նաև համաժամանակյա փաստական գրավոր նյութը, որպեսզի ստացված պատկերը լիարժեք լինի: Ասվածն առավել քան վերաբերվում է առօրեական պատմությամբ և հատկապես խորհրդային ժամանակաշրջանի առօրյայով զբաղվող մասնագետներին: Վերը նշվածի առումով «Մենք ենք մեր սարեր» ֆիլմը բացառիկ աղբյուր է բարձրացված ժամանակի խնդիրները լիարժեք հասկանալու, գյուղական առօրյան պատկերացնելու և խորհրդային մտածելակերպն ու ձեռագիրն ընկալելու առումով:

Gayane Ghazaryan, *Institute of History of the NAS RA*, Fiction films as historical primary sources (on the example of the movie “We And our Mountains”)

The new informational environment also brought about changes in the field of historical science, when the specialist began to consider not only the written text, but also images, films and works of art as sources. It was scientifically formulated as a visual inversion.

In this case, we have turned feature films into study material, and how much they can become a source of study for a historian. The example of one of the best Soviet-Armenian feature films, “We and Our Mountains”, shows how much the reality of the period and the issues raised can be discussed in feature films, and how much the film is influenced by time and ideology.

ԷԼԵՆ ՇԱՐՈՅԱՆ

*Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական
համալսարան, հայցորդ*

ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱՐՑԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԴԱՏԻ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԲԵՅՐՈՒԹԻ «ԱԶԴԱԿ» ՕՐԱԹԵՐԹՈՒՄ

Սփյուռքում գործում են Հայ Դատ հանձնախմբի մի քանի տասնյակ կառույցներ, որոնցից իր ակտիվությամբ և ազդեցությամբ առանձնանում է Հայ դատի Ամերիկայի հանձնախումբը: Վերջինիս գործունեության հիմնական ուղղություններից մեկը Արցախյան հակամարտության կարգավորմանը նպաստելն է:

Սույն թեման արդիական է, քանի որ հատկապես վերջին տարիներին տեղի ունեցած իրադարձությունները ցույց տվեցին, որ հայկական լոբբիզմը և աշխարհում հայության ներկայացուցչությունը նոր մակարդակի բարձրացնելու կարիք է զգացվում:

Ուսումնասիրության նպատակն է ուշադրություն հրավիրել Սփյուռքում գործող հայկական խոշոր լոբբիստական կազմակերպություններից մեկի՝ Հայ Դատի հանձնախմբի գործունեությանը, ուսումնասիրել հանձնախմբի կատարած աշխատանքների լուսաբանման պարբերականությունը սփյուռքահայ՝ մասնավորապես Մերձավոր Արևելքում լույս տեսնող հայկական մամուլի էջերում:

Մերձավոր Արևելքի երկրներում լույս տեսնող պարբերականները թեև բազմաթիվ են, բայց ոչ բոլորն են անդրադարձել

Հայ Դատի հանձնախմբի գործունեությանը այս կամ այն երկրում: Այս առումով կարևորվում է Լիբանանի մայրաքաղաք Բեյրութում լույս տեսնող ՀՅԴ «Ազդակ» օրաթերթը, որն ակտիվորեն լուսաբանում է տարբեր երկրներում գործող Հայ Դատի հանձնախմբերի իրականացրած գործունեությունը:

Թեմայի նորույթը կայանում է նրանում, որ մինչ օրս հայ պատմագրությունում չի ուսումնասիրվել Հայ Դատի հանձնախմբի գործունեության արձագանքները Մերձավոր Արևելքի հայաշատ երկրներում լույս տեսնող հայ պարբերականներում: Աշխատանքը շարադրելիս կիրառվել են պատմական, փաստագրական և պատմահամեմատական մեթոդները:

«Ազդակ» օրաթերթը լույս է տեսնում 1927 թվականից Լիբանանի մայրաքաղաք Բեյրութում: Սկզբնական շրջանում թերթը լույս էր տեսնում 4 էջով և համառոտ ներկայացնում էր քաղաքական լուրեր, պարբերաբար անդրադառնում էր հատկապես տեղական իրադարձություններին, իսկ ժամանակ առ ժամանակ նաև Հայաստանում տեղի ունեցող գործընթացներին: Տարիների ընթացքում թերթը ընդլայնեց իր հոդվածաշարերը և սկսեց լույս տեսնել 10 էջով, որի հիմնական հրապարակումները դարձան քաղաքական, գրական, մշակութային և սպորտային իրադարձությունները: 1965 թ. հունիսից «Ազդակ» օրաթերթը հանդիսանում է ՀՅԴ Լիբանանի շրջանի պաշտոնաթերթը: Թերթը բովանդակալից տեղեկություն է տրամադրում թե՛ ՀՅԴ-ի, թե՛ այլ կուսակցությունների գործունեության վերաբերյալ: Այս համատեքստում անհրաժեշտ է ընդգծել, որ թերթը դավանում է ազգային գաղափարախոսություն և նվիրական պայքար մղում Հայ Դատի և հայոց պահանջատիրության դիրքերից: Թերթի մեթոդա հրապարակումները հիմնականում վերաբերում են Հայաստանի Հանրապետությանը, Արցախին, Սփյուռքին, Լիբանանի

հայ համայնքին և ՀՅԴ գործունեությանը: «Ազդակը» ամեն տարի հրատարակում է նաև իր տարեկան ամփոփիչ համարը, որում անդրադառնում է տարվա ընթացքում տեղի ունեցած կարևորագույն իրադարձություններին, միջազգային անցուդարձին, հրատարակում վերլուծական հոդվածներ: Օրաթերթն ակտիվորեն լուսաբանում է Հայ Դատի հանձնախմբի գործունեությունը՝ յուրաքանչյուր համարում առանձին էջ հատկացնելով:

Խորհրդային Միության անկումից և Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո ամերիկահայ լրբիստական մի շարք ընկերություններ սկսեցին նպատակային գործունեություն ծավալել ոչ միայն Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման, այլև Արցախյան հարցի կարգավորման ուղղությամբ: Չնայած այն հանգամանքին, որ ԱՄՆ-ում գործում են շուրջ մեկ տասնյակ հայկական լրբիստական կազմակերպություններ, այնուամենայնիվ, իր դերով և ազդեցությամբ առանձնանում է Ամերիկայի Հայ ազգային կոմիտեն կամ Ամերիկայի Հայ դատի հանձնախումբը: Այս հանձնախումբը հիմնադրվել է 1918 թ. Ուոթերթաունում¹: Այն ԱՄՆ-ում գործող հայկական խոշոր և ազդեցիկ լրբիստական կազմակերպություններից է և իրականացնում է համայն հայության շահերի պաշտպանության քաղաքականություն տարբեր ոլորտներում: Գործելով Ամերիկայի Միացյալ Նահանգների ողջ տարածքում՝ Հայ դատի հանձնախումբն ակտիվորեն առաջ է մղում ԱՄՆ-ի հայ համայնքի շահերը:

Ներկայումս Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի գործունեության մեջ առանձնացվում են չորս հիմնական ուղղություններ, որոնցից մեկն առնչվում է Արցախյան հակամարտության

¹ Տե՛ս Հայ Սփյուռք, հանրագիտարան, Երևան, 2003, էջ 59:

կարգավորմանը:

Արցախյան հիմնահարց ասելով մենք պետք է նկատի ունենանք ոչ միայն Արցախի անկախության ճանաչման գործընթացը, այլ նաև արցախա-ադրբեջանական շփման գծում հրադարի ռեժիմի ամրապնդումը, սոցիալական ծրագրերի իրականացումը, և իհարկե, ԱՄՆ-ի կողմից Ադրբեջանին տրվող ռազմական օգնության սահմանափակումը:

1994 թ. զինադադարը միայն ժամանակավորապես մարեց Ադրբեջանում տիրող հակահայկական տրամադրությունները: Վերջին տասնամյակում հայ-ադրբեջանական և արցախա-ադրբեջանական շփման գծում լարվածությունը չի դադարում: Հայ դատի հանձնախումբը որպես Արցախյան հիմնահարցի լուծումը կարևորող կառույց, ակտիվ ջանքեր է գործադրում Արցախյան հիմնահարցի կարգավորմանը հասնելու ուղղությամբ:

«Ազդակ» օրաթերթը անդրադառնալով Արցախյան հիմնախնդրին՝ ընդգծում է, որ Հայ Դատի պայքարը Արցախյան շարժման մեկնարկից և Արցախյան առաջին պատերազմում հայ ժողովրդի տարած հաղթանակի շնորհիվ թևակոխել է նոր փուլ: Այժմ Հայ Դատ ասելով, պետք է հասկանալ ոչ միայն Հայոց ցեղասպանության ճանաչման և հատուցման գործընթացը, այլ նաև Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման գործընթացը, քանի որ «Լարաբաղեան շարժումը մեկ անբաժանելի մասն է Հայ Դատի ընդհանուր պայքարին»: Արցախյան շարժման 10-ամյակին նվիրված 1998 թվականի տարեկան համարում թերթը ընդգծում է Հայրենիք-Սփյուռք միասնականության անհրաժեշտությունը, քանզի «չկայ հայրենի Հայ Դատի պայքար, Սփյուռքի Հայ Դատի պայքար», կա մեկ ամբողջական գաղա-

փարախոսություն, որի հիմքում ընկած է միասնականությունը²:

ԱՄՆ Հայ դատի հանձնախումբը մշտապես հետևում է Հայաստանում և Արցախում ընթացող գործընթացներին՝ հատկապես շփման գծում տիրող իրավիճակին: Հանձնախումբը բազմիցս հանդես է եկել հայտարարություններով և կոչերով, որոնք ուղղված են եղել ոչ միայն ԱՄՆ կառավարող շրջանակներին, այլ նաև Ադրբեջանին:

2004 թվականի փետրվարին ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշը կոնգրեսականների հաստատմանը ներկայացրեց 2005 թվականի բյուջեի նախագիծը, որն «Ազդակ»-ի կարծիքով անհավասարություն կստեղծեր Հայաստանի և Ադրբեջանի միջև: Բանն այն է, որ, նախագծի համաձայն, էականորեն կրճատվում էր ԱՄՆ կողմից Հայաստանին տրվող տնտեսական աջակցությունը, մինչդեռ Ադրբեջանին հատկացվող գումարը մնում էր անփոփոխ: Նախագծի վերաբերյալ իր դժգոհությունն է հայտնում նաև Ամերիկայի Հայ Դատի հանձնախումբը՝ շեշտելով, որ ԱՄՆ-ի նման մոտեցումը խախտում է երկու երկրներին տրվելիք օժանդակությունը հավասար պահելու շուրջ նախապես ընդունված որոշումը: Հանձնախումբը իր մտահոգությունն է հայտնում, որ Միացյալ Նահանգների նման որոշումը կարող է ազդել նաև ռազմական հավասարակշռության վրա՝ ի նպաստ Ադրբեջանի³:

Արցախյան հիմնախնդրի կարգավորման ուղղությամբ Ամերիկայի Հայ Դատի հանձնախմբի գործունեությունը շարունակում է մնալ «Ազդակ» օրաթերթի ուշադրության կենտրոնում: Հերթական անգամ թերթը հանձնախմբի գործունեությանն անդրադարձավ 2005 թվականի հունվարի համարում՝ հրապա-

² Տե՛ս «Ազդակ», 20 փետրվարի, 1998, էջ 8-9:

³ Տե՛ս «Ազդակ», 6 փետրվարի, 2004, № 272, էջ 6:

րակելով հանձնախմբի կոշտ արձագանքը ԱՄՆ-ի արտաքին գործերի նախարարի տեղակալ Էլիզաբեթ Ջոնսի այն հայտարարությանը, թե Արցախի ղեկավարները քրեական անջատողականներ են և նրանց չպետք է պաշտոններ տալ: Է. Ջոնսը՝ հավաստելով, թե արտահայտում է նաև նախագահ Բուշի տեսակետը նշում է, որ նույնիսկ Ռուսաստանի Դաշնության շահերից է բխում, որ Մերձդնեստրը, Աբխազիան, Հարավային Օսեթիան և Լեռնային Ղարաբաղը լինեն կայուն, «վարչական ապականումեզերծ» և այնտեղ իշխող քրեական անջատողականները հեռացվեն իշխանությունից: Արձագանքելով այս հայտարարությանը՝ Ամերիկայի Հայ Դատի հանձնախմբի ատենապետ Քեն Խաչիկյանը նշեց, որ Ջոնսի արտահայտած մտքերը լուրջ հարված են հասցնում Արցախյան հարցի խաղաղ կարգավորմանն ուղղված աշխատանքներին, Արցախում ապրող հայության իրավունքներին՝ ժողովրդավարական ընտրություններում իրենց կամքն արտահայտելու տեսանկյունից: Այս ամենին զուգահեռ՝ նմանօրինակ հայտարարությունները զարկ են տալիս Արցախի նկատմամբ Ադրբեյջանի ռազմատենչ հայտարարությունների և գործողությունների ընդլայնմանը⁴:

Անդրադառնալով Հայ Դատի ռազմավարության փոփոխությանը՝ թերթն ընդգծում է, որ Հայ Դատի առջև դրված է հասնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային ճանաչմանը: Թերթը հետաքրքրական է համարում այն հանգամանքը, որ առաջին պետությունը, որ պատրաստվում է քննարկման դնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ճանաչման հարցը Ուրուգվայն է, որը հանդիսանում է Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես ճանաչած առաջին պետությունը: Արցախի

⁴ Տե՛ս «Ազդակ», 22 հունվարի, 2005, № 263, էջ 1, 10:

Հանրապետության ճանաչման թեմայով հայտարարություն էր արել նաև Սլովակիայի կառավարության ներկայացուցիչը, ով այցելել էր Ստեփանակերտ և արձանագրել, որ ԼՂՀ-ն անկախ հանրապետություն է և չի կարող լինել Ադրբեջանի կազմում: Նրա կարծիքով՝ բանակցային գործընթացը վերաբերում է Լեռնային Ղարաբաղի շուրջ անվտանգության գոտի ձևավորած շրջաններին, մինչդեռ Ադրբեջանը տարբերակներ է փնտրում ամբողջ Արցախին տիրելու համար⁵:

2016 թվականի ԱՄՆ պետքույզի հաստատմանն ընդառաջ Ամերիկայի Հայ Դատի հանձնախումբը պաշտոնական գրությամբ դիմում է ամերիկյան Սենատին՝ պահանջելով առնվազն 5 միլիոն դոլար հատկացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զարգացման, և շուրջ 40 միլիոն դոլարի տնտեսական աջակցություն տրամադրել Հայաստանի Հանրապետությանը: «Ազդակ»-ը ընթերցողի ուշադրությանն է արժանացնում այն հանգամանքը, որ նախագահ Բարաք Օբամայի ներկայացրած նախագծի համաձայն ԱՄՆ-ի կողմից Հայաստանի տրվող օգնությունը կազմելու էր 18 միլիոն դոլար, որը Կոնգրեսի կողմից ընդունվելու դեպքում կլինի անկախությունից ի վեր Հայաստանին տրամադրված ամենից ցածր օգնությունը⁶:

Ակտիվորեն լուսաբանելով Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի գործունեությունը՝ թերթը անդրադառնում է ևս մեկ կարևոր իրադարձության: «Ազդակ»-ը հայտնում է, որ հանձնախմբի նախաձեռնությամբ մայրաքաղաք Վաշինգտոնում կազմակերպվելու է երկօրյա խորհրդատվություն՝ Արցախի անկախության թեմայով: Թերթը արձանագրում էր, որ հանձնախմբի

⁵ «Ազդակ», ապրիլի, 2012, № 24, էջ 1-2:

⁶ «Ազդակ», 13 հունիսի, 2015, № 79, էջ 1:

կողմից խորհրդատվության թեմայի ընտրությունը ամենևին էլ պատահական չէ, քանի որ ադրբեջանական իշխանությունների կողմից «ատելութեան սերմանումն ու պատերազմի հրահրումը առաւել քան արդիական կը դարձնեն» խաղաղությանն ուղղված քայլերի ձեռնարկում՝ ընդդէմ ադրբեջանական սպառնալիքների և բռնատիրական գործողությունների: Ըստ թերթի տրամադրած տեղեկատվության՝ խորհրդատվությունները տեղի էին ունենալու 2015 թ. դեկտեմբերի 8-9-ը և լինելու էին բաց և անվճար բոլոր ցանկացողների համար⁷:

Ադրբեջանական հերթական ագրեսիան Արցախի նկատմամբ տեղի ունեցավ 2016 թվականի ապրիլի 1-ի, լույս 2-ի գիշերը, երբ ադրբեջանական կողմը, կոպտորեն խախտելով 1994 թվականի մայիսի 12-ին կնքված զինադադարի դրույթները, լայնածավալ հարձակում սկսեց արցախա-ադրբեջանական շփման գոտու ողջ երկայնքով: Ապրիլի 2-5-ը ընթացած մարտերի արդյունքում հայկական կողմը կրեց մարդկային և նյութական կորուստներ:

Ապրիլյան պատերազմի վերաբերյալ հայտարարություն տարածեց Ամերիկայի Հայ Դատի հանձնախումբը: Ապրիլի 6-ին հայտարարությամբ հանդես եկավ նաև հանձնախմբի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը: Նա իր խոսքում հորդորում էր ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբամայի վարչակազմին վերջ դնել Իլիամ Ալիևի կողմից սանձազերծած հարձակումներին Արցախում, որը վատթարագույնն էր 1994 թվականի զինադադարից հետո: Հայտարարության մեջ ուշադրություն էր դարձվում այն հանգամանքին, որ Վաշինգտոնում ԱՄՆ-ի ղեկավարության կողմից ջերմ ընդունելության արժանանալուց հետո, Իլիամ

⁷ «Ազդակ», 13 նոյեմբերի, 2015, № 205, էջ 1, 3:

Ալիևը սանձագերծել է լայնամասշտաբ հարձակումներ: Ա. Համբարյանը նաև շեշտում էր այն փաստը, որ ո՛չ ԱՄՆ-ի փոխնախագահ Ջո Բայդենը, ո՛չ էլ ԱՄՆ-ի պետքարտուղար Ջոն Քերրին Ալիևի հետ ունեցած հանդիպումների ժամանակ որևէ կերպ նրան չեն հորդորել գնալ իրադրության լարվածությունը թոթափելուն ուղղված քայլերի⁸:

Ապրիլյան պատերազմի ընթացքում ԱՄՆ-ի պետքարտուղար Ջոն Քերրիի լռությունը ևս չվրիպեց հանձնախմբի ուշադրությունից: «Ազդակ»-ի լրատվությամբ՝ Հայ Դատի հանձնախմբի անդամները՝ արտահայտելով իրենց դժգոհությունը Ջ. Քերրիի դիրքորոշման նկատմամբ, պահանջում էին, որ «Լիհի օրենք»-ի հիման վրա սկսվի հետաքննություն ադրբեջանական ուժերի կողմից հայ քաղաքացիական և զինվորական անձանց դեմ գործադրած բարբարոսությունների կապակցությամբ և կասեցվի Ադրբեջանին տրամադրվող ռազմական օժանդակությունը: «Լիհի օրենք» ընդունվել է 1997 թվականին և նախատեսում է Միացյալ Նահանգների կողմից այն երկրների սպառազինության գնումների կամ զինված ուժերի պատրաստման ֆինանսավորման արգելք, որոնք կասկածվում են մարդու իրավունքները խախտելու կամ պատերազմական հանցագործությունների համար⁹:

Ապրիլյան քառօրյա պատերազմից հետո Արցախյան հարցի կարգավորումը և, հատկապես՝ Արցախի անկախության միջազգային ճանաչման հարցը, դարձան հայկական լրբիստական կազմակերպությունների, այդ թվում՝ ԱՄՆ-ի հայ դատի հանձնախմբի գլխավոր խնդիրներից մեկը:

⁸ «Ազդակ», 4 ապրիլի, 2016, № 25, էջ 8:

⁹ «Ազդակ», 15 ապրիլի, 2016, № 34, էջ 10:

Ադրբեջանական հերթական ագրեսիան, որը իրականացվեց 2016 թվականի դեկտեմբերին հայ-ադրբեջանական սահմանին, կրկին ստիպում է Հայ Դատի հանձնախմբին մեծ տերությունների ուշադրությունը հրավիրել այս խնդրին: 2016 թ. դեկտեմբերի վերջին գրանցվեց, ադրբեջանական զորքերի կողմից հրադադարի հերթական խախտումը այս անգամ հայ-ադրբեջանական սահմանին: Ադրբեջանական զորքերը հարձակմանը ենթարկվեց Տավուշի մարզի Չինարի գյուղից հարավ ընկած տարածքը: Մարտերի արդյունքում հայկական կողմը տվեց 3 զոհ: Այս դեպքերից հետո, Հայ Դատի ամերիկյան հանձնախումբը ձեռնամուխ եղավ համացանցային արշավի կազմակերպմանը՝ Կոնգրեսում, Սպիտակ տանը և ԵԱՀԿ Մինսկի խմբի ղեկավարության մոտ դատապարտելու ադրբեջանական ագրեսիան:

2017 թվականի ողջ ընթացքում շփման գծում լարվածությունը շարունակվեց: Ադրբեջանական կողմը շարունակում էր լարվածություն առաջացնել շփման գծի ողջ երկայնքով: Այս ժամանակահատվածում մտահոգիչ հայտարարությամբ հանդես եկավ ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Ռիչարդ Հոկլանտը: Վերջինս Արցախյան հիմնախնդրի խաղաղ լուծման վեց կետերով Հայաստանի Հանրապետությունը կոչ էր անում Ադրբեջանին «վերադարձնել» Լեռնային Ղարաբաղի շուրջ «գրավված տարածքները»: Հանձնախումբը, կոշտ արձագանքելով այս հայտարարությանը, նշում էր, որ, նման տեսակետ առաջ քաշելով, վարչակազմը ներկայացնում է Արցախի ոչնչացման «անխոհեմ բաղադրատոմս»: Նմանօրինակ հայտարարությունը խրախուսում է օր օրի ավելի ագրեսիվ կեցվածք ցուցաբերող Ադրբեջանին և նորանոր վտանգներ է ստեղծում Արցախի

համար¹⁰:

Հայ Դատի հանձնախմբի անդամները բազմիցս հանդիպել են Արցախի Հանրապետության ղեկավար շրջանակների հետ, ինչից հետևում է, որ իր երկարամյա գործունեության ընթացքում այն իրապես դարձել է ազդեցիկ կառույց, որի դերն ու նշանակությունը ընդունում են ոչ միայն Սփյուռքում, այլ նաև հայրենիքում:

2018 թվականի Հայաստանում ներքաղաքական իրավիճակի փոփոխությամբ պայմանավորված փոխվեց նաև Արցախի հիմախնդրի լուծմանը հասնելու ռազմավարությունը, իսկ 2020 թվականի 44-օրյա պատերազմը էլ ավելի անհասկանալի դարձրեց հակամարտության լուծման տրամաբանությունը:

Արցախյան հիմնախնդրի կարգավորումը և Արցախի Հանրապետության միջազգային ճանաչումը մշտապես եղել է լիբանանահայ «Ազդակ» օրաթերթի ուշադրության կենտրոնում:

Թերթն ակտիվորեն լուսաբանում է Հայ Դատի հանձնախմբի գործունեությունը, որի վերաբերյալ չի բավարարվում սոսկ տեղեկություններ տրամադրելով, այլ պարբերաբար արտահայտում է իր կարծիքն ու վերաբերմունքը հանձնախմբի նախաձեռնությունների կապակցությամբ: Օրաթերթը ծավալուն և բազմակողմանի հրապարակումներում լուսաբանում է հանձնախմբի գործունեությունը՝ կարևորելով այն որպես հայ ժողովրդի միասնական շահերը արտահայտող կառույց, որը հետամուտ է Արցախի խնդրի արդարացի լուծմանը՝ ազգերի ինքնորոշման սկզբունքի շրջանակներում:

¹⁰ «Ազդակ», 2017, 26 օգոստոսի, № 139, էջ 1, 3:

Elen Sharoyan, *Vanadzor State University after H. Tumanyan, applicant*, Echoes of the activities of the Armenian National Committee of America towards the settlement of the Artsakh issue in the Beirut newspaper “Azdak”

There are several dozen structures of the Armenian National Committee in the Armenian Diaspora, among which the Armenian National Committee of America stands out for its activity and influence. One of the main activities of the latter is to promote the settlement of the Nagorno-Karabakh conflict.

The settlement of the Karabakh problem and the international recognition of the Republic of Artsakh have always been the focus of attention of the Armenian newspaper Azdak.

The newspaper professes national ideology and wages a selfless struggle from the standpoint of Armenian nationality and Armenian demands.

The contemporary newspaper publications mainly concern the Republic of Armenia, Artsakh, the Diaspora, the Armenian community of Lebanon and the activities of the ARF. Every year, Azdak also publishes its annual review issue, which covers the most important events that took place during the year, international transition, and also publishes analytical articles.

Azdak actively covers the activities of the Armenian National Committee, which is not limited to providing information, but regularly expresses its opinion and attitude towards the committee's initiatives. The newspaper covers the activities of the committee in extensive and diverse publications, emphasizing it as a structure expressing the common interests of the Armenian people, seeking a fair solution to the Karabakh problem within the framework of the principle of self-determination of nations.

ՏԱՏՅԱՆԱ ՕՇԱՆՅԱՆ

*Վանաձորի Հ. Թումանյան անվան պետական
համալսարան, հայցորդ*

2016 Թ. ԱՊՐԻԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ ԲԵՅՐՈՒԹԻ «ԱԶԴԱԿ» ՕՐԱԹԵՐԹՈՒՄ

Արցախյան հիմնախնդրի կարգավորման հարցով բանակցությունները հարթ չէին ընթանում: Այդ ընթացքում Ադրբեջանի կողմից կազմակերպվում էին սահմանային ընդհարումներ, դիվերսիաներ: Զինադադարի կնքումից ի վեր առաջին լայնածավալ հարձակումը տեղի ունեցավ 2016 թվականի ապրիլին, որը հայտնի է Ապրիլյան կամ Քառօրյա պատերազմ անունով, ինչը լայն արձագանք գտավ ժամանակակից սփյուռքահայ մամուլում:

2016 թ. Ապրիլյան պատերազմին անդրադարձած Բեյրութի «Ազդակ» օրաթերթի դիրքորոշումը հայ պատմագիտության կողմից հանգամանորեն ուսումնասիրված չէ և այդ հանգամանքը պայմանավորում է սույն հետազոտություն գիտական նորությամբ: Ուսումնասիրության թեման արդիական է, քանի որ առ այսօր Արցախյան խնդիրը լուծված չէ ազգերի ինքնորոշման սկզբունքի հիման վրա:

«Ազդակ» ազգային, գրական, հասարակական-քաղաքական օրաթերթը լույս է տեսնում 1927 թվականի մարտից (որոշ ընդհատումներով) Լիբանանի մայրաքաղաք Բեյրութում: Սկզբում եղել է եռօրյա, 1930 թվականից երկօրյա, 1932 թվականից՝ օրաթերթ: Անցած տարիներին թերթը խմբագրել են լիբա-

նանահայ մի խումբ ճանաչված լրագրողներ¹: 1965 թվականի հունիսից թերթը հանդիսանում է ՀՅԴ Լիբանանի շրջանի պաշտոնաթերթը:

«Ազդակ»-ի հրապարակումները հիմնականում վերաբերում են Հայաստանի Հանրապետության, Արցախի Հանրապետության, Սփյուռքի և Լիբանանի հայ համայնքի կյանքում տեղի ունեցող իրադարձություններին:

2016 թ. ապրիլի 1-ի, լույս 2-ի գիշերը՝ ժամը 03:00-ի սահմաններում, ադրբեջանական զինված ուժերը նախապես մշակված պլանով դիմեցին աննախադեպ սադրանքի, Լեռնային Ղարաբաղի հետ շփման գծի հյուսիսարևելյան, հարավարևելյան և հարավային ուղղություններով: Սա 1994 թ. զինադադարի կնքումից ի վեր առաջին լուրջ ընդհարումն էր: Ադրբեջանական նախահարձակ գործողությունների թիրախում էին ոչ միայն հայկական պաշտպանական հենակետերը, այլ նաև քաղաքային խառնալ բնակչությունը: Ըստ «Ազդակ»-ի՝ «ադրբեջանական նախահարձակման առաջին զոհը եղավ 12-ամյա Վաղինակ Գրիգորյանը, որը զոհվեց իր դպրոցի բակում»²: Բնականաբար, հայկական կողմը ձեռնպահ չմնաց ադրբեջանական հարձակողական գործողություններին, երկու օրվա ընթացքում ադրբեջանական կողմին պատճառելով նյութական և տեխնիկական մեծ վնաս:

«Ազդակ» օրաթերթը մշտապես անդրադարձել է Արցախյան հիմնախնդրի կարգավորման բանակցային գործընթացին և 2016 թվականի ապրիլի 4-ից սկսած ներկայացնում է Ապրիլյան պատերազմի գործողությունների ողջ ընթացքը: Թերթի տեղեկատվության աղբյուրը Հայաստանից և Արցախից ստացված լու-

¹ «Հայ գրատպություն և գրքավեստ», հանրագիտարան, Երևան, 2015, էջ 30-31:

² «Ազդակ», 4 ապրիլի, 2016, № 25, էջ 1, 8:

րերն էին և օտարերկրյա տարբեր լրատվամիջոցների հրապարակումները:

«Ազդակ»-ը «Հայկական զինված ուժերը» հոդվածում նշում է, որ հայկական կողմը անցել է պաշտպանության և ապրիլի 2-ի առավոտյան, տեղական ժամանակով 9:10-ի դրությամբ հայտնել է, որ ջախջախել է հյուսիսային ուղղությամբ տեղակայված զինվորական ուղղաթիռ և ադրբեջանական զինված ստորաբաժանումներին պատճառել է մարդկային կորուստներ: Կարճ ժամանակ անց ադրբեջանական կողմը հաստատեց ուղղաթիռի ոչնչացման լուրը³:

Ապրիլի 2-ին, ժամը 17:00-ին Ադրբեջանը պաշտոնապես հայտնեց, որ ռազմական գործողությունների ընթացքում ունեցել է 12 զոհ, կորցրել է 1 ուղղաթիռ և 1 հրասայլ: Սակայն երեկոյան ժամը 18:50-ին հայկական կողմը հանդես եկավ հայտարարությամբ այդ այն, որ հակառակորդն ունի 200-ից ավելի սպանված (միայն Թալիշի ուղղությամբ ոչնչացվել է ադրբեջանական հատուկ նշանակության ստորաբաժանման 30 զինվոր):

«Ազդակ»-ը ոչ միայն տպագրում է Հայաստանից ստացված տեղեկությունները, այլ նաև մեջբերում է կատարում ռուսական «Ինտերֆաքս» գործակալությունից, որը ապրիլի 2-ի երեկոյան ոչ պաշտոնական տեղեկություն է տարածել, ըստ որի Արցախի զինված ստորաբաժանումները շրջափակման մեջ են վերցրել ադրբեջանցի զինվորներ և 5 հրասայլ⁴:

Ապրիլի 3-ի երեկոյան «Ազդակ»-ը կապ հաստատեց հայաստանյան լրագրող Թաթուլ Հակոբյանի հետ, որի հայտնած տեղեկությունների համաձայն իրավիճակը շարունակում է լար-

³ Տե՛ս նույն տեղում, էջ 1:

⁴ «Ազդակ», 4 ապրիլի, 2016, № 25, էջ 8:

ված մնալ, ռմբակոծվում է Մարտակերտը և հայկական բանակի ստորաբաժանումները հակազդիչ գործողություններ են իրականացնում Թալիշի ուղղությամբ, որտեղ թշնամական ուժերը գրավել են մի քանի հենակետեր:

Ավելի ուշ հայկական լրատվամիջոցների լուրերով «Ազդակ»-ը հայտնում է, որ ոչնչացվել է ադրբեջանական 16 հրասայլ, 200-300 ադրբեջանցի զինվորականներ: Թերթը պատմում է Թալիշում ադրբեջանցիների կողմից իրականացված ոճրագործության մասին, որոնք գնդակահարել են 3 խաղաղ բնակիչների, կտրել նրանց ականջները: Լուրերի հրապարակումից անմիջապես հետո Արցախի Հանրապետության նախագահի խոսնակ Դավիթ Բաբայանը հայտնեց, որ ադրբեջանական բանակը փորձել է մուտք գործել Թալիշ, սակայն հետ է մղվել:

«Ազդակ» օրաթերթը անդրադառնալով ռազմական գործողություններին, լիբանանահայ հասարակությանն է ներկայացնում ՀՅԴ Հայաստանի գերագույն մարմնի հայտարարությունը, միջազգային հանրության արձագանքները, Հայ Դատի հանձնախմբի քայլերը վերոնշյալ իրադարձությունների ժամանակ:

ՀՅԴ Հայաստանի գերագույն մարմինը դատապարտեց Ադրբեջանի ռազմատենչ քաղաքականությունը, միաժամանակ նշեց, որ Հայ հեղափոխական դաշնակցությունն իր ամբողջ հնարավորություններով աջակցելու է Հայաստանի Հանրապետությանը և Արցախի Հանրապետությանը: Դժվարին այդ օրերին Դաշնակցությունը դիմեց հայկական բոլոր կառույցներին, կազմակերպություններին և հանրությանը՝ կոչ անելով՝ «մենք պարտավոր ենք ներքին համախմբվածությամբ և համարժեք պատասխան գործողություններով Ադրբեջանին խաղաղություն

պարտադրել»⁵:

ՀՅԴ Կենտրոնական կոմիտեն լիբանանյան լրատվամիջոցներով տարածեց հաղորդագրություն, որի առանցքային կետերից էր այն, որ Հայաստանի Հանրապետությունը և Արցախի Հանրապետությունը ջանք չեն խնայում խաղաղ բանակցությունների միջոցով հարցին լուծում տալ, փոխարենը՝ Ադրբեջանն անընդհատ դիմում է ռազմական գործողությունների: «Ազդակ»-ը տպագրում է ՀՅԴ Կենտրոնական Կոմիտեի կոչն ուղղված միջազգային հանրությանը, որպեսզի միջամտեն ռազմական գործողությունների դադարեցմանը և նպաստեն խաղաղ բանակցությունների անցկացման՝ հարգելով ազգերի ինքնորոշման սկզբունքը⁶:

Այդ օրերին ակտիվություն ցուցաբերեց նաև ՀՅԴ Հունաստանի Հայ Դատի հանձնախումբը, որն Աթենքում Ադրբեջանի դեսպանատան առջև կազմակերպեց ցույց և հրավիրեց միջազգային հանրության ուշադրությունը: Միջին Արևելքի Հայ Դատի հանձնախմբի պատասխանատու Վերա Յաղուբյանը «Մայատին» լրատվականին տված հարցազրույցում քննադատելով Ադրբեջանի հարձակումը, ավելի վտանգավոր է համարում Թուրքիայի բացահայտ աջակցությունը Ադրբեջանին: Այն հարցադրմանը, թե Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը գտնվում է Ադրբեջանի աշխարհագրական տարածքում, Յաղուբյանը նշեց, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը միշտ եղել է հայկական և այն բռնակցվել է Ադրբեջանին՝ 1923 թ. Ստալինի ապօրինի որոշումով⁷:

«Ազդակ»-ը գրում է, որ ապրիլյան պատերազմի օրերին

⁵ Տե՛ս, նույն տեղում, էջ 1:

⁶ Տե՛ս, նույն տեղում, էջ 2:

⁷ Տե՛ս, նույն տեղում, էջ 2:

Ադրբեջանին քննադատական ուղերձներով հանդես եկան Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն, Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ն և Գրիգոր-Պետրոս կաթողիկոս-պատրիարքը: Նրանց ուղերձներում քննադատվում է Ադրբեջանի հայատյաց քաղաքականությունը, միջազգային հանրությանը կոչ է արվում օր առաջ դադարեցնել ռազմական գործողությունները:

«Ազդակ»-ը ամբողջությամբ տպագրում է ապրիլյան պատերազմը և Ադրբեջանի գործողությունները դատապարտող տարբեր երկրների ու կազմակերպությունների հայտարարությունները:

Թերթը գրում է, որ Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարությունը, դատապարտելով Ադրբեջանի նախահարձակ գործողությունները, հրավիրում է միջազգային հանրության, հատկապես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ուշադրությունը և «մնայուն կապի մեջ է օտարերկրյա պետությունների գլինվորական-դիվանագիտական ներկայացուցիչների հետ»⁸:

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ՝ Ռուսաստանի դեսպան Իգոր Պոպովը, Միացյալ Նահանգների դեսպան Ջեյմս Ուորլիքը, Ֆրանսիայի դեսպան Պիեռ Անտրիոն, իրենց խորը մտահոգությունը հայտնեցին Ապրիլյան պատերազմի վերաբերյալ: «Ազդակ»-ը տպագրում է նրանց հայտարարությունը, որտեղ ասվում էր. «Մենք խստորեն կը դատապարտենք ուժի կիրարկումը եւ կը ցափնք անիմաստ կորուստներուն համար, ներառեալ քաղաքացիական բնակչութեան մօտ»⁹:

Ռուսաստանի Դաշնության նախագահի մամուլի խոսնակ

⁸ Տե՛ս, նույն տեղում, էջ 8:

⁹ Տե՛ս, նույն տեղում, էջ 3:

Դմիտրի Պեսկովը լրագրողների հետ զրույցում հայտարարել է, որ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինն իր մտահոգությունն է հայտնել Լեռնային Ղարաբաղի և Ադրբեջանի շփման գծի գործողությունների վերաբերյալ, և կոչ է արել. «անյապաղ դադարեցնելու կրակոցը, զսպումստիւն ցուցաբերել»¹⁰:

«Ազդակ»-ը անդրադառնում է նաև Միացյալ Նահանգների պետքարտուղար Զոն Բերրիի հայտարարությանը, ով մտահոգություն էր հայտնում Լեռնային Ղարաբաղի շփման գծի վրա հրադադարի լայնածավալ խախտումների առթիվ: Նա մասնավորապես նշում էր. «Ոչ կայուն իրավիճակը կը վկայէ, թե ինչու՛ պէտք է կողմերը անյապաղ վերսկսին բանակցութիւններուն ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի հովանիին տակ՝ տագնապին բազմակողմանի լուծում գտնելու հարցին մէջ: Մենք կը վերահաստատենք, որ տագնապը զինուորական լուծում չունի: Իբրեւ համանախագահող երկիր, Միացեալ Նահանգները յանձնառու են աշխատելու կողմերուն հետ՝ հասնելու երկարատեւ եւ բանակցուած լուծման»¹¹:

«Ազդակ»-ը ներկայացնում է Իրանի արտաքին գործերի նախարարության խոսնակ Հուսէյն Ժապեր Անսարի հայտարարությունը և ընդգծում է, որ Թեհրանը կոչ է անում Բաքվին և Երևանին զսպվածություն ցուցաբերել. «Մենք մեր երկու հիւսիսային դրացիներուն զսպածութեան եւ իրավիճակը առաւել եւս բարդացնելէ խուսափելու կոչ կուղղենք»¹²:

Թերթը չի անտեսում նաև Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի արձագանքը հայ-ադրբեջանական հակամարտությանը: Միացյալ Նահանգների Մերիլենդ նահանգում

¹⁰ Տե՛ս, նույն տեղում, էջ 3:

¹¹ Տե՛ս նույն տեղում, էջ 3:

¹² Տե՛ս, նույն տեղում, էջ 3:

թուրք-ամերիկյան մշակութային կենտրոնի բացման ժամանակ նա պատասխանելով ադրբեջանցի լրագրողի հարցերին մեղադրեց Մինսկի խմբին, որի թուլության հետևանքով իրավիճակը այսպես սրվել է: Նա ադրբեջանամետ դիրքերից հայտարարեց. «ազրպեյճանցի եղբայրներու համար Ալլահէն օգնութիւն կը խնդրեն»¹³:

«Ազդակ»-ը գրում է, որ ապրիլյան պատերազմը գրավել է նաև միջազգային մի շարք կազմակերպությունների ուշադրությունը: Ըստ թերթի՝ Համաշխարհային այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են՝ Եվրոպական Միությունը, Միավորված ազգերի կազմակերպությունը, Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը ևս արձագանքեցին պատերազմի դադարեցման օգտին և կոչ արեցին կողմերին ցուցաբերել զսպվածություն:

2016 թ. ապրիլի 2-ին Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը գումարեց Անվտանգության խորհրդի նիստ, որտեղ քննարկվեց Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հետ զինադադարի խախտումը: Նիստի ընթացքում զեկուցումով հանդես եկան ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, զինված ուժերի գլխավոր շտաբի պետ Յուրի Խաչատուրովը, Արտաքին գործերի նախարարի տեղակալ Շավարշ Քոչարյանը: «Ազդակ»-ը ներկայացնում է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի խոսքը, ով իրազեկում էր նիստի մասնակիցներին, որ Ադրբեջանի զինված ուժերը Լեռնային Ղարաբաղի հետ շփման գիծի ամբողջ երկայնքով սադրիչ գործողություններ են իրականացնում: Լեռնային Ղարաբաղի պաշտպանության բանակի՝ ճիշտ և արհեստավարժ գործողությունների

¹³ Տե՛ս նույն տեղում, էջ 3:

շնորհիվ հնարավոր եղավ ոչ միայն իրավիճակը հակակշռի տակ առնել, այլև՝ զգալի կորուստներ հասցնել հակառակորդին: Հակառակորդն այդ ընթացքում օգտագործել է ռազմական օդուժ, հրետանու բոլոր տեսակները և բոլոր տիպի զրահամեքենաները: Թերթը գրում է, որ նախագահի խոսքով «հակառակորդի կորուստները, ինչպես օդուժի, այնպես եւ հետևակի ու սպառազինության առումով, զգալի են: Մենք ևս ունենք կորուստներ՝ 18 զոհ և շուրջ 35 վիրավոր»¹⁴:

Անվտանգության խորհրդի նիստի ժամանակ Սերժ Սարգսյանն անհրաժեշտ համարեց, որ Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարությունը համագործակցի Արցախի Հանրապետության Արտաքին գործերի նախարարության հետ զինվորական փոխօգնության համաձայնագիր կնքելու ուղղությամբ և համապատասխան քննարկումներ կատարելուց հետո այն ուղարկվի Ազգային ժողովի քննարկմանը: Այս քայլը նախագահը բացատրում էր նրանով, որ Լեռնային Ղարաբաղի բնակչության անվտանգությունն ապահովելու առումով Հայաստանի Հանրապետությունն իր պարտականությունը լիովին պետք է կատարի: Այդ իմաստով իրավական տեսանկյունից Հայաստանի Հանրապետությունը լիարժեք իրավունք ունի, քանի որ հանդիսանում է 1994 թ. կնքված զինադադարի կողմերից մեկը:

«Ազդակ»-ը գրում է, որ նախագահ Ս. Սարգսյանի հայտարարությունը հավանության է արժանացել ՀՅԴ Լիբանանի Կենտրոնական Կոմիտեի կողմից: Կոմիտեն ողջունում է Արցախի Հանրապետության իշխանությունների հետ ռազմավարական դաշինքի կնքման գաղափարը և վերահաստատում է, որ լի-

¹⁴ Տե՛ս, նույն տեղում, էջ 10:

բանանահայությունը պատրաստ է իր աջակցությունը ցուցաբերել հայրենիքի սահմանների պահպանման գործին:

«Ազդակն» ապրիլի 6-ին հաղորդում է, որ 4 օր տևած ռազմական գործողություններից հետո ձեռք է բերվել երկկողմանի զինադադարի պայմանավորվածություն:

Ապրիլի 5-ին Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի գնդապետ Վիկտոր Առուստամյանը հայտնեց, որ Ադրբեջանի հարձակման հետևանքով հակառակորդի հսկողության տակ անցած բոլոր մարտական հենակետերը գտնվում են մեր վերահսկողության տակ: Նա հայտնեց նաև, որ ժամը 12:00-ի դրությամբ ռազմական գործողությունները դադարեցնելու պայմանավորվածության ձեռքբերումից հետո հակառակորդը շարունակել է գնդակոծությունները, բայց ոչ նախկին ակտիվությամբ¹⁵:

«Ազդակ»-ը զինադադարի ձեռք բերումից հետո ուշադրությունը հրավիրում է Ֆրանսիայի եվրոպական հարցերի նախարար Արլեն Տեգիրի հայտարարությանը: Թերթն ընդգծում է, որ, ի տարբերություն եվրոպական շատ երկրների կառավարությունների և միջազգային տարբեր կազմակերպությունների՝ պատերազմը դադարեցնելու վերաբերյալ հակամարտող կողմերին ուղղված կոչերին, Ֆրանսիայի նախագահը հայամետ դիրքորոշում է դրսևորում: «Ազդակ»-ը գրում է, որ նա խնդրի կարգավորման ուղղությամբ շեշտը դնում է ազգերի ինքնորոշման սկզբունքի վրա, որը բխում է արցախահայության շահերից:

Ադրբեջանը ռազմական գործողություններից բացի, հակահայ քարոզչություն էր իրականացնում և խեղաթյուրում Արցախյան հիմնահարցի էությունն ու նպատակը: «Ազդակ»-ը գրում է,

¹⁵ «Ազդակ», 6 ապրիլի, 2016, № 26, էջ 1:

որ լիբանանյան հասարակությանը խնդիրը ճիշտ ներկայացնելու նպատակով ՀՅԴ քարոզչական տեղեկատու գրասենյակի նախաձեռնությամբ ապրիլի 4-ի երեկոյան «Էմ Թի Վի» լրագրողների խումբը գործուղվել է Արցախ՝ դեպքերը լուսաբանելու համար: Միևնույն ժամանակ ՀՅԴ քարոզչական տեղեկատու գրասենյակը հույս է հայտնում, որ ժողովուրդը, հատկապես երիտասարդությունը ուշադիր կլինեն «ադրբեջանական քարոզչության ծուղակում չհայտնվելու համար, և միշտ կստուգեն ցանկացած տեղեկատվությամբ աղբյուրը»¹⁶:

«Ազդակ»-ի խմբագրակազմը ապրիլի 8-ից 16-ը տպագրած հրապարակումներում վերլուծում է Ապրիլյան պատերազմը և հետևություններ անում: «Հավանական քաղաքական շարժառիթներ» բաժնում ներկայացնելով պատերազմի պատճառները՝ թերթը բացառում է հանկարծակիության գործոնը և նշում է, որ Բաքուն առիթը բաց չի թողնի միջազգային ցանկացած հարթակ օգտագործելով բանակցային գործընթացը տեղափոխելու այնպիսի մակարդակի, որտեղ Թուրքիան պիտի ներգրավվի, որպես երրորդ կողմ¹⁷:

«Ռազմական բաժնում» թերթը նշում է, որ այս պատերազմում քիչ էր մարդկային գործոնը և Ադրբեջանը օգտագործում է հեռակառավարվող զենքեր: Քառօրյա պատերազմում, ըստ թերթի դիտարկման, թշնամին նպատակ է ունեցել բացահայտել, թե հայկական կողմն ինչպիսի զենքի պաշարներ ունի և որքանով կկարողանա դիմակայել: «Ազդակ»-ի կարծիքով կարևոր չէ, թե որքան զենք ունի թշնամին, կարևոր է մեր բանակի «մարտունակությունը, պատերազմի կառավարման հմտությունը, ռազմա-

¹⁶ Տե՛ս, նույն տեղում, էջ 2:

¹⁷ Ազդակ», 8 ապրիլի, 2016, № 28, էջ 1:

կան փորձագետների իսկ հաստատումով բանականների հաջողության համար ավելի առաջնային դիրք ունեն, քան ռազմարհեստագիտությունը»¹⁸:

«Ռազմական հանցագործություններ և քրեականացման առաջադրանքներ» բաժնում թերթը նշում է, որ Թալիշի դեպքն ունի իր պատմական և մոտ անցյալի հիմնավորումները, դրանք են Սումգայիթի, Կիրովաբադի, Բաքվի ջարդերը: «Ադրբեջանն իբրև պետական ահաբեկչական միավոր միջազգայնացնելու հրամայականի առջև ենք ազգովի» նշում է «Ազդակը», ինչը կնպաստի արցախահայության ինքնորոշման և անկախանալու պահանջի օրինական արդարացիությանը¹⁹:

«Իրավական առանցք» բաժնում «Ազդակ»-ը վերլուծում է նախագահ Սերժ Սարգսյանի ապրիլի 2-ի հայտարարությունը և առաջ քաշում այն միտքը, որ Հայաստանի Հանրապետությունը մեկ քայլ առաջ գնալու խնդիր ունի դեպի իր նպատակ, որն Արցախի Հանրապետության միջազգային ճանաչումն է: Թերթն անհրաժեշտ է համարում Երևանի և Ստեփանակերտի միջև փոխօգնության ռազմական պայմանագրի կնքումը, ներկայացնում է պայմանագրի կնքման ընթացակարգը, այն է՝ Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արտաքին գործերի նախարարների կողմից պայմանագրի մշակումը, քննարկումը, լրացումներ կատարելը և երկու պետությունների Ազգային ժողովների կողմից վավերացումը²⁰:

Տեղեկատվական պատերազմի առումով հիմնական տարբերությունը այն էր, որ միջազգային լրագրողների համար հայկական կողմը խոչընդոտներ չէր ստեղծում, իսկ ադրբեջանա-

¹⁸ Ազդակ», 9 ապրիլի, 2016, № 29, էջ 1:

¹⁹ ՏԵՄ, նույն տեղում, էջ 1:

²⁰ Ազդակ», 12 ապրիլի, 2016, № 31, էջ 1:

կան կողմում լրագրողների աշխատանքը ուղղորդված էր: «Ազդակը» բարձր է գնահատում ՀՅԴ Լիբանանի տեղեկատու գրասենյակի նախաձեռնությունը, որն արաբական լսարաններ ունեցող 3 լրագրողների գործուղեց Արցախ՝ առարկայական լուսաբանելու տեղի ունեցող իրադարձությունները²¹:

«Ներհայկական համախմբում» հոդվածում թերթը կարևորում է այն հանգամանքը, որ դժվարին իրավիճակում հայերը համախմբվում են՝ մի կողմ դնելով քաղաքական համոզմունքները: Դրա վկայությունը թերթը համարում է Սերժ Սարգսյանի և Լևոն Տեր-Պետրոսյանի հանդիպումը²²:

«Անմիջական հետևություններ, առաջադրանքներ» հոդվածում «Ազդակը» ամփոփում է քառօրյա պատերազմի արդյունքները, հետևանքները և եզրակացնում, որ, անշուշտ, կան բացթողումներ, ռազմական, քաղաքական, իրավական, տեղեկատվական, դիվանագիտական մակարդակներում: Սակայն, եթե իրատեսական մոտենանք խնդրին, եզրակացնում է «Ազդակ»-ը, ապա պետք է փաստել, որ Բաքուն ռազմագիտական առումով որևէ առավելության չհասավ:

Բեյրութում լույս տեսնող «Ազդակ» օրաթերթը, լուսաբանելով Ապրիլյան քառօրյա պատերազմը, ոչ միայն բազմաբնույթ տեղեկատվություն է տրամադրում լիբանանահայ հասարակությանը, այլ վերլուծում է պատերազմի պատճառները, ամբողջ ընթացքը, բացահայտում է պատճառները, միջազգային հանրության դիրքորոշումը, ներկայացնում է պատերազմի հետևանքները, կատարում որոշակի եզրակացություններ:

²¹ Ազդակ», 13 ապրիլի, 2016, № 32, էջ 1, 10:

²² Ազդակ», 15 ապրիլի, 2016, № 34, էջ 1:

Tatyana Ohanyan, *Vanadzor State University after H. Tumanyan, applicant*, Reaction of the Beirut newspaper “Azdak” to the April war of 2016

The April 2016 war received wide coverage in the “Azdak” daily newspaper published in Beirut. The newspaper covers events taking place in Karabakh and Armenia, based on received news, information and publications of foreign media. “Azdak” publications show that the newspaper takes a pro-Armenian position. “Azdak” regularly covers the military actions of the April war, the reaction of the international community and emphasizes the Armenia-Artsakh-Diaspora trinity. From a legal point of view, it calls for international recognition of Artsakh in the Karabakh negotiation process, as well as for the recognition of Azerbaijan as a terrorist state by the international community.

“Azdak” considers it necessary to sign a military agreement on mutual assistance between the Republic of Armenia and the Republic of Artsakh and presents the procedure for signing the agreement. Comparing the work of international reporters, “Azdak” emphasizes that the Armenian side does not create obstacles for the reporter, and the Azerbaijani side not only creates obstacles, but also dayot or directions.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌԵ ԲԵՐԴԻՑ ՄԻՆՁԵՎ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ. ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ

Տաշիր– Լոռին հայոց պետականության պատմափուլերում 4

ՍԵՂԱ ԴԵՎԵՋՅԱՆ, ՌՈՒԲԵՆ ԴԱՎԹՅԱՆ

Լոռի Բերդը որպես Հայաստանի պատմամշակութային
առաջնակարգ հուշարձան 19

ԱՐՄԱՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Լոռե բերդաքաղաքի 2022–2023 թթ. պեղումների հիմնական
արդյունքները 26

ԿԱՐԵՆ ԹՈՒՆԱԹՅԱՆ

Լոռու մարզի ժայռապատկերները 52

ԱՐՄԱՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Տաշիրքի (Լոռիի) թագավորության ստեղծման ժամանակն ու
հանգամանքները 65

ՀԱՍՄԻԿ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ

Ջալալօղլիի սոցիալ-տնտեսական կյանքը 1830–1900 թթ. 84

ՎԱՐԴԻԹԵՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հայ առաքելական եկեղեցու Վրաստանի և Իմերեթի թեմի Լոռվա
գործակալությունը XIX դարի 30-ական թվականներին – XX դարի
առաջին տասնամյակում 99

ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

Լոռեցի հերոսուհի կանայք 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի
հայոց ազգային-ազատագրական պայքարում 113

ՅԱԱՆ МЕЛИКЯН

Степан Шаумян на позициях решения общенациональных задач в
1917–1918 гг 139

ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Կիրովական քաղաքի հասարակական սննդի ցանցում եղած
խնդիրները 1960-ական թվականների երկրորդ կեսին 152

ԳԱԳԻԿ ԺԱՄՀԱՐՅԱՆ

Բնակչության սոցիալական մտածողության փոփոխությունները
խորհրդային ու շրջանի (1985-1987 թթ.) հայաստանյան
առօրեականության դրվագներում 166

ԼՈՒՍԻՆԵ ԱՄԻՐՋԱՆՅԱՆ

Լոռվա տեղանունների անվանափոխության առանձնահատկություն-
ները անկախացումից հետո (Վանաձոր քաղաքի օրինակով) 178

**ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ
ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ XLIII ԳԻՏԱԿԱՆ ՆՍԱՇՐՋԱՆ՝
ՆՎԻՐՎԱԾ ՍԻՄՈՆ ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ**

ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ, ԳՈՀԱՐ ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

Սիմոն Կրկյաշարյան՝ պատմաբանը և թարգմանիչը (100-ամյակի
առթիվ) 190

ԱՐՄԵՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Երվանդունյաց Հայաստանի հողատիրության ձևերի հարցի շուրջ
(մ.թ.ա. IV–III դդ.) 200

ԶԻՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հայաստանի ազատագրության խնդիրն ըստ
Պետրոս Պետիկի «CEHIL SUTUN» գրքի 213

ԼԻԼԻԹ ՔՈՍՅԱՆ

Արևմտահայ գաղթականների վերադարձի հարցը (1898–1908 թթ.)
..... 232

ԳԱՅԱՆԵ ՂԱԶԱՐՅԱՆ

Գեղարվեստական ֆիլմերը որպես պատմական սկզբնաղբյուր
(«Մենք ենք մեր սարերը» ֆիլմի օրինակով) 241

ԷԼԵՆ ՇԱՐՈՅԱՆ

Արցախյան հարցի կարգավորման ուղղությամբ Ամերիկայի Հայ
Դատի հանձնախմբի գործունեության արձագանքները Բեյրութի
«Ազդակ» օրաթերթում 251

ՏԱՏՅԱՆԱ ՕՀԱՆՅԱՆ

2016 թ. Ապրիլյան պատերազմի արձագանքը Բեյրութի «Ազդակ»
օրաթերթում 263

CONTENT

FROM LORE FORTRESS TO STEPANAVAN: IN THE FOOTSTEPS OF HISTORICAL AND CULTURAL HERITAGE

ASHOT MELKONYAN

Tashir-Lori in the historical stages of the Armenian statehood 4

SEDA DEVEDJYAN, RUBEN DAVTYAN

Lori Berd as a leading historical and cultural monument of Armenia 19

ARMAN NALBANDYAN

The main results of the 2022-2023 excavations of Lore fortress 26

KAREN TOKHATYAN

The petroglyphs of Lori Region 52

ARMAN YEGHIAZARYAN

The time and circumstances of the creation of the kingdom of Tashirk
(Lori)..... 65

HASMIK AMIRJANYAN

The social-economic life of Jalaloghli in the 1830-1900 ss 84

VARDITER GRIGORYAN

The Lori district of the Georgia-Imereti Diocese of the Armenian Apostolic
Church in the 30s of the 19th century – the first decade of the 20th century
..... 99

EDIK MINASYAN

The role of the heroic women of Lori in the Armenian national liberation
struggle in the late 19th and early 20th centuries 113

VAHAN MELIKYAN

Stepan Shahumyan in the positions of solving nationwide problems in 1917-
1918 139

HAMO SUKIASYAN

The problems in the public food network of Kirovakan city in the second half
of the 1960s 152

GAGIK ZHAMHARYAN

Changes in the social mindset of the population in the episodes of the daily life
of Armenia in the late soviet period (1985-1987) 166

LUSINE AMIRJANYAN

Features of the process of renaming toponyms of Lori region after gaining independence (Using the example of Vanadzor city) 178

XLIII SCIENTIFIC SESSION OF THE COUNCIL OF YOUNG SCIENTISTS OF THE INSTITUTE OF HISTORY OF THE NAS RA, DEDICATED TO THE 100TH BIRTH ANNIVERSARY OF SIMON KRKYASHARYAN

AELITA DOLUKHANYAN, GOHAR VARDUMYAN

Simon Krkyasharyan, the historian and translator 190

ARMEN POGHOSYAN

On the question of land ownership forms in Yervandid Armenia (IV-III cc. BC) 200

ZINA AVETISYAN

The issue of Armenia's Liberation according to Pedros Bedik's book "CEHIL SUTUN" 213

LILIT KOSYAN

The issue of the return of Western Armenian refugees (1898–1908) 232

GAYANE GHAZARYAN

Fiction films as historical primary sources (on the example of the movie "We and Our Mountains") 241

ELEN SHAROYAN

Echoes of the activities of the Armenian National Committee of America Towards the settlement of the Artsakh issue in the Beirut newspaper "Azdak" 251

TATYANA OHANYAN

Reaction of the Beirut newspaper "Azdak" to the April war of 2016 263

ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՀՀ ԿԳՄՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ԺԱՄԱՆՑԻ ԿԵՆՏՐՈՆ
(ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՏՈՒՆ-ԹԱՆԳԱՐԱՆ)
ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

«ԼՈՌԵ ԲԵՐԴԻՑ ՄԻՆՉԵՎ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ.
ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ»
ԵՎ «ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ
ԳԻՏԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ XLIII ԳԻՏԱԿԱՆ ՆՍԱՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ
ՍԻՄՈՆ ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ»

STEPANAVAN MUNICIPALITY
INSTITUTE OF HISTORY OF THE NAS RA
STEPANAVAN CENTER OF CULTURE
AND ENTERTAINMENT OF THE MESCS
(STEPAN SHAHUMYAN HOUSE-MUSEUM)

PROCEEDINGS OF THE CONFERENCE

“FROM LORE FORTRESS TO STEPANAVAN:
IN THE FOOTSTEPS OF HISTORICAL AND CULTURAL HERITAGE” AND:
“XLIII SCIENTIFIC SESSION OF THE COUNCIL OF YOUNG SCIENTISTS OF
THE INSTITUTE OF HISTORY OF THE NAS RA, DEDICATED TO THE 100TH
BIRTH ANNIVERSARY OF SIMON KRKYASHARYAN”

Անգլերեն տեքստերի խմբագիր՝ Հ. Խուրանյան
Համակարգչային ձևավորումը՝ Ա. Ղազարյան

Տպագրվել է «Ինֆոկոպի» ՍՊԸ-ի տպարանում
Տպաքանակը՝ 150 օրինակ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՎԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
INSTITUTE OF HISTORY OF NAS RA,

Մարշալ Բաղրամյան պող. 24/4, հեռ. 0(10)529263
Marshal Baghramyan Ave., 24/4, tel. 0(10)529263